

Անանիա Շիրակացի

Անանիա Շիրակացին է դարի նշանաւոր գիտնական է՝ մատենագիր եւ Հայաստանում բնական կամ ճշգրիտ գիտութիւնների հիմնադիրը. ապրել է շուրջ 610-690 թթ., կոչուել է նաեւ Շիրակուանցի, Շիրակունի, Անեցի, ծնուել է Շիրակ գաւառի Շիրակվան (Շիրակաւան՝ Երագգաւորս) կամ Անանիա (Անանք) գիւղաքաղաքում (ըստ երրորդ տեսակէտի՝ Անիում): Նրա կեանքի առաջին շրջանին վերաբերող տեղեկութիւնները պահպանուել են իր ինքնակենսագրական՝ Վասն որպիսութեան կենաց իւրոց գործի մէջ: Նախնական կրթութիւն ստանալուց յետոյ Շիրակացին ութ տարի Տրապիզոնում աշակերտել է հայերէնագէտ յոյն իմաստասէր Տիւքիկոսին, նրանից սովորել համարողութեան արուեստ (մաթեմատիկա), աստղագիտութիւն, տոմարագիտութիւն եւ յարակից այլ գիտութիւններ, ապա վերադարձել է Հայաստան եւ հիմնել իր դպրոցը, որտեղ ուսուցանել է զարգացրել է նոյն գիտութիւնները: Հայկական գիտական գրականութեան ամենակարկառուն գործիչներից է եւ, որպէս համարող (մաթեմատիկոս), աստղագէտ ու տոմարագէտ, մեծ հռչակ է ունեցել թէ՛ իր կեանքի օրօք է թէ՛ հետագայ դարերում: Անաստաս կաթողիկոսը 665 թ. նրան յանձնարարել է հայկական տոմարի բարեկարգման, այսինքն՝ շարժական տոմարը անշարժի վերածելու խնդիրը, որ կաթողիկոսի մահուան (667 թ.) պատճառով մնացել է չիրագործուած: Շիրակացու գրական ժառանգութեան մէջ նշանաւոր են Խոստումն աշակերտացն կամ Հրաման աշակերտացն խորագրով միաւորները, որոնք Յաղագս դար եւ կոճատ թուոց եւ Յաղագս վեցհազարեկի կոչուածների հետ միասին կազմում են հեղինակի թուաբանութեան դասագիրքը, որ իր ընդգրկմամբ եւ ամբողջականութեամբ այս տեսակի համաշխարհային գրականութեան մէջ հնագոյնն է: Նրա մասը կամ շարունակութիւնն է համարում Յաղագս հարցման եւ լուծմանը, որ թուաբանական խնդիրների ժողովածու է եւ բաղկացած է 24 յօդուածից: Յաղագս կշռոց եւ չափուցը եւ Յաղագս ընթացից արեգական եւ համարոյ չափուցը (երկբայելի) չափագիտական արժեքաւոր սկզբնաղբիւրներ են: Շիրակացուց մեզ հասած տոմարագիտական ժառանգութեան թանկագին յուշարձաններն են՝ Յաղագս Իննետասներեկի Լուսնի երկը, Լուսնացոյց աղիւսակը ՇԼԲ. բոլորակը եւ Ի Յայտնութիւն, Ի Ձատիկ ճառերը: Առ խոստացեալսն, Յաղագս կենդանատեսակաց, Վասն ընթացից արեգական ըստ կենդանատեսակացն եւ եօթն գօտեացն գործերը կազմում են Շիրակացու տիեզերագիտական աշխատութիւնների շարքը եւ, որպէս այդպիսիք, հայ մատենագրութեան թանկագին յուշարձաններ են:

Մղոնաչափ և օղաչափ

Ասպարէզ ՃՃ քայլ է.

քայլն Ձ ոտն է.

ոտն ԺՁ մատն է:

Մղոնն է ասպարէզ է.

ըստ պարսից ասպարէզն ՃԽԳ քայլ է:

Մղոնն Ռ քայլ է.

հրասահն Գ մղոն:

Ի Դունա ի Կարին Մ մղոն.

ի Կարնա ի Փոսաղորս Ճ.

անտի ի Կողոնիա Ղ.

անտի ի Նիկիա Ճ.

անտի յԱմասիա Ձ.

անտի ի Գանգրա ՃԵ.

անտի յԱնգրիա Ձ.

անտի ի Կոստանդնուպաւղիս ՃԻ.

անտի ի Հռովմ Ղ.

Ի Դունա ի Խլար ՃՀ.
անտի ի Քղիսմար Ձ.
անտի յՈւրհա ՃՁ.
անտի յԵփրատ գետ Խ.
անտի ի Դամասկոս ՃԻ.
անտի ի Թափոր լեռն Ղ.
անտի յԵրուսաղէմ Ճ:

Ի Դունա ի Բերդկունս Կ.
անտի ի Պարտաւ ՃԿ.
անտի ի ծովն Կասպից՝ Ղ:

Ի Դունա ի Նախճեւան Ն.
անտի ի Գանձակ Շահաստան ՃԻ.
անտի ի Տիսպոն ՅՆ.
անտի յԱկոզա Ն.
անտի ի Բարա ՃԽ.
անտի ի ծովն Պարսահաւեան Ի:

Ի Գանձակէ ի Նինուէ ՃԻ.
անտի ի Մծբին ՃԻ.
անտի յՈւրհա ՃԾ:

Ի Նախճեւանէ յԱրտեւատ Մ.
անտի ի Վարդանակերտ Ն.
անտի ի Փայտակարան Կ.
անտի ի ծովն Կասպից Կ:

Ի Դունա ի Կողբ Ծ.
անտի ի Կոտագեղէն ՃԻ.
անտի ի Տփղիք ՃԽ.
անտի ի Հունարակերտ Ն.
անտի ի Պարտաւ Ճ:

ՅԵրուսաղէմէ յԱղեկսանդր քաղաք Շ.
անտի ի Պենապաղիս Ռ.
անտի ի Տրեպաղիս ՅԾ.
անտի յԱփրիկէ ՌՇ.
անտի Սեփտէ Ձ.
անտի յՈվկիանոս Ս:

Օդաչափ

Ի հարաւային ծայրէն մինչեւ ցիւսիւսային շրջանակն՝ ասպարեզք յիսուն եւ ութ բեր:
Ի սրտէ երկրէ մինչեւ յորում բնակեմքս՝ ասպարեզք երկու բեր, կէս, երրեակ, հնգեակ:
Ի մերմէ բնակութենէս մինչեւ գունդն լուսնի՝ ասպարեզք իննսուն եւ երեք բեր, կէս,
տասնեակ:

Մինչեւ ցգունդն փայլածույին՝ ասպարեզք հարիւր ութսուն եւ չորս բեր, երբեակ, հնգետասնեակ:

Մինչեւ ցգունդն լուսաբերին՝ ասպարեզք չորս հարիւր եւթանասուն եւ հինգ բեր, կէս, երբեակ, հնգեակ:

Մինչեւ ցգունդն արեգական՝ <ասպարեզք> երեք հազար, ինն հարիւր եւ երեք բեր, տասնեակ:

Մինչեւ ցգունդն հրատին՝ ասպարեզք երեք հազար վեց հարիւր տասն եւ երկու բեր:

Մինչեւ ցգունդն լուսնթագին՝ ասպարեզք հինգ հազար, երկու հարիւր եւ չորս բեր:

Մինչեւ ցգունդն որ <եւ> ակին՝ ասպարեզք տասն հազար եւթն հարիւր, վաթսուն եւ ութ բեր, կէս, երբեակ:

Մինչեւ ցուրերորդ գունդն՝ ասպարեզք յիսուն եւ վեց հազար, ինն հարիւր քառասուն եւ վեց բեր, եւ երբեակ: Թէ հաւատոյ ոք վիպասանիս:

Այս քեզ յինէն ընծայ գրատրական, վեր/?/ծանեալ ի Պորփիրի ներգործութենէն, եւ գեղգեղեալ ի Պտղոմեա/?/կան դրամատիկոս տառիցն, եւ ի Բազմավէպ պատմութենէն Պապայ Աղեքսանդրացոյ:

Ողջ լեր:

Աշխարհացոյց

1

Յաղագս աշխարհագրութեանց յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ, այլ դոյղն ինչ դուն ուրեք, եւ այն դժուարահաս եւ տաժանելի: Արդ վասն զի անհասք դոցա եղեալ, մեք հարկաւորիմք յարտաքինս ձեռնարկել, որք զաշխարհագրութիւնս յարմարիցին ի ճանապարհորդութենէ եւ ի նաւարկութենէ եւ ստուգեցին յերկրաչափութենէ: Եւ ինքն երկրաչափութիւնն գտաւ յաստեղաբաշխութենէ: Քանզի ուշ եղեալ առաջինքն խոկային՝ թէ որ տեղիք երկրի ընդ որով կացեալ իցեն մասամբք երկնային բոլորակին: Եւ զմեծութիւն տուրնջեան եւ զիջերաց, եւ զոր ի վերայ երկրի, եւ զոր ի ներքոյ երկրի, միշտ բերելով յայտնեն: Եւ զբնակութիւն մարդկան ի միջաւրեական գծէն զդիրն առնելով ասպարիսական չափով ըստ նաւարկութեան եւ ըստ ճանապարհորդութեան իմացեալ զկայանսն եւ զփոփոխելն զայլ՝ այլուր այլակերպ երեւեալ: Քանզի որ ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակքն, ամենեքեան մտանեն եւ ծագեն, բայց փոքր արջն գեր ի վերոյ գոլով երկրի ի հիւսիսական կողմանն ասպարիսաւք հինգ հարիւր եւ երկու հինգերեկաւք: Աւանդեն զԹուղիս կղզի, որ մեկնէ զհիւսիսականացն եւ ծան/165b/ուցանելոյ երկրի զգէտ ըստ լայնութեան վաթսուն եւ երեք եւ յիսուն եւ եւթն, որպէս եւ միջաւրեական շրջանակն երեք հարիւր վաթսուն եւ երեք թիւ բիրովք եւ վեց հազարեկաւք մասամբ՝ հինգ հարիւր չափուց ասպարիսաց մեծ շուրջունողութեամբ: Իսկ հարաւայինն խոնարհի ի սուրականն եւ այլակերպ զայլսն երեւեցուցանեն: Որպէս Դիոդորոս Սամեացի պատմէ զՀնդկաց՝ թէ Ղիմեոնիկոնն նաւելով՝ յերկիրն ունելով զՏաւռոնն Միջերկնեայ եւ զՊղայիդա ընդ մէջ Կիսեայ: Իսկ զՏալիա նաւելով ընդ Միջերկրական զԿանաբոս աստղ, որ է Իպպոս, ի նոցանէ երեւեալ. եւ ի մէջ նոցա Ապոտիկոն հնչական, եւ այլ բազում ինչ: Եւ զգամաքեալ գաւտին բերելով ընդդէմ տիեզերականին առ ի եթոպացոց ճանապարհորդութեան յԱկիւսիբա աշխարհն, եւ

զՊոասոն ծայր ընդ ձմեռնային շաւղաւք յերեւակն եւ ի սուգականն կոյս: Քանզի յերթնէ նահանգացն զառաջինն տուեալ է հարաւային միջաւրեական գծին, եւ զայլ եւս վեցն ի նմանէ յառաջնային կոյս: Եւ է այսպէս: Երկրորդն՝ ընդ Սինիս, ժամս ունելով երեքտասան եւ C Գ: Իսկ երրորդն՝ ընդ Աղեքսանդրիա, կիսաժամաւ յառաջ մատուցեալ, որպէս եւ ամենեքեան: Չորրորդն՝ ընդ Ռոդոս, որ է միջին նահանգացն եւ կարելոր ի համաչափութիւնս ըստ գնդական յայտնութեանցն: Հինգերորդն՝ ընդ Հռոմ: Վեցերորդն՝ ընդ Կոստանդինուպոլիս: Եւթներորդն՝ ընդ Սկիւթիա: Եւ ամենայն աշխարհ ի դոսին դասեցան: Յորս նախ առնելի է, զտիեզերաց ստորադրութիւնս նմանութեամբ գնդական պատկերին, եւ ապա ձեւալ ըստ նորին նմանութեան: Երկրորդ գնդակն աստղականաւ զկէս շրջանակին մեծի ունելով հարիւր ութսուն եւ երեք բնակութիւն մարդկան. եւ զվերնաչափութիւն առնելով ժամագիտական ի ձեռն երեւելոց աստղադարն եւ զսկիաթիռովն գործարանաց: Բայց կարելոր է դեռ պատռեալ առ ցամաքաչափութիւնն, որով Պտղոմէոս Կղաւղէոս չափեալ ասպարիսաւք ամենայն բնակութիւն մարդկան երկայնութեամբ, յարեւմտից սկիզբն արարեալ, որ է ծով անձանաւթ Ովկիանոսի, ի ծայրէն Սպանիա աշխարհէն մինչեւ յարեւելս, զեզեր Սինսացոց աշխարհին, յանձանաւթ երկիր, մասունս հարիւր ութսուն: Մապէս եւ լայնութիւն սկիզբն արարեալ յայրեալ գաւտեան, չափեալ զհիսիւսի յանձանաւթ ծով եւ երկիր՝ մասունս եւթնետասան, որպէս լինել ընդամենը լայնութեան մասունս ութսուն: Եւ առաւել արտաքս կոյս քան զայն, չէ ուր/166b/եք զեզր երկրի տեսեալ կամ գիտացեալ, որպէս ասէ Պտղոմէոս, այլ անձանաւթ կոչի երկիր եւ ովկիանոս: Յորում ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանց առեալ Պապայ Աղեքսանդրացոյ համառատաբար երկրագրութիւն, յորմէ մեր եւ այլ ծայրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն եւ զնշանաւորսն միայն. եւ զչափս որչափութեանց չափուցն ոչ ըստ յատակի, այլ ըստ կատարաց բարձր լեռանց տեսութեան՝ ընդ աւդսն անցանելով ի ձեռն գործարանացն, կատարելով զնշոյլս արեգական եւ լուսնի եւ աստեղաց ըստ անցնիւր եւթն նահանգացոյ փոփոխման սահմանաց: Եւ է սահմանն բան կարճատաւտ՝ յայտնիչ բնութեան իրակայ իրողութեան, այսինքն որ զիւրն ի ներքս փակէ եւ զայլոցն ի բաց որոշէ, եւ չափէ զմասնն: Եւ մասն է հինգ հարիւր ասպարէս, եւ ասպարէսն է հեռակացութիւն՝ այսինքն է վտաւան մի: Եւ է ասպարէսն ըստ աւղաչափութեան քայլս հարիւր, եւ քայլն է վեց ոտն. եւ ոտն՝ վեշտասան մատն. մղոնն է ասպարէս մի: Իսկ ասպարիսաց ասպարէսն է հարիւր քառասուն եւ երեք քայլ, միով պակաս. եւ մղոնն է եւթն ասպարէզ, որպէսզի լինել զետնաչափութեամբ մղոնն հազար քայլ. եւ խրասախն երեք մղոն է: Բայց աւղաչափութեամբ երկրաչափութեան մասն՝ հինգ հարիւր ասպարէս ի լայնն /167a/ եւ նոյնչափ յերկայնն չորեքկուսի, որպէսզի լինել մասինն եւթնասուն եւ մի մղոն, չորք, եւթն, քսան եւ ութ:

Արդ չափով չափեցին զերկիր եւ զծով, սկիզբն արարեալ յայրեալ գաւտոյն՝ զոր կոչեն միջաւրեական գիծ, յորում բնաւին ոչ բուսանի ինչ յաղագս միշտ յաճախելոյ ընդ այն արեգականն, յեղանակէն ամրանոյ, եղանակ ձմեռնային փոխանցեալ եւ անդրէն վերադարձեալ: Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան զերկիրս զայս լինել, քանզի վեցերորդ, վաթսներորդ մասին լինել չափ արեգական, զերկուս նահանգսն ասելով բովանդակութիւն արեգական, այսինքն արեւանս քառասուն. յորմէ ըստ հեղման շոդոյն նրբացելոյ բորբութեան ասացին զայրեցական գաւտին: Եւ աստի անտի նորա զՈվկիանոս ընդմիջելով ի բնակութենէս եւ խաւարային կիսագնդէն, զոր ընդդէմ երկրի կոչեցին՝ բնակելոյ երկրիս մեծութեամբ, ոչ ըստ սմա,

այլ ըստ հիւսիսային կիսագնդին, զոր կոչեն գաւսացեալ, քանզի նմա ասեն փոքրագոյն գծագրեալ վասն անձուկ գոլոյ բոլորակին. եւ զդէմսն նմանապէս նորին ի հարաւային եզրն, զոր կոչեն ցամաքեալ: Եւ ոչ միայն զայրեցեալ գաւտեան ասեն զՈվկիանոս, այլ եւ զամենայն երկրաւ շուրջ գոլ. զոր եւ Կոստանդիանոս Անտիոքացի ի Քրիստոնէական տեղ/167b/ագրութեան ասէ յաղագս տապանակին անցանելով յարեւելս երկրէն առ մեզ ի մէջս կոյս: Բայց Պտղոմէոս, որոյ արք Բազմաշրջութեամբ զամենայն չափեցին, ոչ ասեն շուրջ լինել, այլ ի մի կողմանէ յանգեան հիւսիսոյ յարեւմտից. եւ տարածի ընդ հիւսիսի յարեւելս կոյս. յերից մասանց մասն մի ընդ արեւմուտս ի հարաւակոյս ի չորից մասանց երեք մասունք: Եւ ի նմանէ սկսեալ զանձանաւթ երկրէ ասէ շրջապատել զբնակութիւն մարդկային բնութեանս: Եւ զերից ծովուցն մեծամեծաց, զՀնդկայնոյն ասեմ եւ զՅունականէն, եւ զԿասբիականն, որ է Վրկանի ծով: Եւ զերկիր բնակութիւն մարդկան ասէ շուրջ լինել զնոքաւք. եւ ճշմարիտ է:

2

Քանզի զՅունականան եւ զԿասբիականան մերոց իսկ արանց պատահեաց շուրջ անցանել, յորմէ վարկանիմք եւ Հնդկականն նոյնպէս լինել, եւ ոչ որպէս ոմանք ասացին՝ Ովկիանոսի պարունակել զամենայն. այլ հաւանեալ մեր Պտղոմէայ պատմութեանն, որոյ արք զայրեալ գաւտեան անցին ի հարաւակոյս եւ զազգն զայնոսիկ ճշդի գրեցին եւ սահման ճարակաց նոցա չափեալ յԱկիւսիմբեայ մինչեւ ի Լուսնի լեառն, եւ անոր եւս՝ յանձանաւթ երկիր եւ շուրջ եկեալ զանձանաւթ երկրաւ յՈվկիանոսէ մինչեւ ցՈվկիանոս. եւ զեւս առաւելսն լոեաց, զոր ոչ երբեք կոխեաց ոք եւ կամ ետես ակն մարդոյ: Որում /268a/ եւ աստուածային գրոց ի ճահ զան վկայութիւնք: Որպէս Յոր ասէ. «Ձգեաց զհիւսիսի զոչընչի» եւ «հրաման պատեաց զերեսս ջուրց», այսինքն է հրաման Աստուածային բաւական՝ ունել զեզր ջրոյ անձանաւթ ծովու: Ոչ պիտաց երկրի եւ եզեր սպառուածին անձանաւթ երկրի, ոչ պիտոյացեալ ջրոյ: Բայց թէ եւ է շուրջ զանձանաւթ երկրաւ ծով, կամ շուրջ զանձանաւթ ծովու երկիր, մեք, անհաս եղեալ մտածութեանց, լոեմք եւ գրեմք զայս միայն, զոր կոխեաց ոտն եւ ետես ակն մարդոյ:

Արդ՝ սկսեսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացոց Երկրագրութեան, որ ըստ ինքնագիր բոլորակն Կղարդէոս Պտղոմէայ Տիեզերագրութեանցն չափուց, սկսեալ յայրեալ գաւտոյն կրկնակի ի հիւսիսի եւ հարաւ: Բայց սկսանի այրեալ գաւտին յանձանաւթ երկրէ Սիւնացոցն, անցանելով ընդ Տապոբարանիա կղզոյ ստորոտն եւ ընդ Նիւդոս գետոյ վտակսն, եւ ընդ ամենայն Եթովպայսն, ըստ հարաւոյ կողմանէ Թէոքիմաց լերինն, որ կոչի աստուածոց արոռ, ձկնկեր եթովպացիսն, յանձանաւթ երկիր: Իսկ ովկիանոս է զկողմամբք զեփիւռոս հողմոյ: Սկսանի քսան եւ մի մասնէ զլայնութիւնն, առ ձկնկեր եթովպացիս, եւ Թէոքիմաց լերամբք, եւ պատէ զարեւմուտս մինչեւ /168b/ ի սպառ լայնութիւն չափոյ՝ դառնայ ընդ հիւսիսի յարեւելս մինչեւ ի վաթսուն մասն լայնութեան, որ է հանդէպ Կարկինեան ծոցոյն Պոնտոսի առ Քեոսոնի: Եւ անտի յառաջ՝ անձանաւթ երկիր. եւ պատէ զմնացեալ մասունս հիւսիսոյ, եւ զարեւելս, եւ զհարաւ եւ քսան մասն յարեւմտից՝ մինչեւ ցնոյն Ովկիանոս: Իսկ զաւելիսն քան զայս չափ, չէ ուրեք տեսեալ կամ ծանուցեալ, վասն այնորիկ անձանաւթ կոչի երկիր եւ Ովկիանոս: Եւ է Ովկիանոս ծանաւթ նաւագնացութեամբ կղզիք վեց հանդէպ Ներքսագոյն Լիբիոյ, որ Երանելեաց կղզիք կոչին: Եւ դոցա ըստ արեւմտից՝ վեց կղզի

այլ է: Եւ սոցա ի հիւսիսոյ են չորս կողմիք հանդէպ Մարիտանիա, եւ նեղուցն, որ կոչի Սեփոտէ, այսինքն է եւթնեակ քան զեւթն մղոն ունի լայնութիւն տեղոյն, որ զետաքար ելանէ յՈվկիանոսէ եւ ծնանի զՅունաց ծովն, որոյ յարեւմտից կայ այլ կողմի մի: Իսկ Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի եւ դարձեալ ընդ յարեւելս առնէ երկու կողմս, որ կոչին Բրիտանացոց աշխարհք: Եւ կողմի մի այլ, որ զՍկանդրէ անուանի, յորում Գուրթ լեալ են: Եւ քան զայս կողմս, այլ նաւագնացութիւն չիք եւ ոչ /169a/ հասեալ է մարդ անդ. վասն այնորիկ կոչի անձանաւթ ծով: Մտանեն եւ զետք քսան եւ մի յարեւմտեայ յՈվկիանոս:

Իսկ երեք ծովք զորով երկիր շուրջ է: Առաջին ծով Հնդկայինն, որ կոչի Կարմիր ծով, յորմէ ծոցոյ ելանեն Պարսից եւ Արաքացոց ծովք: Իսկ յարեւելից Սիւնացոց աշխարհան, եւ ի հիւսիսոյ՝ Հնդկաւք եւ Պարսիւք եւ Արաքացովք. իսկ յարեւմտից՝ Եգիպտացովք եւ Եւովպացովք:

Երկրորդ ծով՝ Յունաց, որ ծնանի յՈվկիանոսէ եւ լայնացեալ ձգի մինչեւ յԱսորիս. Եւ սահմանի՝ յարեւելից Ասորովք եւ Փիւնիկեցովք. իսկ յարեւելից հարաւոյ՝ Հրէաստանի մինչեւ ցԵգիպտոս. իսկ յարեւմտից հիւսիսոյ՝ Մէջներկրայք մինչեւ զՔաղկեդոն, յորմէ ծոցոյ ելանէ Պոնտոսի ծովն եւ ձգի մինչեւ ցԵգեր. իսկ հիւսիսոյ՝ Եւոպի մինչեւ զՍեփոտէ. իսկ հարաւոյ՝ Լիբիա մինչեւ ցնոյն Սեփոտէ:

Երրորդ ծովն՝ Վրկանի, որ կոչի Կասբից ծով: Ձգի երկայնութիւն նորա ի բերանոյ Երասխայ եւ Կուր զետոյ՝ մինչեւ ցմուտս Պողիտովմետեայ զետոյն: Եւ սահմանի յարեւմտից Հայովք. իսկ յարեւմտից հիւսիսոյ՝ Աղուանովք. իսկ հիւսիսոյ՝ Սկիթացովք. իսկ յարեւելից՝ ազգան, որ կոչի Արա Ոմբաստակէք. իսկ յարեւելից հարաւոյ՝ Վրկան աշխարհան. իսկ հարաւոյ՝ Մարաւք, Գեղաւք եւ Դիղմովք եւ Կասբիւք՝ մինչեւ /169b/ ի մուտս Երասխա զետոյ:

Նոյնպէս յերկիր բաժանեալ յերիս՝ յԵւոպէ, ի Լիբիա, եւ յԱսիա: Եւ ունի զարեւմտական հիւսիսային կողմն Եւոպի մինչեւ Տաւնախ զետ. եւ զարեւմտական հարաւային կողմն Լիբիա մինչեւ ի Կարմիր ծով: Իսկ յայսոցիկ սահմանաց յարեւելակոյս հիւսիսի եւ զհարաւ զՄէջն Ասիա ունի մինչեւ ցանձանաւթ երկիր, վասն որոյ մեծագոյն է քան զայլ հատածոյ: Իսկ միջոց աշխարհի բնակութիւն մարդկան Պտղոմէոս զԵրջանիկն Արաբիա ասէ, բայց ես ոչ հաւատամ, քանզի զԵրջանիկն Արաբիա անտարանն ծագս երկրի կոչէ, ուստի եկն դշխոյն հարաւոյ: Բայց մեջ լսի, որ մի չափ հեռակացութիւն ունի ի ծայրիցն եւ յեզերացն, եւ այն է Երուսաղէմ, որում աստուածային գիրք վկայեն, թեպէտ եւ ըստ չափուցն Պտղոմէայ երկայնատարած է յարեւելս կոյս: Այլ զերկու չափս ի մի դնելով նկարագրեսցուք: Սապէս եւ հարաւայինն ութ անելի գայ քան զհիւսիսայինն ըստ Պտղոմէական չափուն, զոր երկու ի մի եղեալ կերպագրեսցուք զերկայնութիւն չափիցն. ութսուն ամբողջ պահեսցուք, վասն զի նեղ է, եւ զհարիւր կրկնեսցուք. եւ լինի յիսուն, այնպէս նման գրեսցուք: Նոյն գունակ եւ ըստ հարաւոյ այրեցական գաւտովն կրկնեսցուք զուրթն՝ չորս, եւ բերէ ստուգապէս ըստ նմանու/170a/թեան Պտղոմէական երկրագրութեանց:

Եւ արդ՝ որովհետեւ բովանդակեցաք զհասարակախաւսութիւնն, այսուհետեւ սկսեսցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն ըստ գրից դեղագրից

Տեղագրութեանց Պապայ Աղեքսանդրացոյ, սկիզբն արարեալ յԱրեւմտեայ Ովկիանոսէ, ի Սպանիա աշխարհէ:

3

Առաջին՝ Սպանիա երեքանկիւնի իմն ձեւով կալով ի մէջ ծովուց որպէս կղզի, սահմանի յարեւմտից եւ ի հիւսիսոյ Ովկիանոսիւ, իսկ յարեւլից՝ Պիւռնէ լերամբ. իսկ ի հարաւոյ՝ Յունաց ծովու: Բաժանի նա փոքր աշխարհս երիս, որք ունին գաւառս բազումս եւ զքաղաքս, զորս անուամբ յիշատակել աշխատութիւն անշահ համարեցաք: Եւ ո՛չ միայն զգաւառս եւ զքաղաքս՝ այլ խորհեցաք միայն գրել զլերիսս անուանիս եւ զգետս հզարս եւ զքաղաքս հոյակապս: Եւ թէ այլ ինչ նշանատր՝ թողլով ի բաց զթիւս եւ զչափս եւ զմանրամասնաբար պատմութիւնս:

Երկրորդ՝ Բրիտանացոցն է, որ են երկու կղզիք ի հիւսիսային Ովկիանոսէ, ի վերոյ կողմանէ Սպանիոյ: Եւ անուն արեւմտեան կղզոյն Իւոքաոնիա. եւ է դարեհատաձեւ ճղճղկէն, յորում գետք հզարք վեշտասան եւ ազգք բազումք: Իսկ անուն առեւելեան /170b/ կղզոյն՝ Աղուիոն, որ է մեծ քան զնա: Եւ է տղրկաձեւ բազմաճիւղք, յորում գետք հզարք քսան եւ հինգ եւ յոյժ մեծաճառ անտառ: Եւ շուրջ կղզեան մանունք կղզիք քառասուն եւ մի. եւ Թուղիս մեծ կղզի:

Երրորդ՝ Գաղիոս է, յարեւելից կալով Սպանիոյ: Եւ սահմանի ի հիւսիսոյ եւ յարեւմտից Ովկիանոսիւ. իսկ ի հարաւոյ եւ յարեւելից՝ Յունաց ծովուն: Եւ բաժանի Գաղիոս յաշխարհս չորիս, յորում են լերունք մեծամեծք երկուս, գետք հզարք քսան եւ ինն, եւ կղզիք շուրջ չորեքտասան: Ունի եւ քաղաքս եւ ազգս բազումս: Ազգն փրանգ լինի եւ ի նմա. եւ հզարս գումէշ սպիտակ եւ սպանող մարդոյ:

Չորրորդ՝ Գերմանացոցն է, յելից կալով Գաղիոյ, առ հիւսիսային Ովկիանոսիւ մինչեւ զՍարմատացոց լերունս եւ ցԴանուր գետն: Ունի Գերմանիա ազգս հինգ, յորոց մի՝ Գուրք: Ունի եւ լերունս անուանիս երիս: Ունի գետս հզարս մետասան եւ կղզիս ինն: Ունի անտառ չորս՝ յոյժ մեծաճառս: Ունի եւ երկաթկտրութիւնս:

Հինգերորդ՝ Դաղմատիա է, յարեւելից Գաղիոսի եւ առ երի Գերմանիոյ: Եւ սահմանի. յարեւելից Դանուր գետոյ ակամբքն, իսկ ի հիւսիսոյ յարեւելից նոյն Դանբոյ դարձովքն. իսկ ի հարաւոյ Յունիոն ծոցաւն: Եւ ունի Դաղմատիա աշխարհս վեց, եւ քաղաքս եւ գաւառս բազումս: Ունի եւ լերունս վեց, եւ գետս քսան եւ կղզիս հինգ: Եւ լինի ի Դաղմատիոյ գագան մի որպէս եղն մեծ, բոնոս անուն, որ զկոյն ձգէ որսորդացն եւ այրէ:

/171a/ Վեցերորդ՝ Իտալիա է, յարեւելից Գաղիոյ եւ առ երի Դաղմատիոյ՝ ի հարաւոյ կուսէ: Եւ սահմանի. ըստ արեւմտից եւ հիւսիսոյ Ալպիացովքն եւ Ոկոէ լերամբքն. իսկ ի հիւսիսոյ եւ յարեւելից Յունական եւ Ադրիական խորշին. իսկ ի հարաւոյ Տիւրենական պիւղագոսիւն: Եւ ունի Իտալիա աշխարհս վեց, եւ քաղաքս, եւ գաւառս բազումս: Ունի լերունս եւ գետս վեշտասան, եւ կղզիս եւթնետասան, յորոց մինն՝ Պոնդիա, ուստի՝ Պիդատոսն: Ունի եւ մարաքաղաքս՝ զհոյակապն Ռալինա եւ զմեծն Հռոմ: Բայց է Իտալիա համար եւ այլ աշխարհ մի Կաւրսիկ անուն՝ ի Սկիւռնիայ

կղոզն՝ չորս հարիւր մղոնաւ շրջապատելով, յորում գաւառք երեքտասան, եւ գետք վեց, եւ մի Ոսկի անուն լեառն, ուր ոսկի եւ արծաթն հատանի, երկրաբուսակ ծնեբեկ:

Եւթներորդ՝ Սառդոնիա է, մեծ կղզի հուպ կալով ընդ Խոնիոս կղզին ըստ հարաւ կոյս երկայն ձեւով՝ ի հիւսիսոյ ի հարաւ կոյս: Եւ ունի գետս հինգ, եւ լերունս դժարս, եւ ամուր տեղիս, յորում քաղաքս ինն, եւ գաւառս քսան. մանր կղզիք՝ ինն: Եւ շրջապատելութիւն Սարդոնիայի՝ ինն հարիւր ութսուն:

Ութերորդ՝ Սիկիլիա է, մեծ կղզի, յարեւելից կալով Սարդոնիոյ կղզոյն: Եւ է Սարդոնիա երեքանկիւնի ձեւով ծայրէ ի ծայր հարիւր մղոն, յորում գաւառք հինգ, քաղաքք ինն, գետք իննետասան, կղզիք վեշտասան, լերու/171b/նս երկուս՝ Պառթենոս, յորմէ գետք բոխեն եւ Բառկանոս, որ կատարն հանապագ հրով տոչորի: Եւ է Սիկիլիայ յոյժ արգաւանդ:

Իններորդ՝ Սարմատացոց հասարակն է, յարեւելից կալով Գերմանացոց՝ առ հիւսիսային Ովկիանոսի մինչեւ յանձանաւթ երկիր եւ ցՌոպիա լեառն, յորմէ ելանէ Տաւնայիս գետն: Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքունս՝ ի քրիստոնէից զՔոսոն ցամաք կղզի եւ ի հեթանոսաց բազումս: Ունի եւ զլերունս եւթն, եւ գետս երեքտասան, եւ փոքր լիճ մի, եւ կղզիս երկուս: Ունի եւ բազինս երկուս, մին կոչի Աղեքսանդրոս եւ միւսն Կեդարոս:

Տասներորդ՝ Թրակացոց աշխարհն յարեւելից կալով Դադմատիոյ: Եւ ունի Թրակիայ փոքր աշխարհս եւթն, մի մեծ, յորում են Սկղաւանիացոց ազգն քսան եւ հինգ, որոց փոխանակ մտին գութքն: Ունի եւ լերինս եւ կղզիս եւ լիճս, եւ քաղաքամայր գերջանիկն Կոստանդինուպալիս:

Մետասաներորդ՝ Մակեդոնիա<է>, յելից կալով Յունական պեղադոսին, առ երի Դադմատիոյ եւ Թրակիոյ՝ ի հարաւ թողլով զԵլլադա: Եւ ունի Մակեդոնիա լերինս վեց, եւ գետս տասն, եւ գաւառս երեսուն, քաղաքս վեշտասան, ծովս վեց, եւ կղզիս /172a/ չորս: Եւ լինի ի Մակեդոնիա մարմարիոն կանաչ սպիտակախայտ:

Երկոտասաներորդ՝ Ելլադա է, առ երի կալով Մակեդոնիոյ ի մէջ պեղագոսից: Եւ ունի Ելլադա փոքր աշխարհս վեց՝ զԵպիւռոիա, զԱքիա, զԱտտիկէ, զԵբիա ապառաժ եւ զԿրետ մեծ կղզի եւ զՊեղոպոնէոս ցամաք կղզիս: Ունի եւ լերունս, եւ գետս, եւ գաւառս, եւ քաղաքս եւ կղզիս բազումս յոյժ: Ունի եւ մեհեանս երիս՝ զԻւռիա, եւ զԱրտեմիա եւ զՊոսիտինոս: Եւ ունի մայրաքաղաք հոյակապն զԱթէնս: Ունի ջուր ի կղզոջն զՄիւռտիոյ, որ անպատճառ այսր եւ անդր հոսի, ուր խորասոյգ եղեւ Արիստոտել:

4

Առաջին՝ Մաւրատանիա Տինգիտանիա է, որ տարածի ի Սեփտիոյ, առ հարաւ կոյս, առ Արեւմտեայ ովկիանոսի: Եւ ունի Մաւրիտանիայս լերունս վեց, գետս վեշտասան, ազգս վեշտասան եւ Պիւռոն Պոնդիոն, որ է հրագոյն դաշտ:

Երկրորդ՝ Մաւրատանիա է Կեսառնիսեան, յելից կալով Տինգոտանէոյ, տարածի ի հարաւոյ կոյս, առ ի շեղ զելիւք: Եւ գետս ունի եւթնետասան եւ փոքրալիճս երիս, եւ

լերինս հինգ, քաղաքս բազումս, եւ գաւառս քսան՝ եւ հինգ եւ պղնձփողանոցս երկրին: Լինին սյանս եւ ընտիր կինաբառիս, այսինքն /172b/ դեղ կարմիր:

Երրորդ՝ Ափրիկէ է, յելից կալով Մաւրատանիոյ, առ ծովեզերքն: Եւ բաժանի Ափրիկէ յերկուս աշխարիս եւ մի այլ առանձնական, որ Տոիպալիսն անուանի: Եւ ունի Ափրիկէ լերունս ութ, գետս ութեւտասն, գաւառս քառասուն եւ մի, լիճս ութ, ծովս հինգ, կղզիս վեշտասան, եւ քաղաքս բազումս. եւ զԿարկեղոնիս մայր քաղաքաց: Լինի եւ յԱփրիկէ բանճար ինչ լուտաս անուն, զոր եթէ ուտէ որք՝ զհայրենիսն մոռանայ: Լինի անդ եւ կարմիր յակունդ: Լինի անդ եւ սաթ, բոյս փափուկ ի ծովու, որ ելեալ յարեւ եւ յաղ՝ կարծրացեալ քարանայ:

Չորրորդ՝ Կիւռենական, որ է Պանդապալիս, յելից կալով Ափրիկոյ, յերի ծովեզերք: Ունի գաւառս մետասան եւ գետս երիս, եւ լիճ մի, եւ կղզիս երկուս, քաղաքս բազումս, եւ Հերակլեան լերունս, եւ զանգժտաբեր երկիրն, եւ տեղիս ինչ նորակերպ գազանուտս, եւ զերէ կորնական, պարտեզսն եւ քարայրս Ղակենիկացոցն:

Հինգերորդ՝ Մարմատական է. Լիբի եւ ամենայն Եգիպտոս, յելից կալով Կիւռենական աշխարհին, առ երի ծովեզերն արեւմտեայ խորշ երկճղին Կարմիր ծովուն: Եւ ունի Եգիպտոս լերինս երկուտասան եւ գուբս երկուս շինուածոյս եւ լիճս երիս ինքնեղս, եւ երիս լիճս այլ, զոր Նեղոսի վտակքն առնեն: Եւ գետս ունի զՆեղոս, որ է Գեհոն: Ունի եւ գաւառս քառասուն եւ մի, /173a/ եւ քաղաքս բազումս եւ մայրաքաղաք զմեծն Աղեքսանդրիա: Ունի եւ կղզիս ի Յունաց ծովուն մետասան, եւ ի Կարմիր ծովուն երիս: Ունի եւ կղզիս գաւազուտ եւ զանանձրեւ երկիր:

Վեցերորդ՝ Ենտոս Լիբի, որ թարգմանի Ներ(ք)սագոյն Եթեոպիա, յելից կալով յԱրեւմտական ծովուն Ովկիանոսի, առ այրեալ գաւտեան: Եւ ունի Ենտոս Լիբի լերունս ութ, եւ գետս քսան եւ մի, լիճս վեց, եւ կղզիս երեքտասան: Եւ ճարակեն զԵնտոս Լիբիա ազգս վեշտասան, աճեալ եւ բաժանեալ յետ աշտարակին: Եւ են բնակիչք աշխարհի սաստիկ սեւաւք, եւ ձկնակերք, եւ մարախակերք. որ են գլխաւոր ազգս՝ նաւապին, փուն, քաւթական, կրրնաւապին եւ այլ բազումք: Լինին եւ թզուկ(ք) մաւտ ի յՈվկիանոս Սպիտակ լերինս: Անցանեն ընդ Լիբի եւ ըռնգեղջիր գազանք յՈվկիանոսէ ի Նիլոս, ուր կոկորդիլոս գազանն անցանեն ընդ Լիբի եւ այլ գազանք, որ կոչին ափինդք, մարդակերք են եւ զինեսերք:

Եւթներորդ՝ Վերին Եթոպիա է, յելից կալով Ենտոս Լիբիոյ եւ յերի Եգիպտոսի առ Կարմիր ծովուն, Արաբացոց ծովուն, անցանելով զայրեալ գաւտեան հարաւակոյս առ Նեքսագոյն Եթոպացիովք ցնոյն սահմանէ Ենտոս Լիբի: Եւ ունի Եթոպիայս այս փոքր աշխարիս երիս՝ զԲարբառնա, եւ զԱզանիա եւ զՏրոգլոդիայիկոն եւ գաւառս ազգաց երեսուն եւ վեց: Ունի գետս երիս, եւ լերունս տասն: Ունի եւ կղզիս յԱրաբացոց ծոցին քսան եւ եւթն: Ունի եւ զմոաբեր երկիր եւ խնկաբեր եւ զկինամոնաբեր գաւառս:

/173b/ Ութերորդ՝ Ներքին Եթոպիա է, որ սկսանի յԱրեւմտական անձանաւթ երկրէ՝ յերի կայով Ովկիանու եւ Ենտոս Լիբիոյ: Ի հարաւոյ սահմանի անձանաւթ երկրան, առ որով բնակեալ են երկորականքն Եթոպիացիք. ի հարաւոյն կողմանէ յայրեալ գաւտոյն մերկք վիշապամարդք: Եւ յերի նոցա ըստ հիւսիւտոյ, առ Ովկիանոսիւ, Ձկնկեր Եթոպացիք, յորում կենդանի ինչ տոբոս անուն՝ ոչխարանման երկակենցաղ

եւ ձկնկեր: Առ որով Սթակեանք եթոպացիք, յորում առեւծաշուն գազանն: Որոյ ըստ հիւսիսոյ փոքրեղջերք եթոպացիք, յորում կենդանի ինչ նման գանալուտ մարդամարտ եւ անուշահոտ: Առ որով դեռբեկէ եւ դեռմոնայք, յորում քաղծասէր եւ մարդամարտք եւ ընծուղտք: Որոց ի հարաւոյ մինչեւ ցՆիլոս աշխարհն մի եթոպացոց, յորում փիղք սպիտակք, եւ եղջիւրակնջիթք եւ վագերք: Որոց արեւելից լերունք՝ յորում վագերաձիք, եւ այժամարոք եւ ինձք գեղեցկախայտուցք: Եւ սոցա ի հարաւոյ աշխարհ մի առ անձանաւթ երկրաւ, յորում գազան ինչ կանացի ունալով գլուխ եւ ձեռս, ապա անձն՝ /174a/ չորքոտանի գազանի: Այլ մարդակերպ գազան ինչ՝ մերկք, շանկնճիթք, եւ մեծականջք, ագեւորք որպէս առիւծակապիկք: Որոց ելից բարձրագագաթունք Եթոպացիք, եւ այլք մինչեւ ցԼուսնի լեառն, յորում լինի քաւշք սպիտակք, գաւրաւորք եւ բեռնաւորք: Որոց յեւից կուսէ են գաբասացիք: Եւ ի ներքոյ սոցա՝ մարդակեր Եթոպացիք, յորում գազան ինչ հրաշունչ վարագանման: Եւ սաղմանդար գազան, որ նման կովդից է, անցանէ ընդ հուր եւ շիջուցանէ:

5

Առաջին բաժին Ասիա է: Եւ ունի Ասիա կողմունս կողմունս: Եւ նախ զկողմն Մէջերկրեայս, որք մտանեն ի մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի:

Առաջին Բիւթանիա է, յեւից կալով թագաւորական քաղաքին Կոստանդնուպալսի: Եւ ունի Բիւթանիա լերինս, եւ գետս վեց, եւ լիճս մի, եւ կղզիս: Ունի եւ մայրաքաղաքս երիս՝ զՆիկիա, զՔաղկեդոն, զՆիկոմիդա, որք ունին ընդ ինքեանս քաղաքս երեքտասան եւ գեղաքաղաքս ծովեզրայինս եւ վաճառատեղիս: Լինի ի Բիւթանիա հող սպիտակ, գոր մանր աղացեալ եւ ցանեալ ի վերայ ցորենոյ ի քանդուկս ճիճի չուտէ:

Երկրորդ՝ Միւսիա է, որ կոչի Ելիսպոնտոս, առ երի կալով Բիւթանիոյ: Եւ ունի Միւսիա լերինս երիս, գետս երկուս, կղզիս երկուս, քաղաքս քառասուն եւ մի, եւ մայրաքաղաքս ծովեզրեայ զԿիւղիկոն, յորում տաճարն է Աստուծոյ անուանեալ Հրաշից:

Երրորդն՝ Ասիա առանձնակ է, յերի կալով Միւսիոյ, առ ծովուն: Եւ ունի Ասիա փոքր աշխարհս չորս՝ զԼիւդիա, զԵւոդիա, զՅոյնս, զԿառիա: Ունի Ասիա լերինս հինգ, եղզիս տասն, գետս հինգ, քաղաքս հնգետասան, մայրաքաղաքս զԵփեսոս, եւ այլ եւս՝ վեց: Լինի յԱսիա մագդիկ խիժ ի ծառոց:

Չորրորդ՝ Լուսիա է, յեւից կալով Ասիոյ: Ունի Լուսիա լերունս երկուս, գետս երիս, կղզիս հինգ, քաղաքս երիս եւ մայրաքաղաքս Չմիւռնիա: Եւ լինի ի Լուսիա խունկ, զիւզին, եւ տրաստէ՝ ի ծառոյ ծորելոյ որպէս զխիժ լոյծ, որպէս մեղր կամ որպէս մրուր:

Հինգերորդ՝ Փոնդիա է, յեւից կալով Առանձնակ Ասիոյ, յերի Լուսիոյ: Եւ ունի յինքեան Փոնդիա աշխարհս Պիսիդիա, որոյ մայրաքաղաքն՝ Անտիոք եւ այլ քաղաքք քսան եւ վեց, ուր ասեն շինեալ տապանն Նոյի, մայրաքաղաք Լաւոդոկիա, եւ այլ քաղաքս քառասուն: Եւ աշխարհս Մաղատառիա, որոյ մայրաքաղաք Իզմիլիա եւ այլ քաղաքք երեսուն: Եւ ունի Փոնդիա լեառն Դիդոն, /175a/ եւ գետս հինգ, եւ լիճս չորեքտասան եւ դաշտս մեծամեծս:

Վեցերորդ՝ Ոնոռիա է, յելից կալով Բիւթանիոյ եւ առ երի Փռիւզիոյ մինչեւ ցՊոնդոսի ծով: Եւ ունի Ոնոռիա մայրաքաղաք Կղաւիդիպաւլիս, ընդ որս այլ քաղաքս հինգ: Եւ գետ ունի զՊառթենոս զերեքարմատեան:

Եւթներորդ՝ Պափղագոնիա է, յելից կալով Ոնոռիա աշխարհին եւ առ երի ծովուն Պոնտոսի: Ունի գետս երկուս, մայրաքաղաք զԳերմանիապաւլիս, որ բերդն Գանգրեայ: Ունի եւ այլ քաղաքս հինգ, եւ բերդս մետասան եւ գաւառս վաթսուն եւ մի:

Ութերորդ՝ Գաղատիա Առաջին է, յելից կալով Փռիւզիոյ եւ առ երի Պափղագոնիոյ: Եւ լեառն ունի զերրորդն Դիդիոմս: Եւ գետս գնոյն, որք յառաջասացեալ աշխարհս թափին:

Իններորդ՝ Գաղատիա Երկրորդ է, յելից կալով Փռիւզիոյ եւ առ երի առաջին Գաղատիոյ մինչեւ ցՊանփիլիա: Ունի լերինս եւ գետս անուանիս, որ յառաջասացեալ գետքն անկանին եւ որք զլիճս առնեն:

Տասներորդ՝ Պանփիլիա է, յելից կալով Լիւսիոյ եւ առ երի Գաղատիոյ: Ունի յինքեան փոքունս աշխարհս հինգ, եւ լեառն մի, գետս չորս, կղզիս երկուս, եւ քաղաքս բազում: /175b/ Լինի ի նմա խունկս ստիւրակի թփոյ միոյ ի կերուածէ ճճոյ:

Մետասաներորդ՝ Իսաւռիա է, յելից կալով Պանփիլիոյ, առ երի ծովուն հանդէպ Կիպրոս կղզոյ: Եւ ունի լեառն զՏարոս, եւ գետս Ոռիմակոս. ի նմա մայրաքաղաք Սելեւկիա, եւ այլ քաղաքս քսան եւ հինգ: Եւ լինի յաշխարհիս այս խունկ ստիւրակ, կուճաբո, գոմփետ, կալամիտ, ամենեքեան ի ծառոյ ծորելոյ ի ճճոյ միոյ կերուածոյ:

Երկուտասաներորդ՝ Լիկայոնիա է, յելից կալով Գաղատիոյ եւ առ երի Իսաւռիոյ, ունելով գտարածումն իւր ի դաշտս ընդարձակս, եւ լերունս, եւ գնոյն գետս եւ լիճս:

Երեքտասաներորդ՝ Կապադովկիա Երկրորդ է, յելից կալով Գաղատիոյ եւ առ երի Լիկայոնիոյ, ունելով մանունս լերինս եւ գետս. եւ լայնութիւն տարածեալ ի դաշտս ընդարձակս:

Չորեքտասաներորդ՝ Լինոպոնտոս է, յելից կալով Պափղագոնիոյ եւ առ երի Կապադովկիոյ ծովու: Ունի եւ լերինս փոքունս եւ բազումս, եւ գետս հզարս զԻռինս, եւ այլ մանունս:

Հինգետասաներորդ՝ Պոնտոս Պոլեմենական է, յելից Պոնտոսի եւ առ երի Պոնտոս ծովու: Ունի լերունս փոքունս եւ դժուարավայրս, եւ գետս զԹեոմոնտոն, եւ մանունս:

Վեշտասաներորդ՝ Կապադովկիա Առաջին է, յելից կալով Երկրորդ Կապադովկիոյ, առ երի Պելոմենական Պոնտոսին, որ ունի լեա/176a/ոն զԱնտիտարոս, եւ այլ փոքունս, եւ գետ զՄելաս եւ այլ զԱդիւս է:

Եւթուտասաներորդ՝ Կիլիկիա, յերի Առաջին եւ Երկրորդ Կապադովկիոյ, յելից կալով Ղիկոնիոյ եւ Իսաւռիոյ: Լերունս ունի զՏարոս, եւ գետս վեց, եւ մայրաքաղաքս երկուս՝ զՏարսոն եւ զԱնարգաբա. եւ այլ քաղաքս բազումս, եւ բերդս, եւ գրունս երկուս՝ ելանելոյ Ասորեաց: Եւ Կիլիկիա է ամենաբեր հանգոյն երկրին Յորդանանու:

Ութեւտասներորդ՝ Կիպրոս կղզի է, յեւից կալով Պանփիլակական պաղեգոսին, առ երի Իսաառիոյ եւ Կիւլիկիոյ : Եւ ունի Կիպրոս լեառն զՈվդիմպոս, եւ գետս երիս: Լինի ի նմա լատան՝ ի ցողոյ անկեալ զխոտոյ կոռի ի թափիչն զվարոցս, եւ մաւրուս քաւշից: Եւ ունի Կիպրոս զսահմանս իւր ի յերկայն մասունս երիս եւ մասն մի, իսկ լայնն՝ մասն մի:

Իննեւտասներորդ՝ Հայք են, յեւից կալով Լիկիոյ, առ Տաւրոս լերինն: Եւ ունի լերինս երիս, եւ գետս երիս, եւ դրունս երկուս՝ ելանելով յԱսորոց:

Քսաներորդ՝ Առաջին Հայք են, յեւից կալով Կապադովկիոյ, առ երի Երկրորդ Հայոց: Եւ սահմանի յեւից Եփրատու. եւ լեառն /176b/ ունի Առգէնոս, եւ գետ զԱլիւս եւ այլ մանունս:

Քսան եւ միերորդ՝ Երկրորդ Հայք են, որ կայ յեւից Կապադովկիոյ. եւ երկայն տարածի մինչեւ յԵփրատ: Եւ ունի այլ գետս երկուս, եւ լերինս բազումս եւ մեծամեծս:

Քսան եւ երկուերորդ՝ Պոնտոս Կապադովկիա է, յեւից կալով Պոդոմենական Պոնոսի, առ ի ծովուն ցՄոսքական լերունս, որ բաժանեն ընդ նա եւ ընդ Մեծ Հայս: Ունի լերինս երեք, եւ գետս չորս:

Ահա կատարեցան ի Միջերկրայքս կոչեցեալ:

Քսան եւ երեքերորդ՝ Սարմատացոց աշխարհն հասարակն է, որ բաժանեալ է արեւելեան ծայրին Ռիպիա լերամբ եւ Տանայիս գետով եւ Միոտիս ծովակաւ. եւ անտի ընդ Կովկասային լերինս՝ առ Վրաւք եւ Աղուանիւք՝ մինչեւ ցԿասբից ծովն: Եւ ունի Սարմատիա լերունս զՇանթայինն եւ զՁիականն, եւ այլ լերինս եւ գետս բազումս, եւ գեթանասնավտակեանն Աթըլ, յորում ամրանայ ազգն Բասլաց: Եւ բնակին ի Սարմատիա ազգք բազումք, որք են այսոքիկ. Խազիրք, Բուխք, Բարսիլք, Ապշեղք, Ափխազք, թագաւորական Սարմատք. Ձիակերք, Նախճամատակեանք, Որջլակերք, Միսիկացիք, Միթոնիկացիք, Ամագոնք, Ալանք, Խեբուրք, Քուգեւորք, Միլիմք, Արգաւետք, /177a/ Մարգոյլք, Թակոյիք, Արգոդք, Գաճանք, Փինճք, Դուադք, Խոնք, Ափուրք Ծանաւրք՝ յորում Ալանաց դուռն, եւ Ծիծեն դուռն, Թուժք, Խուժք, Քիսք, Մարդակերք, Յիաւատք, Գուդամակարք, Դուիցուկք, Դիդոյք, Ղեկք, Տապաստաւանք, Աղուտականք, Խենաւկք, Շիպդք, Ճիդաք, Խեդայք, Կասքք, Փուխք, Շրուանք, Խարանք, Թաւասպարոտք, Հեճմատակք, Իժմախք, Փասխս, Քոսխ, Փոքոնակ, Բաքանք, Մազքուրքք, մինչեւ ցԿասբից ծովն՝ յորս բազուկն Կովկասու հայի, ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ՝ աշտարակ ահագին՝ ի ծովուն կացուցեալ: Իսկ ի հիւսիսոյ նորս՝ Հոնք. եւ քաղաք նոցա Վառաչան, եւ այլք ընդ նմա. եւ թագաւորն հիւսիսոյ է հականն՝ որ է տէր Խազրաց, եւ ղշխոյն թագուհի է, Խաթունն, որ է կին հականայ ի Բարսլաց ազգէն:

Քսան եւ չորսերորդ՝ Կողքիս է, այսինքն Եգեր, յեւից կալով Պոնտոս ծովու, առ երի Սարմատիոյ, առ Վրաւք եւ մեծ Հայովք. եւ ունի Եգեր փոքր այշխարհս չորս՝ զՄառնիւղիւ, զԵգրեւիկիւ, զԽազիւ, զՃանիւ, որք են Խաղտիք: Ունի լերինս բազումս, եւ գետս, եւ գաւառս, եւ քաղաքս, եւ բերդս, եւ գեղաքաղաքս եւ վաճառատեղիս:

Քսան եւ հինգերորդ՝ Վեռիա է, այսինքն Վիրք, յելից կալով Եգեր, առ երի Մարմա/177b/տիոյ, առ Կաւկասաւ մինչեւ ցԱղուանից սահմանն, եւ Հայոց սահմանն առ Կուր գետով: Եւ զաւառք են ի Վիրս այսոքիկ. Կաղարջք, Արտահանք, Շաւշեթ, Ջաւախք, Սամցխէ, Աճարա, Թորգով, Աթիսիս, Տառնիսիս, Մանգղեաց փոք, Քուեշ փոք, Բողնա փոք, Թռեղք, Կանգարք, Տաշիր, եւ Աչաւ, եւ Գուան, Երիսիս, Քուղիթ, Կաւկիսիս, Սացխումեթ, Խանիսիս, Յիրասա, Չմա, Բալզալեթ, Կխուեթ, Երցոյ, Խերկ, Թիանեթ, Ծուփա, Քեթ, Չելթ, Վեղիս, Յիխուբուելդա, Շուշք, Պարուար, Ծոբափոք, Չորոփոք եւ քաղաք Վրաց Տփլիսիք, Սամշուղէ, Մծխեթի, ուր սուրբ խաչն է: Ունի եւ բերդս եւ գետս լի ձկամբք:

Քսան եւ վեցերորդ՝ Աղբանիա է, այսինքն Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Մարմատիոյ առ Կաւկասաւ մինչեւ ի Կասբից ծովն եւ ցՀայոց սահմանն առ Կուր գետով: Եւ ունի Աղուանք դաշտս արգաւանդս, եւ գետս բազումս, եւ եղեգունս հզաւրս, եւ քաղաքս, եւ բերդս, եւ գեղաքաղաքս: Եւ զաւառք են այսոքիկ. Եխնի, Բեխ, Քամբեճան, Հողմաղ, Շաքէ, Գեգաւու, Ոստան, Հաբանդ, Իմարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իբազկան. եւ այլ զաւառք, զոր ի Հայոց հանեալ է. Շակաշէն, Գարդման, /178a/ Քուստիփառնես, Կողթ, Ազուէ, Թուչքատակ, Ռառոստակ, Ռոտպակեակ, Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հարճլանք, Պաճանք, Մոխանք, Վակունիք, Փոքր Հաբանդ, Սիսական, Ռոտաստակ, Բերձոր, Ասոռոս մինչեւ ի խառնումն Երասխայ ի Կուր գետ:

Քսան եւ երթներորդ՝ Մեծ Հայք են, յելից կալով Կապադոկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Սիջազետաց: Եւ ի հարաւոյ սահմանի Ասորեստանի եւ դառնայ առ Ատրպատականի ընդ Մարս մինչեւ ի մուտս Երասխայ եւ Կասբից ծով. իսկ ըստ հարաւոյ առ երի կալով Աղուանից եւ Վրաց եւ Եգեր մինչեւ ցնոյն դարձուածք Եփրատայ ի հարաւակոյս: Եւ ունին Հայք լերունս անուանիս եւ գետս մեծամեծս եւ մանունս. եւ ծովակս երիս: Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս հնգետասան, որ են այսոքիկ. Բարձր Հայք, այսինքն Կարնոյ կողմն, Չորրորդ Հայք, այսինքն Աղձնիք, Տուրուբերանք, Մոկք, Կորձայք, Պարսկահայք, Վասպուրական, Սինիք, Արցախ, Փայտակարան, Ուտիացիք, Գուգարք, Տայք, Այրարատ: Արդ կամիմ զդոսս մանրամասնաբար պատմել, թէ եւ սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր եւ ի քարտեզ:

Արդ ունին Բարձր Հայք զաւառս ինն. Դարանաղի, Առիւ, /178b/ Մզուր, Եկեղեաց, Մանանագի, Դերջան, Սպեր, Շատգոմք, Կարին: Եւ ըստ անուանդ, արդարեւ բարձր քան զամենայն երկիր, քանզի ի չորս կողմանս արձակ է: Գետս ունի, եւ լերունս, եւ երես բազումս, եւ հաւս պիտանիս, եւ ջերմուկս, եւ աղս, եւ զայլ պարարտութիւնս, եւ քաղաք զԿարնոյն:

Երկրորդ՝ Չորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց. եւ զաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բաղահովիտն, Ծոփք, Անձիթք, Գորիք, Գեգիթ: Եւ ունի Չորրորդ Հայք բերդս, եւ գետս, եւ լերինս եւ բիրեղ: Ունի եւ երիս, եւ հաւս, եւ ձկունս, եւ ի զազանաց՝ զառեւծ:

Երրորդ՝ Աղձնիս առ Տիգրիս գետոյ կայ. եւ զաւառս ունի տասն. զԱրզն, զՆփրկերտ, զՔեղ, զԿեղթիկ, զՏատիկ, Սաղու, Վանաց ձոր, զԽերհեթս, զԳեղ, զՍալնոյ ձոր, զՍանասուն: Ունի նաւթ եւ երկաթ, առաւել եւ գղթոր, եւ հաւ՝ զղեղիով:

Չորրորդ՝ Տուրուբերան յելից կայ Չորրորդ Հայոց: Գաւառք են նորա վեշտասան. Խոյթ, Ասպակունիք, Տարան, Արշամունիք, Մարդաղի, Դաստարաւորք, Մուրաճատափ, Դալառ, Հարք, Վարաժնունիք, Բգնունիք, Երեւարք, Աղիովիտ, Ապահունիք, Կորի, Խորխորունիք: Ունի եւ ծովն Բգնունեաց երկայն հարիւր մղոն եւ ի լայն՝ վաթսուն: Ունի եւ գազպեն, եւ մեղր եւ մա/179a/շկամիրգ եւ պիստակ, եւ երկաթ, եւ նաւթ:

Հինգերորդ՝ Մոկք յելից կալով Աղձնեաց, յամուրս Տաւրոս լերինն: Գաւառս ունի ինն. զԻշայր, զԻշայր միւս եւ զԻշոց գաւառ, զԱռուենից ձոր, զՄիջա, զԱռանձնակ Մոկս, զԱրքայից գաւառ, զԱդաստեայ ովիտ, զՋերմաձոր: Եւ ունի ի մրգոց արշակ եւ մանրագոր եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտուց, եւ հաւուց կաքաւս:

Վեցերորդ՝ Կորճէք յելից կայ Մոկաց առ Ասորեստանի: Եւ գաւառս ունի մետասան. զԿորդիս, զԿորդիս վերին, զԿորդիս միջին, զԿորդիս ներքին, զԱյտուանս, զՄոթղանս, զՈրսիբանս, զԿարատունիս, զՃահուկ, զՓոքր Աղբակ: Եւ ունի գառիկ. եւ ի պտղոց՝ շահղանակ:

Եւթներորդ՝ Պարսկահայք յելից կայ Կորճէից առ Ատրպատականի: Ունի գաւառս ինն, որ է. Կուրիճան, Մարի, Թրափի, Ացուերս, Ըոնա, Տաբերս, Չարեհաւան, Չարեւանդ, Հեր: Եւ ունի երէս, ցիռ եւ այծեամն:

Ութերորդ՝ Վասպուրական ի մտից է Պարսկահայոց եւ առ երի Կորճէից: Գաւառք նորա երեսուն եւ հինգ. եւ այսոքիկ Ռշտաւնիք, Տոսք, Բողունիք, Արճիշահովիտ, Բոտիղովիտ, Կուզանովիտ, Դառնի, Առբերանի, Բժունիք, Առնիոյտ, Անձաւացիք, Տրապատունիք, Երուանթունիք, Մարդաստան, Արտագ, Ակէ, Աղբակ մեծ, Անձախի ձոր, Թոռնաւան, Ճուաշ, Առոտ, Կրճունիք, Մեծունիք, Պալունիք, Գուկան, Աղանտոռոտ, Պատսպարունիք, Արտաշեան, Արտաւանեան, Բաքեան, /179b/ Գաբիթան, Գազրիկեան, Տագրեան, Վարաժնունիք, Գողթն գինեւէտ, Նախճաւան, յորում քաղաքն, եւ Մարանդն:

Իններորդ՝ Միւնիք յելից կայ Այրարատոյ ի մէջ Երասխայ եւ Արցախայ: Ունի գաւառս երկոտասան. Երնջակ, Ճահուկ, Վայու ձոր, Գեղարքունի, եւ ծովն, Մոտք, Աղահէճ, Ծղուկք, Խաբանդ, Բաղք, Չորք, Արեւիք, Կաւսական: Լինի ի նմա՝ մուրտ, եւ գերեր, եւ նուռն, եւ արմտիք:

Տասերորդ՝ Արցախ յերի կայ Միւնեաց: Եւ գաւառք են նորա երկոտասան, զոր Աղուանքն ունին. մեւս Խաբանդ, Վակունիք, Բերձոր, Մեծիրանք, Մեծկուանք, Հարջլանք, Մուխանք, Պիանք, Պաճկանք, Սիսականք, Քուակք, Քուստիփառնէս, Կողթ, յորում լինի քարախունկ:

Մետասաներորդ՝ Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ: Ունի գաւառս երկոտասան. Հրաքոտպերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան Բագինն, Քոնկեան, Ռովտիբաղա, Քաղանտոտ, Բոռոսպիճան, Հանի, Աթլի, Բագաւան, Սպանդարանպերոժ, Որմզդեպերոժ, Ալաւան: Լինի ի նմա բամբակ անբաւ եւ գարի ինքնաբոյս:

Երեքտասաներորդ՝ Ուտի է, մտից կայ Երասխայ, ի մէջ Արցախայ եւ Կուր գետոյ: Եւ ունի գաւառս, զոր Աղուանք ունին, եւթն. Արանտովտ, Տոի, Ռոտպտակ, Աղաւե,

Տուչկատակ, Գարդմուն, Շակաշեն, Ուտի առանձնակ, յորում Պարտաւ քաղաք: Եւ լին/180a/ի նմա ձիթենի, վարանդենի եւ յասմիկ եւ հաւոց կատակ:

Չորեքտասաներորդ՝ Գուգարք ի մտից կայ Ուտիոյ: Եւ ունի գաւառս, գոր Վիրքն ունին, ինն՝ զՉորոփոր, զԿողբափոր, Շորոփոր, Տաշիր, Թոեղք, Կանգարք, Արտահանք, Ջավախք, Կաղարջք: Լինի ի նմա անալուտ, եւ հաճար ծառ, եւ սրովիլ եւ տաւսախ:

Հնգետասաներորդ՝ Տայք առ Եգերք կայ ամրոցաւք եւ բերդաւք կառուցեալ: Եւ ունի գաւառս ութ. զԿողբերաց փոր, զՊարտիզաց փոր, զՃակատաս, զԲոխա, զՈքաղէ, զԱգորդափոր, զԱրսեացփոր: Եւ լինի Տայս՝ թուզ, եւ նուռն, ազատոր, սրովիլ պտղախունկ նուշ:

Վեշտասաներորդ՝ Այրարատ ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացոյ: Եւ գաւառք են ի նմա քսան. Բասեան, Գաբեղեանք, Աբեղեանք, Հաւունիք, Արշարունիք, Բագրաւանդ, Ծաղկոտն, Ճակատք, Մասեացոտն, Կոզայաւիտ, Աշոց, Նիգ, Կոտայք, Մաղաղ, Վարժունիք, Ոստանն, Դունայ քաղաքն, Արածոյ կողմն մինչեւ գղաշտն Շարուր: Եւ ունի Այրարատ լերունս, գետս, եւ դաշտս պիտանիս, եւ երես, եւ հաւս եւ զամենայն պարարտութիւն, եւ զծովակն Գայլատու, եւ որդն սիգաբերեալ արմատոց առ ի զարդ կարմրութեանս գունոյ. եւ զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ եւ յարքայանիստ /80b/ Վաղարշապատ քաղաքի:

Ահա կատարեցան ամենայն Հայք:

Քսան եւ ութերորդ՝ Ասորիք յելից կալով իւրեանց ծովուն եւ հիւսիսոյ Հրեաստանի: Եւ ունի Ասորիք փոքր աշխարհս ինն, լերունս անուանիս՝ զԼիբանան եւ զԿարմեղոս, եւ գետս հզաւրս զՅորդանան, եւ քաղաքս բագումս, եւ մայրաքաղաք զԱնտիոք, եւ զԴամասկոս, զԿն(ս)րիմ եւ զԱմասիա. եւ զորունս երկունս, եւ վայրս ընդարձակս, եւ պիտանիս եւ բերրիս:

Քսան եւ իններորդ՝ Հրեաստան է, յելից կալով Փինիկական պեղագոսին: Եւ սահմանի Եգիպտոսի եւ ապառաժ Արաբիա: Եւ ունի Հրեաստան աշխարհս երիս՝ զԳալիլիա, զՍամարիա եւ զԻդումիաս, եւ լիճս երկու՝ զՏիբերադայ եւ զՄեռեալ ծովն, եւ գետ զՅորդանան: Ունի եւ քաղաքս բագումս, եւ մայրաքաղաք գտորքն Երուսաղէմ: Եւ է Հրեաստան քաղցրաբեր, պտղալից եւ անուշահոտ, որ բոխէ զկաթն եւ զմեղր:

Երեսներորդ՝ Ապառաժ Արաբիա, յելից կալով Եգիպտոսի եւ արեւմտից ճղի Կարմիր ծովուն՝ ընդ որ անցն Իսրայէլ, յերի կալով Ասորոց եւ Հրեաստանի: Եւ ունի Ապառաժ Արաբիա փոքր աշխարհս երկու՝ զՏաճկաստան եւ զՓառանիտիս յորում գտունն Աբրահամու բաջաղեն լինել. եւ այլ եւս երիս աշխարհս. եւ գետս՝ եւ ոչ մի:

Երեսն եւ միերորդ՝ Միջագետք են, յելից կալով Ասորոց առ Եփրատ գետով, եւ ի մտից Ասորեստանի առ Դկղաթ գետով, յերի /181a/ կալով մեծ Հայոց: Ունի լերունս երկու, եւ գետս երկու, եւ քաղաքս բագումս, յորոց մինն է Ուռհա՝ ուր անձեռագործ պատկերն է Փրկչին:

Երեսն է երկուերորդ՝ Բաբելացիք, յերի կալով Միջագետաց առ Դկղաթաւ մինչեւ ցՊարսկային ծոցն. եւ ունի աշխարհս չորս՝ զԱկողա, զԲասրա, զԲաբելոն, զՏիւրքն: Եւ գետ ունի զԵփրատայ վտակսն եւ զԴկղաթայ: Եւ ունի այլ քաղաքս եւ գաւառս բազումս: Եւ լինի ի սահմանս այսորիկ ակն սարդիոն եւ ոսկէքար: Եւ է Բասրա ամենալից վաճառաւք, եւ եկք նաւաց Հնդկաց եւ ամենայն կողմանց արեւելից:

Երեսն է երեքերորդ՝ Անապատ Արաբիա է, յերի կալով Միջագետաց ըստ հիւսիսի, յելից կալով Ապառաժ Արաբիոյ եւ ի մտից Խուժաստանի: Եւ ունի Անապատ Արաբիա ազգս ինն, բայց յեառն եւ գետ՝ ոչ մի:

Երեսուն է չորրորդ՝ Երջանիկն Արաբիա է յերի կալով ապառաժ Արաբիոյ մտանէ ընդ մէջ խորշից Կարմիր ծովուն որպէս ցամաք կղզի: Եւ է աշխարհս ամենաբերս: Եւ ունի յինքեան ազգագաւառս յիսուն եւ չորիս, լերունս տասն, գետս չորս, աղբիւր մի, եւ կղզիս բազումս: Եւ է աշխարհս ամենաբերս եւ ամենագիւտս, է որ իւրմէ աշխարհէն. եւ է որ ի վաճառուց եկելոցն՝ ի Ճենաց եւ ի Հնդկաց: Գտանի անդ ոսկի եւ ակունք պատուակ/181b/անք, խունկք բազումք եւ եղք անուշունք, եւ փայտք անփուտք. անտի էր եւ ի տիկինն Սաբայ: Եւ բնակիչք աշխարհին ոմանք քաջասեւաւք են, եւ ոմանք սիկասեւաւք, ոմանք սպիտակասեւաւք, տխրագոյն քան զմեզ: Եւղք անոյշ ի նմա, եւ ծաղիկք հնգետասան՝ հալի, ջափրի, մաղապ, խալսկ, քեղխալիունա, խալարա, բուխտակ, նարդին, բալասան, բան, յասմիկ, նարդան, վարդ, մանուշակ, միզագոշ:

Երեսն է հինգերորդ՝ Մարք են, որ կոչին Քուստի Քապկոխ, յելից կալով Հայոց եւ յերի Կասբից ծովուն: Ունի աշխարհս զայսոսիկ. զԱտրպատական, զՌէ, զԳեղան, զՄոկան, զԴիղումն, զԱհմադան, զԴաբաւան, զՏապարաստան, զԱմեղ, զՌուան: Ունի լեռունս եւ գետս, եւ զծովակն, որ կոչի Կապուտան: Ունի քաղաքս բազումս, յորոց մինն է Գանձակ Շահաստան:

Երեսն է վեցերորդ՝ Արուաստան, որ կոչի Ասորեստան, այսինքն Մուծոյ, յելից կալով Միջագետաց առ երի Հայոց: Ունի լերունս, եւ գետս, եւ քաղաք զՆինուէ:

Երեսն է եւթներորդ՝ Եդիմացիք են, որ կոչին Քուստի Խորասարան, յելից կալով Դկղաթայ եւ ի մտից Պարսից: Եւ ունին Եդիմացիք աշխարհս փոքունս, զայսոսիկ. զԽուժաստան, զՄայ, զՄասպան, զՄիհրանքատակ, զՔաշկար, զՊարմական, զԵրանասան, զՔարկաւատ, զՆոտարտաշիրական, զՄարձինսսհեն: Ունի գետս երիս եւ քաղաքս հինգ՝ յորոց մին է Գունդիշապուրի, յորում զազնիւ շաքարն գործեն: Ունի /182a/ կղզիս երկու հանդէպ իւր ի պարսկային ծոցին:

Երեսն է ութերորդ՝ Պարսք են, որ կոչին Քուստի Նեմեռոս, յելից կալով Խուժաստանի եւ առ երի կալով Մարաց: Ունի յինքեան փոքր աշխարհս՝ զՊարս, զԱսպահան, զՄէշուն, զՀակար, զԱնախտ, զԿրման, զՏուրան, զՄակուրան, զՄնդ, զՄրան, զՍպետվաշտ, զՍագաստան, զԱպղաստան, զԳեր, զՄեշմիահիկ, զՍագուն, զԽուճիխրոյտան, զՊահղն, զԿերուհա: Ունի եւ գետս, եւ կղզիս եւ քաղաքս բազումս, յորոց մին է Ռեշիր ի Պարսան քաղաք՝ յորում ազնիւ մարգարիտն ելանէ եւ գոհարք՝ մարգարիտ այս է. դրակ, վեցդանկեան արժէ ԽՌ դոմախ Ը միշխոյ, Գ դանքա, Դ պարմուշքա պարուշիա, հաւթա դրամ, հաշթա դրամ, դահա դրամ:

Երեսն է իններորդ՝ Արիք են, որ կոչին Քուստի Խորասան, յելից կալով Մարաց եւ Պարսից մինչեւ զՀնդիկս եւ յերի Վրկանի ծովուն: Եւ աշխարհք են Արեաց այսոքիկ. Կոմշ, Վրական, Ապրշահր, Մրու, Մրումոտ, Հրեւ, Կանդշան, Նասիմանակ, Բժին, Սաղկան, Գողկան, Ապրտիրամ, Հրում Զամպ, Պերոզնահճեր, Դզինուազակ, Վարջան, Ման, Շանջակստան, Բահլ, որ են Պարթեւք, Դովմատ, Վարիմանակ, Շերեմբամիկան, Դոզբոն: Եւ ունի Արիք լերունս եւ գետս /182b/ եւ կղզիս բազումս: Լինի հրա եւ մուշկ, թէպէտ եւ ոչ ազնիւ: Եւ կղզի մի՝ հանդէպ Արեաց ի Հնդկաց ծովու, յորում թզուկք լինի երեքթզեան, եւ պատերազմին ընդ խորդոց հաւուց՝ վասն ճարակելոյ նոցա զանդաստանս Հնդկաց:

Քառասներորդ՝ Սկիւթիա է, որ են նախապատարք, այսինքն՝ Թուրք. որք սկսանին յԱթլ գետոյ մինչեւ ցԵմաւոն լեառն բարձր, եւ անդր եւս՝ ձգի մինչեւ ցՃենս: Եւ Եմաւոն լեառն բարձր եւ երկայն քան զամենայն լերունս: Եւ ունի Սկիւթիա ազգս քառասուն եւ երեք. Ծաւղիկք, Թուխարիկք, Հեփթաղք, եւ այլ խուժադուժ անուանք: Եւ ունի Սկիւթիա լերունս եւ գետս բազումս եւ հզաւրս, եւ գրաշտս անապատս եւ ջերմ երկիր եւ անջուր. ի նմա՝ հրագոյն դաշտն: Եւ են Սողիք հարուստ արուեստաւորք, վաճառականք, որ բնակեալ են ի մէջ Թուրքաստանի եւ Արեաց աշխարհին:

Քառասուն եւ միերորդ՝ Հնդկաստան յելից կալով Արեաց աշխարհին եւ յերի Սկիւթացոց. եւ են հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս, զոր բաժանէ Հոն գետ. եւ ունի արեւմտակողմ ազգս յիսուն եւ ութն, իսկ արեւելակողմն ազգս եւթանասուն եւ երկու: Ոմանք ի նոցանէ մարդակերք են, այլք ագետորք եւ այլք կարճահասակք, տափակաքիթք, լայներեսք, սպիտակք. եւ ոմանք մերկիմաստակք, որք գործս անիրաւս ոչ գործեն եւ զմարմինս կենդանեաց ոչ /183a/ ուտեն: Ունի Հնդիկք լերունս, եւ գետս եւ կղզիս բազումս: Լինի ի Հնդիկքս երէ յամոյրանման սրեղջիւր, որ սպանանէ զառիժ. եւ հրեշ երէ, եւ այլ զազան նման առիժոյ, բայց կնճիթն սուր եւ երկայն. եւ ընձուղտք, եւ կորեանք, եւ պապկայք, եւ աքաղաղք փետրամաւրուսք, եւ փիղք, եւ վագերք, եւ վիշապք, մեծ մրջմունք, եւ մկունք, բեշմշկոյ, եւ կորկորդիլ զազան, եւ միեղջիւրի, որ է մեծ զազան, եւ ի վերայ ողինն ճագք, եւ զփիղ լեզուաւն սպանանէ. եւ պասկուճ հաւ, եւ մուշկ երէ, եւ էշ եղջերաւոր: Լինի անդ ոսկի եւ արծաթ, եւ պղինձ, եւ անագ, եւ մարգարիտ եւ ակն ամենագոհար: Լինի պղպեղ, լինի եւ սնգրուիդ, եւ ամենայն բովոճայք, հալուէ, փաղանգամուշկ, քափուր, ճանդան, նայիբոակ, հիրիբոակ, գոզիբոակ, գոյիբոակ, կասիմոն, գովաղակ, շահաւարմար, դարիշակ, եւ բազում դեղք բժշկականք: Եւ գոհարք հալուէից երեք՝ ինդրասանտրազ՝ ժեռաւոր է ծաղկոտն, լիտրն արժէ դահեկան հինգ, ծամփի, մարխա նման է, ծանր, արժէ լիտրն չորս դահեկան, քաղաքիծեկէ, թեթեւ, արժէ լիտրն երեք դահեկան:

Քառասուն եւ երկրորդ՝ Տապոբանիա է, մեծ կղզի, քան զամենայն կղզիս, հազար հարիւր մղոն յերկայնն, հինգ հարիւր տասն ի /183b/ լայնն երի կալով: Եւ ունի կղզիս այս շուրջ զիւրեւ մանունս հազար երեք հարիւր եւթանասուն եւ ութ: Ունի լերունս, եւ գետս, եւ ազգս երկոտասան: Լինի ի սմա ոսկի, եւ արծաթ, եւ ակունս պատուականս եւ բովոճայք: Լինի անդ եւ փիղք, եւ վագերք: Եւ արք աշխարհին վարսիւք կնոջ պսակեն զգլուխս իւրեանց:

Քառասուն եւ երեքերորդ՝ Ճենաստան է, յելից կալով Սկիւթիոյ մինչեւ յանձանաւթ երկիրն: Եւ է Ճենաստան ընդարձակ դաշտս տարածեալ: Եւ են ի նմա ազգս քսան եւ

ինն, յորոց մինն մարդակերք են: Եւ ունին ճենք լերունս եւ գետս բազումս: Լինի ի ճենաց աշխարհին՝ դարաճենիկ, եւ հոշիբոակ, եւ բոիճենիկ, եւ կասիմոն, եւ սուկոն: Ունի եւ հրէշ, եւ մուշկ, եւ սիրամարգ շատ, քրքում անբաւ: Լինի անդ ապրիշում շատ եւ ազնիւ, վասն որոյ եւ բնակիչքն արուեստաւոր կերպասագործք, հարուստք, ընչեղք, որոց արքայն կոչի ճենբակուր, որ նստի ի քաղաքն Սիռիայ առ անծանաւթ երկրաւ:

Քառասուն եւ չորսերորդ՝ Սինէացոց, առ երի կալով ճենաց մինչեւ ցանծանաւթ երկիր, յորում բնակեալ են ազգք հինգ: Ունի եւ լերունս եւ գետս բազումս: Բայց անտի յանծանաւթ երկիրն, որ ինչ պատմեն՝ անհաւատայիք են, գազանք անծանաւթք, մարդակերք, կիսանձնեայք, երկդիմիք, վեցձեռնիք, փոկոտունք, վիշապատտունք, կիսահաւք, կիսամարդք, անգլուխք:

Ահա կատարեցան ամենայն տիեզերք եւ պատմութիւնք խաւսից եւ ահա կամիմ զչափ դորա համառաւտել մղոնախաղաց ոտնաչափութեամբ աւժանդակաբար ասպարիզաճեմ դիտաւորութեամբ:

ՉԱՏԿԻ ՃԱՌ

/20a/ Չտան սրբոյ զատկիս ուսաք ի Մովսէսէ եւ յելիցն Իսրայելի յԵգիպտոսէ, քանզի գրեալ է այսպէս. Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարովնի յերկրին եգիպտացոց եւ ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Եւ յառաջ մատուցեալ ասէ. Ի տասներորդում աւուր ամսեանս այսորիկ առցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տունս, ապա թե ոչ ըստ տանց տոհմից յաղագս աղքատութեանն հանկանակեալ: Եւ զնովիմբ ածեալ ասէ. Եւ եղիցի պահեալ մինչեւ ցտասն եւ չորս ար ամսոյս այսորիկ. եւ զենցեն ընդ երեկս եւ շաղախեսցեն զբարաւորն. եւ զերկոսեան սեաման յարենէն, որ եղեւ պահպանական անդրանկացն առ ի սատակչէն: Արդ թեպէտ եւ ստուեր հանդերձելոյն, որպէս եւ աստուածայինն առաքեալ համարի, եւ արիւնակ Քրիստոսի. զի եւ եմուտ իսկ Քրիստոս ի տասներորդում աւուր ամսեան առաջնոյ յԵրուսաղէմ յաւուրն արմաւենեաց. եւ պահեցաւ մինչեւ ցչորս եւ տասն ար ամսոյն, յորում երեկոյին ետ իսկ զկենդանարար մարմինն սրբոց առաքելոցն ի կերակուր, եւ կատարեաց զխորհուրդն որ յաղագս այնր: Բայց ոչ է առաջիկայս մեզ մեկնութեան, այդ պատմութեան զատկի, թե ուստի՞ է եւ կամ յումմէ ասացից:

Չտուրք տան զատկիս հաստատեաց տէր ի վերայ լուսնի: Լուր բանին որ ասէ թե՛ Յորեքտասներորդ ար ամսոյս՝ յաղագս լուսալիրն լինելոյ. որպէս եւ Փիղովն ասէ. Քանզի ամիսս զլուսնականն համարի աւուրս զառաջինն սկիզբն լրման լուսնի. վասն զի ոչ յառաջ քան զՄովսէս ամիսք կային եբրայեցոց. եւ ոչ յայնժամ ի նորոյ ինչ հաստատեցաւ, որ չէրն. այդ որպէս ասացաք /20b/ զի լուսնականին ասէ ամիս: Տես զբանն. ոչ ասաց. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց ի նորոյ որ չէրն. այդ թե ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին լիցի յամիսս տարւոյ: Յայտ է թե զաւուրս լուսնի ասէ ամիսս, քանզի լուսնական ամիսք էին. բայց տարի չեւ եւս էր անգարեալ եբրայեցոցն, վասն զի քաղդեականաւն վարէին տարւով եւ ամսովք. եւ ոչ վարկպարագի որպէս լրումն սահմանեաց. այդ որ ի սկզբան արարչութեանն լուսինն էր, զնոյն զայն այժմ սահմանեաց: Քանզի յաւուր արարչութեանն լուսինն չորեքտասնարեայ էր. զի թեպէտ եւ մի ար էր լինելոյ լուսնին, սակայն լիութիւն բոլորութեանն որպէս չորեքտասան ար երեւէր, զի անմարթ էր թերի եւ կիսակատար

լինել լուսնի յաւուր լինելութեան իւրոյ. վասն զի ամենայն արարածք լի եւ կատարեալ ստեղծան. որպէս բանջարքն ոչ դեռարոյսք, այդ հասեալք. եւ ծառքն կատարեալք եւ պտղալիցք, եւ մարդն երեսնամեայ հասակաւ, թեպէտ եւ միոյ աւուր կենդանի: Ըստ նմին արիւնակի եւ լուսին չորեքտասանարեայ լիութեամբ լուսոյն կատարեալ. զնոյն եւ համարեցան վարդապետք եբրայեցոցն յաւուր լինելութեանն չորեքտասանարեայ արարեալ զլուսին. զի ի վերայ նորա հաստատեցան ամիսք, եւ ի վերայ նորա եղեն զիտելի, որպէս եւ տարի յարեգականէ: Քանզի ասեն վարդապետք եբրայեցոցն, եթէ ի չորրորդ աւուր ստեղծան արեգակն եւ լուսին. վասն այնորիկ հասարակաւորութիւն տունջեան եւ զիշերոյ դնեն զաւրն զայն ասելով. եթէ յերկնամիջակին իսկ էր ստեղծումն. եւ ի /21a/ վեցերորդ աւուրն ասեն լիալ զմարդն. եւ յարէն իսկ յառաջ ի թիւ արկեալ զամիսս համարի ասեն. եւ զերկոտասանամեայ կատարեալ զթիւ տարեկանին, ունի եւ հինգ ար ակելիս, որ յառաջ քան զստեղծանել մարդոյն եղել: Արդ յայտ է թէ զտարի յարեգակնէ գիտացաք. եւ զամիսս ի լուսնոյ. որպէս եւ աստուածային բարբառն վկայէ յասելն եթէ՝ եղիցին ի նշանս, եւ ի ժամանակս եւ յաւուրս եւ ի տարիս: Եւ զնովիմբ ածեալ ասէ. Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն մեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տունջեան, եւ զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն զիշերոյ եւ զաստեղս: Եւ եղ զնոսս ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր եւ իշխել տունջեան եւ զիշերոյ. եւ մեկնել ի մէջ լուսոյն եւ ի մէջ իսաւարին: Արդ վասն չափոյ մեծութեանն եւ դրից հաստատութեանն եւ իշխանութեանն եւ որոշմանն եւ այդոց աստեղաց կարգի հանգամանաց ասելն առ այժմ արգելցի, մինչեւ բովանդակեցից զխորհուրդ սրբոյ զատկիս եւ զտոմար ամենայն ազգաց. եւ ապա պատմեցից վերջ եւս թէ զի՞նչ վասն այսր արտաքինքն եւ զինչ եկեղեցականքն:

Բայց մէք երթիցուք անդրէն ի հրամանն Տեառն որ առ Մովսէսն ասէ. Ամիսս այս (Այս ասելով զվաղնջուցն եցոյց լինելութիւն) եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Զզուխ լրմանց լուսնի ցուցանէ յիւրում ընթացից բոլորակին: Դարձեալ ոչխար առեալ ի տասն աւուր ամսոյն:

Տասնեակս այս ունի ժամս ՄԻՄ, որով մարթիմք իմանալ զտունջանականն եւ զարեգակնայինն /21b/ եւ զծագողականն, զի արիւնակ Քրիստոսի է, եւ պահեալ զչորեքտասան. յայտ է թէ լրմանն հրամայէ անսալ. քանզի եւ ոչ լոկ զենումն է արիւնակ Քրիստոսի, այդ եւ ինքն իսկ լուսին, որպէս ամենայն սրբոց հարցն հաճոյ թուեցաւ ասել: Յորոց եւ իմ պսակաւորն Քրիստոսի խոստովանողն եւ Հայաստանեացս հայրն սուրբ Գրիգոր ասելովն, եթէ եկրորդ լուսաւորն իշխանական զիշերոյ գա(յ) բերէ յանձին զարիւնակ միածնի որդւոյն Աստուծոյ պատի թաղի՝ զուշակ թաղելոյ յարութեան մեռելոց: Եւ անուանի տաւն զատկիս յեբրայեցոցն՝ փասկա ըստ նոցա ձայնին, որ թարգմանի անց. եւ եղել իսկ յեզիպտացոց ի քանանացոց յաշխարհին:

Զայս եւ երանելին Գրիգոր Աստուածաբան այսպէս ասէ. Ոմանք կարծեցին զանունս զայս փրկութեան չարչարանաց լիալ եւ ապա հեղղենացի արարեալ զձայնն զփիւրն ի պէ փոխեցին, եւ զկենն ի քէ, պասքա զար փրկչին անուանեցին. ըստ բանին Մովսէսի, որ յերկրորդում արիւնացն ասէ այսպէս. Զեաւթն ար բաղարջ կերիցես ընդ նմա, զի հաց չարչարանաց է: Ասեն վարդապետք եբրայեցոցն, թէ երիս տաւնս զատկի արար Մովսէս յանապատին, եւ ապա ի հակառակել ժողովրդեանն, ամենայն պատուիրանք

աստուծայինք եւ կարգք լքեալ դադարեցին մինչեւ յարն անցանելոյ որդուցն Իսրայէլի ընդ Յորդանան ի տասն ար ամսոյն առաջնոյ. ոչ զամսոյն կոչէ տասն, այդ զլուսնին. քանզի ամսոյն առաջնոյ որ անուանեալն կոչի նիսան ութ եւ տասն էր /22a/ եւ լուսնի տասն: Այս տասնեակ մեծի խորհրդոյն յորում առին զոչխարն, եւ արինակ մկրտութեանն անցն ընդ Յորդանան. եւ գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ յաւուրն արմաւինեաց: Եւ արար Յեսու ի ԻԲ ար ամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի չորեքտասան, ըստ աւուրցն լուսնի. եւ առնէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին. եւ առնէ իբրեւ ի նորոյ սկիզբն կարգաց եւ արինաց որպէս եւ Մովսէս յելանելն յԵգիպտոսէ. քանզի եւ զանցանելն զՅորդանան գետով՝ ելս կոչէ յԵգիպտոսէ: Որպէս եւ ի ժամանակա(կա)ն կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք:

Ասի տանել եւ յաւուրս Եզեկիայի յայդոց ոմանց. բայց վասն զի ոչ յառաջնումն ամսեանն, այդ յերկրորդումն, եւ ոչ ըստ արինացն, ոչ անարգեցաւ. քանզի խառնակ եղեւ եւ անսուրբ: Եւ դադարէ տանն մինչեւ յուր եւ ի տասն ամն Յովսիայ թագաւորի. անդանար տանեալ եւ անդէն դադարեալ լինի մինչեւ յաւուրս Ջորաբաբէլի եւ ցշինած տաճարին: Ապա եւ յետոյ Եզրաս նորոգեալ կարգեաց զինն եւ տասներեակ լուսնի ազգին եբրայեցոց. եւ անխափան տանեցաւ մինչեւ ցիսաչելութիւն Փրկչին. յորում դիպ(եց)աւ ի չորեքտասաներորդումն նիսան լրումն լուսնի յաւուր հինգշաբ(ա)թոջ ըստ արինակի յելիցն յԵգիպտոսէ: Ջի եւ մեք փրկեցաք պատուական արեամբն. եւ արդարեւ ելաք ի ստորայնոցս ի բարձրագոյնսն ուտելով զմարմին ճշմարիտ գառինն Աստուծոյ: Յետ որոյ եւ սուրբ առաքեալքն յամենայն ամի երթալով յԵրուսաղէմ, յիշատակեալ կատա/22b/րէին զար չարչարանաց փրկչին. եւ տանելին զար յարութեանն. եւ աստուածային նշանագործութեամբն զբազումս դարձուցանելին առ Քրիստոս եւ մկրտելին մինչեւ յամն երկրորդ Վեսպիանոսի: Յորում եղեւ հուսկ յետին աւերումն տաճարին եւ պաշարումն եւ կոտորումն եւ գերութիւն Երուսաղէմի. յորում ի սրբոյ Հոգւոյն եւ հրամայեալ՝ ոչ ումեք ի քրիստոնէից լինել անդ յայնմ տանի յաղագս ապրելոյ ի չարեացն եկելոց ի վերայ Երուսաղէմի. եւ արտաքոյ ժողովեալ ի տեղիս տեղիս տանեցին զտան սրբոյ զատկին:

Յետ որոյ Արիստիդէս Մերրի փիղիսոփայ Աթենացի ընկեր Կողրատեայ՝ առաքելոյն ունկնդիր, արար զինն եւ տասներեակն լուսնի Հռովմայեցոց. եւ այսպէս նմանեցուցեալ ասաց եթէ առաջին արն ապրեղի է սկիզբն արարչութեան. եւ վասն զի ի չորրորդն աւուր ստեղծաւ լուսին, ի չորրորդ աւուրն ապրեղի եղ չորեքտասան լուսնի. եւ կարգեաց զնա զլուի բոլորի. վասն զի ի նմին աւուր հանդիպի ըստ եբրայեցոց չորեքտասան նիսան, լրումն եւ անվերադրութիւն:

Յետ որոյ Ղեւոնտէս հայր Որեւզենի արար զիննեւտասներեակն լուսնի Եգիպտացոց եւ եթովպացոց:

Յետ որոյ Որեւզենէս որդի նորուն արար զինն եւ տասներեակ լուսնի արաբացոց եւ մակեդոնացոց ըստ նմանութեան ձեւոյ յեբրայեցոց անդր հայեցեալ:

Յետ որոյ Անատողիս եպիսկոպոս Ղաւողիկեցոց եկեղեցւոյն արար զիննեւտասներեակն լուսնի յունաց եւ ասորոց ըստ արինակի ձեւոյ հռովմայեցոց անդր հայելով:

Արդ թեպէտ եւ այս ամենեքեան նախագոյն կարգե/23a/ցան, սակայն ոչ ընդհանուր աշխարհ ուսան վասն նեղութեան հալածանացն որ ի վերայ քրիստոնէից, այդ տաննէն գոյզ ընդ հրեիցն, տան խառնակ եւ անսուրբ մինչեւ յաւուրս երանելոյն Կոստանդիանոսի եւ ցուրբ ժողովն Նիկիայ: Եւ ապա ասացաւ ի թագաւորէն, մի՛ եւս այնուհետեւ առնել տան խառնակ ընդ տիրասպան ազգին հրեից. տուեալ հրաման ի մէջ առնուլ զիննեւտասներբեակն լուսնի գատկաց, որք կարգեալ էին ի վերայ ճառեալ արանցդ. առնուլ եւ աշակերտս յամենայն ազգաց քրիստոնէից եւ ուսուցանել զնոսս տոմար. եւ զատուցանել զքրիստոնեականս ի հրեականէն. եւ թեպէտ եւ ըստ հրամանի թագաւորին գործն կատարէր, այդ ոչ անտարակուսելի կարգեցաւ արինակք:

Յետ որոյ եւ յաւուրս Կոստանդեայ, որդոյ Կոստանդիանոսի, Անդրեաս եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, կարգեաց տոմար երկերիւր ամաց. սակայն եղ այն ոչ անտարակուսելի: Ապա ի սպառել Անդրեասեան տոմարին ամացն երկերիւրոց յաւուրս Յուստիանոսի թագաւորի, եղեւ բազում խնդիր հմտագոյն իմաստասիրաց՝ վասն ոչ բերելոյ ճշգրտիւ զկարգ իննեւտասն բոլորակին, որ իննսուն եւ հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագայութեան. նոյն յոլովից թուեցաւ դժոխին, զի բազում ամաւք ըստ աւուրց բոլորակին չտողէր զկնի բեսիքիստոնն. վասն որոյ եղեալ քննութիւն յԱղեքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասիրութեանց գտաւ անտարակուսելի արինակ ՇԼԲ ամաց շրջաբերութեանն, որ ստուգիւ /24a/ ցուցանէ զաւուրս չորեքտասան պասեքին: Արդ ոչ եթէ նորաձեւելովս ինչ աղարտեցին զվաղնջուցն դրոշմեալ կանոն, այդ ճշգրտիւ զնոյն չորեքտասան յիննեւտասն յիննեւտասան թուոյ դրոշմեցին յարմարական ոճով. զի անտրտում եւ անստուերագիր տպաւորեալ եղիցի դրոշմունն: Եւ է կարգաւոյ այսոցիկ զլուխ իմաստասիրաց՝ Աղեքսանդրացին Էաս. ունելով իւր ընկեր զհրեայն Փենեհեզ որ ի Տիբերիդայ, զԳաբրիէլ յասորոց, եւ զՅոհան յարաբացոց, եւ զԱբդիէլ յեթիովպայ, զՍերգի ի մակեդոնացոց, զԵւդոզի ի յունաց, զԳիզան ի հռովմայեցոց: Ունելով ընդ իւր եւ այդ ընկերս Էաս ի նոյն եգիպտացոց զորոց անուանս ոչ յիշատակեցաք ի պատմութեանս. բայց ընդ ամենայն ասի լինել արս երեսուն եւ վեց: Աստանաւր ասէ եղեալ զԻրոն վարդապետ դրանն արքունի ի քաղաքին Կոստանդնուպաւոսի, որ ազգականութեամբ աւտար եւ ոչ քաղաքացի, զոր ոմանք եւ աղեքսանդրացի իսկ գոլ ասացին: Չսա զչարեալ ասէ ընդ ժողովս իմաստասիրացն որ յԱղեքսանդրիայ, իբր քամահանս իւր վարկանել զոչ անդր կոչեցեալ, հակառակ ճշմարտութեանն մաքառի, խոտէ զկարգեալն ի նոցանէ: Նոյնպէս եւ զառաջնոց եղեալսն գոզեալ իբրեւ տգէտս զնոսս համարեալ, առնէ ժամանակագրութիւն նորաձայն, հակառակ աստուածային գրոց, եւ ամենայն ժամանակագրաց, նոյնպէս եւ տոմար. եւ փոխէ զիննեւտասներբեակն լուսնի ի վեցէն ապրեղի, եւ փոխանակ կարգէ հինգ ապրեղի, եւ դնէ զնա զլուխ բոլորի. եւ առնէ իւր արինակ գտասն փարմութի ըստ եգիպտացոց, որ ի մենջ պարմափիւրն ձայնի. եւ դնէ զնա զլուխ բոլորի՝ լրումն եւ անվերադրութիւն, հակառակ առաջ/24b/նոցն: Որպէս եւ նոքա եբրայեցին հայելով ձեւացուցին. սորա նոյնպէս զեգիպտացին արարեալ արինակ, իբր թէ ցուցանել իմաստասիրացն Աղեքսանդրի եթէ յոյժ տգէտ էք. որ եւ ոչ ձերոյ ազգիդ հմուտ էք, զիա՛րդ այդոց ազգաց կարգեցէք տոմար: Եւ զհռովմայեցոցն այսպէս կարգեաց. եղ զհինգ ապրեղի՝ զլուխ բոլորակի. եւ կարգեաց նմա վերադիր Ը, վասն զի երեքտասանաւրեայ ասաց զլուսին յաւուր ստեղծման իւրոյ. զուզելով զուրթ եւ զհինգ, այսինքն զվերադիրն եւ զլրումն ի

խորհուրդ նմա համարեցաւ: Այդ եւ երեքտասան շրջառութիւն թուոցն լուսնականաց՝ զարեգակնայնեալքն խորհուրդ նմին համարեցաւ. եւ արկանելով ի վերայ վերադրին ԺԱ ԺԱ թիւ մինչեւ ցկատարումն իննետասներեկին, եւ բոլորին. եւ ապա երկոտասանթիւ արկանէ զվերագրովն ըստ կարգի կատարման իննետասներեկի. եւ ի վերայ լրմանն արկանէ քսան թիւ. եւ առնու ի բաց երկոտասան եւ մետասան ցկատարումն իննետասներեկին եւ բոլորին. եւ ապա առնու ի բաց ԺԲ ԺԲ վասն կատարման իննետասներեկին եւ խաղացուցանէ անուացեալ ծանուցեալ ի ճարտարութիւն արուեստին պանծալով. աղարտեալ խոտէ զառաջնոցն զիրս. եւ բռնութեամբ հրամանի թագաւորին ընդ ամենայն աշխարհն զիրն հաստատեաց: Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի հաւանել ժամանակագրութեանն Իրոնի շփոթելոյ եւ յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. եւ մի՛ ընդունել զթիւս տոմարի նորա զխաբողականս. եւ լիցուք ընդ նգովիւք սուրբ հարցն: Քանզի գրեալ է այսպէս. Անիծեալ որ առնէ զատիկ ընդ տիրասպան ազգին /25a/ հրէից, եւ կամ ընդ շամրտացոց եւ կամ ընդ Պաւղիանոսաց: Անիծեալ որ առնէ զատիկ յերեքտասան լուսնի: Արդ Իրոն թեպէտ եւ բիր անգամ կարծէ ճարտարանալ, սակայն ոչ զերծանի ի նգովիցս յայցանէ. զի որ ի միոյն փախչի եւ ի միւսն շաղախի, նման է այնմ, որ սակաւ աղաւթ եւ բազումս հայիոյէ: Քանզի իբրեւ դիպի ի շարաթու հինգ ապրեղի ըստ Իրոնական թուոյն, համարին զնա լրումն, եւ ի վեց ապրեղի առնեն զգատիկն, որ դիպի ի վեշտասան նիսիան, եւ տաւնեն զոյգ ընդ հրէից, ստունկնեալ հարցն նգովից: Քանզի ոչ երբեք տաւնեալ է հրէից ի հնգետասան նիսան գտան զատկի, այդ միշտ տաւնեն ի վեշտասան նիսան, նոքա եւ շամրտացիք. քանզի շամրտացիք հաստատագոյն քան զնոսա ունին. թեպէտ եւ ի նոցանէ են ուսեալք: Այդ եւ Պաւղիանոսք ի նմին աւուր տաւնեն եւ զինչ ար եւ դիպի լրմանն, կիրակէ անուանեն, որպէս եւ հրեայք շարաթ անուանեն, թեպէտ եւ չիցէ շարաթ:

Բայց մեզ քաւ լիցի տաւնել ընդ նոսա եւ կրել նգովս. քանզի ամենայն ջան սրբոց հարցն վասն ի նոցանէ զատուցանելոյ էր. յոր եւ Հայաստանեացս առաւել ճշմարտապէս անուանի զատիկ Տեառն, այսինքն զատուցեալ յամենայն հեթանոսականաց եւ հրեականաց տաւնից. սրբեալ եւ լիալ տաւնիցս Տեառն տաւն, եւ ժողովոց ժողով: Որպէս եւ Գրիգորի Աստուածաբանի հաճոյ թուեցաւ ասել. վասն այնորիկ եւ հրամայեցին մեզ հարքն՝ մի տաւնել ի լրմունս եբրայեցոցն, այդ յինչ աւուրց շարաթուն դիպեցի չորեքտասան լուսնի, պահել զշարաթն զի երթիցէ հասցէ ի կիրակէն Յարութիւնն Տեառն, եւ լցցէ զխորհուրդն, եւ ի շարաթու չարչարանացն պահեացէ: Վասն /25b/ այնորիկ եւ պասքայ կոչեցին, որ թարգմանի չարչարանք. եւ եթէ կիրակէ դիպեցի արն չորեքտասաներորդին լուսնոյ, անցանէ, զի մի՛ տաւնե(ս)ցուք ընդ հրէիցն, այդ երթիցէ հասցէ ի միւս շարաթն. եւ ոչ ինչ դանդաղելի եւ երկմտելի է առնել զվեց արն աւելի, այդ պահել. քանզի յուսացեալ վստահէ եթէ ի շարաթուն լնու զխորհուրդ չարչարանացն, եւ ի կիրակէն զյարութեանն: Եւ եթէ դիպեցի չորեքտասան արն լուսնի ի շարաթուն, անցանէ աւուրք միով, զի մի՛ տաւնեցի ընդ հրէին. եւ փոխանակեացէ կիրակէ սուտ ընդ ճշմարիտ կիրակէին. որպէս եւ պողիանոսքն ժպրհին առնել, այդ զի կացցէ շարան շարաթ, եւ ոչ որպէս հրեայքն առնեն՝ շարաթ փոխանակեալ զաղաւնի եւ կամ որպէս պողիանոսքն զկիրակէն: Այդ եկեղեցի Աստուծոյ ոչ փոխանակէ կիրակէ ընդ կիրակէի եւ ոչ շարաթ ընդ շարաթու, այդ յետ ճշմարիտ շարաթուն եկեացէ ար մեծ Յարութեանն: Արդ մի՛ պատրեցուք ճարտարութեամբ արուեստին Իրոնի. զի եթէ քննեցուք, ոչինչ

ի նորայն գտանի ճշմարիտ. թողում ասել զընդ նգովիւքն լինել. այդ եւ ըստ արուեստին իսկ գործ ձեւացումն ըստ մտահաճութեան իւրոյ եւ ոչ ըստ ճշմարտութեան. քանզի ի ժամանակագրութեան իւրում ՐՇ ասէ ի ծննդեանն Փրկչին. եւ արիւնակ առնու զչափս տապանին վկայութիւն, ի հինգ կանգնոյ եւ ի կիսոյ լիալ. եւ այս զի՞նչ նմանութիւն իցէ արկեղ եւ ժամանակաց. եւ կամ զի՞նչ նմանութիւն իցէ երեքտասանարեայ զլուսին ասել յաւուր ստեղծման իւրոյ. մինչ ամենայն արարածք կատարեալ եւ լի ստեղծան, ընդէ՞ր լուսինդ լինէր թերի եւ կիսակատար: Քան/26a/զի զիտեմք կատարեալ զբանջարս ստեղծեալ, եւ կատարեալ զանասունս, զի առժամայն իբրեւ լինիցին, գտցի առաջի նոցա հունձք պատրաստականք առ ի դարման կերակրոյ նոցա. որպէս զի եւ որ այժմս ծնանին, ի նախախնամութենէն Աստուծոյ գտանի կարն ի ստինս մարց իւրեանց պատրաստական, որպէս եւ ի սկզբանցն ծառքն կատարեալք եւ պտղալիցք առ ի կերակուր մարդոյն. որպէս եւ աստուածային բարբառն վկայէ յասելն թե՛ Բղիսեցէ երկիր զբանջար խոտոյ, եւ զճառ պտղաբեր, որոյ սերմն իւր ի նմին: Արդ եթե ամենայն արարածք լի ու լի ստեղծան, ապա եւ ոչ լուսինն թերի եւ կիսակատար, այդ անիւ բոլորակութեանն լիութեամբ լուսոյ կատարեալ: Բայց Իրոն ոչ ճշմարտութեամբ խաւսեցաւ. եւ բանք նորա ոչ են հաւատարիմք. եւ զի՞նչ վկայութիւն իցէ զուգումն լրման եւ վերադրի՝ երեքտասանարեայ լիութեան լուսնի. զի այդ եւս մետասան լրմունք եւ իւրեանց վերադիրքն ոչինչ խորհուրդ լինելութեան ումեք բերին: Եւ զի՞նչ նմանութիւն իցէ թիւ երեքտասան շրջառութեան լուսնականաց զարեգակնայնեալքն աւուրցն լինելութեան. վասն զի եւ ոչ երեսնեակ, եւ ոչ վաթսնեակ թիւք լուսնի՝ խորհուրդ լինելութեան ումեք բերին: Արդ ի մէջ երկուց վատթարաց պատեհագոյն զԵրմոզենի ասացեալսն համարին քան զԻրոնի. թեպէտ եւ ի ճշմարտութենէ երկոքեան վրիպեալք: Եւ ասէ Երմոզենէս այսպէս, թե Միարեայ ստեղծաւ լուսին, վասն զի մի ար իսկ էր լինելութեանն. եւ զոյգ ընդ արեգակն ստեղծաւ ի միում տեղի ի միջոց երկնի ծագման կողմանէ. որպէս եւ այժմ յորժամ երթայ դիպի լուսին արեգակն՝ առա/26b/ջին ար անուանի լուսնի: Արդ թեպէտ եւ սխալ է եւ սա, սակայն նմանագոյն պատեհեցուցեալ քան զԻրոնին: Բայց մեք յերկուցունցոյ զատ լիցուք. իսկ Իրոն իբր այնչափ ճարտար քան զամենեսեան զինքն վարկաւ, ընդէ՞ր եւ ընկալաւ իսկ զհինգհարիւրակն կարգեալ ի յեասայ. հի՞ մ ինքն ոչ եգիտ, այդ արիւնակ. նա ուրեմն ոչ ոք կարէ դնել այդ հիմն քան զՇ եղեալ ի յեասայ: Արդ որոյ գործ շինածի ի վերայ հիմանս այսորիկ շինի, նիւթ ծախողական վերջնեան փորձեցէ տաժանելեան եւ երկայնագունիւն, որ ոչինչ համարի զճարտարութիւն արտաքոյ ճշմարտութեան: Եւ զի՞նչ պարտ է մեզ զԻրոնին պատմել, եւ կամ ընդդիմանալ նմա, այդ զնորայն ի նորայն թողցուք աշակերտս հաւանեալս. եւ մեք տաւնեցուք մի աշխարհապէս, այդ աստուածաբար, մի երկրաւորաւրէն, այդ զերաշխարհիկ. մի զհանդերձելոյ ստուերականն, այդ զճշմարիտն, եւ որ ինչ յաղագս մերն, մանաւանդ որ Տեառնն է, հետեւելով սրբոց հարցն, զի մի լիցուք ընդ նգովիւք նոցա. մի՛ տաւնեցուք յերկոտասաներորդում ամսեան յառաջ քան զհասարակել տունջեան եւ զիշերոյ, այդ յամսեանն առաջնում տաւնեցուք. քանզի յամսեանն առաջնում չարչարեցաւ Քրիստոս զկնի հասարակելոյ տունջեան եւ զիշերոյ. որպէս եւ ի սկզբանցն ստեղծաւ մարդն առաջին զկնի հասարակելոյ տունջեան եւ զիշերոյ. յամսեանն առաջնում էլ յԵգիպտոսէ. փրկեցաւ ի Փարաւովնէ, ազատեցաւ ի կաւոյն գործոյ. ի նմին աւուր եւ /27a/ մեք փրկեցաք յաներեւոյթ բռնաւորէն եւ ի դառն գործաւորաց նորին զաւրաց, եւ ազատեցաք ի կաւոյն մեղաց չարչարանաւք փրկչին. եւ մի՛ տաւնեցուք ընդ տիրասպան ազգին հրեից, զի մի լիցուք հաղորդ մեղաց նոցա,

եւ կրիչ նգովից. եւ մի տաւնեացուք ի երեքտասան լուսնի, զի մի՛ ընդ տգէտս եւ ընդ արինազանցս համարեացուք, եւ արտաքոյ փակելոցն եղիցուք, լսելով Ձոչ գիտեմն զձեզ. եւ մի՛ փոխեացուք զսահմանս հարցն. եւ մի՛ ընկալցուք զչորեքտասան լուսնի ի հինգ ապրեղի, այդ զկարգեալն ի սրբոց հարցն. եւ մի՛ դիցուք այդ լրումն գլուխ բոլորի, բայց զհրամայեալն ի Տեառնէ զչորեքտասան նիսան եւ զայդոց ազգաց որ նմայն հանդիպին: Բայց Էասանք որ զԳ նիսան կարգեցին գլուխ բոլորի, եւ ոչ աղարտեցին զառաջինն. բայց զի տոմարն Անդրեասեան երկերիւր ամացն յերիսն նիսան սպառեցաւ. եւ սկիզբն հինգհարիւրեկին ի երեք նիսան եղեւ. վասն այնորիկ եղ ի գլուխ բոլորի. ոչ ի սկզբանէ ելիցն եւ խաչելութեան, այդ նմին իսկ հինգհարիւրեակ բոլորին. բայց խոստովանեցին գլուխ բոլորի զչորեքտասան նիսան, զհրամայեալն ի տեառնէ, որում եւ մեք հետեւեացուք:

Եւ արդ զի՞նչ եւս պակասիցէ այսուհետեւ, եթե ոչ յայտնել կարգաւորութեամբ զտոմար իւրաքանչիւր ազգաց, սկիզբն արարեալ առաջի կարգել զտոմար ազգին եբրայեցոց, զի նա իսկ է գլուխ եւ արինակ ամենայն ազգաց: Արդ քանզի տուչութիւն եկեղեցոյ ուսուցանէ պահել ամի ամի զար բաղարջակերացն. եւ յորժամ դիպի չորեքտասան լուսնի ի չորս անելեացն մինչեւ ի քսան եւ ութերորդն, այսինքն է ապրելի պահեմք եւ առնեմք զատիկ: Իսկ եթե չորս անելեացն է, անդրէն յադ/27b/արս ամիս կոյս կատարիցի երկոտասան թիւք լուսնոյ, միւս եւս այդ ամիս յանելումք ի վերայ երկոտասան ամսոյն, որ անուանեալ կոչի նհանջեալ. զի յայն ամս քանզի պակաս գտանի թիւք ընթացից լուսնի քան զթիւս արեգական, այս այսպէս կազմեցաւ, զի նհանջեալ ամաւք լիցի, որպէսզի երթիցէ հասցէ թիւ ընթացից լուսնի թուոյ ընթացից արեգական, զի եթե այս այսպէս ոչ լինէր, դիպելին երբեք երբեք երկու զատիկք ի միում ամի, այդ նհանջեալ ամիսքն ձգեացեն անցեն զմեզ: Ձի միշտ յետ հասարակելոյ տունջեան եւ զիշերոյ արասցուք զզատիկն. քանզի նոքաւք հասանիմք յամիսն առաջին. եւ զայն պարտ եւ պատշաճ է յանելով ի հարկէ. քանզի զարինակ եւ զնմանութիւն յառաջնում ամսեանն հրամայէր առնել ի հնումն: Ձի չէ իշխանութիւն եկեղեցոյ յերկոտասաներորդում ամսեանն առնել զզատիկն. որպէս եւ աստուածայինն առաքեալ ասէ թե՛ Առաջինքն անցին, եւ ամենայն ինչ վերստին նորոգեցաւ Քրիստոսիւ: Եւ արդ այսուհետեւ ամի ամի զնոյն տրտմութիւն գոր սղեցան առաքեալքն, պահաւք զզեցցուք եւ մեք. եւ ի յարութեան միաձնին ուրախ լիցուք, հաղորդելով մարմնոյ եւ արեան ճշմարիտ գառինն, որ է հացն երկնաւոր: Եւ վասն այնորիկ ի հարկէ ամի ամի առնէ եկեղեցի զզատիկ բաղարջակերացն. զի հաստատեալ կացցէ յիշատակ չարչարանաց Փրկչին. եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք, եւ վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ զաշխարհ ամենայն, վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն եւ երկուց ամաց միանգամայն համարեաց /28a/ ըստ թուոյ Աղեքսանդրացոցն ի ՊԻԸ ամէն մինչեւ յամն ՌՅԿ, այնոցիկ որոց կացցեն յաշխարհի, կազմեցի եւ Աննանիայ որդի Յովհաննիսի Շիրակայնոյ եւ դրոշմեցի առանձինն զբնաւ մի մի ամ ՇԼԲ, ԻԸ կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի ՇԼԲ կարգ, եւ զատի մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի:

Ի յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ

Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տաւնից Աստուծոյ էր յոր հասարս եւ գոր ճառել արժանաւոր եղաք. նախ գտանն ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սկիզբն տաւնից եւ տարեկանաց մերոց, եւ գլուխ կացուրդաց, եւ ամենայնից ի Քրիստոս յիշատակաց:

Տան սրբոյ ծննդեանն Քրիստոսի, ԲԺ աւուրք յառաջ քան գտան մկրտութեանն, ոչ կարգեցաւ ի սրբոց առաքելոցն, եւ ոչ ի նոցուն փոխանորդացն, որպէս եւ յայտնի է ի կանոնաց սրբոց առաքելոցն: Քանզի գրեալ է ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպէս. եթէ՛ կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, թէ եղիցի տաւն ծննդեանն եւ Յայտնութեանն Տեառն եւ փրկչին մրոյ գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցոյ, որ ար ԻԱ է տիրեթ ամսոյ, որ է Ջ յունուարի ըստ հռովմայեցոց:

Իսկ յետ բազում ամաց նոցա կանոնադրութեանն գտաւ տաւնս այս, որպէս ասեն ոմանք, յաշակերտաց հերձուածոյն Կերինթոսի, եւ ի յունաց ընկալեալ եղեւ որպէս արդարեւ ի տաւնասիրաց եւ ի ջերմագունից բարեպաշտութեան, եւ ի նոցանէ ընդ աշխարհ ամենայն սփռեալ տարածեցաւ: Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի, ի սուրբ ժողովին Նիկիայ ոչ եղեւ ընկալեալ տաւնս այս ի սրբոց հարցն. այդ ըստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն սահմանեցին տաւնիլ: Եւ յայտ է ի թղթոյ երանելոյն Մակարայ հայրապետին Երուսաղէմի, գոր ի Հայաստանեայցս գրեաց աշխարհ յաղագս խրա/13a/տու. սրբոյ մկրտութեանն. քանզի նա մի էր ի սրբոց ՅԺԸ հարանցն, որք ի Նիկիա. եւ գրեալ է այսպէս ի վեցերորդ գլխի հրամանի խրատտութեանն. բայց կարգաւորութիւն մկրտութեան սրբոյ աւագանին եւ փոյթ յաւժարութեանն Գ տաւնիցն, յորում առաւել եւս փափագեն միգագո փութացուցանել ի մկրտութիւն զընծայեալսն Աստուծոյ, եւ կատարել զարինակ մեծ փրկական խորհրդեանն, որ ի սուրբ եւ յերեւելի աւուրս կատարեցաւ: Եւ զայս մեծաւ փափագանաւք փութան կատարել ի սուրբ տեղիսս Քրիստոսի. գոր պարտ է եւ ամենայն քրիստոնէից երկիրդածաց Քրիստոսի կատարել ի նոսա զկոչումն մկրտութեանն ի սուրբ յայտնութեանն ծննդեանն տեառն, եւ փրկական զատկի կենարար չարչարանացն Քրիստոսի, եւ ի շնորհալից Պենտեկոստին, յորում աստուածային էջք Հոգւոյն կենդանարարի ի մեզ ծաւալեցան: Չոր պարտ է զհարաքանչիւր տաւնիցն պատճառ ծննդեանն եւ մկրտութեան ծանուցանել, զի եւ դուք ի նոյն փութացեալք կատարեցէք. քանզի լուսաւոր ծննդեանն Քրիստոսի եւ մեր մեղսաքաւիչ ծնունդ սրբոյ աւագանին ի նմին փրկական աւուրն կատարեցաւ. զի ի նմին աւուր առ յանձն մկրտիլ յաղագս առ մեզն զիջանելոյ: Չի ոչ եթէ ինքն կարաւտ ինչ էր սրբութեան, այդ զմեզ կամեցաւ սրբել ի մեղացն պղծութենէ, որ մեծաձայն զոչմամբ աղաղակէ ասելով. եթէ ո՛չ ոք ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ. զի ըստ նմին արինակի ծնեալք ընդ նմա, եւ մկրտեալք ընդ նմին եղիցուք ի սուրբ աւուր ծննդեանն Քրիստոսի:

Իսկ ի կենսաբեր յարութեանն զատկին, ի ձեռն մեռուցանելոյ զմեղս մեր ի ջուրս աւագանին նման/13b/ողք լինիմք մեռելութեան մահուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ երեքկին ընկղմամբն թաղել ի ջուրս սրբոյ աւագանին, զերեքարեայ թաղումն տեառն մերոյ նշանակեմք յանձինս մկրտելոցն, գոր եւ աստուածայինն առաքեալ յայտնապէս ցուցանէ, ասելով, թէ թաղեալք ընդ նմին մկրտութեամբն,

նմանողք եղիցուք նմանութեան մահու նորա. զի եւ նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կեանսն յաւիտենականս:

Իսկ յաւուրն շնորհապարգեւ սրբարար Պենտեկոստեին զլուսապայծառ ազդումն Հոգւոյն կենարարի, որ ի տեսակս հրեղէն լեզուաց իջեալ յառաքեալսն, պարգեւելով նոցա ձեռս ի վերայ մկրտեցելոցն դնելով, ընդունելով պարգեւս ի Հոգւոյն շնորհաց: Ըստ նմինաւրինակի եւ մեք ի նմին աւուր ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով, նոյն հոգի պարգեւի. զորոյ զարինակն զգուշութեամբ անխափան կատարեմք, զի կատարեալք լիցուք: Չայս Մակարիոս:

Չայս վկայէ եւ Մակարայ Աստուածաբանն Գրիգոր յաղագս յերիս տաւնս առնելոյ մկրտութիւնն, ի ճառի մկրտութեանն, բամբասելով զհեղգացեալսն ի մկրտութիւն, ասէ այսպէս: Չայս ինչ եւ զայս բաղբաղես, եւ պատճառես մեղաց պատճառս. ասես, անսամ Յայտնութեանն Տեառն, Յարութեանն Տեառն, ար է ինձ պատուականագոյն Պենտեկոստեին անսամ, ընդ Քրիստոսի լուսաւորել լաւագոյն է. ընդ Քրիստոսի յառնել Յարութեան աւուրն. զհոգւոյն տաւնել զերեւումն: Եւ ապա զի՞նչ. եկեացէ վախճան յաւուր յորում ոչ զիտիցես. եւ ի ժամանակի յորում ոչ կարծիցես. ամենայն քեզ ժամանակ մկրտելոյ. վասնզի եւ ամենայն վախճանի:

/14a/ Իսկ զկնի սորա յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Երուսաղեմի սուրբն Կիրիլ. եւ զթագաւորութիւնն ի սրբոյն Կոստանդիանոսէ պայազատէ Կոստանդոս նորին որդի հանդերձ եղբարքն: Չսա ասեն հաւանել հերձուածոյն Արիոսի. բայց ոչ հակառակ ճշմարտութեանն ինչ մաքառէր, այդ ի կոմս զերկոսեան թողեալ կողմանս, որ ոք զինչ եւ հաճէր՝ ունէր, թէ զուղղափառութիւն, թէ չարափառութիւն: Յաւուրս սորա ընկալեալ եղեւ տաւնս այս ի դրան արքունի. եւ յամենայն տեղիս որ ոք եւ կամէր տաւնել, համարձակութեամբ տաւնէին, բայց ի մայրաքաղաքացն չորից հայրապետացն որ ունէին զաթոռ սրբոց աւետարանչացն: Քանզի առ սովաւ դեռ չէր յափշտակեալ զաթոռ սրբոյն Յովաննու յԵփեսոսէ Կոստանդնուպոլսի, եւ յայտ է ի կանոնադրութենէ ընթերցուածոց սրբոյն Կիրիլի, քանզի գրեալ է այսպէս. եթէ ի ԻՇ ամսոյն դեկտեմբերի է տաւն Դաւթի եւ Յակովբու, զոր յայդ քաղաքս ծնունդ Քրիստոսի առնեն. ասեն վասն այսր Յոյն. այսպէս եթէ վասն զի Հայրապետն ամենայն ուխտին եւ բազմութեամբ ժողովրդականանաւ ի Բեթղեւմ գալով տաւնէ, եւ սակաւք ի քահանայից, որք ի քաղաքին մնան՝ զտաւն Դաւթի եւ Յակովբու կատարեն. իբր թէ լոկ քաղաքին իցեն ընթերցուածքն, եւ վասն այսր գրեաց ասեն թէ յայդ քաղաքս որպէս թէ զԲեթղեւմէ ակնարկելով: Եւ զայս ոչ ոք երբեք ի լաւ իմացողացն յանձն առնու, զի թէ այդպէս ունիմք, հի՞ մ՞ զկանոն ծննդեանն ի վեց յունուարի կարգեաց նոյն ինքն Կիրիլ: Քանզի գրեալ է ի սկզբան կանոնին այսպէս. թէ տաւն սրբոյ Յայտնութեան կատարի ի յունուարի, որ վեց է ամսոյն. /14b/ ժողովին ի հովուանոցն, եւ զայս ինչ կանոն կատարեն. եւ ապա ի Բեթղեւմ եւ ի յայրին: Ահա յայտնապէս ցուցանէ ի միում աւուր տաւնել զերկոսին. Եւ ո՞վ ժպրհեսցի ասել պարսաւանս ինչ երանելոյն Կիրիլի, կամ ի նմանէ կարգեցելոցն. եւ ո՞վ որպէս նա առ Քրիստոսի. եւ առ ու՞մ այնպիսի երեւեալ նշան, եւ յու՞մէ այնչափ բիրք լուսաւորեալք. կարծեմ թէ եւ ոչ ի սրբոյն Պաւղոսէ:

Քանզի յաւուր երեւման լուսեղէն խաչին, անթիւ բիրք բիրուց հաւատացին ի Հրէից եւ ի հեթանոսաց. քանզի ցԿոստանդոս որդի Կոստանդիանոսի արգելեալ էին Հրէայքն ելանել յԵրուսաղեմ. եւ ի նմանէ համարձակեալք ժողովեցան բազում հրէայք, եւ

բնակեցան յԵրուսաղէմ. այդ եւ որք ի Տիբերիայ եւ յայդ քաղաքս Հրեայք եին ի տան անդր եին ժողովեալք, այդ եւ բազումք ի հեթանոսաց վասն ամբոխոյ ժող(ով)ոյն առ ի վաճառ դիմեալ եին, որոց տեսեալ աստուածային երեւումն, հաւատացեալք ի Քրիստոս, ամենեքին դիմեցին ի մկրտիլ, որոց ոչ բաւեցին աւագանք եւ ոչ ջրամբարք կիսդեռանցն: Մինչեւ հրամայեալ երանելոյն զբաղանիսն մեծ սրբել զոր դեմեսուսին կոչեին, եւ անդ եւ առնել փրկական մկրտութիւնն: Այս երրորդ նշան լիալ յԵրուսաղէմ յաւուրս սուրբ Պենտեկոստեին: Բայց ես կարծեմ զսա վեհագոյն քան զառաջինն, որպէս ամենեցուն յայտնի է, էջք Սրբոյ Հոգւոյն յառաքեալսն ի մէջ բազմութեան ժողովելոց հրեից եւ այդոց ազգաց բազմաց, որք ի Գործս առաքելոցն յանուանէ պատմին, եւ յայնժամ առաքելոցն միայն պարգեւեցաւ Հոգին: Իսկ ի յայսմ բազմութեան ժողովրդեան ի ձեռն սուրբ մկրտութեանն /15a/ եւ քան զերկրորդն եւս առաւել բարձրագոյն, զոր Յովսէպոսն պատմէ, եթե յաւուրն Պենտեկոստեիցն դորդին եւ սարսափին նախ զքահանայիւքն պատէր, եւ ապա զբազմութեամբ ժողովելոցն, ապա եւ բարբառ յանկարծակի անդուստ ի ներքին տաճարէն լսելի լինէր զայս արինակ բանից, եթէ՝ Գնամք աստի, գնամք:

Իսկ ի յայսմ ոչ գնան զարութիւնք Տեառն ի ստորնայնոցս, այդ ի վերնոյն աստ զալ յայտնապէս ցուցաւ, եւ ծածկաբար պարգեւեցաւ մինչեւ ցԿոստանդեայ թագաւոր երանելի Կիւրեղ յաւժարեաց գրել թուղթ աղերսանաց եւ կոչել զնա բարեպաշտ եւ տեղեակ աստուծայնոյն. իբր թե ողորջանաւք զնորայն կարծէր շահել զփրկութիւն, առաջի դնելով զաստուածային եղեալ նշանի, եւ զբազմութիւն դարձելոցն, թե զմե՞ եւ ոչ դու ընդ նոսա: Արդ եթէ զսա Յունաց հաճոյ թուեցաւ քամահել, ժամ է նոցա եւ զաւետարանն անպատուեալ, վասն ոչ ընդունելոյ զտան ծննդեանն, զի սա եւ նա ի միում աւուր ցուցանեն եւ զծնունդն եւ զմկրտութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Քանզի գրեալ է Ղուկայ յաւետարանին ի խորհրդեան մկրտութեանն այսպէս. թէ եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ. ահա յայտնապէս ցուցանէ թէ ի նոյն աւուր ծննդեանն մկրտեցաւ եւ սկիզբն արար երեսնամոյն կատարեալ հասակի եւ վարդապետութեան: Ասեն եւ զայս յոյնք, եթե ԺԲ ար սկիզբն մարթի լինել տարւոյն, եւ ոչ մէջ, եւ կամ կատար, եթե այդպէս իմանամք, եւ զեւթանասուն աւուրց մարթի ասել, եթե ոչ մէջ է տարւոյ կամ կատար:

Իսկ վասն առաքելական կանոնին այսպէս ասեն յոյնք, եթե ոչ էր նոցա պարապումն ստուգիւ քննել զաւուրս տանից, քանզի գործ նոցա աւետարանելն էր եւ ի հեթա/15b/նոսականացն զաստուցանել տանից: Արդեւք հաճոյ թուից ի ումեք այսպիսի բան ի վերայ առաքելոցն լսել, թե արդարեւ այնչափ անփոյթ արարին զկարգաւորութենէ տանից, ընդէ՞ր ապա եւ ընդ արեւելս ուսուցին մեզ երկրպագել. հի՞ մ եւ զկիրակէ տանախմբել, պատուել եւ դատարկանալ, եւ զչորեքշաբաթի եւ զուրբաթ պահել. զի թեթեւագոյնք այսոքիկ են քան զտան Ծննդեանն եւ Մկրտութեանն: Բայց տայաք եւ յայսմ եւս նոցա թոյլ, միայն թե այդովքն գային ի հաւանութիւն: Քանզի ասեն վասն սրբոց Հարցն որք ի Նիկիա, եթե ծածկեաց ի նոցանէ Աստուած զայս. զի ոչ զամենայն շնորհ մի ումեք տայ, եթե ոչ էր ճառեալ առ նոքաւք. այդ՝ այդ զիտացին եւ եպերելով ասացին եթե զոր յայլ քաղաքս ծնունդ կարծեն առնել. բայց ես հաւանիմ որով յոյնք պարծին, երանելեացն ասեմ Բարսղի եւ Գրիգորի Անձիանձու գիտեմ զնոսա սուրբս, ճշմարիտս, հոգեւորս եւ հետեւողս առաքելոցն: Եւ եթե էր նոցա հրաման ինչ յաղագս այսր, ընդունէի, զի եւ Պաղոսս հրամայէ, եթե երկրորդին յայտնեսցի, առաջինն լռեսցէ: Բայց ես ոչինչ տեսանեմ զնոցա հրաման

յաղագս այսր տաւնի, բայց որ գերկոցուն տաւնիցն եղեալ է սրբոյն Կիւրդի զընթերցուածն եւ զսաղմոսս, ոչ իմանամ զայն յերկուս բաժանել, այդ թե ի միում աւուր գերկոցունց խորհրդոցն լիով ունի զկարգ եւ պայծառացուցանել զտաւնն:

Իսկ որ սրբոյն Գրիգորի բանիւ կարծեն զատուցանել զտաւնս, ոչ ինչ հրաման գնորայն կարեն ցուցանել վասն այսր. այդ վկայութիւնս իմն առնուն ի նորա ասացուածից եւ ըստ իւրեանց կամացն ձեւացուցանեն. /16a/ ասեն, եթե ի ճառի ծննդեանն այսպէս ասէ. Արդ փոքր ինչ յետոյ տեսցես զՅիսուս սրբեալ Յորդանանաւ. եւ ասեն թե՛ յաւուր ծննդեանն ասաց զայս ճառ. եւ փոքր ինչ յետոյ՝ գերկոտասան աւր ակնարկէ որ յառաջ քան զմկրտութիւնն: Արասցուք առ այս պատասխանի: Ես այսպէս իմանամ եթե անդէն յաղագս նոյն խաւսիցն ասաց՝ փոքր ինչ յետոյ, գոր ասեն իսկ. եթե զայթագղես մարմնանալովն եւ նուաստանալովն. եւ արդ փոքր ինչ յետոյ տեսցես զՅիսուս սրբեալ զՅորդանան իւրով մկրտութեամբն, եւ ոչ նուաստացուցեալ, այդ ճոխացուցեալ զմարմինն՝ ցելլով զերկիւնս եւ աստուածավայելչաբար ի Հաւրէ եւ ի Հոգւոյն վկայելով: Ապա եթե այսպէս իմանաս, իմա՛ եւ յետ յարութեանն եկեալ ի մկրտութիւն. զի առաջի նոյն բանիս զչարչարանաց եւ զյարութենէ ճառեալ ասէ, եւ գնովիմբ ածեալ ի նոյն յարեալ ասէ. արդ փոքր ինչ յետոյ: Բայց եթե մաքրեսցես զմիտս, դիւրով իմանալ ի նոյն իսկ ճառէ, եթե ի միում աւուր գերկոսիս սահմանեաց, քանզի ասէ ի միւսում տեղի ի նմին ճառի այսպէս. բայց այժմ Աստուծոյ յայտնութեանս տաւն է. քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ: Ահա զուգեաց գերկոսիս: Ասեն եւ զայս յոյնք, եթե երկոցունց տաւնիցն կոչի յայտնութիւն, եւ ծննդեանն եւ մկրտութեանն. արդ այս ամենեցուն յայտնի է, եթե ի վեց յունուարի կոչի յայտնութիւն եւ ոչ եթե ի ԻԵ դեկտեմբերի. ոչ ի յունաց եւ ոչ յայդագգեաց. եւ ոչ լսեալ ուրուք երբեք երկուս յայտնութիւնս, այդ մի. ապա թե յայտնութիւն ասէ, եւ զծննդենէ ճառէ, յայտ է թե ի միում աւուր ցուցանէ:

Դարձեալ եւ ի մկրտութեանն ճառէ առնուն յոյնք իւրեանց ի վկայութիւն զբանս զայս: Արդ զծննդեան /16b/ զվայելչականս տաւնեցաք: Եւ գնովիմբ ածեալ ասէ. իսկ այժմ գործքս այդ Քրիստոսի եւ այդ խորհուրդ: Այդ ես հաւանիմ. այդ է գործ եւ այդ է խորհուրդ. բայց ոչ յայդում աւուր. զի եւ առաջինն բան ինձ վկայէ. զծննդեանս զվայելչականս տաւնեցաք ասէ եւ ոչ զծննդեանն, զի եթե երկոտասան աւուրք վերջ, եւ ապա զծննդեանն պարտ էր ասել, եւ ոչ զծննդեանս:

Դարձեալ եթե ոչ էր ի միում աւուր, ընդէ՞ր եւ յիշէր զաւր ծննդեանն, եւ ոչ լոկ զխորհուրդն ասէր, որպէս եւ զայդ տնտեսութեանն եւ զչարչարանաց: Բայց դու գնուազեցուցիչսն ասես, եւ զբարձրացուցանողաւքն զանց առնես, որպէս եւ նոյն ինքն Գրիգոր ասէ: Արդ աղէ զիտեայ ինձ եւ զայն բան որ ի ճառի մկրտութեանն ասէ այսպէս. երիս ծննունդս մեզ զիտէ բանս, որ ի մարմնոյ է, եւ ի մկրտութենէ եւ յարութենէ. եւ գնովիմբ ածեալ ասէ. զայսոսիկ զծնունդս զամենեսեան պատուեալ իմ: Քրիստոս երեւի, զմին փշմամբն առաջնով եւ կենդանականաւ. եւ զմիւսն մարմնանալովն եւ մկրտութեամբն, որով ինքն մկրտեցաւ. իսկ զմիւսն յարութեամբն գոր ինքն սկսաւ, որպէս եղեւն անդրանիկ ի բագում եղբար, նոյնպէս եւ անդրանիկ լինել ի մեռելոց արժանաւոր արար: Արդ յաղագս երկուց ծննդոց, առաջնոյն ասեմ եւ վերջնոյն, իմաստասիրել ոչ է մերձակայ ժամս. բայց վասն միջոյնս եւ որ այժմ մեզ է հարկաւոր, որոյ եւ անուանակից է լուսաւորութեանս աւր: Ահա զուգեաց գերկոսիս, տեսցեն որք միտս ունին. մին ծնունդ ասաց զմարմնանալն, եւ զմկրտիլն ի միում

աուր, յոր եւ անուանի իսկ, ասէ, լուսաւորութեանս ար: Բայց մեք տեսցուք, /13a/ որ եւ Չաքարիայի պապանձամբն հնարեն յոյնք զվեցամսեայ աուրս յղութեան Եղիսաբեթի, որով մարթիմք իմանալ զաւր աւետարանութեանն Գաբրէղի: Քանզի այսպէս ասեն յոյնք եթէ ի նոյն աուր յորում պապանձեցաւ Չաքարիայ, ի նմին աուր մերձեցաւ ի կին իւր, եւ յղացեալ ի նմին իսկ աուր, ուստի թունէն աուրս հարիւր ութսուն, որ դիպեցուցանէ ի քսան եւ եւթն մարտի զաւր աւետարանութեանն Գաբրէղի. եւ անտի թունէն աուրս երկերիւր եաւթանասուն եւ վեց զաւուրս յղութեան սրբոյ Աստուածածնին, ըստ տասնամսեայ աուրոց անդրանկածնութեանն, որ դիպեցուցանէ զծնունդն ի քսան եւ հինգ դեկտեմբերի: Աղաչե՛մ, քաջ միտ դիր եւ քննեցուք տեղիս զայս: Նախ զբնագիրն եւ ապա զաւետարանն, քանզի ասէ բնագիրն այսպէս. եթէ տաւնք իմ նուիրեալքն սուրբ կոչեսցին ձեզ, երիս ժամանակս ի տարւոջն տաւնեսցիք. ամենայն արու ձեր յանդիման լիցին ինձ. եւ մատուցիք պատարագս Տեառն. եւ յառաջ մատուցեալ ասէ. յամսեանն եւթներորդի որ ար մի է, կոչեսցեալ սուրբ լիցի ձեզ, զամենայն գործ մի՛ գործիցէք ի նմա. եւ որ ար տասն է նորին ամսոյ եւթներորդի, նուիրեալ սուրբ լիցի ձեզ: Խոնարհեցուցէք զանձինս ձեր յիններորդէ արեւ ամսոյն երեկորեայ, եւ ամենայն ոք, որ ոչ խոնարհեսցի, սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ: Եւ արն տասներորդ նուիրեալ սուրբ լիցի ձեզ, զի ար քաւութեան է նա ձեզ. զամենայն գործ ի նմա մի՛ գործիցէք. շաբաթ շաբաթուց է հանգիստ. մատուցիք պատարագս Տեառն քաւելով վասն ձեր. եւ որ ար հնգետասան է նորին եւթներորդի ամսոյ, տաւն տաղաւարահարաց /17b/ կոչեսցեալ սուրբ լիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի գործիցէք ի նմա. ի խորանս բնակեսցիք շաբաթուց հանգիստ. մատուցէք պատարագս Տեառն զեւթն ար. եւ արն եւթներորդ սուրբ կոչեսցի. շաբաթ հանգիստ. զամենայն գործ սպասաւորութեան մի գործիցէք ի նմա: Չայս բնագիրն:

Արդ պապանձումն Չաքարիայի ճշմարիտ ի տասն թշրին ամսոյ է. զի նա է ամիս եւթներորդ. եւ այն է ար քաւութեանն, յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբութեանցն մի անգամ ի տարւոջն, զոր եւ Պաւղոս վկայէ: Բայց ի նմին աուր մերձենալ Չաքարիայի առ կինն անպատշաճ էր. զի նա էր քահանայապետ տարւոյն. եւ մեծ տաւն տաղաւարահարացն առաջի կայր. եւ ամենայն Իսրայէլ անդ ժողովեալ էր. զեւթն ար տաւնելոց էին զտաւն տաղաւարահարացն. եւ անմարթ էր քահանայապետին թողուլ զժողովուրդն եւ երթալ ի տուն իւր, զի բացեայ եւ ոչ յԵրուսաղէմ ունէր զբնակութիւն իւր. եւ վկայ ինձ սուրբ Աւետարանն է. քանզի գրեալ է այսպէս. Եւ ժողովուրդն ակն ունէր Չաքարիայի. եւ զարմանային ընդ յամել նորա ի տաճարին. եւ իբրեւ ել՝ ոչ կարէր խաւսել ընդ նոսա. եւ իմացան եթէ տեսիլ ետես ի տաճարին. եւ նա նշանացի խաւսէր ընդ նոսա եւ կայր պապանձեալ: Եւ եղև իբրեւ լցան աուրք պաշտման նորա, գնաց ի տուն իւր. եւ յետ աուրոցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կին նորա: Ահա յայտնապէս ցուցանէ թէ յետ կատարման աուրոցն տաւնականաց եղև մերձենալ /18a/ Չաքարիայի առ կին իւր: Եւ վասն առաւել հաստատութեան բանիս, երկիցս կրկնէ եթէ՝ կատարեալ զաւուրս պաշտմանն. եւ դարձեալ թէ՛ յետ աուրոցն այնոցիկ. եւ ով ոք ոչ գիտէ զոյքս որք միտս ունին. եթէ մինչ ժողովրդեանն հրամայէր սրբել եւ պատուել ոչ միայն զտաւնն, այլ եւ յաղագս տաւնին զամսամուտն, եւ զյառաջիկայ աուրն զերեկոյ: Ապա զիա՞րդ ի մէջ երկուց զխաւոր տաւնիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն, եւ ի տուն երթեալ մերձենայր ի կինն. եւ կամ ի նոյն աուր տաւնին: Եւ արդ մի լիցի մեզ հակառակել եւ վիճաբանել ի ճարտարութիւն արուեստիս պանձալով, այդ ճշմարտութեանն հաւանեսցուք եւ աստուածայնոց զրոց. որպէս եւ յայտնի իսկ եղև ի տասն թշրին ամսոյ պապանձումն

Զաքարիայի, որ է ԻԷ սեպտեմբերի, եւ ի ԻԲ թշրին ամսոյ մերձաւորութիւն
Զաքարիայի, եւ յղութիւն Եղիսաբեթի, եւ թուեալ զաւուրս վեց ամսոյն հարելը ութսուն
աւր, ցուցանէ ի վեշտասան նիսան ամսոյ, որ լինի վեց ապրիլի ըստ Հռովմայեցոցն
ուր եղեն աւետիք սրբոյ կուսին. եւ թուեալ տասնամսեայ աւուրս անդրանկածնի,
կատարի երկերիւր եւթանասուն եւ վեց աւր ի քսան եւ մի տերեթ ամսոյ, որ է վեց
յունուարի ըստ հռովմայեցոց: Յայսմ կացցուք հաստատուն անխախտելի. եւ
քաւ(եւ)մի լիցի մեզ յերկուս բաժանել, այդ ի միում աւուր արասցուք զծնունդն եւ
զմկրտութիւնն. եւ զերկուցունցն ողջ պահելով զկարգս, հետեւեցուք սրբոց
առաքելոցն եւ երանելեաց հարցն որք ի Նիկիայ, եւ մերոց վարդապետացն: Քանզի ոչ
եթէ չեհաս ի նոսա, եւ վասն այնր չ(ը)նկալան, այդ յառաջ քան զբազում ժամանակս եւ
մերս եկն յաշխարհ. եւ ընկալեալ եղեւ որպէս յանգէտ /18b/ եղելոց ճշմարտութեանն.
Եւ հարուստ ամս ձգեալ մինչեւ ցերանելին Յոհան կաթողիկոսն որ ազգաւ
Մանդակունի էր. եւ ապա նորա ի խնդիր եղեալ ճշմարտութեանն եւ քննեալ եւ հասու
լիալ թողուլ հրամայէ. յետ որոյ եւ մեք հետեւեցուք. եւ յունաց զայս արասցուք
պատասխանի, եթէ մեք աշակերտք ենք սրբոց հարցն ձերոց որք ի Նիկիայ. եւ գոր
ուսաք՝ հաստատուն ունիմք եւ ոչ թիրեցուք. դուք եթէ ոչ զձերոց հարցն գնացէք
զճանապարհ. թուի թէ առ ձեզ կրեցան հրէիցն կիրք. որպէս նոքա զՇամրտացիսն
ուսուցին. եւ շամրտացիքն գոր ուսանն՝ պահեցին, եւ դուք նոցա նմանիք. մեր ոչինչ
վնաս է:

Բայց մեք հաստատագոյն եւս քան զշամրտացիսն եւ առաւել բարձրագոյնք եւ
աստուածայինք. եւ առ ձեզ այդ ոչինչ ունիմք պատասխանիս. զի ոչ հրամայէք գործ
ճշմարտութեան, այդ միշտ իշխանութեան, բռնութեան եւ ճարտարութեան:

Գիտեմ սակաւս ի յունաց որք զայդ տանէին մինչեւ ի Յուստիանոս թագաւոր: Եւ ի
նմանէ հարկաւորեալք ամենեքեան ընկալան Երուսաղէմ, Հռովմ, Աղեքսանդր եւ
ամենայն աշխարհ: Բայց մեզ մի լիցի ի մարդկայնոցս երկնչել յահէ, առաւել քան
յաստուածայնոյն եւ եթէ հաճոյ թուեցի ձեզ, զՅովբայն բարբառեցայց. եթէ մոլորեալ
ինչ իցեմ, արարէք զիս իսելամուտ. բայց նա՛ ուրեմն խոտան են բանք ճշմարտի.
սակայն ոչ թիրեցուք ի ճանապարհէ հարցն:

Արդ այսուհետեւ յայտ արասցուք զանցնիւր ազգացն, եթէ յորո՞ւ մ ամսեան կամ ի
քանի՞ աւուրցն լինի սուրբ Յայտնութիւնն:

/19a/ Առաջին յայտնութիւն ըստ Եբրայեցոցն Տիբեթ ամսոյ, որ աւր ԻԱ է միշտ:

Երկրորդ յայտնութիւն ըստ ասորոց Քանուն ամսոյ, որ Զ է միշտ:

Երրորդ յայտնութիւն ըստ արաբացոց Արսոն ամսոյ՝ որ աւր ԻԱ է միշտ:

Չորրորդ յայտնութիւն ըստ եթիովպացոց Թերաս ամսոյ որ աւր ԺԱ է միշտ:

Հինգերորդ յայտնութիւն ըստ եգիպտացոց Տուբիլ ամսոյ որ աւր ԺԱ է միշտ:

Վեցերորդ յայտնութիւն ըստ մակեդոնացոց Մակատրիոն ամսոյ որ աւր ԻԱ է միշտ:

Եւթներորդ յայտնութիւն ըստ յունաց Եւզինեոս ամսոյ որ աւր Զ է միշտ:

Ութերորդ յայտնությունն ըստ հռովմայեցոց յանուարի ամսոյ որ ար Զ է միշտ:

Իններորդ յայտնությունն ըստ հայոց փոփոխմամբ է ըստ չորից չորից ամաց. եւ եթէ զիա՞րդ գիտելի է, եւ կամ ընդէ՞ր ոչ անկայացեալ ըստ այդոց ազգաց, յիւրում տեղոց պատմեցից ըստ կարգի տոմարին: Բայց բազումք ասեն եթէ ար սրբոյ Յայտնութեանն ընդէ՞ր ոչ յայտնեցաւ, քան յորում արուր դիպի եւ տանենք. եւ ասացից: Աւանդություն ունիմք ի սրբոց հարցն վասն զի ի ք(ս)աներորդ արուր ամսոյն պատահեցաւ, ի նոյն արուր եւ տանենք որոյ պատճառ է այս. զի տան սրբոյ Յայտնութեանս ոչ է հրէից, այդ քրիստոնէից միայն. եւ վասն զի ոչ ունէր պէտս զատուցանելոյ յումեքէ, ոչ հաստատեցաւ յեղանակի, եւ ոչ ար նշանակեցաւ, այդ ի վերայ քանիանութեան ամսոյն ուրանար հանդիպեցան՝ /19b/ հաստատեցաւ: Բայց ասացին ոմանք վասն արուր սրբոյ Յայտնութեանն եթէ յուրբաթու հանդիպեցաւ. վասն զի յուրբաթու եղել լինելութիւն առաջին մարդոյն. եւ ոմանք՝ ի շաբաթու: Բայց եւ հաւանեալ եմ սրբոյն Պողիկարպոսի. զի նա աշակերտ էր Յովաննու աւետարանչի, եւ սկանջալուր ամենայն պատմութեանց փրկչին. եւ նա ասէ ի միաշաբաթոց դիպեալ ծննդեանն: Եւ վայել էր իսկ յայնմ արուր յորում եւ սկիզբն եղել արարածոց, եւ ամենայն փրկչականացն այս ար նշանակեցաւ եթէ եմուտ յաշխարհ ծննդեամբ, եւ զկուսութիւն ամբողջ պահելով: Եւ եթէ Յարութիւնն եւ վիմին կնքով մնալ, եւ եթէ յառաջ քան զայն մուտն յԵրուսաղէմ յարուրն արմաւինեաց. եւ եթէ յետոյ էջք Հողոյն յառաքեալսն: Իսկ զար մկրտութեանն յետ երեսուն ամի ի նոյն քանիանութիւն ամսոյն ասաց հանդիպել յարուր չորեքշաբաթոց: Եւ խորհուրդ եւ արինակ ասէ զլինելութիւն արեգական յարուրն չորրորդի: Ի չորրորդ զաւակէն Իսրայելի ծնաւ փրկիչն ըստ առաքելոյն թէ՛ յազգէն Յուդայ ծագեաց տէր մեր: Եւ վասն զի ի միում արուր ամսոյն զերկուսեան տանենք, անմարթ էր զարն յայտնել, վասն զի յայդ եւ յայդ արուր դիպան. այդ ունիմք զքանիանութիւն ամսոյն, եւ շաբաթարեայ մաքրութեամբ պահովք պարկեշտանամք յառաջագոյն. եւ տանենք յոր արուր եւ պատահէ. եւ եարթն ար զկնի, զի ոչ ընդ ժամանակի եւ ընդ արուրդ իշխանութեամբ փակի Աստուած, ըստ տերունեան ձայնին. թէ տէր է որդի մարդոյ եւ շաբաթու:

Խրախճանականք

Խրախճանականք առաջին: Ասասջիր ցրնկերն քո՛ թէ կարող եմ գիտել /196a/ յորում ժամու դու կամիցիս ուտել ճաշ եւ քանի ըմպել զինի: Եւ եթէ ասիցէ քեզ՝ թէ գիտեա՛, ասասջիր՝ թէ կալ քանիանութիւն ժամուն յորում կամիցիս ճաշել. եւ կրկնեսջիր, եւ յաւելցես ի նա այլ եւս Ե. եւ հինգ կրկնեսջիր. եւ յաւելջիր Ժ, եւ Ժ. կրկնեսջիր. եւ կալջիր զքանիանութիւն զինոյն որչափ կամիցիս ըմպել. եւ յորժամ կալեալ լինի նորա զասացեալսս քո, հարցջիր ցնա՛ թէ ո՞րչափ ունիս զմիաբանեալ թիւսդ: Եւ որչափ ասէ նա՛ դու կալջիր. եւ երթ ի բաց ՅԾ թիւ հանապազորդ. եւ զմնացեալն զիտասջիր թէ քանի հարեր է, յայնչափերորդ ժամու լինի ճաշն եւ քանի թիւ ի խոնարհ քան հարերն մնայ, զիտասջիր եթէ այնչափ զինի ըմպէ: Ապա թէ անհմուտ ոք լինիցի յորում զայսն ասասցես եւ հարերն ունիցի զզինին, արասցես նմա պատասխանի՛ եթէ անհնար է միոյ ժամու բաւիլ ի հարեր նուագ:

Խրախճանականք երկրորդ: Ասասջիր ցընկերն քո՝ եթէ երբեմն ի խրախութեան մերում ետես պարսիկ մի պարագայիկ, զգաս մի պար/196b/ազայից յոյն. աղաղակեաց առ նոսա ասելով. «Տայր ոք ինձ զձեզ, եւ ձեր չափ այլ, եւ ի ձեր կիսոյդ չափ այլ, եւ չորեւորիդ չափ, եւ ես ի ձեզ եւ մեք հարեւր լինեաք: Արդ գիտեա՞ լեթ յոյն պարագայիկքն քանի՞ լեալ են: Եթէ ի գիտնոց ոք լինի ընկերն քո՝ արագ իմանայ եթէ ԼԶ են: Ապա եթէ յախմարաց ոք իցե՛ ղեզերումն նորա եւ անգիտութիւն ոչնչիդ քեզ ուրախութիւն լինի:

Խրախճանականք երրորդ: Ասիցես ցընկերն քո՝ երթ գնեա աղանի միոյ դրամի որչափ եւ կամիս եւ ասա նմա որչափ եւ դու կամիս. եթէ ան/197a/կարեայ այնչափ ձագ լեալ յաղանին եւ վաճառեա զձագեանն հանդերձ աղանեաւքն, որպէս եւ դուն գնեցեր. եւ գիտասջիր՝ թէ որչափ դու ասես զձագ աղանոյն, միով աւելի լինին գինք աղանեացն. եւ ասասջիր նմա:

Խրախճանականք չորրորդ: Ասասջիր ցընկերն քո՝ եթէ կարող եմ գիտել՝ թէ քանի դրամ կայ ի քսակիդ քում: Եթէ ասիցե՛ քեզ՝ գիտեա, ասասջիր ցնա՝ եթէ կալ գորչափութիւն դրամիդ. եւ նոյնչափ այլ կալջիր. եւ երկոցունցոյ չափ. եւ որչափ զառաջինն կայր. եւ միաբանեալ թիւդ /197b/ կրկնեսջիր. եւ յորժամ կալեալ լինի նորա զասացեալսն քո, տաջիր բաշխել նմա զիարդ եւ կամիցիս, որ գար եւ որ կոճատ. եւ դու ի քո մտիդ առ Ժ թիւն, թիւ մի կալջիր եւ քանի թիւ զայ՝ յայնչափ դրամ լինի լեալ ի քսակին:

Խրախճանականք հինգերորդ: Ասասջիր ցընկերն քո՝ եթէ հոն մի հաւարածութիւն արար ինձ Ճ ամ եւ արն հարեւր ձու ուտեր: Արդ գիտեա՞ լեթ ընդամենն քանի՞ լեալ է: Եթէ թուող ոք է ընկերն քո՝ երագ կարէ գիտել եթէ ՅԿԵ բեր է ձուն, զոր կերեալ էր, ապա եթէ տգէտ ոք իցե՛ նորա դե/198a/զերումն թուովքն զքեզ ուրախ առնէ:

Խրախճանականք վեցերորդ: Ասասջիր ցընկերն քո մինչ վաճառես զինի փաս Կ եւ տաս զհինգն յերկու դրամս, քանի զգինն Ը ունիս դրամ. եւ ասիցե՛ քեզ՝ թէ ԻԴ դրամ: Եւ ասասջիր դու ցնա՝ եթէ ես վաճառեմ նոյնպէս եւ շահիմ դրամ մի աւելի քան զքեզ: Եւ արասջիր այսպէս. ասասջիր զԼ միաձեռն երեք փասս դրամ մի եւ զԼ միաձեռն Բ փասս դրամ մի լինի նոյնպէս Ե երկու. եւ դրամ մի աւելի շահելովն ամաւթ առնես /198b/ յառաջագոյն վաճառաւդն եւ նորա հիացմամբն դու ուրախասցիս:

Խրախճանականք Ը. [Ա]սի թէ Բ այր առն միում դրախտպան էին: Եւ ի ժամանակս աշնան, յորժամ զպտուղս ծառոցն ժողովէին, Բ դրախտպան արանցն բաժին անկաւ ի նռան ծառերոյն Կ նուռն. եւ խորհեացն ի միասին ծախել զԿ նուռն եւ զգինն բաժանել. իսկ աւուր միում Ա ընկերն ոչ էր ի տան եւ գնող եկն նռանցն. յայնժամ ընկերն որ ի տանն էր, վաճառեաց զԿ նուռն զԵ յԲ դրամ, որ ժողովի Կ նռնէն ԻԴ դրամ. եւ մինչ գնայր գնողն, եկն միւս ընկերն նռանն, որ ոչ էր ի մօտ, «Ոչ է իմ կամ որ զԵ նուռն յԲ դրամ տանի. թո՛ղ զիմ նռներն յետ բերե՛ք»: Յայնժամ ընկերն, որ վաճառեալ էր, եհաս եւ յետս դարձոյց զգնող նռանցն եւ յԲ բաժին արարին. զԼ նուռն ինքն էառ եւ զԼ ընկերոջն երես. եւ սա իւր բաժին ծախեաց զԳ ի դրամ մի. եւ Ա այլ ընկերն ծախեաց զիւր բաժինն զԲ ի Ա դրամ, որ լինի առաջնոյն որ զԳն ի մի դրամ վաճառեաց զինն Լին Ժ դրամ եւ երկրորդին որ զԲուսն իւր ի մէկ դրամ վաճառեաց Լին ԺԵ դրամ. եւ [320b] այս որիշ որիշ վաճառեալովս բովանդակն եղեւ ԻԵ դրամ: Արդ հարցանելի է թէ՛

առաջին վաճառողն Են յԲ դրամ ծախեցաւ, եւ Կ նուոն ԻԴ դրամ միատեղեցաւ եւ երկրորդ վաճառովս այլ Ե Բ դրամ վաճառեցաւ. զի Ան զԳն ի մէկ դրամ վաճառեաց եւ մէկն զԲն ի մէկ դրամ. եւ այսպէս դարձեալ լինի Ե յԲ դրամ վաճառեցաւ ԻԴ դրամ բովանդակեցաւ, երկրորդ վաճառելովս այլ Են յԲ դրամ բովանդակեցաւ եւ սայ ԻԵ դրամ բովանդակեցաւ: Զի նորա. Լն Գն ի մէկ դրամ վաճառեցաւ Ժ դրամ եղեւ եւ սորա Իին Ժ դրամ եղեւ նորա Լին դէմ, իսկ Ժ նուոն այլ Բ Բ լինի Ե դրամ, որ բովանդակի յԲուցն ԻԵ դրամ:

Խրախճանականք Թ. [Ա]սի յիմասնոցն թէ՛ առ քեզ Ճ սպիտակ եւ գնեալ քեզ Ճ հաւ. Գ ազգ՝ Ա ճնճղուկ, Բն տանոյ հաւ, Գն սագ. եւ ճնճղկին զի Խն ի Ա սպիտակ, տանոյ հաւն զԱն Գ սպիտակ, զսագն ի Ե սպիտակ. եւ հանց հնարեց<n>, որ հարիւր սպիտակին Ճ հաւ գայ, ոչ աւելի եւ ոչ պակաս: Առ Բ սպիտակին Խ ի սպիտակ Զ ճնճղուկ եւ Գ սպիտակին Ա հաւ [այստեղ ընդհատուում է տեքստը]:

Յաղագս ամպոց եւ նշանաց

Յորժամ Գ արեայ երեւի լուսինն եւ եղջերքն վերաձգեալ՝ եւ յստակ եւ սուրբ լինի՝ նշանակէ զաւղ պարգութեան. ապա թե սուրբ են եղջերքն եւ շիկագոյն՝ հողմային նշանակեն. վասն խառնուածոյ սեաւ թանձր ամպոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն երեւի:

Յորժամ Դ արեայ լինի լուսինն արժան է պայծառագոյն լինել, ապա թե որպէս զԳ արեւն տխուր են եղջերքն եւ թանձր եւ ոչ սուր ձգեալ, այդ յիացեալ ծայրքն եւ բթացեալ՝ նշանակեն հողմ արեւմտեայ կամ անձրեւ. վասն զի թխացեալ աւղն այնպէս ցուցանէ զեղջերսն լուսնի:

Յորժամ Գ արեայ է լուսինն եւ եղջերք ոչ ի ներքոյն խոտարհեալ եւ ոչ յողնեալ արտաքս, այդ կանգուն վերաձգեալ՝ հողմոց նշանակ է, վասն որոյ ի սկզբանէ կանգնին եղջերքն վերաձգեալ յաւոցն. որպէս երեւի թէ յաւոցն ձգի ի վեր, ոչ թեթեւ հողմոյ նշան, այդ սեւաթոյրը հողմոյ նշան, որ է հիւսիսային եւ լիւրեացի. ապա թե ի չորրորդումն նորին նման երեւին եղջերքն՝ առաւել նշանակէ զաւղոց սաստկութիւն, զի վասն ուժգնութեան աւղոցն եւ ի Դ աւուրն կանգուն երեւին եղջերքն:

Յորժամ եղջերքն հարաւայինն խոտարհեալ՝ զհարաւ նշանակէ. եթե արեւմտեայ եղջերն խոտարհեալ՝ զարեւմտէ հողմ նշանակէ, ապա թե յարեւմուտս կողմն ճապկեալ են եղջերքն՝ նշանակեն զհարաւոյ հողմ. վասն զի մղէ կանգուն եղջերն զլուսաւորութիւն ի հարաւոյ յարեւմուտս եւ յարեւմտից ի հարաւ. եւ այսպէս երեւի եղջերն խոտարհեալ յողն:

Յորժամ Գ արեայ է լուսինն եւ ամենայն բոլորն շիկա/8b/գոյն է՝ զյուզմունս ամպոց նշանակէ եւ զաւղոց. ապա թե շիկագո/ն/յնս աճեցեալ եւ հրացեալ՝ եւս առաւել քան զառաջին(ն)՝ լինի յուզումն ամպոց եւ աւղոց:

Յորժամ երկուցուն կողմանցն հասարակեալ լուսինն միապէս, եթէ յաճ(մ)ունս իցէ, եթէ ի մաշս եւ եղջերքն հարթեալ եւ մէջ հասարակին լցեալ, վասն զի սկսնու յեղջերացն եւ մաշի յեղջերացն, եւ սուրբ է գոյնն՝ զպարզ նշանակէ, ապա թէ շիկագոյն՝ հողմին նշանակէ զաւուրս ամսոյն այսու նշանաւ. ապա թէ ի միոյ կողմանէ թխագոյն՝ յանկագոյն մասն ունի ամիսն:

Յորժամ նշան երեւի ի լուսինն յԳաւրեին կամ ի Դաւրեին մահկաձեւ՝ եթէ ի պարզոյ, եթէ յամպոյ յուզման՝ մինչեւ ցհասարակն լուսնոյ զնոյն նշանակէն աւոյն հիւրք. ապա թէ ի հասարակէ լուսնոյն երեւի նոյն նշան՝ մինչեւ ցգլուխ լուսնոյն նշան լինի. ապա թէ դարձեալ նշան լուսնոյն ամսոյ ի գլուխն երեւի՝ մինչեւ ցհասարակն լուսնոյն մաշոցն նոյն լինի. դարձեալ ի հասարակէն նոյն լինի նշան մինչեւ երիս աւուրս մահկաձեւ նոյն լինի:

Յորժամ ի լուսինն մլար լինի եւ յամենայն կողմանց զլուսինն թաղանթեալ իցէ՝ եթէ առ սակաւ սակաւ անաւսրանայ մլարն եւ հալի թխագոյն երեւմամբ՝ զպարզ նշանակէ. եւ այսպէս ծանուցանէ զաւոյն ժողով անաւսր եւ դիւրահալ: Ապա թէ լուսնին ի միոջէ կողմանէ մլարն պատառի եւ ձգի՝ հողմային հիւրից նշանակ է, եւ անտի լինի ձգումն հողմոյն, ուստի ձգումն մլարին եղէ. ապա թէ դարձեալ ի լուսնին մլար երեւի՝ նշանակէ յուզմունս ամպոց. վասն զի կրկնումն /9a/ այս մլարի ի թանձրութենէ հիւրոց աւոյն եղէ, ապա թէ երրորդ եւս երեւեսցի մլարն եւ թուխ՝ եւս դժնդակագոյն ցուցանէ զյուզմունս աւոյն, եւ այդ երրորդ նշան է դժնդակ եւ առաւել պատճառ յուզման ձմերանոյ:

Յորժամ առ արեգակամբ երեւցի նշան ջուրեալ՝ յուզումն ամպոց լինի եթէ հողմոյ է թէ անձրեւաց: Քան զլուսինն այս զաւրաւսրագոյն է, զի եւ ճառագայթք արեգական ուժաւորագոյն են քան զլուսնի. քանզի ոչ կարեն ճառագայթք լուսնի հալել զաւոյն ժողովեալ թանձրութիւն ամպոց: Եւ այս [հիւրք] աւոյն արեգական յայտնապէս ցուցանեն զնշանս զլուսնի, որք ճշմարտապէս հային ընդ արեգական, յորմէ նշանաց մարթի ճանաչել որպէս լինի:

Յորժամ յարեւելից կողմանէ արեգակն երանգ երանգ երեւի որպէս թէ հրագոյն եւ շիկագոյն եւ թուխ եւ կամ այդ ինչ գոյն, հաստատութեամբ զխոռվութիւն աւոյն նշանակէ եւ ոչ ակնկալութիւն պարզոյ:

Յորժամ արեգակն յիստակ երեւի եւ նորին նման յիստակ եւ անամպ գաւտին որ զարեգակամբն երեւի՝ նշանակէ զառաջիկայ արն պարզ լինել:

Յորժամ [յամ]ենայն կողմանց հարթ երեւին մուտք արեգական՝ հողմ նշանակէ, ապա թէ արեգակն խուզեալ երեւի եւ ճառագայթք պատառեալ է որ յարեւմուտս եւ է որ ի հարաւ կոյս, եւ մէջն պայծառ եւ սուրբ երեւի՝ անձրեւս եւ հողմս նշանակէ:

Յորժամ ընդ ելանել արեգական կայծակ լինի եւ առ նովաւ շիկագոյն երեւի կամ թխագոյն՝ նշանակէ շիկագոյնն հողմ եւ թխագոյնն անձրեւս, ապա թէ է ինչ արեգակն որ շիկագոյն երեւի եւ է ինչ որ թխագոյն՝ նշանակէ անձրեւս թխագոյնն եւ հողմս շիկագոյնն:

/9b/ Յորժամ արեգակն մտանէ կամ ծագէ եւ ճառագայթքն յիրեարս խոնարհեալ մղեալ յաւդոցն եւ զմի կողմն ընդ ծագելն կամ ընդ մտանելն հովանի ունի յամպոյ, եւ է զի ամենայն իսկ ըմբոնեալ յամպոյ լինի ընդ ծագելն եւ ընդ մտանելն՝ զայն աւուրս ...

Յորժամ յառաջագոյն քան զարեգակն ծագել ամպ չափաւոր եւ անաւսր՝ ապա արեգակն ընդ ամպովն վերանա[յ] տխուր ճառագայթիւք, այնպէս զի լոկ բոլորն երեւեսցի՝ անձրեւ նշանակէ:

Յորժամ ընդ ծագելն արեգակն մեծագոյն քան զսովորականն երեւեսցի եւ ընդ ելանելն սփռի եւ լաւանա[յ], որպէս զի հալի ինչ, եւ առ սակաւ սակաւ ի վեր ելեալ փոքրագոյն երեւի՝ նշանակէ պարզ լինել:

Յորժամ ձմեռնային ժամանակի ի մուտսն դեղնագոյն երեւի՝ պարզ նշանակէ, եւ այս ի խտացեալ ամպոց եւ լուծեալ եւ յանաւսր աւդ փոփոխեալ. եւ ի ճառագայթից ջեռեալ խոնաւ երեւեսցունցանէ. որպէս զգաւտի ձգի եւ ճառագայթքն ընդ խոնաւն խառնին, եւ դեղնագոյն եւ կանաչ երեւի ընդ մտանել արեւու:

Յորժամ ամպ առագաստէ՝ թե թուիս են ամպքն եւ ընդ առագաստելն ճառագայթքն յամպն խառնին յերկուցունց կողմանց՝ նշանակէ զառաջիկայ արւն անձրեւս լինել, զի վասն թանձրութեան ամպոցն թուիս երեւի:

Յորժամ արեգակն պատա[ր]ումն լինի եւ առանց ամպոյ մտանէ՝ եթե լինից[ին] առ նովաւ շիկագոյն ամպք՝ ոչ զցայգն եւ ոչ զյառաջիկայ արւն չէ ակնկալութիւն անձրեւի:

Յորժամ արեգակն ճառագայթքն տխրեալ մեզ երեւի[ն] եւ թխութեան նմանեալ, որպէս /10a/ երբեմն մեզ խաւարչտագոյն երեւի[ն]. եւ այս լինի արեգակն խաւարչտանալոյ:

Յորժամ թանձր ամպ լինի առ նովաւ՝ յուզման ամպոց նշանակ է:

Յորժամ կամի արեգակն ելանել եւ առ նովաւ ամպք հրագոյն շիկագոյն եւ խիտ՝ նշանակէ զամպս, եւ ոչ լինին ամպքն առանց անձրեւի եւ ոչ արւն առանց ցաւոյ:

Յորժամ արեգակն ելանէ եւ ճառագայթքն զոգցես թե յարեւելս կոյս ելանեն զբոլորական եւ խաւարչտագոյն լինի՝ ցուցանէ թե յանաւսր ամպոց առագաստեալ լինի. եւ այս նշանակէ անձրեւ կամ հողմ. ապա թե ճառագայթքն առաւել մրրկեալ երեւին եւ առանց ամպոյ նշանակէ:

Յորժամ առ արեգակամբ թուիս կամ մթար լինի՝ զխոռվութիւն ձմերայնոյ նշանակէ, ապա թե մաւտագոյն լինի մլարն՝ տեղատարափք լինին. վասն զի նշանակեն այս ամպք զթանձրութիւն աւոյց եւ դժուարահալութիւն: Որպէս ասացի՝ թե մաւտագոյն լիցի բակն բոլորեալ արեգակնն եւ դժուարահալ՝ մեծ ձմերանոյ նշանակք են:

Յորժամ երեւի որ կոչի պատիղոզն ամպ թանձր՝ ըմբոնեալ ժողովեալ յարեգակն ճառագայթից, որպէս թե նորա նման երեւի եւ ընդ նմա գնայ՝ ակնկալութիւն է ձմերանոյ. յայտ է՝ զի եւ այսպիսի ինչ վասն առաւելութեան թանձրութեան ամպոց

անհալ լինի, թե մատ առ արեգականմբն գնայ. եւ յորժամ ի հարաւոյ կողմանէ լինի այս պատիղովն՝ հարաւ ցուցանէ, եթէ արեւմտից՝ արեւմտէ ցուցանէ:

Յորժամ մտանէ արեգակն երեկուն եւ ցաղ արկանէ՝ առաւել անձրեւս նշանակէ զայն աւուրս քան զծագել արեգականն. եւ վասն այնր լինի այսպէս, զի ի ծագել արեգականն ի ջերմու/10b/թենէ ի ցրտութիւն փոխի. իսկ երեկուն վասն առաջիկայ գիշերոյն ցրտութեան ամպքն հաստատուն կան, վասն այնր զյուզմունս ամպոց նշանակէ:

Աստեղք են որոց խառնակեալ ճանապարհք լինին գնացից, որ անուանեալ կոչի[ն] յարդգող, եւ այս ճանապարհ թէ սպիտականայ՝ հողմ ցուցանէ յայնմ կողմանէ ուստի շարժեցան. ապա թէ ի միւսմէ կողմանէ աստեղքն ոչ շարժեցան, այդ յայդմէ կողմնաէ՝ խառնակ հողմ նշանակէ:

Տեղի է որ կոչի մտուր եւ այս ժողով իմն է, որ երեւի զամպ նման, եւ լինի առ պատենիւք խեցգետոյն եւ Բ աստեղք առ նովաւ՝ մի ի հարաւոյ եւ մի յարեւմտից, որ կոչեն էշս, եւ յորժամ պարզոյ ի վեր հայիս՝ յանկարծ մտուրն չերեւի եւ նուազ աստեղքն՝ որ էջքն կոչին՝ երեւին զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ մտուրն թուխ երեւի եւ աստեղքն իրերաց նման՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ առ մարովն Բ աստեղքն որ կոչին էջք, եւ որ ի հարաւոյն է նուաղագոյն երեւի, եւ որ արեւմտէն նորին նման սուրբ՝ հողմ նշանակէ արեւմտէ. ապա թէ շրջի՝ արեւմտէն նուաղագոյն լինի եւ հարաւայինն նորին նման լինի սուրբ՝ հարաւ լինի:

Յորժամ կայծակէ ի չորից կողմանց եւ ի նմին կողմանց ուստի կայծակէն հողմք լինին՝ զյուզմունս ամպոց նշանակէ. մանաւանդ որ ի ծովու նաւք են վտանգին:

Յորժամ սկիզբն գիշերոյ լինի եւ ամպ երեւի նման գգաթոյ՝ զխռովութիւն աւոյոց նշա[նակէ]:

Յորժամ կամարն ընդ արեւմուտս կրկին երեւի՝ անձրեւս նշա[նակէ]:

Յորժամ որ եւ իցէ աստեղս տեսանես մլար թուխ՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ ի գլուխս լերանց /11a/ դնգչիւնք լինին՝ հողմս նշանակեն:

Յորժամ արագիլ ի ծովէ կողմանէ փախչի զարհուրելով եւ սուր ձայն առնելով՝ զյուզմունս ամպոց նշանա[կէ]. եւ վասն այնր փախչի, զի յառաջագոյն ճանաչէ ի խռովութենէ ծովուն:

Յորժամ պարզոյ կոփիւք ի մայրեաց թռչին ընդդէմ իրերաց զարհուրելով՝ նշանակեն զյուզմունս ամպոց եւ հողմոց եւ փիւկոս այս հաւիկ մի խիկ, որ ի փոքր ի շնչմանէ շարժէ:

Յորժամ մ[ր]տմունք եւ սագք ի ցամաք ելանեն եւ զթեւսն կտունեն՝ զյուզմունս հողմոց նշանակեն:

Յորժամ ի գլուխ լերանց ամպ ընդ երկար երկայնի եւ նուազ եւ երկայն երեւի՝ հողմ նշ[անակէ]:

Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում զմիմեամբք՝ հողմ նշանակէ. նման է որպէս որ յորոշտուեղ (?) ելանէ:

Յորժամ ծովային կամ գետային հաւք անդադար մրտխրղճին, ջուրն հարկանեն՝ զյուզմունս ամպոց նշա[նակէ]:

Յորժամ ծիծառունք առ լճովք թռչին ստէպ ստէպ եւ զթեւսն ի ջուրն հարկանեն՝ զյուզմունս ամպոց նշա[նակէ]:

Յորժամ գորտք առ միմեանս ժողովին եւ կոչեն՝ զյուզմունս ամպոց նշանակեն. եւ են գորտք որ կոչին գիւռնիովքն ճշմարտեն առաւել զժամանակս եւ այնպէս մանրիկք են՝ մինչ տըղկունք կտեն գնուայ:

Յորժամ աղաղանչք ձայն առնեն ընդ առաւառս՝ ձմեռն նշանակէ:

Յորժամ առ ծովեզերք թելովք զջուրսն հարկանեն՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ արջառ յերկին գլխամբարձ է եւ հոտայ՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մրջիւնք զձուս իւրեանց հանեն ի ծակուց՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մրջիւնք ժողովեալք եւ յորմ նստեցին՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ ընտանի հաւք կուտին /11b/ եւ մեծաձայն կոչեն՝ անձրեւս նշանակեն:

Յորժամ ճայք զմիմեամբք շրջապատին եւ ճչեն՝ անձրեւս նշանակեն. մանաւանդ ագռաւք յորժամ թռչին եւ միմեանց ձայնս առնեն՝ անձրեւս եւ շանթս եւ կարկուտս նշ[անակեն]:

Յորժամ ճայք թանձր ձայնիւ ճչեն եւ թելովք զաւդս հարկանեն՝ անձրեւս նշանակեն:

Յորժամ ընտանի հաւք եւ ասղակտուցք եւ ձկնքաղք կտեն եւ ի բոյնս գալով շարժեն զթեւս իւրեանց՝ յուզմունք ամպոց լինի:

Յորժամ արագիւք ի ծովակոյս իջանեն ձայն[իւ] անձրեւս նշա[նակէ]:

Յորժամ ճանճք սրագոյնս խաճանեն եւ զնոյն արիւն յորդորելով ծծեն՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ խոնաւոյ գիշերի ի պատրուկէ ճրագաց կայծ ոստանի՝ անձրեւս նշանակէ. եւ զի առ պատրուկան հրեղէն բոլորաձեւ առ անձրեւս ձմեռանի նշանակէ: Եթէ ի պատրուկէն լոյսն չելանէ կանգուն, այդ՝ է զի ի մի կողմանէ կամ յերկուսեան կողմանս յայսկոյս յայնկոյս պղպջաց պէս կողմանի՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մ[ր]տմունք ամարանի ստէպ ստէպ թռչին ճախրելով՝ անձրեւս նշանակեն:

Յորժամ շամանդադ ձգի ի լեռնոտանէ եւ ծայրք լերանցն երեւին յիստակ՝ պարզոյ նշան է:

Յորժամ ի կասկարայս կամ ի պուտունս կայծակունք ժողովին՝ անձրեւս նշանակեն:

Յորժամ կայծ ունի[ն] յինքեանս պուտունք որպէս կորեակ շուրջ զինքեամ[բ]ք՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ անդունդք շրջանս առնուն եւ խորն պայծառ երեւի՝ հարաւ հողմ լինի:

Յորժամ երկրի կամ կղզոյ ծայրք դիմաւք ի ծովս կողմն են եւ քան զինքեան[ս] վերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակեն:

Յորժամ հարակողմ լինի, ուժգին եւ սաստիկ արկանեն զցաւդ, հիւսիսային հողմոյ նշանակէ լինել:

/12a/ Յորժամ յանդունդս երեւի որպէս փռշի եւ աւղ փռշեցեալ խարտեշութեամբ, այնպէս անասրացեալ՝ որպէս թէ չերեւի իսկ, նշանակէ հարաւ լինել:

Յորժամ շամանդադ լինի գամառն՝ զարեւմտէ հողմ նշանակէ:

Յորժամ երեկոյս կարմրութիւն լինի յերկին՝ պարզ նշանակէ. եւ յորժամ ընդ առաւառս՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ արեգակն յելոն իւր մթագոյն երեւեցուցանէ զճառագայթսն իւր՝ մեծ ամպոց յուզմունս նշանակէ:

Յորժամ ամպ յամպ ընթանա[յ] յարեգակն եւ ամպն թանձրանա[յ]՝ զմեծ ամպոյ նշանակէ:

Յորժամ ի մտանել արեգակն ճառագայթս ձգտեցուցանէ վետ վետ՝ զամպոց յուզմունս նշանակէ:

Յորժամ յարեգակն գաւտիք երեւին՝ նշանակէ զամպոց գեթերին եւ զաւղոց շնչմունս:

Յորժամ ընդ ծագել արեգակն մթագոյն ելանիցէ եւ նման արեան ունիցի զճառագայթսն՝ թէ ի նմին յամիցէ եւ աւղն վիզեալ ոչ յիստակիցի՝ եւ ապա եւս քան զեւս բազմանայցեն եւ աւղքն իստաշունչ յաւելցին՝ զսաստիկ անձրեւոց յայտ առնէ:

Յորժամ արեգակամբ այդ արեգակունք երեւին՝ զհողմոյ նշանակէ:

Յորժամ արեգակն ջերմ շողիւք՝ եւ ի վերայ գլխոյն որպէս հուր լուցանէ, եւ մանաւանդ ամպ յամպ մտանէ ջերմ ճառագայթիւք՝ զամպոց նշանակէ:

Յորժամ ընդ մտանել արեգակն ամպքն կարմրանան, զոր ոմանք իսանձումն ամպոյ սսեն՝ նշանակէ զպարզոյ:

Յորժամ արեգակն ցաւդ շատ արկանէ՝ նշանակէ զերաշտութեան:

Յորժամ աղեղն յամպս երեւի՝ զսաստիկ ամպոց նշանա[կէ] եւ փարատե զխստութիւնն:

Յորժամ լուսինն բակ ունիցի յամպոց, եւ մռայղ զարեգակն ունիցի՝ յամպոց ջուրք բազումք հեղուն յերկիր, եւ կամ զամբոխումն աւոոց դառնաշունչ նշանակէ:

Յորժամ յեղջերսն լուսնի կարմրութիւն եւ մթութիւն երեւի՝ ջուրք բազումք հեղուն յերկիր եւ հարաւ բռնութեամբ յաւոս բարբառի:

/12b/ Յորժամ ամենայն աստեղք խառնակ երեւին՝ զանձրեւս նշանակեն եւ զեթերին շնչումն եւ կարկուտս ի տեղիս տեղիս:

Յաղագս կենդանատեսակաց

1

Խումբ աստեղատանցոյ, որ անուանեալ կոչին կենդանատեսակք, եթէ յորո՞ց, եւ զինչ իւրաքանչիւր պատճառք անուանցո՞ գործ աւելի համարիմ պատմել, բայց վասն զի ոչ այլազգ գորոշմունս նոցա կար/137a/եմ առնել, եւ զյայտարարութիւնս հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ գոր յետ Քաղդէացոցն կոչեն Յոյնք, Հայք, Պարսք: Յոյնք՝ կոիոց, Հայք՝ խոյ, Պարսք՝ վարբաք: Յոյնք՝ տաւրոս, Հայք՝ ցուլ, Պարսք՝ դաւ: Յոյնք՝ դիդիմոս, Հայք՝ երկրաւորի, Պարսք՝ գուպաքար: Սոքա երեքեան յեղանակ գարնանային: Եւ դարձեալ Յոյնք՝ կարկինոս, Հայք՝ խեցգետի, Պարսք՝ գոզրնտ: Յոյնք՝ լեանոս, Հայք՝ առիւծ, Պարսք՝ շեր: Յոյնք՝ պառթնաս, Հայք՝ կոյս, Պարսք՝ գաւսիճադ: Սոքա երեքեան ամառնային: Յոյնք՝ զիւգաւս, Հայք՝ կշիռ, Պարսք՝ տրագուկ: Յոյնք՝ սկորոպիոս, Հայք՝ կարիճ, Պարսք՝ գրեշգոմ: Յոյնք՝ պաւկսուտիաւս, Հայք՝ աղեղնաւոր, Պարսք՝ նեմասպ: Սոքա երեքեան յեղանակ աշնանային: Յոյնք՝ աղաւկերաւս, Հայք՝ այծեղջիր, Պարսք՝ բգասար: Յոյնք՝ իւդեոիքաւս, Հայք՝ ջրհոս, Պարսք՝ դոլ: Յոյնք՝ իւքթիւս, Հայք՝ ձուկն, Պարսք՝ մահիկ: Սոքա երեքեան եղանակ ձմերային: Երկոտասաներեքեան սոքա շարժին չորիւք տարբերությամբք՝ առ ի լինել միոյ տարեւոր ժամանակի, քանզի տարածեալ ունին զերկինս ամենայն, կցեալ զմի/317b/մեանց, պատեալ փորուածիւ: Եւ են դոքա ճանապարհ արեգակն եւ լուսնի եւ եւթանց մոլորակացո, բերեն յինքեանս բարձրացուցանելով եւ խոնարհեցուցանելով, մաւտեցուցանեն ի մեզ եւ հեռացուցանեն, կատարեն զիշերաւ զտիւս փոքրկացուցանելով եւ մեծացուցանելով. եւ առնեն ջերմութիւն եւ ցրտութիւն, խոնաւութիւն եւ երաշտութիւն, եւ իշխեն փոփոխմանց աւոոց եւ ժամանակաց: Բայց եթէ Աստուածային ինչ հասանէ հրաման, փոփոխին տարերց բնութիւնք՝ թէ արդեաւք յողորմութիւն կամ ի խրատ՝ որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամառային ցրտութիւն եւ ձիւնաբերութիւն, եւ շնչումն սառնամանեաց՝ որ է արտաքոյ բնութեան ժամանակի, զիտելի նմա միայնոյ: Արդ մեզ զիտել, գոր սահմանեաց Աստուած՝ զյեղանակս չորից ժամանակաց, որպէս տայր քաջալերս արդարոյն՝ յորժամ ել ի տապանէն. Յայսմ հետե զարուն եւ ամառն մի դադարեցեն՝ /318a/ որպէս դադարեցին յամի ջուրցն սաստկութեան: Յակնարկելոյ արարչին խանգարումն աւոոյն լեալ վասն անբաւ խոնաւայուզից: Արդ՝ այն նորա Աստուածութեանն են ծանաւթք եւ անգետք ի

մարդկանէ. իսկ որ բնական բերմամբ հրամայեցաւ լինել, այնմ կարող եմք հասու լինել, որպէս ուսաք ի բազմափորձութեանց գիտութեամբ զարդուդ, ո՛չ միայն զեղանակս չորից ժամանակաց, այլ եւ զանցնիւր աստեղատանցոյ զամսական իշխանութիւն, եւ բաւանդակութիւն առանձնական ընթացիցոյ յամս բազումս, ըստ յոլովութեան տարեաց բոլորակին, իւրաքանչիւր շրջագայից, նոյնպէս եւ զեւթանեցունց մոլորակացոյ անուանելոց, ոչ միայն յամս եւ յամիսս, այլ եւ յաւուրս շաբաթոյ՝ զանցնիւր աստեղ ար յայտնելով. զոր եւ ես ձեզ նկատեմ գրել դիւրինս, եւ ոչ դժուարահասանելիս՝ որպէս զարտաքնոցն:

Արդ կոչեցեալն ի նոցանէ յընթացողաց աստղ եւթներեակն է. եւ դրեալ զաւուրս շաբաթոց՝ հանյաւէն յարեգակն, այսինքն միաշաբաթուջն, որպէս եւ ձաննեալ իսկ է հեթանոսաց զաւուրս շաբաթոյ՝ արեգակն եւ լուսնի, եւ եւթանց մոլորակացոյ, զոր հարկաւորիմ նոյն անուամբ յորջորջել, զոր կոչեն Յոյնք, Հայք եւ Պարսք: Միաշաբաթ՝ եղեաւս, արեգակն, խորաշէտ: Երկշաբաթ՝ սեղինաւս, լուսին, մանգ: Երեքշաբաթ՝ առէս, հրատ, նարգ: Չորեքշաբաթ՝ երմէս, փայլածու, կոճ: Հինգշաբաթ՝ դաւս, լուսնթագ, տէրընջ: Ուրբաթ՝ ավիրողիտէս, լուսաբեր, անհետբա: Շաբաթ՝ կոռնոս, երեւակ, զրուան: Ասեն հեթանոսք ի սոցանէ զոմանս բարերարս եւ զոմանս թշուառացուցիչս, որպէս ինդրեն տանուտէրութիւնս: /318b/ Առէս աստեղ, որ է երեքշաբաթ, զոր ասեն ոչ բարիոք ճանապարհորդել կամ առնել սկիզբն գործոյ: Նմանապէս զտանուտէրութիւն կռանոս աստեղ, որ է շաբաթ, զոր ասեն ամենայն թշուառութեան պատճառ: Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի զաւուրս խտրել, վասնզի ի բարիս ստեղծ Աստուած. եւ ո՞ր ար բարի իցէ քան զերեքշաբաթն, որ է ըստ թուոյ Երրորդութեանն, եւ երկիցս ի Տեառնէ լսեաց յարարչութեանն՝ թէ բարի է: Կամ զի՞նչ քան զարն շաբաթոյ բարի է, զոր Աստուած սրբեաց, եւ արհնեաց եւ հրամայեաց ի նմա հանգիստ եւ թողութիւն: Քանզի բոլոր ինչ մատակարարելոց է արեգակն եւ լուսին. եւ որ ինչ յորոց երկրի են, առանց ընթակացս այսոցիկ են: Կարելոր է ուսուցանել զարեգակնայինն եւ զլուսնայինն առանձնաւորութիւնն, որ եւ զինչ վիճակեալ է: Քանզի արեգակն վիճակեցաւ զտիւն, եւ զարական կենդանատեսական եւ զարեւելեալ ծագումնն: Եւ ընծայաբերս ունի զերեւակին եւ զլուսնթագին աստղ: Եւ լուսին հաւասար գիշերոյ, եւ իգական կենդանատեսակացս, եւ արեւմտական ծագմանն. եւ ընծայաբերս ունի զհրատին եւ զլուսաբերին աստղ: Փայլածուն հասարակաց բնութեամբ գոլով եւ ընդ արեգակն յարեւելական ծագմանն կոյս հրճուելով: Իսկ լուսին ի յարեւմտականն կոյս, նաեւ հասարակ իսկ բնութեամբ վիճակել, եւ ընդ բարերարսն բարերար եւ ընդ խարդախսն խարդախ: Իսկ բարերար աստեղքն են՝ լուսն/319a/թագ, լուսաբեր. եւ խարդախք՝ երեւակ, հրատ: Վասն երեւակին՝ առաւել ցրտութիւն ունելոյ, եւ հրատին՝ առաւել ջերմութիւն: Իսկ փայլածուն հասարակաց բնութիւն. բայց ինդիրսն ընդ տունջենային ծնելութիւնն: Արեգակն, լուսնթագ եւ երեւակ՝ յարական կենդանակերպսն իշխելով, մանաւանդ լուսնթագ եւ երեւակ յարեւելեաց ծագման գոլով: Իսկ ի գիշերային ծնելութիւնսն լուսին, հրատ, լուսաբեր՝ արեւմտական ծագմանն. զիգական կենդանատեսական ունելով լուսնի վասն ծննդաբերութեան ասացեալ երկուց աստեղացս այսոցիկ:

2

Երկինդ եւթն պարունակք են, որ կոչին զաւտիք. սառնեղեալք գօտին, որ կոչի երկնից ցրտաբնակ, այրեցանաղ զաւտին, որ կոչի շարահիւսակ, մեծասիւր զաւտին, որ կոչի անգոն կոռոնաւոր. իսառնարան զաւտին որ կոչի, որ եթերն բնակեալ է եւ արեգակն. եւ

նա ունի զհոյս ընթացից իւրոց, զի ի հինգերորդ գաւտուջն է արեգակն. գեղեցկական գաւտին, որ կոչին՝ այս է, յորում է մոլորակացն առկայումն. եւ խոնարհ գաւտին որ կոչի՝ մերձ առ միւս գաւտին, որ միայն եթերն բնակեալ է, ուստի հրացանութիւն եւ փայլատակմունք լինին. խլրտմունք ամպոց, խոնարհմունք խոնաւոց, իջմունք անձրեւաց, եւ վնասք պէսպէս առաքին ի մեզ: Քանզի այս գաւտիս, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրեւաց եւ սնուցիչ բուրաստանաց: Քանզի առաջին հարքն զլուսին դայեական եւ սնուցիչ բուսոց անուանեցին: Այս եւթն գաւտիքս են հակառակ միմեանց: Առաջին գաւտին հաստատութիւն ունի նովաւ, որ կոչի ութերրակ, որ կոչի երկնից ցրտաբնակ. եւ զլերինս զովացուցանէ մեծ ցրտովն. եւ ի նմա են եւթն մոլար աստե/319b/դքն, որք են բնութեամբ ցուրտ, ուստի զսաստկութիւն ցրտոյն ի բարձր կատարս լերանց իջուցանեն. եւ վասն այսորիկ խոնարհ տեղիք ջերմ եւ գոլ աւուրք են, զի ոչ գոյ ի նոսա սաստկութիւն ցրտոյն, ի բարձր կատարս լերանց իջուցանել ցրտակ անուանին, եւ զլերինս զովացուցանեն մեծ ցրտովն. նաեւ թաղկեալ հրոյն անկմունս շիջուցանի, որ կոչի անկումն արփոյն, զոր ոմանք կաթ ծիրանագոլ ասացին. եւ կէսք՝ հին արեգական ճանապարհ, եւ այլք՝ կառս երկնից. կէսք՝ պատառումն. կէսք՝ սպի տարածեալ եւ կէսք յարդագոյս զհետ աստուածոցն. իսկ ոմանք մտուր եւ կայան աւդոյն անուանեցին: Այլ ոչ է այդ ամենայն, այլ թաղկեալ հուր է, եւ մանր աստեղացն ցոլումն լուսոյ. զի շարժեալ է եւթն գաւտեացն յաղամողել հրոյն անգայտութիւն ունի զվերին հուրն, արգելլով զցոլումն գնացից վերին հրոյն թաղկեցելոյ. եւ հասեալ ի կիմիրական գաւտին՝ շիջանի այրեցանողն, ունի զարփին թռուցեալ եւ զմանրաստեղս. ուստի յայսմ լուսաւորի արեգակն, գնալով երեքտասան աւուրս ընդ նա, եւ ապա ամենայն լուսաւորքն յարեգականէն առոզանին: Ի մեր գաւտուջ են ոգիք մարդկան ըստ հարցն իմաստնոց, ի նմին ժողովին կողմանաւորք մերոցն: Արդ այս գաւտիս զգունդ կիսագնդին հանապագ ի գիշերի տեսանես, եւ ոչ փոփոխի ի գիշերի. եւ վեցն առաւաւտուն ընդ արեգականն ելանեն եւ գնան մինչեւ ի մուտս արեւու: Բայց է խոյն եւ ցուլն /320a/ եւ եկաւորին ընդ մի տեղուջ. եւ ընդ մէջն արփի: Կշիռ, կարիճ, աղեղնաւոր, եւ ընդ մէջն արփի: Այծեղջիր, ջրիոս, ձուկն եւ ընդ մէջն արփի: Ի սրական գաւտուջն են երկոտասան ախտարականքն, որ կոչին կենդանակերպք: Ի խառնարան գաւտուջն՝ արեգակն եւ եթերն երկրորդ, եւ երկու աստեղքն ընդ արեգական, որ կոչին արեգականաբերք: Ի գեղեցկական գաւտուջն՝ լուսինն եւ հինգ մոլար աստեղքն, որ կոչին առիս եւ կոինիս: Ի խառնարան գաւտուջն՝ եթերն երկրորդ: Այս եւթն գաւտիքս են հակառակ միմեանց: Արդ այս գաւտիքս են բաժինք գաւտկաց: Խոյն ունի զիշխանականն, զգեղեցկականն, զգանգրական հերսն: Ցուլն ունի զուժեղնականն: Երկաւորեակն՝ զմիջասահմանականն: Խեցգետինն՝ կողմանաւոր է եւ գէջ: Առիւծն՝ բբջաւղ է եւ հողմին, մեծակն է, խանգարական եւ գոռոգ: Կոյսն՝ զարդասիրական է, գէջ եւ գեղեցիկ: Կշիռն՝ հարաւական է եւ զարդարական: Կարիճն՝ ծնելական է եւ խոժոռական: Աղեղնաւորն՝ պատերազմողական է եւ զարաւոր: Այծեղջիրն՝ զանգիտական է եւ անբանական: Ջրիոսն՝ զիջական է եւ խառնական: Ձուկն բարեխառնական է եւ ընդդէմ հարկանէ: Խոյն, ցուլն եւ եկաւորին՝ Պարսք եւ Բաբելովն՝ որ կոչին տուն Տէրունական: Խեցգետին, առիւծ, կոյս՝ Հայք եւ Կորդիակք եւ Ցոյնք՝ որ կոչին զիշերականք եւ կողմանացիկք: Կշիռն, կարիճն, աղեղնաւորն, այծեղջիրն, ջրիոսն, ձուկն՝ տուն որ մէջ է ընդ ամենայն երկիր, զի երկոտասան մասն երկին է, եւ մի մասն ցամաք, մետասան մասն ծով է, եւ այս տունն ի վեց մասինն երկնից է, հինգ ծովու է, եւ մի մասն ցամաքի:

Գեղեցկաբար ով որդի սիրելի Կրանամովն, ստագրաւդս զմեզ գրեալ յումանց յառաջ քան զայս արտադրութիւն ներքսածականացն, յորդորեցեր միւս շարադասել, նուագեալ ոչ իւրիք յայնցանէ, որք ի նոյն նախադրութեան պատշաճ ի տեսութեան համանգամայն եւ հարկեցուցանելով զՊտղոմեան վերաբերութիւնս, համեմատելով առն յանդսն՝ արտագրել իբրեւ զայնոսիկ պիտանեգոյնն հասանելով մեր: Նա եւ նորին իսկ Պտղոմեայ յաղագս ամանակաց կենաց՝ նոքաւք զիրագործութիւնն առնելով. եւ Ապողինարի հրաման տալով առ ի յարձակչեն եւ տանուտեառն, եւ բացբարձրութեան: Այսոքիւք վառին ի վերայ այսոցիկ. եւ Ապողոնի Լաւողիկեցոյ ինքեան յառաջին իւր հինգ մատեանսն, դսրովելով զեգիպտացիսն, որպէս թէ բազում մոլորութիւն լեալ իցէ նոցա ի կենդանատեսակացն վերաբերութիւն:

Ա. Յաղագս կենդանատեսակ բոլորատեսութեան: Կենդանատեսակ բոլորակութիւն շարժի առշեղապէս, բաժանեալ ի հատաձս երկոտասան, որ կոչին կենդանատեսակք: Եւ ունի կենդանատեսակն պարունակս երիս, մասունս երեսուն. եւ մասն ունի մասունս վաթսուն եւ մանրերկրորդակս վաթսուն:

Բ. Յաղագս խոյին: Արդ է սկիզբն կենդանատեսակ բոլորակութեան խոյն, արական, հասարակարեայ յեղանակ գարնանային, տուն հրատի. բարձրութիւն արեգական իննեւտասան նուաստութիւն երեւակի մասանց քսան. եռանկիւնի. ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի: Չաւ/321a/նեալ է նահանգին Պարսից. բաժանաւ հողմոյն արեւելականի եւ տիրեալ գլխոյ եւ բոլոր երեսացն: Եւ ելանէ կենդանատեսակ ըստ եգիպտացոցն եւ Աղեքսանդրացոցն նահանգին, որ եւ ելանէ յաներեւութէն յերեւելի երկիրն ի ժամու միում հասարակարոյ եռանկիւնի իննեակս, է ամանակացն քսան եւ մի եւ երկուց մասանց. եւ է յայսմիկ կենդանատեսակի երկնամիջոցակէտն երկրական տրամադրութեանց:

Գ. Յաղագս ցլուն: Երկրորդ կենդանատեսակ է ցուլն. իգական, հաստատուն, գարնանային. տուն լուսաբերի. բարձրութիւն լուսնոյ. ունի մասունս երիս. նուաստութիւն ոչ ուրեք. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի լուսնոյ, Չաւնեալ է նահանգին Բաբելացոց. բաժանաւ հողմոյն հարաւոյ. եւ տիրեալ է ուլանն եւ պարանոցին: Եւ ելանէ կենդանատեսակ յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միոջ, եւ երկուց մասանց, եւ ամանակաց քսան եւ հնգից առաջիկայ նահանգին:

Դ. Սակս եկաւորի: Երիր կենդանատեսակ է եկաւորին. արական. երկտարրական. մարդակերպ. տուն փայլածուին, երմու բարձրութեանն ոչ ուրուք նուաղութեան, ոչ ուրուք եռանգիւնի ի տուրնջեան երեւակի կրանոս, իսկ ի գիշերի փայլածուի. եւ ձաւնեալ է նահանգին Գամրաց, բաժանեալ հողմոյն Լիբեացոց. եւ տիրեալ է ուսոց եւ ձեռաց եւ մատանց: Ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միում, եւ երկուց մասանց, եւ եւթն մասին. եւ քառասունեւիինգ երմասին յիշեցելում նահանգին, եւ ամանակաց եւ քսան եւ մի երիր մասին: Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի գարնանային ժամուն յեղանակ, /321b/ որ կոչի աւդ:

Ե. Յաղագս խեցգետնին: Չորիր կենդանատեսակ է խեցգետնին. իգական, յեղանակ ամառնային. տուն լուսնոյ. բարձրութիւն լուսնթագի՝ ի մասունս եւթնեւտասան՞ ?

նուաստութիւն հրատի արէս՝ առ ի մասունս քսան եւ ութ. ի տուրնջեան լուսաբերի Ափրողիտէս, իսկ ի գեշերի հրատի. եւ ձաւնեալ է նահանգին Հայոց, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ, եւ տիրեալ է լանջաց: Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւելի երկիրս ի ժամս երկուս եւ ինն երմասին, եւ ամանակաց երեսուն եւ մի. եւ յայսմ կենդանատեսակի աշխարհային ժամագէտն:

Ձ. Յաղագս առիծուն: Հինգերորդ կենդանատեսակ է Առիւծն.արական. հաստատուն. ամառնային. տուն արեգական. բարձրութիւն ոչ ուրուք. եռանգիւնի, ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի, եւ ձաւնեալ է նահանգին Ասիացոց. բաժանեալ է հողմոյն արեւելից. եւ տիրեալ է կողից. եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամս երկուս, եւ երիս մասունս. եւ ամանակս երեսուն եւ հինգ:

Է. Յաղագս կուսանակին: Վեցերորդ կենդանատեսակ է կուսանակն. իգական. ամառնային. երկտարրական, տուն եւ բարձրութիւն փայլածուի՝ ի մասունս հնգետասան. նուաստութիւն լուսաբերի՝ առ ի մասունս քսանեւերթն. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերի եւ գիշերի լուսնոյ, եւ ձաւնեալ է նահանգին Քաղդէացոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ. եւ տիրեալ է կշտիցն, եւ ստորին որովայնին եւ ամենայն փորոտոյն: Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթ երկիրս ի ժամս երկուս եւ երիս մասին, եւ է երկ[կ]մասին ԽԵ երմասին եւ ամանակաց է եւ Գ մասին: Եւ յայսմ /322a/ կենդանատեսակի աւարտի ամառնային ժամուն յեղանակն, որ կոչի հուր:

Ը. Յաղագս կշոյն: Եւթներորդ կենդանատեսակ է կշիոն. արական, հասարակարեայ. յեղանակ աշնանային. տուն լուսաբերի, բարձրութիւն առ ի մասունս երեւակի. ի նուաստութիւն արեգական՝ առ ի մասունս իննետասան, եռանգիւնի, ի տուրնջեան երեւակի, ի գիշերի փայլածուի. եւ ձաւնեալ է նահանգին Լիբէացոց եւ Կիւրենացոց. բաժանեալ է հողմոյն Լիբէացոց. եւ տիրեալ է կոթանցն, եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթ ի ժամս երկուս, եւ երեք մասին եւ քառասուն մասին, եւ ամանակաց երեսուն եւ ինն եւ եւթն մասանց. եւ է երկրական տրամադրութեանն կէտ եթերական:

Թ. Յաղագս կորին: Ութերորդ կենդանատեսակ է կորն. հաստատուն. աշնանային, տուն հրատի, բարձրութիւն ոչ ուրուք. նուաստութիւն լուսնի՝ առ ի մասունս երեք. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերին, ի գիշերի հրատին. եւ ձաւնեալ է նահանգին Իտալացոց, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ. եւ տիրեալ է առնացի անդամոցն եւ զանձակի եւ ցայլիցն: Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթն ի ժամս երկուս, եւ երեք մասունս. եւ ամանակս երեսուն եւ եւթն:

Ժ. Յաղագս աղեղնաւորին: Իններորդ կենդանատեսակ է աղեղնաւորն, երկտարրական, աշնանային. տուն լուսնթագի. եւ ձաւնեալ է նահանգին Կիլիկեցոց եւ Կրետացոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ, եւ տիրեալ է երանացն. եւ ելանէ յաներեւութ/322b/էն յերեւոյթն ի ժամս երկուս եւ ինն երմասին, եւ յամանակս երեսուն եւ մի, եւ երեք մասին: Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի աշնանային ժամուն յեղանակ, որ կոչի երկիր:

ԺԱ. Յաղագս այծեղջերն: Տասներորդ կենդանատեսակ է այծեղջիրն. իգական, յեղանակ ձմեռնային. տուն երեւակի. բարձրութիւն հրատի՝ առ ի մասունս

հինգետասան. եռանգիւնի. ի տուրնջեան լուսաբերի եւ ի գիշերի լուսնոյ. եւ ձաւնեալ է նահանգին Ասորոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ. եւ տիրէ ծնգացն. եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միում եւ յերկու մասին եւ եօթն մասին եւ քառասուն եւ հինգ երմասին. ժամանակաց քսան եւ ութ եւ երից մասանց: Եւ երկրական տրամադրութեանն կէտ սուգական:

ԺԲ. Յաղագս ջրահեղին: Մետասաներորդ կենդանատեսակ է ջրահեղն. արական. հաստատուն. ձմեռնային. տուն երեւակի. բարձրութիւն ոչ ուրուք. նուաստութիւն ոչ ուրուք՝ եռանգիւնի. ի տուրնջեան երեւակի, ի գիշերի փայլածուի. բաժանեալ հողմոյն Լիբէացոց. եւ ձաւնեալ է նահանգին Եգիպտացոց. եւ տիրեալ է սրանցն. եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միում, եւ երկուց մասանց եւ ամանակաց քսան եւ հինգ:

ԺԳ. Յաղագս ձկանցն: Երկոտասան կենդանատեսակ է ձկունք. իգական. երկտարրական. ձմեռնային. տուն լուսնթագի. բարձրութիւն լուսաբերի՝ առ մասունս քսան եւ հինգ, նուաստութիւն փայլածուի՝ առ մասունս հնգետասան. եռանգիւնի. ի տուրնջեան լուսաբերի, ի գիշերի հրատի. ձաւնեալ է նահանգին Կարմիր ծովուն /323a/ եւ Հնդկաց երկրին. բաժանեալ հողմոյն հիւսիւսոյ. եւ տիրեալ է թաթից ոտիցն եւ կոչեցելում ծայրից մատանցն, եւ ինն երմասին: Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամ մի, եւ երից մասանց. եւ ամանակաց քսան եւ հինգ եւ երկուց մասանց: Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի ձմեռնային յեղանակ, որ է ջուր:

ԺԴ. Վերագլխութիւն: Երկոտասան կենդանատեսակացն ըստ իւրաքանչիւր տարբերութեանց երկոտասան կենդանատեսակացն այսպէս ինչ սասց: Բայց առ միահամուռ գնոսա իմանալ՝ այսպէս արտադրիցի: Արականք են այսոքիկ՝ խոյն, եկաւորն, առիւծն, կշիռն, աղեղնաւորն, ջրահեղն. իսկ իգականք սոցա մնացուածքն՝ ցուլն, խեցգետինն, կուսանակն, կորն, այծեղջիրն, ձկունքն. եւ համանգամայն իսկ ասել, որքան աւելորդութիւն ունելով սոցա՝ յառաջմէն հաւելով ի խոյն, այսոքիկ քեզ արականք իմացեալ լիցին, իսկ որքան հաւասարք՝ իգականք: Իսկ յեղանականք՝ խոյ, խեցգետին, կշիռ, այծեղջիր: Իսկ հասարակաւորքն՝ խոյ, կշիռն: Իսկ զուգաթիւքն սոցա են հաստատունք՝ ցուլն եւ առիւծն, կարիճն, ջրահեղն: Երկտարրական սոցայց զաւրութիւն գոլով են այսոքիկ՝ երկաւորեակն եւ կուսանակն, աղեղնաւորն. եւ շարառոցելով ասել, որքան քառիւքն բաղկացեալ այսոքիւք, գնոյն կենդանատեսակաց բնութիւն: Եւ բնակարանք են խոյի եւ կարճի՝ հրատ, արեւ. ցուլն՝ լուսաբերի, ափրողիտեայ. երկաւորեակն եւ կուսանակն՝ փայլա/323b/ծուի, երմու, խեցգետինն՝ լուսնոյ. առիւծն՝ արեգական. աղեղնաւորն եւ ձկունքն՝ լուսնթագի, դիոս. այծեղջիրն եւ ջրահեղն՝ երեւակի, կրանոս: Եւ բարձրութիւն են. խոյն՝ արեգական, ցուլն՝ լուսնոյ, խեցգետինն՝ լուսնթագի, կուսանակն՝ փայլածուի, կշիռն՝ երեւակի, այծեղջիրն՝ հրատի, ձկունքն՝ լուսաբերի: Եւ որ քան զայս հեռի տեսակով տրոհեալք են, այսոքիկ նուաստութիւնք են: Իսկ եռանգիւնիքն՝ խոյն, առիւծն, եւ աղեղնաւորն՝ ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի. ցուլն, եւ կուսանակն եւ այծեղջիրն ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի՝ լուսնոյ: Իսկ երկաւորեակն, եւ կշիռն եւ ջրահեղն՝ ի տուրնջեան երեւակի, իսկ ի գիշերի՝ փայլածուի: Խեցգետինն եւ կորն եւ ձկունքն՝ ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի հրատի: Եւ ընտանացեալ է առաջին եռանկիւնիւն արեւելից, երկրորդն՝ հարաւոյ, երրորդն՝ Լիբէացոց, չորրորդն՝ հիւսիւսոյ: Նաեւ ցաւակից լինին զաւառացն կենդանատեսակքն: Խոյն՝ Պարսից, ցուլն՝

Բարելացուց, երկաւորն՝ Գամբաց, խեցգետին՝ Հայոց, առիւծն՝ Ասիացուց, կուսանակն՝ Ելլադացուց եւ Յունաց, կշիռն՝ Լիբէացուց, կարիճն՝ Իտալացուց, աղեղնաւորն՝ Կիլիկեցուց, այծեղջիրն՝ Ասորուց, ջրհոսն՝ Եգիպտացուց, ձկունքն՝ Հնդկաց աշխարհին:

ԺԵ. Յաղագս խառնարան աստեղաց: Շնաստղն, Խողովակն, Վաքն, Ծիծառն, Արջն, Վիշապն, Բազմոտանին, Բեւեռքն երկնից, Խիփակն, Սայլն, միւս Սայլն, Մարգոնն, Կարճնդե/324a/աց, ճոկանոտնն, Ջրաբաշխն, Խոզն, Անդիակն, Արկաւղն: Այս աստեղք են, որ ցուցանեն զանձրեւաց սաստկութիւն: Եւ որ ի ծովու գնան՝ սոքիմբք, մանաւանդ Սայլդ յայտնի ցուցանէ զնաւագնացաց զհետ, զի հիւսիսական աստեղքդ ոչ են զնացականք, այլ կացականք: Եւ շարժեալք ի վերին եւթն գաւտեացն, որպէս ի ծովու ալեկոծին: Այս են նշանացոյց աստեղք: Տիւմարք եպերեն, որք ոչ գիտեն զգիրս: Այլ Մովսէս գրէ թէ՛ «Եդ գնոսա Աստուած ի նշանս եւ ի ժամանակս, եւ յաւուրս եւ ի տարիս»: Կատարէ եւթներբեակ գաւտին: Այս են աստեղք, որք են եւթն մոլորակք: Զի զարեգակն եւ զլուսին ընդ եւթն մոլորակացն եղեալ հարցն իմաստնոց, եթէ ի տերունականն խաւարումն դիպիցի, մեծ նեղութիւնք հասանեն երկրի եւ տագնապ, յոր եւ իցէ եւթն մոլորակացն:

Հրատն եւ լուսաբերն յորժամ ընդ կարճին պարանոցն անցանեն՝ արեան նշանակ է, եւ վախճան նոցա՝ կորուստ երկրի: Եւ եթէ ի կարճէն գալով լինի, որ բարկ աստղիկդ կայ ի գլխոյն, եւ ի վերայ բարկի անդ գտանին՝ մեծ նեղութիւնք գան երկրի եւ տագնապ յոր եւ իցէ:

Փայլածուն յորժամ զվարսն ցուցանէ, զոր ոմանք գիսաւոր կոչեն, եւ առնու զգէսն իբրեւ զգալի, զի զլոյսն յինքն առնու, մեծ պատերազմունք եւ արինհեղութիւնք գան երկրի, եւ տագնապ՝ ի հարաւոյ կողմանն:

Խոյն, յորում են աստեղք եւթն, եթէ հայիս եւ տեսանես զեւթն եւ զչորս այլ զուգեալ առ իրե/324b/արս, զիտասջիր՝ զի եկեալ հասեալ են թշնամիք եւ զքեւ պատեալ, եւ զիտասջիր՝ զի ի խաղաղութեան մնաս:

Յուլն, յորում են աստեղք երկոտասան, եթէ հայիս եւ տեսանես զնոսա յեղջիրս հարեալ, զիտեա՝ թէ վաղվադակի լինին պատերազմունք եւ կռիւք. բայց տարին՝ յաւոց եւ յանձրեւաց լինի:

Երկաւորին, յորում են աստեղք երկու, եթէ տեսանիցես զնոսա ի լուծ ուղղորդ, զիտեա՝ թէ մեծամեծաց կորուստ գայ, եւ տղայոց յախտից մահ. բայց տարին լի եւ պտղաբեր լինի:

Խեցգետին, յորում են աստեղք երեքտասան, որ կոչին կողմանագնացիկք, եթէ տեսանիցես զնոսա ի ճանապարհէն խոտորեալ, զիտեա թէ ապստամբութիւն լինի զաւրաց, մեկնեսցին յիւրաքանչիւր տերանց եւ թշնամիս բազումս ածեն ի վերայ երկրի. բայց երկրի վնաս ինչ ոչ կարեն առնել:

Առիւծն, յորում են աստեղք տասն, եթէ տեսանիցես զնոսա միաժողով, զիտեա թէ թագաւորք ելանեն, եւ մի (ի) նոցանէն կորնչի: Եւ եթէ տեսանիցես զճանգն

արինագոյն՝ գիտեա թէ ինքն կորնչի, զարքն ապրին. եւ արեգակն ի տարւոջն երեք անգամ խաւարի:

Կոյսն, յորում են աստեղք երեք, եթէ տեսանիցես զնոսա պայծառս, եւ այլանմանս, եւ մլմլոտս, գիտեա թէ ողորմութիւն Աստուծոյ գթացեալ է ի վերայ երկրի, եւ խաղաղութիւն լինի, եւ թշնամեաց կորուստ, երկրի լիութիւն եւ պտղոց առատութիւն:

Կշիռն, յորում են աստեղք երեք, եթէ պեսանիցես զնոսա զհարաւային կողմամբքն բարձր քան զմիւսն, եթէ եւ /125a/ ինչ ի վերայ թշնամւոյն՝ ի բաց դարձիր, զի չես յաղթաւ: Ապա եթէ զհիւսիւսայինն տեսանես՝ բարձր երթ, զի յաղթես:

Կարիճն, յորում են աստեղք երեսուն՝ կարգք կարգք, եթէ տեսանիցես զկարգն խառնեալ առ կարգն, գիտեա թէ առաջին աւուրքն ձմերայնոյն քաղցր գան:

Աղեղնաւորն, յորում են աստեղք վեց, եթէ տեսանիցես զնոսա ի թրթոմանց, գիտասջիր թէ առաքին ի նոցանէ աստեղք հանգոյնք, ծովք խռովին, եւ ամպք զուարճանան եւ թագաւորք զուարճանան:

Այծեղջիրն, յորում են աստեղք երեք, մի քան զմի ձիգ, եթէ տեսանիցես զնոսա զկարճն եւ զերկայնն զուգեալ առ իրեարս՝ գիտեա թէ քեզ գնալ պիտի յերկրէս, եւ բազում այլ սիրելեաց ընդ քեզ. ապա թէ այլ լուսով տեսանես՝ գիտեա թէ բազում ծնունդք ի տան քո լինին:

Ջրիոսն, յորում են աստեղք վեց:

Ձուկն՝ աստեղք հինգ, մին՝ յորդ անձրեւաց նշանակիչ, եւ միւսն՝ խռովութեանց:

Այս է յարեալ հմտութիւն ի կենդանատեսակս: Արեգակն զիրաքանչիւր ժամանակս տարոյն կատարէ ի ձեռն երկուց կենդանակաց, զոր կոչեաց թակոյկս, վասն երից զարութեանց՝ զանազանելով ի միմեանց եւ մեկնելով, խառնուած միաբանութեան առնուն առ ի լինելոյ միոյ տարեւոր ժամանակի: Որպէս զարունն՝ խոյ, ցուլ, եկաւոր: Ամարանի՝ խեցգետին, առիւծ, կոյս: Աշնանի՝ կշիռ, կարիճ, աղեղնաւոր: Ձմերանի՝ այծեղջիր, ջրիոս, ձուկն: Ընդ իւրաքանչիւր ումեք յոստոն թակոյկք տպաւորեալք /325b/ ընկուզագարդ, եւ գնդաձեւ, եւ շուշան: Իսկ զկենդանակացն զձեւ եւ զբնութիւն ցուցանէ ընկուզոյ, թերեւս զի յառաջագոյն բոյս արձակէ եւ յետոյ ծաղկէ: Թուի թէ վասն ի շարժմանէ եղելոյ ձայնիցն դաշնակաւորաց, զի ոչ եթէ անգէտք ենք ընկուզոյ անուանն, ըստ քարոզականին ասացեալ, զի խեցեմորթն նմա բնաւորեցաւ հնչումն եւ կայթումն գործել. եւ գնդաձեւ ճախարակեալ է, զի որ ինչ միանգամ ի յերկնի է, ամենայն ինչ գնդացեալ է, կատարեալ ձեւոյն հասեալ, որպէս երկիր: Շուշանն՝ թերեւս վասն սպիտակութեանն եւ զի լուսատեսիլ իսկ է, իսկ աստեղք նշոյլք են, որ շուրջ գնովաւ առանցք են, զի իւրաքանչիւր յաստեղացն ճառագայթս արձակէ: Ունի եւ բարբառութիւն բանդ շուշանի, հակառակ իմն ունի առ այլ ծաղկունս, զի է որ ձմերանն եւ ամարանի բոյս արձակէ: Իսկ շուշան ի հասանել ամարանի, յորժամ այլքն թառամին. եւ նշանակ մարդկային աստուածայնոցն. իւեղքն եւ պիղծք նուիրելոց, անկարաւորքն ի կարաւտելոց: Քանզի որ շուրքն ոռոգանին, ծաղիկք են, իսկ շուշանն առ շամբն եւ յետշանն, յորժամ բոցատապագոյն է արեգակն: Վասն որոյ մարգարէն զտեսական ազգն ասէ ծաղկել առակով: Ջի ոչ ըստ նմին ժամանակի վարեցի

աջողութիւնք, այլ յորում ժամանակի այլքն անցին ի գուարճանալոյ. սկսցի արժանեացն եւ հաւանեացն, քանզի առանց ջրոյ ծաղկեալ յարեգակնէ բոցակէզ ոչ հաւասա/326b/րէ ընդ վայելչականին:

Յաղագս հողմոց: Հողմ արեւելեայ, որ կոչի ապիլիոտէս, ելանէ յԱնձանաւթ երկրէն Մինեաց(ւ)ոց՝ փչելով հանդէպ Հնդկային լերանցն. բաժանեալ է կշիռ կենդանակատեսակի:

Հողմ հարաւոյ արեւելեայ, որ կոչի եւրոնաւտաւս, ելանէ հանդէպ Պարսկական ծովուն եւ Սեռեդոն քաղաքի. բաժանեալ է այժեղջիւր կենդանակերպի:

Հողմ հարաւային, որ կոչի նաւտաւս, ելանէ հանդէպ Թերաւս եւ աւագ Ադեքսանդր քաղաքի. բաժանեալ է <է> աղեղնաւոր կենդանակերպի:

Հողմ հարաւային արեւմտեայ, որ կոչի լիվոնաւտաւս, ելանէ հանդէպ Մեծ Եթովպիոյ եւ Նէպալսոյ. բաժանեալ է ջրիոս կենդանակի:

Հողմ արեւմտական, որ կոչի զեւփիւռաւս, փչէ յՈվկիանոսէ ընդդէմ Ատլաս լերինն, եւ Սեփտէ ծովուն. բաժանեալ է ի խոյ կենդանակի:

Հողմ հիւսիսային արեւմտեայ, որ կոչի թերակայի, փչէ Հիպեո բուռինաւս Ովկիանու, հանդէպ Յունիոս եւ Ադրիական ծովուն. բաժանեալ է եկաւորն կենդանակի:

Հողմ միջակ հիւսիսոյ, որ կոչի ապառկտիաս, այսինքն արջնային, փչէ հանդէպ Կոստանդնուպալսի. բաժանեալ է <է> խեցգետին կենդանակի:

Հողմ հիւսիսոյ արեւելեայ, որ կոչի վաւոէս, ելանէ յԱնձանաւթ երկրէ, փչէ հանդէպ ծովուն Կասբից եւ Վրկանի. բաժանեալ է առիւծ կենդա/326b/նակի: Զամանէ ասէ Սողոմոն թէ՛ «Խիստ է եւ աջոյ կոչի»: Իսկ Բարոն Դաղմատացի ասաց՝ սկիզբն աւոցոց: Յորժամ յաճախ զեւփիւռոնն, զոր խոզն կոչեն, երեւի, սկիզբն առնուցու փչելոյ՝ որ է յառաջ քան զեւթնիցո փերբուարի, մինչդեռ արեգակն ի ջրիոսին երիցս կամ հնգիցս խառնիցէ ի կենդանատեսակին, որ է գազանաբէկ:

Եւ դոցին հողմոցդ ծնունդք են այսոցիկ. սիք՝ ցրտային է, սիւր եւ ցրտային եւ դառնահոտ, սողոխ՝ մածսառութեամբ, բուք յամպոց փչէ. մի յարի՝ ոչ հատակոտոր մրրիկ՝ հալ եւ հում. հողմ՝ արագատեալ հանդերձ ամպով շրջաբերեալ, յընդդիմահարութենէ խիստ մարմնոց. շամանդաղ՝ աւելորդութիւն ամպոց է, զառ ի ջուր փոփոխմանց. մառախուղ յաղբերաց եւ ի գետոց ելանէ, եւ բնութեամբ ի վերայ լերանց անկանի: Շոգի՝ ի ջրոց՝ փոփոխումն յաւոյ. եւ բնութիւն է խոնաւին ցրտութիւն. շոգալի բնութիւն, ջերմ եւ խոնաւ: Գոլոշի՝ բնութիւն ջերմին եւ չորին. մռայլ՝ ցամաք ի հողոյ: Ախմուր՝ ցամաք եւ ծխալից ի հողոյ. եւ ի հողմոյ փշրելոյ: Փոթորիկ՝ հատուած է պտուտակեալ ներքուստ ի վեր փողելով: Վերածխութիւն է, զարութեամբ հուր. լիպարեան՝ որ հուր հնչէ ի սանդարամետէ, վիականք որ ի դուրս քար ընկենու կամ հող կամ կաւ: Լուղակ եւ բարա անդրնդայինք /327a/ վիականք զբովանդակութենէ, յորժամ լսես՝ համար կալջիւր. տես զկարգն խառնեալ եւ երկինք եւ երկիր զուգակցութեամբ, յերկնից առցես զհամար, զաւղ ընդ հող խառնեալ. արդ մտացիս զարութեամբ, որ ի մէջ երկնից եւ երկիր զարութիւն ջրոց է, յայտնութիւն հողոյ է: Տես

զի ժողովեաց մածոյց զհարովին: Կարգել կարգաց: Արդ չորս ինչս պարտ է ասել զջուրս: Եւ որ իցեն՝ զոր ասացաք: Շտեմարան իմն է ի ջուրս, յորմէ աւոյք ելանեն ի դուրս՝ հռասափն, քառասփն, սարսափն, եւ մագատն: Ելք սոցա ի ծովէ են: Եւ գնացք սոցա յերկինս: Ջշտեմարան նոցա եւ զելս նոցա անցեալ վերագոյն յայտ արարից, բայց այժմ զբովանդակութիւն ասացից: Հիմունքն հաստատեալ են ի բանէն Աստուծոյ եւ ջուր փակեալ ի հիմուն, շտեմարանս ազգի ազգի եւ պէս պէս զարմանալի: Ի ջուրս աւոյք պէսպէս եւ նշանաւորս ի շտեմարանս երկնի եւ երկրի, եւ գոյն գոյն, զարմանալի եւ ազգի ազգի յաւոյս: Ապա թէ ասիցէ ոք, եթէ հողմ ի ջրոյ է, եւ դու զի՞ արդ ասես թէ՛ յաւոյս, յայտնի ցուցից նմա: Ջուր է լայնանիստ, շտեմարանափակ: Աւզք անհանգիստք <են եւ> էլք նոցա յարտաքին ծովէ. եւ գնացք նոցա ի ներքին ջուրց: Քանզի ծով, որ զծածուկ ոչ ունի՝ արտաքին է: Եւ ընդ մէջ ջրոց եւ երկրի /327b/ աւոյք են: Եւ բազումք անգամ վնասք եւ շարժումք առնեն, եւ բազում անգամ յաւգուտ աղբերաց եւ յերակս ջրոց յաճախեն: Եւ են այտոքիկ՝ յասումն, սուրհասպն, անագումն, նեսփայ: Այտոքիկ են, որ շարժումն առնեն: Եւ երկինք հաստատեալ են ի վերայ երկրի: Այտոքիկ են բաւանդակութիւն, զոր ասեմք: Բովանդակութիւն սոցա ամենեցուն է Աստուած, որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորդաց

Յաղագս ասսարիոնի, դեբտոնի եւ դանկի:

Ա Կշիո Բ զարեհատաց կոչի ասսարիոն. իսկ ըստ հելլենականին դեփտոն կոչի, բայց ըստ եբրայեցոցն՝ նուագութիւն կոչի, որ է անաւար. եւ ըստ հայունս կոչի դանկ:

Բ Յաղագս փշտի:

Կշիո Գ զարեհատաց լինի. ըստ պարսկական լեզուի կոչի փշիտ:

Գ Յաղագս կերատի:

/199a/ Կշիո Դ զարեհատաց լինի միոյ կերատի կշիո:

Դ Յաղագս սնգի:

Կշիո Ե կերատաց կոչի սինգ:

Ե Յաղագս գրամարի:

Կշիո Զ կերատի լինի գրամար մի:

Զ Յաղագս տրմիսի:

Կշիո Ը կերատի լինի տրմէս մի:

Է Յաղագս սիմիսի:

Կշիո ԺԲ կերատի լինի սիմէս մի:

Ը Յաղագս դահեկանի:

Կշիո ԻԴ կերատաց լինի դահեկան մի: Մանր բաժանեայ զդահեկանն լինի՝ սիմէս Բ, տրմէս Գ, գրամար Դ, սինգ Զ, կերատ ԻԴ, փշիտ ԼԲ, դանկ ԽԸ, եւ զարեհատ ԴԶ:

Թ Յաղագս սատերի /199b/ եւ դրաքմէի:

Կշիռ սիմէսի եւ գրամարի կոչի ըստ եբրայեցւոց սատեր. եւ ըստ հելլենականին՝ ողբոս, եւ ըստ եգիպտոցւոց՝ քաղկոս, վասն զի աղեքսանդրացիք զարծաթն դաղկեմա կոչեն. եւ ըստ հասարակաց խաւսից կոչի դրաքմէ, որ է Ը մասն ունկոյ. եւ լինի ԺԸ կերատաց կշիռ: Ըստ հռովմայեցւոց կապիտոն կոչի, զի կապու գլուխ լսի, վասն զի Աւգաստոս թագաւոր եղ հարկս ըստ գլխոյ դրաքմէ:

Ժ Յաղագս սկեղ եւ մէտի:

Կշիռ դահեկանի եւ սիմիսի կոչի ըստ եբրայեցւոցն սիկդ. եւ ըստ հրէից եւ հելլենականին՝ մէտ. /200a/ եւ ըստ հռովմայեցւոցն՝ մեղէարիս. եւ ըստ հայոմս փորչէ, որ է Դ մասն ունկոյ. եւ ունի ԼԶ կերատաց կշիռ:

ԺԱ Յաղագս ունկոյ:

Կշիռ Զ դահեկանի լինի ունկի մի: Մանր բաժանելով գունկին լինի՝ սիկդ Դ, դահեկան Զ, սատեր Ը, սիմէս ԺԲ, տրմէս ԺԸ, դրամար ԻԴ, սինգ ԼԶ, կերատ ՃԽԴ, փշիդ ՃՂԲ, դանկ ՍՁԸ, զարեհատ՝ ՇՀԶ:

ԺԲ Յաղագս լտեր:

Կշիռ ԺԲ ունկոյ կոչի լիտր. եւ թարգմանի ըստ հռովմայեցւոց լեգուին հարթութիւն, բայց անուանի յամենայն լեգուաց լիտր: Եւ մանր բաժանեալ զլտերն ունի՝ ունկ ԺԲ, սիկդ ԽԸ, դա/200b/հեկան ՀԲ, սատեր ԴԶ, սիմէս ՃԽԴ, տրմէս ՃԺԶ, գրամար ՍՁԸ, սինգ ՆԼԲ, կերատ ՌՉԻԸ, փշիտ ՍՅԴ, դանկ ՎՆԾԶ, զարեհատ ՅԶԺԲ:

ԺԳ Յաղագս մնասի:

Մնասն ըստ իտալացւոցն ԽԴ ունկաց կշիռ է, որ լինի Գ լտերք եւ Ը ունկի: Եւ ըստ եբրայեցւոց լիտր եւ կէս: Եւ ըստ եբրայեցւոց մնասն արծաթի թարգմանի:

ԺԴ Յաղագս նոմիսմայի:

Նոմիսմայ ըստ հռովմայեցւոց դահեկան անուանի, զի Նոմիսմայ անուն էր թագաւորին եւ ըստ իւրում անուանն նոմիսմայ անուանեաց:

ԺԵ Յաղագս կենդինարին:

/201a/ Կենդինարն Ճ լիտր է. եւ անուանեցաւ ըստ հռովմայեցւոց լեգուին, զի կենդու ըստ հռովմէյացւոց Ճ լսի: Եւ է կենդինարն ԻՍ դահեկան: Եւ մանր բաժանելով զկենդինարն լինի՝ ուկի ՌՍ, սիկդ ՏՊ, դահեկան է հազար ու երկու հարիւր, սատեր ՔՈ, սիմէս Ա՝ՏՆ, տրմէս Բ՝ՌՈ, գրամար Բ՝ՓՊ, սինգ Դ՝ՎՍ, կերատ Ժ՝Է՝ՍՊ, փշիտ Ի՝Գ՝Ն, դանկ Լ՝Դ՝ԸՈ, զարեհատ Կ՝Թ՝ՌՍ:

ԺԶ Յաղագս դրամի:

Դրամ ըստ պարսկական լեգուին անուանեցաւ, յարծաթուջ տպաւորեցաւ, որ է Զ /201b/ մասն լտեր: Եւ սատերն Դ դրամաց կշիռ է. եւ պայուատիկն Օ լիտր է, որ է Ռ սատեր, որ լինի Տ դրամի կշիռ եւ թիւ:

ԺԷ Յաղագս տաղանդի:

Տաղանդն է ՃԻԵ լիտր: Զսա թուողք մոնադ կոչեն: Եւ մանր բաժանեալ զտաղանդն լինի՝ ունկի ՌՇ, սիկդ Յ, սատեր Ա՝ՅՍ, սիմէս Ա՝Փ, տրմէս Բ՝Ի, գրամար Գ՝Յ, սինգ

Ե՝Տ, կերատ Ի՝Ա՝Ց, փշիտ Ի՝Ը՝Փ, դանգ Խ՝Գ՝Ս, գարեհատ Ձ՝Զ՝Տ: Եւ լինի տաղանդն դահեկան Ք:

ԺԸ Յաղագս քանքարի:

Քանքարն է ՃԼԸ լիտր, եւ կէս, երրեակ եւ ութելտասնեակ: Մանր բաժանեալ զքանքարն լինի՝ դահեկան Ա՝, սիմէս Բ՝, տրմէս Գ՝, գրամար Դ՝, սինգ Չ՝, կերատ Ի՝Դ՝, փշիտ Լ՝Բ՝, Խ՝Ը՝, գարեհատ Ղ՝Զ՝: Հաւաք զամենայն մասունս քանքարի լինի դահեկան Ա՝:

Յաղագս հարցման եւ լուծման

Ա հարցումն:

Այսպէս լուայ ի հաւրէն իմմէ, եթէ ի ժամանակի պատերազմացն հայոց ընդ պարսս, սաստիկ քաջութիւնք լինէին ի Կամսարականէն Զարակայ. որպէս թէ ամասարեալ աւուրքք երիցս յարձակեալ ի վերայ զաւրացն պ/186a/արսից՝ եւ հարկանէր յառաջնումն զկէս զաւրուն. եւ ի հետ մտեալ հարկանէր յերկրորդումն զչորրորդ մասն զաւրուն. եւ յերրորդումն զմետասաներորդն: Եւ մնացեալքն անկանէին փախստեայ ի Նախճաւան թուով ՄԶ:

Արդ պարտիմք եւ մեք իմանալ մնացելովքս, եթէ յառաջ քան զկոտորումն ո՞րչափ էին:

Բ հարցումն:

Այր մի յիմոց մերձաւորաց գումարտ լեալ ի Բահլ՝ եգիտ մարգարիտ շահուար: Եւ դարձեալ ի տուն եւ հասեալ ի Գանձակ վաճառեաց զհասարակ մարգարտին զհատն յիսուն դրամ: Եւ եկեալ /186b/ ի Նախճաւան վաճառեաց զչորեւոր մասն մարգարտին եւթանասուն դրամ զհատն: Եւ հասեալ ի Դուին, վաճառեաց զերկոտասաներորդ մասն մարգարտին զհատն Ծ դրամ: Եւ մինչ ի Շիրակ առ մեզ եկն եւ ունէր մնացեալ մարգարտիս հաստ ԻԴ: Արդ գիտեա՛ մնացելովքս՝ թէ ամենայնն քանի՞ մարգարիտ է եւ կամ քանի՞ դրամ գինք մարգարտին:

Գ հարցումն:

Այսպէս լուայ ի վարդապետէն, եթէ գողեան մտին ի Մարկիանոն Տրիկլին եւ գողացան զկէս եւ չորեւոր գանձուն. եւ մտեալ /187a/ գանձաւորացն գտին ՆԻԱ կենդինար եւ Վ եւ Ո դահեկան: Արդ գիտեա ի մնացելոցս, թէ ամենայնն ո՞րչափ էր գանձին:

Դ հարցումն:

Հոռզ ուխտին սրբոյ Սովեայ զհինգ մասն առնուն սարկաւագունքն, եւ տասն մասն առնուն քահանայքն, եւ ՄԽ լիտր առնուն եպիսկոպոսունքն, եւ Ս լիտր այլ ուխտն: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ լիտր լինի հոռզն:

Ե հարցումն:

Հոռզ սպայիցն բաշխի այսպէս. չորս մասն պատուաւորացն, Ը մասն աւագացն, եւ ՃԾ կենդինար այլ հեծելոցն: Արդ գիտեա, թէ ընդ ամենայն քանի՞ կենդինար լինի:

/187b/ Զ հարցումն:

Հազար կայր իմ ի պարտիզի. եւ հոռոմ մի եմուտ ի պատճառս զբաւսանաց եւ եկեր

գիինգ եւ զԺԵ մասն հազարոյն: Եւ իմացեալ իմ զորկորէութիւն առն, հանի գնա արտաքս եւ մտեալ համարեցի գնա. եւ գտի ունջ Ճ եւ Ժ: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ ունջ լեալ է հազարն եւ կամ քանի՞ ունջ կերեալ է հոռոմին:

Է հարցումն:

Ես ի Մարմետի էի, յոստանի Կամսականաց եւ երթեալ յեզր գետոյն, որու Ախուրեանն կոչեն, տեսի երամս ձկանց եւ ետու արկանել ուռկան: Եւ հանին զհասարակն եւ զԳ եւ զԷ /188a/ երամոյն: Եւ որ յուռկանէն զերծաւ, ի թարփ ընկաւ. եւ անցեալ զտի գնոսա քառասուն եւ հինգ: Արդ գիտեա՛ սոքաւք՝ թէ ընդ ամենայն երամս քանի՞ ձուկն լեալ է:

Ը հարցումն:

Ի ժամանակի ապստամբութեանն հայոց ի պարսից եւ սպանանելոյն Կամսարականէն Զաւրակայ զՍուրէն, դեսպան արձակեաց ոմն յազատաց հայոց առ թագաւորն պարսից գոյժ արկանել նմա. եւ գնայր աւուրն յիսուն մղոն: Եւ զկնի ԺԵ աւուր իմացեալ Կամսարականին Զաւրակայ հետամտիկս առաքէր զկնի ունել գնա, որք գնային աւուրն 2 մղոն: Արդ զի/188b/տեա՛, եթէ քանի՞ աւուր հասանէին նմա:

Թ հարցումն:

Որս էր Կամսարականացն ի Գէն եւ կալեալ էր երէ բազում. եւ ինձ որսամասն ետուն բերել վարագ մի: Եւ վասն զի անարի էր տեալեամբ, կշռեցի եւ գտաւ փորոտին Դ մասն ամենայն կշռոյն. եւ զլուխն Ժ մասն, ոտքն՝ Ի, ժանիքն՝ Ղ, անձն՝ Ս եւ ԺԲ լիտր: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ լիտր էր վարագն:

Ժ հարցումն:

Լոք մի կալան ի Մարմետի ի գետն յԵրասիս. եւ ես կշռեցի գնա եւ գտաւ զլուխն չորս մասն ամենայն կշռոյն եւ տուտն 2, եւ մէջքն ՃԽ լիտր: Արդ գիտեա, թէ ընդ ամենայն քանի՞ լիտր էր:

/189a/ ԺԱ հարցումն:

Այր մի վաճառական էանց ընդ երիս քաղաքս եւ բաժ արարին յառաջնումն եւ հանին զկէս եւ զերեւոր իրացն: Եւ յերկրորդ քաղաքին թուեցին զոր ինչ ունէրն եւ հանին զկէս եւ զերեւորն. եւ յերրորդ քաղաքին անդրէն այլ թուեցին եւ հանին զկէս եւ զերեւորն: Եւ մինչ ի տուն եկն, մնացեալ էին դահեկանք ԺԱ: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան ունէր:

ԺԲ հարցումն:

Նաւակ մի առնել կամէի եւ իմ դրամկունք իսկ կային եւ այլ ինչ ոչ կայր. եւ ասացի ցմերձաւորս իմ՝ Տուք ինձ մէն մի սակաւ ինչ, որ առնեմ/189b/ գնաւակս: Ոմն ետ Գ կշռոյն, եւ ոմն ետ զԴ, եւ ոմն զԶ, ոմն զԷ, եւ ոմն զԻԸ: Եւ իմ առեալ արարի գնաւակն: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ դրամ էր նաւակն:

ԺԳ հարցումն:

Ոմն յաշակերտաց իմոց առեալ ինձորս գեղեցիկս ի Խարայ, գայր ընծայեցուցանել ինձ: Պատահեցան նմա երեք պարք ի խաղուց եւ հանին՝ առաջին պարն զկէսն եւ զԴ մասն ինձորոյն, նոյնպէս եւ երկրորդն զկէսն եւ զԴ մասն, նոյնպէս եւ երրորդն: Եւ զմնացեալսն երեք առ իս ինձորս Ե: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ էր լեալ:

ԺԴ հարցումն:

Գինի կայր ի մի կարասի. վա/190a/րդիւ կազմեալ էին. եւ թակոյկք կճեայ երեք: Եւ հրամայեցի հանել զգինին անդր. մին տարաւ զերեք մասն եւ մինն զԶ, իսկ միւսն՝ զԺԴ, եւ զմնացեալն յայլ ամանս հանին, եւ էր փաս ԾԴ: Արդ գիտեա՛, թէ ամենայնն քանի՞ լեալ է:

ԺԵ հարցումն:

Ձի մի կայր ինձ ազնիւ, վաճառեցի եւ գնոցն Դ մասինն կովեան գնեցի, եւ է մասինն այծեան, եւ Ժ մասին եզնի, եւ ՅԺԸ դահեկանի ոչխարս առի: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան լինի:

ԺԶ հարցումն:

Ես եկեղեցի շինէի. գաղատոս մի կալայ, որ ածէր աւուրն ՃԽ քար, եւ յետ /190b/ ԼԹ աւուր գործառնութեանն՝ միւս այլ գաղատոս կալայ, եւ ածէր աւուրն ՄԺԸ քար: Եւ որպէս նա նմա հաւասարեաց՝ եկեղեցին կատարեցաւ: Արդ գիտեա՛, եթէ ի քանի՞ աւրն հաւասարեաց:

ԺԷ հարցումն:

Նաւ մի երթայր լի ցորենով. եւ կէտ մի զհետ մտեալ նաւին՝ նաւորդքն երկեան եւ ընկեցին նմա կէր զհասարակ ցորենոյն: Եւ յԲ աւուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն, յերրորդումն զԸ, ի չորրորդումն զԷ: Ապա ի նաւահանգիստն հասին եւ մնաց ԻՄ: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ լեալ էր:

ԺԸ հարցումն:

Ապաղարէ մի էր /191a/ իմ, խանգարեցի եւ այլ սպաս,՝ արարի. զԳ մասն մետուր մի արարի եւ զչորրորդ մասն այլ մետուր արարի եւ զԵ մասն Բ բաժակս արարի եւ զվեցն երկու սկուտեղս արարի. եւ երկու հարեր եւ Ժ դրամէ սկաւառակ մի արարի: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ էր լեալ ապազարէն:

ԺԹ հարցումն:

Այր մի յերիս եկեղեցիս եմուտ եւ խնդրեաց յԱստուծոյ յառաջնումն, եթէ Տուր ինձ որչափ ունիմս եւ տամ քեզ ԻԵ դահեկան: Նոյնպէս եւ յերկրորդումն ետ զԻԵն, նոյնպէս եւ յերրորդումն: Եւ առ իւր ոչինչ մնաց: Արդ գիտեա՛, թէ /191b/ յառաջն քանի՞ ունէր:

Ի հարցումն:

Ներսեհի Կամսարականի Շիրակայ եւ Արշարունեաց տեառն բուն կանգնէր առ ստորոտով լերինն, որում Արտին կոչէն: Եւ ի գիշերի միոջ մտին երամակք ցռուց բազումք: Եւ ոչ լեալ ատակ որսորդացն՝ ընթացեալ պատմեցին նմա ի գեաւղն Թալին: Եւ նորա իւրովի եկեալ հանդերձ եղբայրաւքն եւ ազատաւքն եւ մտեալ կոտորէին զերէսն: Եւ եղեն կալեալք ի թակարդի հասարակ երէոցն. եւ եղեն սպանեալն նետիւ չորս մասն. եւ զմատաղերէն ողջ կալան, որ եղել ԺԲ մասն. /192a/ եւ եղեն մեռեալք ի նիզակէ ՅԿ երէ: Արդ գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ լեալ էին:

ԻԱ հարցումն:

Ներսեհ Կամսարական որդի Արշարի, անուանակից եւ նախնի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ Բահղլճացն առնու զերի սաստիկ յոյժ: Եւ հասեալ ի դուռն

արքունի, ընծայեցուցանե թագաւորին պարսից զհասարակ գերւոյն: Եւ թուեալ զհասարակն՝ եւ ընծայե որդւոյ արքայի զԷ մասն: Եւ հրաժարեալ ի նոցանէ դառնայ յաշխարհն իւր: Եւ եկեալ ի տուն գարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ, /192b/ ոչ որպէս զնախարար, այլ որպէս զմի ոք ի թագաւորաց: Եւ սա տայ նմա զԸ մասն գերւոյն: Եւ եկեալ առ սպասայապետն, զոր խորաւարանն կոչեն, եւ առաւել եւս ի նմանէ մեծարեալ՝ տայ նմա զԺԴ մասն գերւոյն: Եւ եւս յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր՝ եւ ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Շրահատ, եւ տայ նմա զԺԳ մասն գերւոյն: Եւ եւս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատքն հայոց եւ տայ նոցա զինն մասն գերւոյն: Եւ եկեալ ի Վաղարշապատ, տայ ի սուրբ եկեղեցիսն զԺԶ մասն գերւոյն: Եւ եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝ տայ /193a/ նմա զԻ մասն գերւոյն: Եւ իւր մնաց ՇՀ անձն: Արդ զհտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ է լեալ:

ԻԲ հարցումն:

Փարաւոն արքայ Եգիպտացոց պատուէր զար ծննդեան իւրոյ եւ սովորութիւն էր նորա յաւուրն յայնմ տալ Ժ նախարարացն ըստ տասնեկի պատուոյն Ճ կարաս զինի ինկով կազմեալ: Արդ բաժանեսցիր զայդ ըստ պատուոյն Ճ տասնեկին:

ԻԳ հարցումն:

Շտեմարան մի էր իմ, յորում կայր գարի կայթ Ս: Մկներ մտին եւ զամենայն գարին կերան: Ես մուկն մի կալայ ի նոցանէ եւ պատուհասեցի: Նա խոստով/193b/անեաց եւ ասէ. Յիս Զ հատ եհաս: Արդ զհտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ հատ լեալ էր յշտեմարանին եւ կամ քանի՞ մկունքն որ կերանն:

ԻԴ հարցումն:

Երեք աւագանք էին ի քաղաքին Աթենացոց միաչափք եւ երեք ազուգայք գային յաւագանն: Մի ազուգայն քանզի յորդ էր, ի ժամ մի լնոյր գաւագանսն. երկրորդն նուագ քան զնա՝ յերկու ժամս լնոյր. եւ յերրորդն առաւել նուագ՝ յերեք ժամս լնոյր: Արդ զհտեա՛, թէ մինչ ի միասին խառնին ազուգայքն՝ ի քանի՞ երրորդ մասն ժամու լնուն գաւագանսն:

Լուծումն Ա հարցմանն:

/194a/ Յառաջ քան զկոտորածն էին ՌՉԿ հեծեալ:

Լուծումն Բ հարցմանն:

Լեալ էր մարգարիտն հարեւր եւ քառասուն եւ չորս հատ եւ զին մարգարտի ՅՉԻ դրամ:

Լուծումն Գ հարցմանն:

Լեալ էր գանձն կենդինար ՌՌԶԶ:

Լուծումն Դ հարցմանն:

Լինի հռոգ ուխտին ՎՄ լիտր:

Լուծումն Ե հարցմանն:

Լինի հռոգ սպայիցն կենդինար ՄԻս:

Լուծումն Չ հարցմանն:

Լեալ էր ունջ հազարոյն ՃԾ:

Լուծումն Է հարցմանն:

Լեալ էր ընդ ամենայն ձուկն ՆԻ:

Լուծումն Ը հարցմանն:

Հասանէին յաւուրս ԻԵ:

Լուծումն Թ հարցմանն:

Լեալ էր վարազն ՅԿ լիտր:

Լուծումն Ժ հարցմանն:

Լեալ էր լոքն ՄԽ լիտր:

Լուծումն ԺԱ հարցմանն:

ՈՒնէր վաճառականն դահեկանս ՍՅՀԶ:

Լուծումն ԺԲ հարցմանն:

Լեալ էր նա/194b/ւակն ԽԲ դրամ:

Լուծումն ԺԳ հարցմանն:

Լեալ էր ինձորն ՅԻ:

Լուծումն ԺԴ հարցմանն:

Էր գինին փաս հարեր եւ քսան եւ վեց:

Լուծումն ԺԵ հարցմանն:

Լեալ էր գինք ձիոյն վեց հարեր եւ տասն եւ վեց դահեկան:

Լուծումն ԺԶ հարցմանն:

Հաւասարեաց գաղատոսն յաւուրս Հ:

Լուծումն ԺԷ հարցմանն:

Էր հացն ի նաւին ԻԴԻԻ կայթ:

Լուծումն ԺԸ հարցմանն:

Լեալ էր ապաղարէն ՏՄ:

Լուծումն ԺԹ հարցմանն:

Լինի դահեկան ԻԱ Ե Դ Ը:

Լուծումն Ի հարցմանն:

Եղեւ ընդ ամենայն երէն ՍՃԿ:

Լուծումն ԻԱ հարցմանն:

Լեալ էր ընդ ամենայն գերին ՍՄԽ:

Լուծումն ԻԲ հարցմանն:

- Ա. ա, ւ, ւ, ւ, ւ, ւ:
- Բ. ք, ք, ք, ք, ք, ք:
- Գ. ւ, ւ, ւ, ւ, ւ, ւ:
- Դ. ւ, ւ, ւ, ւ, ւ, ւ:
- Ե. ք, ք, ք:
- Զ. ք, ք, ք, ք, ք, ք, ք, ք:
- Է. ք, ք, ք, ք, ք, ք, ք:
- /195a/ Ը. ք, ք, ք, ք, ք, ք:
- Թ. ք, ք, ք, ք, ք:
- Ժ. ք, ք, ք, ք, ք, ք:

Լուծումն ԻԳ հարցմանն:

Լեալ է յշտեմարանին գարեհատ ՓՄՂԴՏ եւ լեալ են մկունք կերաւոք գարոյն ՃԳՅՊ:

Լուծումն ԻԴ հարցմանն:

Զուգախառնեալ ազուգայքն լնուն գաւազանսն Ի, Դ, Զ, ԺԶ, ԺԸ մասն ժամուն:

Յաղագս յափոց, չափուց եւ պատարաց

Ա Յաղագս քսեստի:

Չափ առաջնորդ չափուց քսեստ: Եւ կոչի յամենայն լեզուաց քսեստ անուն: Բայց ըստ աշխարհաց /202b/ աշխարհաց այլ եւ այլ չափ է: Ըստ աղեքսանդրացուց, եւ իտալացուց եւ ի պոնտացուց Բ լտերաց կշորդ է քսեստն: Եւ կաստրիաստն ԻԲ ունկեաց կշորդ է: Իսկ ի Նիկոմեդիայ քսեստն Ի ունկոյ կշորդ է: Եւ կաստրիաստն ՊԻԲ ունկեաց կշորդ է: Բայց ըստ հելլենականին՝ քսեստն սակաւ ինչ պակաս է յերեք լտերաց կշորդաց:

Բ Յաղագս կոտիլոյի:

Կոտիլո կոչի կիսոյ քսեստի վասն ընդ C բաժանելոյ:

Գ Յաղագս տրիլոնի եւ պարապսիդոսի:

/203a/ Տրիլոնն սկաւառակ է բոլորակ եւ խոր: Նոյնպէս եւ պարապսիդոս կոչի. եւ ունի կէս քսեստի:

Դ Յաղագս բիսնի:

Բիսին է բոլոր ապակեղէն. ունի կէս լտեր. եւ կոչի ըստ հայունս շիշ:

Ե Յաղագս պեմենիայի:

Պեմենիայ ապակի է պարզ, Զ մասն քսեստի:

Զ Յաղագս պիդէիսի:

Պիդէիս կրկին ապակի է եւ ունի նոյնչափ Զ մասն քսեստի:

Է Յաղագս կամփասակի:

Չափ Դ քսեստաց կոչի կամփասակ, զոր հայք սրուակ ասեն:

Ը Յաղագս քուզայի:

Չափ Զ քսեստի ըստ երրայեցւոցն /203b/ կոչի քուզա, որ է ԺԲ մասն արդուի:

Թ Յաղագս կաբոսի:

Չափ ԺԱ քսեստի կոչի կաբոս, որ է կէս մողոյ:

Ժ Յաղագս եւիմայի:

Չափ ԺԱ քսեստի կոչի եւիմա, ըստ թեբայեցւոց լեզուին. եւ է նոյնչափ կէս մողոյ:

ԺԱ Յաղագս մողոյ:

Չափ ԻԲ քսեստաց լինի մող մի, որ կոչի խոստովանումն ըստ ԻԲ գլխատրաց եւ ըստ ԻԲ գրոց կտակարանաց եւ ըստ ԻԲ գրոց այբուբենի երրայեցւոց, զոր կոչեն չափ սրբութեան:

ԺԲ Յաղագս գրուի:

Չափ ԻԲ քսեստաց լինի գրիւ մի, որ է նոյնչափ մողոյ:

ԺԳ Յաղագս սագիտարի:

/204a/ Չափ ԻԲ քսեստաց կոչի եւ սագիտար, որ է նոյնչափ մողոյ:

ԺԴ Յաղագս մարի:

Չափ Ծ քսեստի լինի մար մի եւ ըստ հելլենականին սատոն կոչի, որ է նոյնչափ Ծ քսեստի, զոր կոչեն չափ հնձանի:

ԺԵ Յաղագս արդուի:

Չափ ՀԲ քսեստաց լինի արդու մի: Եւ ըստ հելլենականին արտաբոս կոչի: Բայց եղաւ յեզիպտացւոց, որ կոչի որմոբ, որ է բարեժողով: Եւ երրայեցիք վարին նովին չափով՝ յեզիպտացւոց առեալ:

ԺԶ Յաղագս քոռի:

Չափ ՊԶ քսեստի լինի քոռ մի: Եւ կոչի յերրայեցւոց եւ /204b/ յասորւոց՝ ի հայոց առեալ: Եւ է Խ մողոյ չափ: Եւ քոռ ըստ հելլենականին կորոս լսի: Եւ է նոյնչափ Խ մողոյ, որ ունի ՊԶ քսեստ:

ԺԷ Յաղագս կիւաթոսի:

Կիւաթոս չափ է գինոյ արկանելոյ յապակիս: Եւ կոչի ըստ ատտիկեցւոց լեզուին անտղիտերիոն, գինեհան է երկայնադաստակ, որպէս զճաշակ, վասն ի խորութենէ կարասոյն զգինին հանելոյ:

ԺԸ Յաղագս կաղամաղէկաւթի եւ մասմարութայ:

Կաղամաղէկաւթ եւ մասմարաւթ ի գրոց երրայականաց ոչ է թարգմանեալ: Արդ՝ ուր գտանից /203a/ եւ զայս անունս, գիտասջիր՝ եթէ կաղամաղէկաւթն ըմպելի ասի եւ մասմարովթն ճաշակ, որով զգինին հանեն:

Յաղագս շաղկապութեան արեգական եւ լուսնի

Իսկ յորժամ կամիս գիտել՝ թէ զիարդ են ընթացք արեգական եւ լուսնի առ միմեանիս, կալ զհիմն լուսնին. եւ երթ ի բաց ՈՁ ՈՁ. եւ որ քան լինի՝ գրեայ ժամս. որ մնայ՝ Կ. նապատիկ արայ. եւ երթ ՈՁ ՈՁ. եւ որքան լինի՝ գրեայ մասունս առ մասունսն: Յետ այնորիկ ժողովեալ զմասունսն եւ երթ Կ Կ. եւ զմի մի Կ ժամս գրեայ առ մասունսն. եւ կալ զժամսն. եւ երթ Լ Լ. եւ զմին մին Լ տուն գրէ առ տունսն: Կալ զտունսն եւ երթ ԺԲ ԺԲ. եւ բաշխեա. ի խոյէն յառաջ թէ գտանես զարեգակն եւ զլուսին ի միում տան, ի վայր քան զբժան ժամս խաւարի արեգակն. եւ թէ գտանես զարեգակն Ժ զլուսին յայլ եւ յայլ տան, եւ բարձրութիւն եւ խոնարհութիւն նոյն տուն դեպի, խաւարի լուսինն: Եթէ կամիցիս գիտել՝ թէ արեգակն յորում տան է, կալ զամս Աղեքսանդրին, ՋԼԹ ի բաց երթ. եւ զայլն երթ Դ Դ, որքան զԴ-սն ի խոնարհ մնայ, զամէն թիւնն տարի կալ, եւ ԺԱ հանապալ ի վերայ բեր եւ յապրիելի ամսոյ մինչ ուր ես, վերայ բեր ՌՆԸ, ապա զամէնն չորեքպատկեայ եւ երթ ՌՆԿԱ ՌՆԿԱ, որ մնայ՝ ի խոյէն յառաջ տուր, որպէս ի հրամանիդ կայ. եւ յոր տան սպառի, արա զմնացեալ թիւն Լպատիկ. եւ երթ ըստ տանցն համարոյ ի բաց. եւ քանի երթաս, ասա ժամս. եւ որ մնայ՝ Կ. պատիկ արա եւ երթ նոյնպէս ըստ տանցն համարոյ. եւ քանի լինի՝ ասա մասունսն ՌԺԵ եւ կամ ՌԺԲ. եւ այս է.....

Յաղագս շրջագայութեան երկնից

.....

Յաղագս վեցհազարեկի

.....

Յիշատակարան

Վասն որոյ եւ իմ խնդրեալ զդա բազում աշխատութեամբ եւ ճշգրտիւ ... ոյ ... ի մէջ առեալ բերի զքեզ յերկիրս Հայոց եւ ի Քրիստոսասէր վիճակ սրբոյն Գրիգորի: Եւ սկիզբն քանիանութեան բերման թուիս յորժամ լցեալ էր ՈԿԸ ա<մ> ի կուսական յարգանդէ Աստուածն Բանի: Եւ ի մետասաներորդի շրջագայութեանն եւ ի ԺԹ ամի [Կոս]տանդիանոսի: Ես Անանիա Շիրակացի ի զեղջէ Անէնից: Եւ դուք աշակերտք, հայեցէ՛ք եւ զարմացարուք:

ՇԼԲ բոլորակը

.....

Որչափութիւն շեկի

Որչափութիւն Շեկի. ամբ՝ ՇԼԲ, լրմունք՝ ՅՇՁ, ամիսք՝ ՅՆՀԲ, շաբաթքն՝ Բ՝ԻՇԽ, ատուրք՝ Ժ՝Թ՝ԻՆՇՁ, ժամք՝ Ն՝Կ՝Ձ՝ՁԼԲ, իննետասներեակք՝ ԻԸ, լրմունք նոցին՝ ՄԼԵ, ԻԸեակք՝ ԺԹ, լրմունք նոցա՝ ՅԼՁ, ԳԺանին՝ ՅԿԴ, միահամուռ Շեկին լրմունքն այս է:

Եթէ որ զքեզ հարցանէ վասն Լամասնեայ ժամուց լուսնի, կալ զաւուրս լուսնի, եւ արա զժամն Լ մասն, եւ այնչափ լոյս տայ գիշերուոյն: Առաջին արն կալ ԻԴ եւ գտանի Ձ մասն պակաս ի ժամէ: Երկրորդ արն ԽԸ արա, զԼ՝ ժամ մի եւ ԺԵ կիսաժամ, եւ այլ Գ մասն: Երրորդ արն չԲ տրայ. զԿն Բ ժամ եւ մնայ ԺԲ մասն: Չորրորդ արն՝ ՂՁ, որ է Գ ժամք, եւ Ձ մասն: Հինգերորդ արն՝ ՃԻ, որ լինի Դ ժամ: Ընծայմանէն մինչեւ ի լրումն զլոյսն դիր յառաջ Ժ ի վեշտասանէն՝ զիսաւարն: Այս են մասունք ատուր միոյ ընթացից լուսնի: Այս են ատուրք տարւոյ միոյ ընթացից լուսնի: Աւրն՝ մա/135b/սունք ՅՇԴ, Ձ պակաս քան զարեգակն: Ամիսն ժամք ՅՇԴ՝ Ձ պակաս քան զարեգակն: Տարին՝ ատուրք ՅՇԴ, Ձ պակաս քան զարեգակն:

Եթէ կամիցիս գիտել՝ եթէ զհարդ կատարէ լուսինն զընթացս իւր ի տարւոջն՝ երբեմն ԲԺան լրմունս յաւուրս ՅՇԴ, եւ երբեմն ԳԺ՝ յաւուրս ՅՁԴ, եւ ժամք ԲԺանին՝ ՓՆՂՁ, իսկ ԳԺանին՝ ժամք ՔՄՁՁ, այսպէս ապա: Կալջիր զԹ եւ Ժերեակ բոլորակին ամաց զամենայն ատուրսն, որ լինին ՅՁԼԷ ըստ ընթացից արեգականն եւ յաւելջիր ի նայ զԿնիցն թիւսն, զկորուսեալսն լուսնի ճԺԵ եւ լինի ատուրք ԷՌԾ. գիտեա թէ քանի լրմունք կան ի դմա. եւ են լրմունք ՄԼԵ, բաժանեա զոյս անիւ Թ եւ Ժերեկին. եւ հասանի ԺԲ ամին՝ ԺԲ ԺԲ լրմունք, եւ Է ամին ԺԳ ԺԳ լրմունք. եւ յաւելու յարեգակէ ընթացն լուսնի ատուրս ԺԱ, եւ ժամս Գ:

Յորժամ կամիցիս գիտել՝ թէ յորում նահանջի եմք, կալ զաւուրն զոր յայտնութիւնն եթող, եւ այն է: Կալ զփետրուարի ԻԵն եւ /136a/ այն է: Կալ զանցեալ նահանջն, Ե ի վերայ ամ, եւ այն է: Եւ նահանջքն են այսոքիկ՝ Ա Ձ Դ Բ Է Ե Գ: Սոքա բովանդակին ԻԸ ամ:

Եթէ կամիս գիտել՝ թէ քանի ժամ է անցեալ յաւրէն կամ ի քանի ժամն ես, առ փայտ, ԺԲ մատն հաւասար, միաչափ բաժանեա Լ եւ կանգնեա զնայ ի դիր տեղուց, եւ տես զշուքն, որ է ստուեր արեգականն, եւ նշանեայ գտեղին, եւ կործէ զփայտն ի վերայ ստուերին մենչեւ ի նշանն, եւ տես թէ քանի աշտիճան էառ, եւ բեր ԺԲ թիւ այլ ի վերայ, եւ տես թէ արեգակն յորում կենդանակերպոց է: Թէ ի խեցգետինն է՝ առ Բ թիւ ի բաց, յառիծն՝ Գ, ի կոյսն՝ Ձ, եւ ի կարիճն՝ Ը, յաղեղնաւորն՝ Ժ եւ յածեղջիրն՝ ԺԲ. եւ զայլն որ մնայ՝ բաժանեա՝ յիւրեանց վերայ չԲ, որ մնայ, այնչափ ժամ է ելեալ յաւրէն. եւ ի կէս ատուր ի վայր որչափ մնայ՝ այնչափ մնացեալ է յաւրէն: Եւ եթէ մատունք մնայ, զայն բաժանեա յամենին վերայ. եւ այնչափ մասն, որչափ մնայ ի մանրամասնացն, ելանէ ի միւս այլ ժամէն: Եւ ի կէս արն զորդ Բ մատն լի/136b/նի ստուերն, որ է փայտին շուքն. եւ թէ Բ Բ անկանի ի վերայ չԲուցն, Բ ժամ է ելե(ա)լ յաւրէն: Եւ թէ Գ Գ՝ նայ Գ ժամ է ելեալ. եւ որ ի կարգին է: Եւ ապա որ մնայ ի չԲուցն՝ թէ Գ, թէ Դ, թէ Ե, բաժանեա յամենին վերայ. եւ յորժամ զչԲն բաժանես ի վերայ աշտիճանացն, որ կրկնես եւ զաւելին ի զատ հանես. որչափ ինչ ի չԲուցն ամէն աշտիճանի համար ընգրնի, այնչափ ժամ է ելեալ յաւրէն:

Զուգաւորութիւն ԺԲ ազգաց այսպէս արա. կալ ի յայտնութենէն մինչեւ ուր ես, ԻԵ յունուարոյ տուր, եւ զայլն ի կարգին, ուր դադարէ, այն է աւուրք հոռոմի, յունի եւ ասորոց: Կալ զնոյն թիւ, Թ տբերթի տուր, եւ զայլն ի կարգին՝ ուր դադարէ այն է աւուրք եբրայեցոց, արաբացոց, մակեդոնացոց: Կալ զնոյն թիւ, ԺԹ ի տուրիլ տուր, եւ զայլն ի կարգին, ուր դադարէ, այն է աւուրք՝ եգիպտացոց, եթոպացոց, աթենացոց, /137a/ բիթանացոց, կապուտակացոց, վրաց եւ աղուանից: Դարձեալ կալ հայ հասարակածէն մինչեւ յաւրն յորում ես, ԺԱ ի մարտի տուր, եւ զայլն ի կարգին, ուր դադարէ, այն է աւուրք հոռոմի, յունի եւ ասորոյ: Դարձեալ կալ զնոյն թիւ, Ա աւելեացն տուր, եւ զայլն ի կարգին, ուր յանկի, այն է աւուրք եբրայեցոց, արաբացոց եւ մակեդոնացոց: Դարձեալ կալ զնոյն թիւ, Զ պեմենովթայ տուր, եւ զայլն ի կարգին, ուր դադարէ թիւն, այն է աւուրք՝ եգիպտացոց, եթովպացոց, աթենացոց, բիթանացոց, կապապաղովկիացոց, վրաց եւ աղուանից:

Լրումն ԲԺ ազգաց այսպէս արա. կալ զլրումն հոռոմին, թէ յապրելն է, Է ի վերայ ած՝ եգիպտացոց է եւ իւրոցն: Դարձեալ կալ զլրումն հոռոմին, Ժ ի վերայ ած՝ եբրայեցոց է, արաբացոց եւ մակեդոնացոց: Դարձեալ կալ զհոռոմին, Դ ի վերայ ած եւ զամսանահանջն Ե երթ, որ ի խոնարհ մնայ, լրումն է Հայոց: Դարձեալ թէ լրումն հոռոմին ի մարտի լինի, Դ ի վերայ ած՝ եգիպտացոց է եւ իւրոցն: Դարձեալ կալ զլրումն հոռոմին, ԻԱ /137b/ ի բաց երթ՝ եբրայեցոց է, արաբացոց, մակեդոնացոց: Լրումն Գ ի վերայ բեր, եւ զամսանահանջն Զ երթ, որ ի խոնարհ մնայ՝ լրումն է Հայոց:

Տեր մեր Յիսուս Քրիստոս ծնաւ ի Բեղղէմ տբեր ԻԱ, ըստ եբրայեցոց ամսաթուին յէրորդ ժամու աւուրն. եւ մկրտեցաւ ի Յորդանան ի քանունհրա ըստ ասորոց թւոյն, որ է յունուարի Զ, ի Ժերորդ ժամու գիշերոյն. եւ էր ամաց Լնից սկսեալ: Ահա յայտ է թէ ի նոյն ար ծննդեանն մկրտեցաւ: Եւ ԼԳ ամաց խաչեցաւ, յաւուր ուրբաթի, ի Զերորդ ժամու աւուրն, ունելով լուսինն աւուրս ԺԴ: Յարեաւ յաւուր երրորդի եւ թուի այսպէս յիններորդ ժամուն կատարեցաւ: Եւ մինչեւ ցէրորդ ժամ գիշերոյն էր ուրբաթ, քանզի ամենայն ար յառաւարտէն առնու սկիզբն, ահաւասիկ ար եւ գիշեր մի: Եւ յէրորդ ժամու գիշերոյն սկսաւ շաբաթն, իսկ ար շաբաթուն գիշեր, ահաւասիկ ար երկրորդ: Եւ յետ Էեր/138a/որդ ժամուն սկսաւ եւ առաջիկայ գիշերն մինչեւ ցէրորդ ժամն: Եղեւ միւս այլ եւս ար եւ երրորդ արն: Եւ ի Ժերորդ ժամու գիշերոյն յարեաւ Քրիստոս, եւ երեւեցաւ կանանցն եւ աշակերտացն ամենեցուն: Իսկ համբարձաւ յամսեանն պաքու ըստ եգիպտացոց, յաւուր հինգշաբաթի, յիններորդ ժամու աւուրն:

Տասներորդ անգամ երեւեցաւ տէրն աշակերտացն յետ յարութեանն իւր ի մեռելոց: Նախ առաջին՝ Մարիամ Մագդաղենացոյ ի գերեզմանն: Երկրորդ անկամ՝ ի Գալիլիա լեառն, ուր ժամադիր եղեւ նոցա ըստ Մատթէոսի: Երրորդ անգամ՝ Կեփայի միայն, որ եւ Պաւղոս ասէ թէ երեւեցաւ Կեփայի: Չորրորդ անգամ՝ դրաւք փակելաւք առանց Թումայի: Հինգերորդ անգամ՝ ի գնալն Կղէոպա եւ Ղուկասու ընդ նմայ՝ ի բեկանել հացին: Վեցերորդ անգամ՝ դրաւքն փակելովք, ուր էին աշակերտքն ժողովեալ եւ Թումաս ընդ նոսա: Էրրորդ անգամ՝ առ ծովեզերքն Տիբերայ: Ըերորդ անգամ՝ հինգհարիւրոցն միանգամայն՝ ըստ Պաւղոսի: Թերորդ անգամ՝ Յակովբու ըստ Պաւղոսի: Ժերորդ անգամ՝ ի լեառն Զիթենեաց՝ ի համբառնալն:

/138b/ Էր հայր Յոհաննու աւետարանչի Զերեղոս, իսկ մայր Սողոմի, դուստր Յովսէփայ: Յովսէփ ուներ որդիս Դ՝ զՅակովբոս եւ զՍիմոն, զՅուդաս եւ զՅովսէս: Եւ

դատերս երիս՝ Իսթեր, Մարթա եւ Սողոմի, որ էր կին Ձեք(ե)դասի եւ մայր Յոհաննու: Եւ փրկիչն էր քեռի Յոհաննու, որպէս եղբայր Սողոմեայ, դստերն Յովսէփայ: Եւ մկրտեաց տէրն միայն գտորբ առաքեալն Պետրոս, եւ Պետրոս՝ զԱնդրէաս, եւ Անդրէաս զԲորդիսն Ձեքեդայ՝ զՅակոբոս եւ զՅոհաննէս: Յակովբոս՝ եւ Յոհաննէս եւ Անդրէաս՝ զայլ առաքեալսն միանգամայն եւ զեթանասունսն, զի ամենեքեան փախեան ի ժամանակ(ի) չարչարանացն: Իսկ Յոհաննէս ի մատնութեանն եւ ի չարչարանսն յանդիման կայր ի գերեզմանն, նախ քան Պետրոս եկն, զի գտորբ զԱստուածածինն առ իւր ընկալաւ աստուածաբանն Յոհաննէս: Իսկ գտորբ զԱստուածածինն՝ Պետրոս եւ Յոհաննէս մկրտեցին: Իսկ ի չարչարանացն եւ ի յարութենէն եւ ի համ/139a/բարձմանէն տեառն մինչեւ ցբարկոծումն Ստեփաննոսի՝ ամիսս Է: Եւ ի վկայութենէն Ստեփաննոսի մինչեւ յերեւումն լուսոյն Պաւղոսի ամիսս Զ: Եւ յերեւմանէ լուսոյն Պաւղոսի մինչեւ ցփոխումն Աստուածածնին՝ ամս ԽԴ. եւ էր ամաց ԵԺից, յորժամ ծնաւ գտէրն. եւ լինի ամս ԾԹ: Եկաց ի տաճարն ի սրբութիւն սրբոցն ամս ԺԱ. եւ էր ամաց երից, յորժամ ընծայեցաւ ի ծնաւդացն ի տաճարն: Եւ արար ի տունն Յովսէփայ, ամիսս Դ. եւ աւետարանեաց նմա հրեշտակն եւ ծնաւ զկոյսն աշխարհի Քրիստոս առանց հաւր, զծնեալն ի հաւրէ յառաջ քան զյաւիտեանս առանց մար: Եւ էր, որպէս ասացաք, ամենասրբուհի կոյսն Մարիամ ամաց ԵԺից. եւ եկաց ամս ԼԳ, որպէս եւ որդին իւր: Եւ յետ ամբառնալոյ որդւոյն իւրոյ եկաց ի տունն Յոհաննու աւետարանչի ամս ԺԱ, որ լինի ամենայն ժամանակ տիրամարն ամս ԾԹ:

Ազգք, որ խաչեցար ասեն, եւ տան առնեն եւ զՔրիստոս Աստուած ուղիղ խոստովանին, այս են՝ /139b/ հայք երանելիք, եթովպացիք, եգիպտացիք, ադուանք, կումբիկք, երջանիկն Արաբիա, հռոմեացիք, գաղիացիք, ֆռանկք, սպանիացիք, բրիտենացիք, պատմոսացիք, յակովբիկք, Սաղաստանայք, Սկիւթ անապատ եւ երկիրն Աւետեաց: Ազգք՝ ԺԷ:

Պատմութիւն

1

Մովսէսի Խորենացոյ եւ Անդրեասի: Ադամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զՍէթ: Եւ եկեաց ամս եւթն հարեր, մինչեւ ի հարեր երեսուն եւ հինգ ամն Մադաղայեղի: // Սէթ կեցեալ ամս երկերիւր եւ հինգ՝ ծնանի զԵնովս. եւ եկեաց ամս ՉԷ, մինչեւ ի քսան ամն Ենովքայ: Սորա երկուքն յարձանագրութեանցն՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսէպոս, թեպէտ եւ ուրն անյայտ է:

Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած: Եւ ընդէ՞ր արդեւք այս, եւ կամ վասն որո՞յ պատճառանաց նախն է ասացեալ կոչելոյն զԱստուած, կամ ո՞րպէս կոչելն իմանի: Քանզի Ադամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն. եւ սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր. այդ եւ յանցուցեալ եւ ի թաքստեան եղեալ, զՈ՛ւր ենն յԱստուծոյ՝ եւ ոչ յայդ ումեքէ հարցանի: Սապէս եւ զվճիռ վարկին ի նմին բերանոյ լսէ. իսկ յետոյ եւ Աբէղ մերձաւոր եւ ծանալթ Աստուծոյ լիալ՝ պատարագս մատուցանէ, եւ ընկալեալ լինի:

Արդ՝ սոցա այսպէս ընդունելութեան եւ ծանալութեան Աստուծոյ լինել, է՞ր աղագաւ առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս յուսով: Այդ զայդսն վասն սորա ի տեսութեանց՝ ի հրաւիրեալսն մեր յողարկեցուք տեղի. իսկ որ առձեռնպատրաստն է, ասացուք: Քանզի ի պատուիրանագանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ՝ չարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ: Ջկնի եւ ընտանեգոյնն Աստուծոյ՝ յորդուցն Ադամայ՝ ի հարագատէն իւրմէ սպանանի յեղբարէ: Յետ որոյ՝ ոչ բանիւ ինչ աստուածայնոյ, եւ ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս եւ յանյուսութեան ազգ մարդկան համարեալ լինի. այդ եւ ինքնահաճոյ արդարեւ գործս. յորոց միջի սա քաջայոյս եղեալ՝ ուղղութեամբ հանդերձ՝ կոչէ զԱստուած: Իսկ կոչելոյ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ յաւգնականութիւն կարդալ:

/29a/ Արդ՝ անուանել որպէս զմոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զԱստուածոյ ածեր անունն, եւ կամ զնոյն իւքն որոյ անունն. եւ ոչ դարձեալ մահու եւ թողման դեռ եւս յԱստուծոյ ստեղծեալն հասեալ է: Ապա ուրեմն յաւգնականութիւն կոչէ սա զԱստուած:

Ժա կեցեալ ամս ՃՂ, ծնանի զԿայիան: Եւ եկեաց ամս ՉԺԵ, մինչեւ ի ԺԳ ամս Մաթուսաղայի:

Կայիան կեցեալ ամս ՃՀ, ծնանի զՄաղաղաւ. եւ եկեաց ամս ՉԽ, մինչեւ ՉԱ ամս Ղամեքայ:

Մաղաղայել կոցեալ ամս ՃԿԵ, ծնանի զՅարեղ. եւ եկեաց ամս ՉԼ, մինչեւ ԽԸ, ամս Նոյի:

Յարեղ կեցեալ ամս ՃԿԲ, ծնանի զԵնովք. եւ եկեաց ամս Պ, մինչեւ ՄՁ ամս Նոյի:

Ենովք կեցեալ ամս ՃԿԵ, ծնանի զՄաթուսաղայ: Եւ եկեաց ամս Մ մինչեւ ԼԳ ամս Ղամեքայ: Եւ հաճոյ եղեալ Աստուծոյ փոխի: Մա յետ ծնանելոյ զՄաթուսաղայ ամաց Մ՝ արժանի եւ հաճոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ հաճեցան, փոխեալ ի միջոյ ամպարշտաց, գորոյ զպատճառսն յետոյ հատուցուք: Մաթուսաղայ կեցեալ ամս ՃԿԵ, ծնանի զՂամեք. եւ եկեաց ամս ՊԲ, մինչեւ Ո ամս Նոյի. եւ անդէն իսկ առ ջրհեղեղան վախճանեցաւ:

Ղամեք կեցեալ ամս ՃՁԸ, ծնաւ որդի եւ անուանեաց զանուն նորայ Նոյ: Եւ եկեաց ամս ՇԼԵ, մինչեւ ի ՇՂԵ ամս Նոյի. եւ մեռաւ չորիւք ամաւք յառաջ քան զՄաթուսաղայ հայր իւր:

Վասն Նոյի: Եւ ընդէ՞ր արդեւք զսա միայն որդւոյդ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այդոցն ամենեցուն պարգաբար ասաց՝ թէ ծնան. գորմէ ընդդէմ իմն մարգարեանայ հայրն: Սա, ասէ, հանգուցէ զմեզ ի գործոց եւ ի տրտմութենէ ձեռաց եւ /29b/ յերկրէ՝ զոր անէժ տէր Աստուած. որ եղէ ոչ հանգիստ, այդ ջնջումն՝ որ ինչ միանգամ ի վերայ երկրի: Ինձ թուի, հանգուցանելն՝ դադարեցուցանել. իսկ դադարեցուցանելն զամպարշտութիւնս եւ զչարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի: Քանզի գեղեցկաբար ասաց, թէ ի գործոց մերոց, որ է յանարեւնութեանց. եւ ի տրտմութենէ ձեռաց՝ որովք կատարեմք զպղծութիւնս: Բայց այդարեւ հանգչին ըստ

այսմ մարզարեւութեան ոչ ամենեքեան, այդ կատարեալքն յառաքինութեան ոգիք յորժամ չարիք՝ իբրեւ հեղեղաւ ջնջեալք մաքրին, իբր առ Նոյի մոլեալքն ի չարիս: Իսկ որդւոյդ անուամբ՝ մեծարեաց զնա Գիր, իբրեւ զյայտնի եւ զնշանաւոր, եւ զարժանի ժառանգ հայրենականացն ժառանգութեան:

Անդրեասի: Նոյ եղեալ ամաց հինգ հարելր՝ ծնաւ երիս որդիս՝ զՍէմ, զՔամ, եւ զՅափեթ. եւ յետ հարելր ամի ծննդեանն Սեմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեցհարերորդի կենացն Նոյի, եւ կալաւ զերկիր ամ մի: Եւ առնին յԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն ազգք տասն, ամք ՍԽԲ:

Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս ՅԾ, մինչեւ Ձ ամն Եբերայ: Եւ այս են ծնունդք Սեմայ: Սէմ էր ամաց ՃԲ, ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամին յետ ջրհեղեղին. եւ եկեաց ամս Շ, մինչեւ ի Ճ եւ ի Ա ամն Փաղոկայ:

Արփաքսադ եղեալ ամաց ՃԼԷ՝ ծնանի զԿայինան. եւ եկեաց Կայինան ամս ՅԼ, մինչեւ Սաղայ: Սաղայ եղեալ ամաց ՃԼ, ծնաւ զԵբեր. եւ եկեաց ամս ՆԶ, մինչեւ յելթներորդ ամն Սերուքայ:

Եբեր եղեալ ամաց ՃԼԴ, ծնաւ զՓաղեգ. եւ եկեաց առ նովաւ ամս ՆԼԳ, մինչեւ ԼԸ ամն Նաքովրայ: Առ սովաւ ասի լինել բաժանումն լեզուացն, վասն զի եւ Փաղեգ ըստ եբրայեցոց բարբառոյն՝ բաժանումն կոչի: Եւ առնին ի ջրհեղեղէն մինչեւ զՓաղեգ ազգք հինգ, ամք ՇԻԵ: Եւ յԱդամայ՝ ազգք հնգետասան, ամք ՍԶԿԷ:

/30a/ Բաժինք երկրի յերից որդւոցն Նոյի, յետ ջրհեղեղին, Սեմայ, Քամայ, եւ Յափեթի, եւ բաժինք ազգաց նոցա: Եւ առնին սահմանք նոցա, Սեմայ անդրանկանն Նոյի՝ ի Պարսից եւ ի Բակտրիոնէ մինչեւ ի Հնդիկս. եւ ձգին մինչեւ յՌինիկորոն: Եւ Քամայ երկրորդի որդւոյն՝ յՌինիկորուրայ մինչեւ ի Գաղիքովն, կողմն հարաւոյ: Եւ Յափեթի՝ երրորդի որդւոյն՝ ի Մարաց մինչեւ ի Գաղիքովն, կողմն հիւսիսային: Եւ է Յափեթի՝ զետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս եւ ընդ Բաբելոնովն: Եւ Սեմայ՝ զետն Արածանի: Եւ Քամայ՝ զետն Գեհովն, որ կոչի Նիդոս: Եւ որ իսառնակեցան լեզունք յետ ջրհեղեղին՝ եին եւթանասուն եւ երկու: Եւ որ զաշտարակն շինեին՝ այն ազգք եւ նոր լեզուաւքն ընդ ամենայն երկիր սփռեցան: Եւ Նեբրովդ սկայ՝ որդի Քուշայ եթիովպացի՝ որսայր նոցա երէ առ ի կերակուր բաւականի:

2

Որդիք Յափեթի, երրորդի որդւոյն Նոյի, Գոմեր. եւ ի նմանէ Գամիրք: Մագովդ՝ եւ ի նմանէ Կեղտք եւ Գաղատացիք. եւ Մաղայ՝ եւ ի նմանէ Մարք: Յաւան՝ եւ ի նմանէ Յոյնք եւ Հեղդէնք. Թոբել՝ եւ ի նմանէ Թետաղք. Մոսոք՝ եւ ի նմանէ եւ զուրիկացիք. Թիրաս՝ եւ ի նմանէ Թրակացիք: Քիտիւմ՝ եւ ի նմանէ Մակեդովնացիք: Եւ որդիք Թիրասայ՝ Ասքանաս, եւ ի նմանէ Սարմատք. Եւրիփայթ՝ եւ ի նմանէ Մաւրումատք. եւ Թորգոմ՝ եւ ի նմանէ Հայք: Եւ որդիք Յաւանայ՝ Եղիսա. եւ ի նմանէ Սիկեղացիք եւ Աթենացիք: Թարշիշ՝ եւ ի նմանէ Վիրք եւ Տիրենացիք. Կիտիս՝ ուստի Հոռոմք, եւ Ղատէնացիք, եւ Ռոդացիք: Ընդ ամենայն ազգք Հնգետասան:

Եւ ի սոցանէ ելին մեկնեցան կողմք հեթանոսաց, որ են /30b/ Կիւպրացիք՝ ի Կիտիացոց, որդիք Յափեթի: Բայց դարձեալ գտանեմք եւյայնոցիկ՝ որ են ի կողմանս

հիւսիսոյ, որ ազգակից են Կիտիացոցն: Եւ ազգքն որ են ի Հեղաս աշխարհի՝
յայնցանէ են, որք յետոյն փոխեցան անոր, որպէս Սաւտացիքն, որ բնակեցան յԱթէնս
քաղաքի պատուականացն Յունաց, եւ Թիբեացիք: Սիդովնացիք ելին եւ
պանդիստեցան, որ են ի Կադէմայ որդւոյ Ագէնովրայ. եւ Կարքեղովնացիք, որ են եկք ի
Տիրոսէ. եւ եթէ այդք եւս իցեն, որ սոյնպէս յետոյ փոխեցան. եւ Եղադաս: Բայց
ուսանիմք զճշմարտութիւն սոցայ յարինաց եւ ի մարգարեից: Արդ՝ ելին, ի Յափեթէ, ի
խառնակել լեզուացն, ազգք հնգետասան. եւ ունին ազգքս այսոքիկ, որ ելին ի Յափեթէ,
ի Մարաց մինչեւ ի Սպերիոն, որ ձգին մինչեւ յՈվկիանոս. եւ հային ընդ հիւսիսի:

Մարք, Աղուանք, Լփինք, Աղանք, Ամագոնք, Ճիդրք, Մասքուրք, Հայք, Վիրք,
Եգերացիք, Խաղտիք, Գամիրք, Պափղագոնացիք, Մարիանդէնացիք, Բիբարէնացիք,
Քաղիւկացիք, Մոսիւնիկացիք, Կողքացիք, Մեղանք, Ղենացիք, Մարմատք,
Սարմատք, Մեովտացիք, Սկիւթացիք, Տարացիք, Թրակացիք, Բաստառնացիք,
Իդիւրիկացիք, Մակեդովնացիք, Յոյնք, Ղիբացիք, Իստրացիք, Հոնք, Դանացիք,
Յապիւգացիք, Կադաբրացիք, Ովնիկացիք, Ղատենացիք, որ են Հոռոմք, Տիրենացիք,
Գաղիանոսք, Կեղտք, Ղիզիստիանոսք, Կեղտիբերք, Գաղիացիք, Ակիւտանացիք,
Իդիւրիանոսք, Բաստանք, Կիրտանացիք, Ղիւսիտանացիք, Վակիացիք, Կիւնացիք,
Բրիտանիկեցիք, որ ի կղզիսն բնակեալ են:

/31a/ Եւ այս ազգք են՝ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն: Իբերացիք, Ղատինացիք՝ որով
Հոռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք: Եւ են սահմանք սոցա ի Մարաց
ընդ կողմն հիւսիսոյ մինչեւ ի Գաղիրովն: Եւ ձգին ի Պաւտամիդով գետոյ մինչեւ ի
Մատուսիա, որ է Իդիովն: Եւ այս են ազգք եւ երկիրք սոցա:

Ատրպատական, Աղուանք, Ամագոնիա, Հայք Մեծք եւ Փոքունք, Կապադոկիա,
Պափղագոնիա, Գաղատիա, Կողքիս, Հնդիկք, Բոսպորիա, Մեովտիս, Դեռիս,
Մարմատիս, Տարիսիս, Մարմատտէս, Սկիւթիա, Թրակէ, Մակեդովնիա,
Դաղմատիա, Մովդիս, Թեսաղիս, Ղոկրիս, Բեովտիա, Ետողիա, Ատտիկէ, Աքայիա,
Պեղենիս, որ կոչի Պողէպոնէսիոս, Ակաթնէա, Հեպիրոտիս, Իդիւրիս, Ղիքիսիտիս,
Ադրիակէ, յորմէ ծովն Անդրիական. Գաղիա, Ղիսիտանիա, Իտաղիա, Թուսկենէ,
Մասաղիա, Կեղտիս, Գաղիա, Սպանոգաղիա, Իբերիա, Սպանիա Մեծ: Աստ սպառին
սահմանքն Յաբեթի՝ մինչեւ ի կղզիսն Բրիտանիկեցւոց. եւ հային ամենեքին ընդ
հիւսիսի: Եւ այս են կղզիք սոցա: Սիկեղիա, Բրէտանիա, Կիբիւս, Ռոդոս, Քիոս,
Ղեսբոս, Կիթերա, Չակիւնթոս, Կեփաղենիա, Իթակէ, Կորկիրիա, եւ Կիւղադէս, եւ
մասն մի յԱսիա՝ որ անուանեալ կոչի Յովանիա. եւ գետն Դկղաթ մեկնէ ի մէջ Մարաց
եւ Բաբիլոնի: Այս են սահմանք Յափեթի:

/31b/ Որդիք Քամայ՝ Քուշ. եւ ի նմանէ Եթիովպացիք. // Մեստրայիմ՝ եւ ի նմանէ
Եգիպտացիք: Փաղ եւ ի նմանէ Տրոգղացիք ծակամուտք, Քանան. եւ ի նմանէ
Ափրիկացիք եւ Փիւնիկեցիք:

Որդիք Քուշայ՝ Սաբա, եւ Ելիդաթ եւ Սաբեկաթա, եւ Հոեգամայ, եւ Սաբաթայ: Եւ
որդիք Հոեգամայ՝ Սաբայ եւ Յուդադան: Եւ Քուշ ծնան զՆեբրովթ: Եւ եգիպտացիք՝
հանդերձ Մեստրայիմաւ հարբն իւրեանց, առնին ուր, քանզի ասէ, թէ Մեստրայիմ
ծնաւ զՂուդիիմ, եւ ի նմանէ ծնան Ղիւգացիք. եւ զՆիզիիմ. եւ ի նմանէ Պամփիւղացիք.
եւ զՂաբաիմ. եւ ի նմանէ Ղիւբիացիք. եւ զՆեփթաղիմ, եւ զՊատրոսոնիմ. եւ ի նմանէ

Կրետացիք. եւ զՔեաղոնիիմ՝ եւ ի նմանէ Ղիւկեացիք, յորմէ ելին Փղշտացիք եւ զԲանաթփթորիիմ. եւ ի նմանէ Դակեացիք, յորոց ելին Փիղիստիմացիք:

Ամենայն ազգք Քանանացւոց՝ հանդերձ Քանանաւ հարբն իւրեանց՝ երկոտասան. քանզի ասէ, թէ Քանան ծնաւ զՍիդովն զանդրանիկ իւր. եւ ի նմանէ Սիդովնացիք. եւ զՔետացիս. եւ զՅեբուսացիս. եւ զԱմովրիացիս. եւ զԳերգեսացիս. եւ զԽեւացիս. եւ զԱրուակացիս. եւ ի նոցանէ Տրիպոդիտք. եւ զԱսենացիս. եւ զԱրադիովն. ի նմանէ Արադացիք. եւ զԾամրիմ. ի նմանէ Որթոսեցիք. եւ զԱմաթի. եւ ի նմանէ Ամաթուսեցիք. ընդ ամենայն ազգք երեսուն եւ երկու. եւ է բնակութիւն նոցա յԵփիսկորուրայ մինչեւ ի Գադիրովն, որ է ընդ հարաւակողմն:

Եւ այս ազգք են՝ որ ծնանին ի նոցանէ:

/32a/ Եթիովպացիք, Տրոզացիք ծակամուտք, Առեացիք, Սարակինոսք, Իսաբինացիք, ձկներք շեղենացիք, Եգիպտացիք, Փիւնիկացիք, Ղիւբեացիք, Մարմարիդացիք, Կարացիք, Փիւղիտացիք, Միւսացիք, Մոսոնիկեցիք, Փռիւզացիք, Միքոնացիք, Բիւթինացիք արեւմտականք, Նոմոդացիք, Ղիւկիացիք, Մարիանդենացիք, Պամփիւղացիք, Մեսիւզացիք, Պիսիդացիք, Աւգադիացիք, Կիդիկեցիք, Մաւրիսացիք:

Եւ այս ազգք են որ ծնան ի նոցանէ:

Կրետացիք, Մագարացիք, Նամադացիք, Մակրոնացիք Նամասոնացիք. սոքա ունին յԵգիպտոսէ մինչեւ ցՈվկիանոս:

Եւ այս են կղզիք նոցա:

Եպիւկինիա, Իդակորսուդա, Ղիւպադուսա, Գաւդոս, Մեդիտէ, Կերկիւնիա, Մէնիգա, Սարդոնիէ, Գադատէ, Գորսիւնա, Կրետէ, Գաւրոս, Ղեզէ, Թերա, Կարէայթոս, Աստիպադէա, Քիոս, Ղեսքոս, Տէնէդոս, Իսքրոս, Իյարսոս, Սամոս, Կովաս, Կնիդոս, Նիսիւրոս եւ Կիւպրոս մեծ կղզի:

Եւ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն՝ են այսոքիկ:

Փիւնիկեցիք, Եգիպտացիք, Պամփիւղացիք, Փռիւզացիք. եւ են սահմանք Քամայ յԵփիսկորուրայ, որ մեկնէ զԱսորիս եւ զԵթովպիէ. եւ ձգին մինչեւ ի Գադրիրովն:

Եւ այս են անուանք աշխարհաց նոցա:

Եգիպտոս, Եթիովպէ, որ հայի ընդ շնորհիւս. եւ միւ[ս] եւս Եթիովպէ՝ յորմէ Քուշացւոց գետն ելանէ. Եւրիւթրա՝ /32b/ որ է Կարմիր ծով, որ հայի ընդ արեւելս. Թերայիս Ղիւբիէ, որ ձգի մինչեւ ի Կորկիւրենէս. Մամարէս. Սինրտիս, յորում բնակեալ են ազգք քսան Ամովնացւոց. Մակասք. Տաւտամեացիք. Լիւբէ՝ որ ձգի ի Ղիւպիայ մինչեւ ի փոքր Սիւրտէոս. Նումիդիա. Մեսուրիս. Մաւրիտանիա, որ ձգի մինչեւ յարձանսն շերակղեայ, որ կայ դէմ յանդիման Գադրիրովնի. եւ որ առ ծովեզերք գաւառսն ունի, որ են ի հիւսիսոյ՝ զԿիդիկիա, զՊամփիւղիա, զՊիսիդիա, զՄիւսիա, զՂիզոնդնիա, զՓռիւզիա, զԿամագիա, զՂիւկիա, զԿարիա, զՂիդիա, զմիւս եւս զՄիւսիա, զՏցովադա, զՈվդիդա, զԲիթինիա, զառաջին Փռիւզիա:

Ունի եւ կղզիս զՍարդովինիա, զԿրէտէ, զԿիւպրոս. եւ զգետն Գեհովն, որ անուանեալ կոչի Նիդոս, որ մեկնէ ի մէջ Քամայ եւ Յաբէթի. սկիզբն Երկորեայց ծովուն, այսինքն է ծով Արեւմտից կոչեցեալ: Այս են ազգք Քամայ:

Երեց որդին Նոյի՝ Սէմ. եւ ի Սէմայ են ազգք քսանեւհինգ, որ բնակեցան յարեւելս. որդիք Սէմայ՝ Եղամ. եւ ի նմանէ Եղամացիք, Խուժիկք, Ասուր. եւ ի նմանէ Ասորեստանեայք. Արփաքսադ. եւ ի նմանէ Քաղդէացիք. Ղուդ՝ եւ ի նմանէ Ղազովնացիք. Արամ՝ եւ ի նմանէ Ետացիք առաջինք: Զսոսա կոտորեաց Աբրահամ: Եւ որդիք Արամայ՝ Ովս եւ Ուդ. եւ ի նմանէ Ղիդացիք եւ Գաթեր. ի նմանէ Գասփենացիք. եւ Մոսք՝ եւ ի նմանէ Մասենացիք:

Եւ Արփաքսադ ծնաւ զՍաղա. Սաղա ծնաւ զԵբեր. ի /33a/ նմանէ Եբրայեցիք. եւ Եբերեայ եղեն երկու որդիք. Փաղէդ՝ եւ ի նմանէ կարգի ազգն Աբրահամու: Եւ Յեկտան ծնաւ զԵղմովադադ, ի նմանէ Հնդիկք: Սաղեփ. ի նմանէ Բակտրիանոսք. եւ զԱսրամովթ. ի նմանէ Արաբացիք. եւ զԵղովրամ, ի նմանէ Կամեղացիք. եւ զԱդովրա, ի նմանէ Արադացիք. զԷզեդ, ի նմանէ Արիանացիք. եւ զԴէկղամ, ի նմանէ Կէդրուսացիք. եւ զԳէբադ, ի նմանէ Սկիւթացիք. եւ զԱբիմիեդ, ի նմանէ Վրկանիկք. եւ զՍաբաթ, ի նմանէ Արաբացիք առաջինք. եւ զՈվփիր, ի նմանէ Արամացիք. եւ զԵւիդաթ, ի նմանէ Գիմնոս Սոփիստեայք, որ կոչին մերկիմաստակք: Ամենքեան սոքա յերից որդուցն Նոյի ազգք եւթանասուն եւ երկու:

Եւ է բնակութիւն որդուցն Սէմայ ի Բակտրոնէ մինչեւ յՌիսկորուրոյն, որ մեկնէ ընդ Ասորիս եւ ընդ Եգիպտոս եւ ընդ ծովն Կարմիր, ի բերանոյ ծովուն՝ որ է յանդիման Ասիներայ, այսինքն է Հնդկաց աշխարհին:

Եւ այս ազգք են, որ եղեն ի նոցանէ. Եբրայեցիք, որ են Հրեայք, Պարսք, Մարք, Պայկաստան, Արուայիկք, Ասորեստանեայք, Վրկանիկք, Հնդիկք, Տապրիկք, Պարթեւք, Գերմակացիք, Իդամացիք, Քուշանք, Արաբացիք առաջինք, Կէդարք, Սկիւթացիք, Արաբացիք, Գիմնոս Սոփիստայք, որ կոչին Մերկիմաստք: Եւ ձգին բնակութիւնք սոցա մինչեւ յՌիսկորուրոն եւ ի Կիդիկիս:

Եւ այս ազգք են ի սոցանէ, որ զիտեն դպրութիւն. Եբրայեցիք՝ որ են Հրեայք, Պարսք, Մարք, Քաղդէացիք, /33b/ Հնդիկք, Ասորեստանեայք: Եւ է երկայնութիւն բնակութեան որդուցն Սէմայ՝ ի Հնդկաց մինչեւ յՌիսկորուրոն. եւ լայնութիւն ի Պարսից եւ ի Բակտրոնէ մինչեւ ի Հնդիկս:

Եւ այս են անուանք աշխարհաց նոցա. Պարսք՝ հանդերձ ազգաւքն որ շուրջ զնոքաւք են, Տապրիկք, Վրկանիկք, Բաբիւղոն, Կորդուք, Ասորեստան, Միջագետք, Արաբիա առաջին, Եղամ, Հնդիկք, Արաբիա փառաւոր կողմն Ասորուց, Կոմագենէ. եւ Փիւնիկէ՝ որ է որդուցն Սէմայ: Եւ ընդ ամենայն ազգք երից որդուցն Նոյի եւթանասուն եւ երկու:

Եւ ազգք, որոց ընտրին միմեանց լեզուք, են այսոքիկ. Եբրայեցիք, Ասորեստանեայք, Քաղդէացիք, Պարսք, Մարք, Արաբացիք, Մադիանացիք, Ադիբենացիք, Տայիանոսք, Աղամոսանացիք, Տաճիկք, Մոդք, Կասքք, Աղուանք, Հնդիկք, Քուշանք՝ որ են Եթիոպացիք, Եգիպտացիք, Ղիւբեացիք, Քետացիք, Քանանացիք, Փերեզացիք, Խեւացիք, Ամովրիացիք, Գերգեսացիք, Յեբուսացիք, Եղովմայեցիք, Սամարացիք,

Փիւնիկեցիք, Ասորիք, Կիւղիկեցիք՝ որ են Տարասացիք, Գամիրք, Հայք, Եգերացիք, Վիրք, Սկիւթացիք, Կողքեցիք, Խաղտիք, Բոսպորացիք, Ասինացիք, Մաւրացիք, Ղիւկատվնացիք, Պիսիդացիք, Գաղատացիք, Պափղագովնացիք, Փոնիգացիք, Գուդացիք, Յոյնք՝ որ են Աքայեցիք, Թեսաղք, Մակեդովնացիք, Թրակացիք, Միսեցիք, Բեսիւացիք, Դարդանացիք, /?/ Մարմատացիք, Գերմանացիք, Պանոնացիք՝ որ են Պեովնացիք, Նովրիկեցիք, Դաղմատք, Հոռոմք՝ որ են Ղատինացիք, Ղիւզրացիք, Գաղիացիք՝ որ են Կեղտացիք, Ակիտանացիք, Բրիտանացիք, Սպանիացիք՝ որ են Տիրենացիք, Հոնք, Մաւրացիք, Բակուացիք, Դեղուտացիք, Սեղեւկացիք, Ափրիացիք, Մազիկացիք, Գարնմանք՝ որ են Բերեդացիք, որ երկայնեալ ձգին մինչեւ Եթիովպիէ:

Լաւ համարեցայ համառաւտիւ ցուցանել եւ վասն եկաց ազգաց՝ որ գնացին յիրաքանչիւր բնակութենէ, եւ չոգան բանակեցան յաւտար տեղիս ուրեք ուրեք:

Եւ արդ սկսանիմք յարեւելից, ի Պարսից եւ ի Մարաց չոգան բնակեցան ի Պարթեւս. եւ ազգքն, որ շուրջ զնոքաւք են՝ չոգան հասին մինչեւ ի կողմանս Ասորւոց: Եկք Արաբացւոց՝ Արաբացիք փառաւորք, քանզի այսպէս անուանեցաւ Արաբիա Փառաւոր: Եկք Քաղդեացւոցն՝ Միջագետեայք: Եկք Մադիանացւոց՝ Կինեդոկոդպիաք, Տրոգդացիք ձկնկերք: Եւ ազգս Յունաց, որ ունին անուանս հինգ՝ Յոնիդէս, Արկադէս, Բրիովտացիք, Եոդացիք, Ղակոնացիք: Եւ եկք սոցուն են այսոքիկ. Պոնտացիք, Բիթանացիք, Սպանիացիք, Տրովացիք, Ասիանացիք, Կարացիք, Ղիւկիացիք, Պամփիւղացիք, Կիւրենացիք, եւ կղզիք բազումք, որ ունին զՄիւրտովնական համատարածն:

Եւ ի սոցանէ կղզիք մետասան շուրջ զծովուն՝ որ կոչի Հետոմիրատոս: Եւ են այսոքիկ. Անդրոս, Տէնոս, Տեովն, Նաքսոս, /34b/ Կեովս, Կիրոսոս, Դեղոս, Սիւփնոս, Ռենէ, Կիւրնոս, Մարաթոն: Եւ այդ եւս կղզիք մեծամեծք երկոտասան, յորս եւ քաղաքք բազում բնակեալ են, որ անուանեալ կոչին Սպորագէս, այսինքն՝ ցանք եւ ցիրք, յորս պանդիստութեամբ բնակեցան Յոյնք:

Եւ են այսոքիկ. Եւբիա, Կրետէ, Սիկեղիա, Կիպրոս, Կովաս, Մամոս, Ռոդոս, Քիոս, Թասոս, Ղեմնոս, Ղեսքոս, Սամովթրակէ: Եւ են ի Բիոտացւոց՝ Եւբիա, որպէս ի Յունացն՝ յունական քաղաքք վեշտասան:

Եւ են այսոքիկ. Կղաղոմինէ, Միւտիւղինէ, Փովկէս, Պրիենէ, Երիւթրէ, Սամոս, Սմեոս, Կողոփոն, Քիոս, Եփեսոս, Սմիւռնա, Պերինթոս, Բիւզանտիս, Քաղկեդովն, Պոնտոս, եւ Ամիսոս, Եղեւթերա:

Հոռմայեցւոց եւ Կիտիացւոց ազգք եւ եկք են այսոքիկ. Թուսկք, Կիմեդէսացիք, Պիւկենացիք, Կամպանացիք, Ապուլէսացիք, Կաղաբերացիք, Ղուկանացիք:

Ազգք եւ եկք Ափրիկացւոց. Նեբդենացիք, Կինթացիք, Նումիդացիք, Նասամովնացիք: Եւ են կղզիք հինգ, յորս եւ քաղաքք Ե. Մարդոնիա, Կորսիկիա, Գիրբաէ եւ Բենիսիա, Կերկինա, Գաղատէ:

Ազգ եւ եկք Մաւրացւոց. Ղիւսինացիք, Մուսուղենացիք, Տինգիացիք, Կեսարանացիք:

Ազգք Սպանիացւոց՝ որ են. Տիրենացիք, Դետարակոնեացիք, Ղիւսիտանացիք, Բետիկացիք, Աւտրիգոնացիք, Բասկոնացիք, Կաղիւկեցիք՝ որ են Ասպորացիք:

Այս են ազգք եւ եկք Գաղիացւոց՝ որ կոչին Արբուսացիք /35a/ Ղ...ւտենացիք, Բաղինացիք, Սիկենացիք, Աւրինացիք:

Ազգք եւ եկք Գերմանացւոց են այսոքիկ. Մարկեմոնացիք, Բերդինեղացիք, Կիւդացիք, Բիւրենադացիք, Ամոգիւղացիք: Եւ ազգք եւ եկք Մարմատացւոց՝ Ամաքսիսբացիք, Գրեկացիք՝ որ կոչին Գրեկոսարմատք:

Եւ զայս եւս լաւ համարեցայ յայտ առնել քեզ զանգէտ կողմանս ամենայն ազգաց, եւ զլերին անուանիս եւ զգետս զերեւելիս. որպէս զի եւ յայսցանէ մի՛ ինչ անտեղեակ գտանիցիս:

Եւ արդ սկսանիմ ասել զազգացն, եւ առնեմ սկիզբն յարեւելից: Արուայստան եւ Տաճկաստան անդր քան զԱրաբացիս են: Տաճիկքն բուն անդր քան զՏաճկաստան է: Եւ Ադուանք անդր են քան զԴրունս Կասպից: Եւ Մեծն Մաղիա՝ ընդ որս մարտեան Մովսէս, է անդր քան զԿարմիր ծով. եւ Փոքր Մաղիամ մերձ առ նա՝ սահմանակիցք են Եգիպտոսի, ուր թագաւորեացն Ռագուէղ աներ Մովսէսի: Եւ անդր քան զԳամիրս. յաջմէ կողմանէ Հայք, Եգերացիք, Վիրք, Կողքեցիք, Սկիւթացիք, Բոսպորացիք, Խաղտիք, Նասացիք՝ որ կոչին Սանիտացիք, որ ձգին մինչեւ ի Պոնտոս, ուր էր բանակն Ափսարովսայ, եւ Մեքաստոպողիս, եւ նաւահանգիստն հիւսիսոյ եւ Փասիս գետ: Եւ հասանեն ազգք այսոքիկ ի Տրապեզունտ:

Այս են անուանք տասն եւ երկու լերանցն անուանեաց. Լիբանան, Կաւկաս, Տաւրոս, Ատղաս, Պառնասոս, Կիւթերոն, Եղիկոն, Պարթենիոս, Մասիք, Ղիւկաբանտոս, Պենիովս, Ողիմպոս:

/35b/ Գետք մեծամեծք եւ անուանիք են քառասուն. Հինդոս՝ որ է Փիսովն. Նիդոս՝ որ է Գիհովն, Դկղաթ, Եւփրատ՝ որ է Արածանի. Իովրդանան, Կէփ[իսոս], Տանայիս, Մէնոս, Եգիմանթոս, Հաղիս, Ասորպիս, Թերմոդոն, Երասիս, Կուր գետ, Բովրիսթենէս, Աղփիոս, Տաւրոս, Եւրոտոս, Մեանդրոս, Երմոս, Աքսիոս, Պիւրամոս, Բլոս, Եբրոն, Սանգարիս, Քեղոոս, Պտէնէոս, Եւէնոս, Եպարքիոս, Կահիւստոս, Սիմոիս, Սկամանդրոս, Ստիւմոն, Պարթենիոս, Իստրոս, Ռէնոս, Բետէս, Բոդանոս, Եւրիգանոս, Թիբրիս՝ որ այժմ անուանեալ կոչի Տիբերիոս. ընդ ամենայն քառասուն:

Արդ՝ վասն զի յայտ եղեւ վասն ազգացն՝ յերից որդւոցն Նոյի, որ ընդ ամենայն երկիր սփռեցան, թէ ո՛վ յումէ ծնաւ: Սէմ՝ անդրանիկ՝ կալաւ զկողմն արեւելից: Քամ զկողմն հարաւոյ. Յաբեթ զկողմանս արեւմտից եւ հիւսիսոյ:

Պարտ եւ պատշաճ է այսուհետեւ ընթանալ զհետ ամացն թուոց:

Փաղեգ եղեալ ամաց հարիւր եւ երեսուն՝ ծնաւ զՌագաւ:

Ռագաւ եղեալ ամաց հարեւր երեսուն եւ երկուց՝ ծնաւ զՍերուք:

Սերուք եղեալ ամաց հարեւր եւ երեսուն՝ ծնաւ զՆաքովր:

Նաքովր եղեալ ամաց հարեր եւ ինն՝ ծնաւ զԹարայ:

Թարայ եղեալ ամաց եւթանասնից՝ ծնաւ զԱբրահամ:

Աբրահամ էր ամաց եւթանասուն եւ հնգից, ի ժամանակի իբրեւ հրաման ետ Աստուած՝ ելանել նմա ի տանէ հարց իւրոց եւ գալ յերկիրն Քանանացոց: Արդ՝ առնին ի բաժնացն երկրի մինչեւ ի գալ /36a/ Աբրահամու յերկիրն Քանանացոց՝ ազգք հինգ, ամք ՌԺԶ. եւ յԱդամայ՝ ազգք քսան, ամք ՎՅԶԴ:

Բնակեաց Աբրահամ յերկիրն Քանանացոց ամս քսան եւ հինգ. եւ ապա ծնաւ զԻսահակ: Իսահակ եղեալ ամաց վաթսուն՝ ծնաւ զՅակոբ: Յակոբ եղեալ ամաց ութսուն եւ եւթանց՝ ծնաւ զՂեւի: Ղեւի եղեալ ամաց քառասուն եւ վեցից՝ ծնաւ զԿահաթ: Կահաթ եղեալ ամաց վաթսնից՝ ծնաւ զԱմրամ: Ամրամ եղեալ ամաց եւթանասուն՝ ծնաւ զԱհարովն. եւ յամին ութսներորդի երրորդի կենացն Ահարովնի ելին որդիքն Իսրայէլի յերկրէն Եգիպտացոց՝ ի ձեռն Սովսէսի առաջնորդին իւրեանց: Եւ առնին ամենայն ամք բնակութեան որդոցն Իսրայէլի յերկրին Եգիպտացոց՝ ամք չորեքհարեր. եւ յանապատին՝ ամս քառասուն:

Յետու որդի Նաւեայ իբրեւ անց ընդ Յորդանան գետ, եկաց երկրին Քանանացոց ամս քսան եւ եւթն. եւ ի պատերազմունսն՝ ամս վեց. յետ ժառանգեցուցանելոյ զերկիրն վիճակաւ՝ եկաց ամս քսան եւ մի: Արդ՝ առնին, յորմէ հետէ եկն Աբրահամ յերկիրն Քանանու, մինչեւ ի մեռանելն Յետուայ որդոյ Նաւեայ՝ ազգք եւթն, ամք ՇԱ. եւ յԱդամայ՝ ազգք քսան եւ եւթն, ամք ՎՊԶԴ:

Յետ մահուան Յետուայ մեղաւ ժողովուրդն, եւ մատնեցան Քուսանայ արքային Միջագետաց. եւ ծառայեցին նմա ամս ութ. եւ իբրեւ աղաղակեցին առ Աստուած, յարոյց նոցա իշխան զԳոթոնիէզ՝ զեղբայր Քաղեբայ զկրտսեր, որ էր ի ցեղէ Յուդայ: Սա մարտեաւ ընդ Քուսանայ եւ սպան գնաւ. եւ տիրեաց ժողովրդեանն ամս քառասուն: /36b/ Յաւուրս Սամեղարայ՝ Պոմիդեւս եւ Պիմիթեւ, Պիսոս, Ատղաս, Պանոպտեւ, Դեւկադիոն ճանաչին: Յետ վախճանելոյն Յետուայ կալան ծերքն Լ ամ:

Դարձեալ մեղուցեալ՝ մատնեցան Եգիպտաց արքայի Մովաբու եւ ծառայեցին նմա ամս ԺԸ. եւ իբրեւ դարձան առ Աստուած, յարոյց նոցա իշխան զԱւովդ՝ յազգէ Եփրեմի, որ սպան զԵգիպտ. եւ տիրեաց ժողովրդեան ամս ութսուն: Յետ մահուանն Աւովդայ մեղաւ ժողովուրդն. եւ մատնեցան Յաբիսայ արքայի Քանանացոց՝ ամս քսան ծառայեալ նմա: Ի սորա աւուրս մարգարեացաւ Դեբովրա կին Աղփիդովթայ՝ յազգէ Եփրեմի. եւ ի նորա ձեռն տիրեաց. զաւրու որդոցն Իսրայէլի Բարակ՝ որդի Աբենեմայ, ի ցեղէ Նեփթաղեմայ: Սա մարտեաւ ընդ Միսարայի սպարապետին Յաբինայ, եւ յաղթեաց նմա, եւ տիրեաց որդոցն Իսրայէլի. եւ դատեցաւ Դեբովրայ զժողովուրդն ամս քառասուն: Յաւուրս Դեբովրայ մարգարեուհոյ՝ որ ընդ Բարակայ, որք ի Դիոսէ վիպասանին, ուստի Պիպկոս անուանեալն Ջեւս, Կրոնայ ազգական, յարեւմուտս թագաւորեաց. որ ունէր դստերս Երովպեմինոս, Անտիոպէ, Աղկմենէ, Սեղդենէ, Դանաովէ, Պերսեւս, Եղեդա՝ կին Ջեւսայ: Ջեւս՝ կենդանութիւն կոչի, Եղեդա՝ աղ, վասն տուրեւառ շնչոց:

Յետ մահուանն Դեբովրայ մեղաւ ժողովուրդն եւ մատնեցան Մադիանացոց ամս եւթն: Ի սոցա վերայ չոգաւ Գեղեովն երեքհարեր արամբ, եւ սատակեաց կորոյս ի նոցանէ բերս երկոտասան: Սա տիրեաց ժողովրդեանն զամս քառասուն, որ էր յազգէ Մանասէի: Յաւուրս Գեղեովնի՝ Ջեթոս եւ Ամբիովն, որդիք Ջեւսայ, երեւեին: Եւ սորին որդի Արիմեղէք ամս երիս: /37a/ Յաւուրս Արիմեղէքայ՝ որք ըստ Գանեմիդեայն, եւ Պերսեայն, եւ որք ըստ Երակղեայն, եւ Արգոսին, եւ որք ըստ Ղիկուրգոսի արինադիր էին՝ ճանաչէին:

Յետ սորա տիրեաց Թովդա՝ որդի Փիղեայ Աքարեանց, որ էր ի ցեղէ Եփրեմի, եւ տիրեաց ամս քսան եւ երիս: Յետ սորա Յայիր Գաղաադացի՝ յազգէ Մանասէի. եւ տիրեաց ամս քսան եւ երկուս: Եւ յետ սորա մեղաւ ժողովուրդն. եւ մատնեցան Ամովնացոց ամս ԺԸ. եւ աղաղակեցին առ Աստուած. եւ յարոյց նոցա իշխան զՅեփթայէ Գաղայադացի յազգէ Մանասէի. եւ տիրեաց ամս վեց: Յետ սորա տիրեաց Եսեբովն՝ յազգէ Յուդայ ամս եւթն: Յետ սորա տիրեաց Ադդովն, յազգէ Ջաբուղովնի, ամս տասն: Յետ սորա տիրեաց Եբրովն, որդի Ադեղայ Ափրաթովնացի, յազգէ Եփրեմի՝ ամս ութ:

Յետ սորա մեղաւ ժողովուրդն, եւ մատնեաց այդազգեաց ամս քառասուն: Եւ իբրեւ դարձան՝ յարոյց նոցա իշխան զՍամփսովն որդի Մանուէի, յազգէ Դանայ, որ մարտեաւ ընդ այդազգիսն. եւ տիրեաց ամս քսան: Յաւուրս Սամփսովնի Դեղաղ՝ որ հիւսն Մաժան կոչի, եւ Երակղէ՝ որդի Ջեւսայ, ի յԱղկմենայ ծնեալ, եւ Երմես եռամեծ երեւեին:

Յետ սորա տիրեաց Սամեգար ամս երեսուն: Յետ այսորիկ անիշխանութիւնն կալաւ, որպէս Ափրիկանոսն պատմէ, ամս քառասուն: Յետ սորա Հեղի քահանայ դատեաց զժողովուրդն ամս քսան. եւ տապանակն Աստուծոյ եղեւ առ այդ ազգիսն ամիսս եւթն: Յաւուրս Հեղեայ քահանայի Իդիոն հրկէզ եղեւ եւ քաջքն ի մաւտ կային:

/37b/ Յետ սորա Սամուէղ մարգարէ, որ ամծ զՍաւուղ ի թագաւոր: Եւ յետ այսորիկ դարձոյց Սամուէղ զտապանակն յայդազգեացն. եւ եղ ի տան Ամինադաբայ. եւ եկաց անդ ամս քսան: Եւ դատեաց զԻսրաէլ ամս քսան եւ երկուս: Եւ թագաւորեաց Սաւուղ ամս քառասուն. եւ էր նորա սպարապետ Աբեններ՝ որդի Ներեայ:

Յետ այսորիկ իբրեւ թագաւորեաց Դաւիթ, եհան զտապանակ կտակարանացն ի տանէ Ամինադաբայ. եւ ի հանելն՝ թիրեաց զնա եզնն. իբրեւ մատեաւ ուղղել զնա Ոգա, հարաւ անդէն եւ մեռաւ: Իբրեւ ետես Դաւիթ՝ զահի հարաւ. եւ եկաց անդ ամիսս երիս: Այս Սամուէղ ամծ զԴաւիթ ի թագաւոր: Եւ առնին ի Յեսուայ որդւոյ Նաւեայ մինչեւ յառնուլն Դաւթի զթագաւորութիւնն, որ էր յազգէ Յուդայ, ազգք եւթն, ամք ՆՁԷ. եւ յԱդամայ ազգք երեսուն եւ չորս, ամք ՏՅԿԴ:

Յետ այսորիկ թագաւորեաց Դաւիթ ամս քառասուն եւ ամիսս վեց. ի Քեբրոն՝ ամս եւթն, ամիսս վեց. եւ յԵրուսաղէմ՝ ամս երեսուն եւ երիս: Ի սորա աւուրս էր քահանայապետ Աբիաթար՝ որդի Արիմեղէքայ: Եւ ի միւսմէ ցեղէն՝ Սադովկ: Եւ մարգարէանային յաւուրս Դաւթի՝ Գաղ, Նաթան, եւ Ասափ. եւ էր սպարապետ Դաւթի՝ Յովաբ որդի Սարուհեայ, քեռ Դաւթի: Սա թուեաց զցեղսն Իսրաէլի. եւ էր թիւն, զոր թուեաց Յովաբ որդի Սարուհեայ զորդոցն Իսրաէլի, անձինք իբրեւ հազարիցս, եւ

հարիւր հազար /38a/ եւ որդիքն Յուդայ՝ ՆՀՌ: Բայց Ղեւի եւ Բենիամին ոչ թուեցան. եւ վասն թուելոյն նորա զԻսրաէլ, անկան յԻսրաէլէ եւթանասուն հազար:

Յետ Դաւթի թագաւորեաց Սողոմոնն, որդի նորա, ամս քառասուն. եւ ի նորա աւուրս դարձեալ մարգարէանայր Նաթան եւ Աքիա Սեղովնացի. եւ քահանայապետ նորա էր Սաղովկ:

Յետ սորա թագաւորեաց Ռոբոլամ որդի իւր ամս եւթն եւ տասն. առ սովաւ բաժանեցաւ թագաւորութիւնն:

Եւ ի Սամարիա թագաւորեաց Յորոբոլամ ծառայ Սողոմոնի, յազգէ Եփրեմի՝ եւ մարգարէանայր առ Յորոբոլամաւ Աքիաս Սեղովնացի եւ Սամեա որդ ի Հեղումայ:

Յետ սորա թագաւորեաց Աքիա որդի իւր՝ ամս վեց: Յետ սորա թագաւորեաց Ասսա՝ որդի նորա, ամս քառասուն եւ մի: Սորա ի ծերութեան ցաւեցին ոտք իւր. եւ մարգարէանայր յաւուրս նորա Անանիա:

Յետ սորա թագաւորեաց Յովսափատ որդի իւր ամս քսան եւ հինգ: Ի սորա աւուրս մարգարէանայր Եղիաս, եւ Միքեէ՝ որդի Յեմբղեայ, եւ Աբդիու՝ որդի Անանիայ. եւ էր յաւուրս Միքէի մարգարէ մի սուտ՝ անուն Սեղեկիա, որդի Քանանու:

Յետ սորա թագաւորեաց Յովրամ որդի իւր՝ ամս քսան. ի սորա աւուրս մարգարէանային Եղիա եւ Եղիսէնու:

Յետ սորա թագաւորեաց Ոքոզիա որդի իւր՝ ամ մի: Ի սորա աւուրս կերաւ ժողովուրդն, ի Սամարիա, զորդիս իւրեանց եւ զաղբ աղանեաց, ի ժամանակին իբրեւ թագաւորեալ էր Յովրամ ի Սամարիա. եւ յաւուրս Ոքո/38b/զիայ մարգարէանայր Եղիսէնու եւ Աբադադովնէ:

Յետ սորա թագաւորեաց Գոթողիա, մայր Ոքոզիայ, ամս ութ: Սա կոտորեաց զթոռունս իւր, զի յազգէ էր Աքաաբու արքայի Իսրաէլի. բայց քոյրն Ոքոզիա եւ Յովսաբէ՝ կին Յովիդայեի քահանայապետի՝ գողացան զՅովաս որդի Ոքոզիայ. եւ ի նորա վերայ եղ Յովիդայէ զթագաւորութիւնն: Եւ մարգարէացաւ առ Գոթողիաւ՝ Եղիսէնու:

Առ Յովիդայէ քահանայապետի իմաստասէրք մին Սէնեփովն, եւ Պդատովն, եւ Սոփոկղէս, Երատղիտոս, եւ Հերոդոտոս, եւ Եւրիպիղէս ողբերգակ, եւ Սոկրատէս ճարտասան, եւ Փիղիաս հրաշագործ, եւ Թեեմտեոս ուսումնատուր, եւ Դիմոկրիտոս Աբդիրացի, եւ Եպոկրատէս բուժական, եւ Թուկիդիղէս ճարտասան տէս եւ Եմպեղոկղէս, եւ Գորգիա, Զէնոն, Սոկրատէս, Պարմենիղէս, Պերիկղէս, Պողիս, եւ Արիստոփանէս կատերագ երեւին:

Յետ սորա թագաւորեաց Յովաս որդի Ոքոզիայ՝ ամս Խ: Սա սպան զԶաքարիա որդի Յովիդայեի քահանայապետի:

Յետ սորա թագաւորեաց Ամասիա որդի իւր՝ ամս Ը:

Յետ սորա թագաւորեաց Ոգիաս որդի իւր՝ ամս ԾԲ: Սա բորոտեցաւ եւ մեռաւ. եւ դատէր յաւուրս նորա զժողովուրդն Յովաթամ որդի նորա, որ չէ եւս էր թագաւորեալ: Եւ մարգարեանային յաւուրս Ողիա՝ Ամովս եւ Եսայի որդի իւր, Ովսէէ՝ որդի Բէերայ, Յովնան որդի Ամաթեայ՝ ի Դովմերեայ:

Յետ սորա թագաւորեաց Յովաթամ որդի իւր, ամս վեշտասան. առ սովաւ մարգարեանային Եսայի եւ Ովսէէ, եւ Միքէ՝ /49a/ Մորստացի, եւ Յովեզ՝ որդի Բաթուելի:

Յետ սորա թագաւորեաց Աքաղ որդի իւր ամս հնգետասան: Ի սորա աւուրս մարգարեանային Եսայի եւ Ովսէէ. եւ պաշտէր զքահանայապետութիւնն Ուրիաս: Ի սորա աւուրս Սաղմանասար, արքայ Ասորեստանեաց, փոխեաց զբնակիչս Սամարեայ՝ ի Մարս եւ ի Բաբելոն:

Յետ սորա թագաւորեաց Եզեկիաս որդի իւր՝ ամս քսան եւ ինն. առ նովաւ մարգարեանային Եսայի, Ովսէէ, եւ Միքէէ:

Յետ սորա թագաւորեաց Մանասէ որդի իւր՝ ամս յիսուն եւ հինգ:

Յետ սորա թագաւորեաց Ամովն որդի իւր՝ ամս երկոտասան:

Յետ սորա թագաւորեաց Յովսիա որդի իւր՝ ամս երեսուն եւ մի: Սա եղ զխաղիսաղակոյտ ոսկերաց մարդկան՝ ի վերայ պատկերաց կռոցն, որպէս եւ գրեալ է: Ի սորա աւուրս եղեւ Չատիկն յամի ութուտասաներորդի թագաւորութեան իւրոյ: Քանզի յորմէ հետէ մեռաւ Յեսու որդի Նաւեայ, ոչ արար Չատիկ ժողովուրդն մինչեւ ցայնժամ. եւ Քեղկիա քահանայ՝ հայր Երեմիայի մարգարէի՝ եգիտ ի տաճարին զգիրս աւրինացն՝ յութուտասաներորդի ամին Յովսիայ արքայի: Ի սորա աւուրս մարգարեանային Ողղա՝ կին Սեղեմեայ հանդերձապետի՝ որդւոյ քահանայապետին. եւ Սոփովնիա, եւ Երեմիա: Եւ առ Երեմիայիւ էր մարգարէ մի սուտ, Անանիա անուն նորա:

Յետ սորա թագաւորեաց Աքաղ որդի իւր՝ ամս երիս: Չսա կապեաց Նեքաւով արքայ Եգիպտացոց, եւ իջոյց յԵգիպտոս. եւ անդ կացոյց զԵղիակիմ եղբայր նորա, որ եւ /49b/ Յովակիմ կոչեցաւ: Ի սորա աւուրս մարգարեանային Երեմիայ, եւ Բուդի, ու Ուրիա՝ որդի Սամեայ՝ ի Կարիաթարիմ գեղջէ: Եւ թագաւորեաց ամս մետասան: Չսա կապեաց Նաբուքոդոնոսոր պղնձի կապանաւք եւ տարաւ ի Բաբելոն:

Յետ սորա թագաւորեաց Յովակիմ ամս երիս. եւ զսա տարաւ առ իւր Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց, եւ զայդս ընդ նմա. եւ կացոյց փոխանակ նորա զՍեղակիա, որ կոչեցաւ Յեքովնիա: Սա էր եղբայր Յովակիմայ(յ) արքայի, որ թագաւորեաց ամս մետասան. եւ յերկոտասաներորդ ամին տարաւ նա Նաբուքոդոնոսոր ի Բաբելոն՝ աչաւք խաւարելովք: Ապա եւ զժողովուրդն փոխէր առ ինքն, բայց ի սակաւուցն, որ իջին յԵգիպտոս: Եւ մարգարեանային յաւուրս Սեղեկիայ՝ Երեմիայ եւ Ամբակում: Եւ յամի հինգերորդի թագաւորութեան նորա մարգարեացաւ Եզեկիէլ ի Բաբելոն. եւ յետ սորա մարգարեացաւ Նաւում՝ ի Բաբելոն, եւ Սաղաքիա, եւ Դանիէլ: Եւ տեսանէ զտեսիլ եւթներորդացն, յառաջին ամի

թագաւորութեանն Դարեհի՝ որդոյ Արշաւրայ, ի գաւակէ Մարաց, որ թագաւորեաց ի վերայ տերութեանն Քաղդեացոց:

Յետ սորա թագաւորեաց Կիրոս: Եւ յամի երկրորդի թագաւորութեան իւրոյ եհան զժողովուրդն՝ երթալ յԵրուսաղէմ: Եւ մինչ շինէր տաճարն՝ մարգարեանային ի միասին Անգեոս եւ Չաքարիաս. եւ յետ Անգեայ եւ Չաքարեայ(յ)՝ Նէեմի որդի Աքեղեայ, յազգէ Իսրաէլի, որ շինեաց զքաղաքն Երուսաղէմ. եւ էր տակառապետ Արտաշէսի արքայի Պարսից:

/50a/ Յետ սորա՝ Եսթերայ եւ Մուրդքէի պատմութիւնն կարգի: Եւ է Դաւթայ մինչեւ ի Սեղեկիա, եւ ի գերութիւնն Յեքովնիա(յ) ազգք հնգետասան, ամբ ՆՀԳ եւ ամիսք ինն:

Եւ յԱդամայ մինչեւ ի գերութիւնն Բաբելացոց՝ որ եղեւ յաւուրս Յեքոնիայ, ազգք յիսուն եւ մի, ամբ ՏՊԽԲ, ամիսք ինն: Եւ ի գերութենէն Բաբելացոց մինչեւ ի ծնունդն Քրիստոսի՝ ազգ չորեքտասան, ամբ ՈԿ. եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի չարչարանս նորին՝ ամբ ԼԲ: Եւ ի չարչարանացն Քրիստոսի մինչեւ յամն երկոտասաներորդ՝ քսաներորդ առաջնորդի թագաւորին Հռոմոց Աղեքսանդրի, առնին ամբ երկերիւր հինգ, եւ ամիսք վեց:

Եւ յԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ յԱրկադէս եւ յՈնորէս՝ որդիս Թէոդորոսի՝ ամբ հարեւր եւթանասուն եւթն, եւ ամիս մի. Յորեղեան ՂԺԲ:

3

Կիրոս թագաւորեաց ամս երեսուն: Կամբիսէս, ամս ութ: Մոզքն՝ ամիսս եւթն: Դարեհ վշտասպեան՝ ամս երեսուն եւ վեց: Առ Դարեհիւ Չորաբաբել Եբրայեցոց վերակացու եղեալ, հանդերձ Յետուալ քահանայապետիւ, եւ կատարեաց զշինած տաճարին. եւ մարգարեանային Անգեոս եւ Չաքարիաս: Քսերքսէս դարեհեան թագաւորեաց ամս քսան եւ մի: Արտաւան՝ ամս եւթն: Արտաշէս Երկայնաձեռն՝ ամս քառասուն: Առ նովալ ելեալ Եգրաս յԵրուսաղէմ, ուսուցանէր դաւրեհնս: Եւ ի քսաներորդի ամի նորին թագաւորութեան Նէեմի, տակառապետ թագաւորին, խնդրեալ ի նմանէ եւ հրաման առեալ՝ ել յԵրուսաղէմ, եւ շինեաց զպարիսպ քաղաքին, /50b/ եւ կազմեաց զհրապարական եւ զփողոցս նորա: Երկրորդ Քսերքսէս թագաւորեաց ամիսս երկուս: Մոզդիանոս՝ ամիսս եւթն: Դարեհ խորթ՝ ամս իննեւտասան: Արտաշէս Ուշիմ՝ թագաւորեաց ամս քառասուն: Արտաշէս՝ որ եւ Ովքոս՝ ամս վեց: Արմետքոս՝ ամս չորս: Դարեհ Արսամայ՝ թագաւորեաց ամս վեց. զնա սպանեալ Աղեքսանդրի՝ յեւթներորդ ամի թագաւորութեան իւրոյ, որ տեւեալն էր ամս երկերիւր երեսուն եւ թագաւորեաց ընդ նորա այդ եւս հինգ ամ, եւ ամիսս եւթն, յետ ունելոյն զԲաբելոնովն: Եւ ընդ ամենայն եղեն աւուրք թագաւորութեան նորա ամբ երկոտասան, եւ ամիսք եւթն:

Յետ Աղեքսանդրի թագաւորեաց յԵգիպտոս, յԱղեքսանդր քաղաքի, Պտղոմէոս Ղազոս ամս քառասուն:

Պտղոմէոս Եղբայրասէր՝ թագաւորեաց ամս երեսուն եւ եւթն. առ սովալ Եբրայեցոց իմաստունքն զաւրեհնսն թարգմանեցին:

Պտղոմեոս Բարերար՝ թագաւորեաց ամս քսան եւ վեց. առ սովաւ էր Յեսու Սիրաքայ որ զամենայն արուեստ իմաստութիւնն կարգեաց:

Պտղոմեոս Մայրասէր՝ թագաւորեաց ամս քսան եւ չորս. առ սովաւ Մակաբայեցոցն իրք կատարէին:

Պտղոմեոս Բարերար՝ թագաւորեաց ամս քսան եւ ինն:

Պտղոմեոս Փրկիչ՝ թագաւորեաց ամս հնգետասան:

Պտղոմեոս՝ որ եւ Աղեքսանդրոս՝ ամս երկոտասան:

Պտղոմեոս եղբայր Աղեքսանդրի՝ ամս ութ:

Պտղոմեոս, որ եւ Դիոնիսիոս՝ ամս ութ:

Պտղոմեոս՝ դուստր Կղեովպատրայ, ամս քսան եւ երկու: /51a/ Ձնա սպանեալ Աւգոստի կայսեր, ի չորեքտասաներորդի ամի թագաւորութեանն իւրոյ, կալաւ զԵգիպտոս, բարձեալ զթագաւորութիւն Պտղոմեայցն, որ տեւեաց ամս ՄՂԴ:

Իշխանք Եբրայեցոց՝ որք ի քահանայից անտի՝ առաջնորդեցին ժողովրդեան որդւոցն Իսրաէլի յետ դարձին ի Բաբելոնէ:

Յեսու որդի Յովսեփեկեայ՝ հանդերձ Չորոբաբելի՝ առ Կիւրոսի թագաւորաւ:

Յակիմոս որդի Յեսուայ: Եղիասիբոս որդի Յակիմայ: Յովգայէ՝ որդի Ասիբայ: Յովաննէս որդի Յովդայեայ: Յուդաս որդի Յովաննու, առ որով Աղեքսանդրոս զԱղեքսանդր շինեաց. եւ եկեալ յԵրուսաղէմ Աստուծոյ երկիր եպագ: Ովնիաս որդի Ադդայ: Եղեագարոս, առ որով եւթանասունքն զաստուածեղէն գիրս թարգմանեցին: Ովնիաս որդի Սիմովնի, եղբայր Եղեագարու: Սիմովն, առ որով Յեսու Սիրաքայ ճանաչէր: Ովնիաս, առ որով Անտիոքոս զՀրեայս պաշարէր եւ ի հեթանոսութիւն դառնալ բռնադատէր. յետ որոյ եւ Յուդաս՝ որ կոչէն Մակաբէոս. սա սրբեաց զաշխարհն յամպարշտաց անտի:

Յետ որոյ քահանայապետ եղեւ Յովնաթան եղբայր Յուդայի: Սիմովն՝ եղբայր Յովնաթանու: Յովաննէս՝ որդի Սիմովնի, որ է Հիւրկանոս: Արիստոբուղոս, որ նախ թագ եղ թագաւորական՝ առ քահանայապատութեամբն զոր ունէր. եւ Յաննէոս՝ որ կոչէր Աղեքսանդրոս, թագաւոր միանգամայն եւ քահանայապետ:

Արդ, մինչեւ ի նա աւժեալքն, որ եղէն իշխանք, ի Կիւ/51b/րոսէ տեւեալ ամս չորեքհարեր ութսուն եւ երեք, որք լինին եւթներորդք ամաց՝ վաթսուն եւ ինն, որք եւ առ Դանիէլի ասացան զայս արիւնակ, թէ գիտացես եւ իմացիս յելից բանին տալ պատասխանի, եւ ի շինածոյն Երուսաղէմի մինչեւ ցաւժեալն առաջնորդ՝ եւթներորդք վաթսուն եւ երկու: Առաջին եւթներորդքն թուին ի Կիւրոսէ ի Դարեհ, առ որով շինած տաճարին կատարեցաւ. իսկ այդ եւս վաթսուն եւ երկու եւթներորդքն ձգին ի Դարեհէ ի յառաջիկայս:

Յաննէոս, որ եւ Աղեքսանդրոս՝ ւաժեալ եւ առաջնորդ, իբրեւ թէ ասէր զինքն թագաւոր եւ քահանայապետ. առ որով սպառեցան որք ըստ յաջորդութեանն ի քահանայիցն առաջնորդք եւ ւաժեալք ի մարգարէութենէն անուանեցան:

Յետ որոյ թագաւորէ Սաղինա, որ էր կին Աղեքսանդրի, վասն որոյ հակառակութիւն եղեալ ընդ միմեանս որդւոցն նորա:

Պոմպէոս զաւրավար Հռովմայեցոց պաշարեալ զքաղաքն Երուսաղէմ՝ ունի, եւ մտանէ ի տաճարն: Յայնժամ ամենայն ազգն Հրէից ընդ հարկաւք եղեն Հռովմայեցոց: Եւ տայ Պոմպէոս զքահանայապետութիւնն Հիրկանեայ, եւ զԱնտիպատրոս ոմն զԱսկաղովնացի՝ ի Պաղեստինի վերայ կացուցանէ. առ որով նախ Հռովմայեցոց միահեծան՝ Գայիոս Յուդիոս կայսր թագաւորեաց ամս չորք, եւ ամիսս եւթն:

Աւգոստոս թագաւորեաց ամս յիսուն եւ վեց, եւ ամիսս վեց:

Սա /52b/ զԵբրայեցոց թագաւորութիւնն ի մետասաներորդ ամի թագաւորութեանն իւրոյ տայ հեթանոսաց, Հերովդի ումեմն՝ որդւոյ Անտիպատրոսի Ասկաղովնացոյ, որոյ զՀիրկանոսն սպանեալ էր. ոչ եւս որոց ըստ յաջորդութիւնն էր, այդ եւ գձուձ ոմանց զքահանայապետութիւնն բաժանէր: Առ որով ծնեալ Տեառնն եւ փրկչին մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի, լնու եւ մարգարէութիւն Մովսէսի եւ Յակոբու, որ ասէն թէ մի պակասիցէ իշխան ի Յուդայ, եւ մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ որոյ էն, եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց:

Ծնանի փրկչն մեր եւ Տէր ի քառասներորդ երկրորդ ամի Աւգոստեայ. եւ թագաւորէ Հրէից Հերովդէս ամս երեսուն եւ եւթն. յորոյ յերեսուն եւ երկրորդ ամի թագաւորութեանն ծնանի ի Բերթղէմ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Յետ Հերովդի՝ թագաւորէ Հրէից Արքեղաւոս որդի նորա ամս ինն: Յետ որոյ Հերովդէս՝ եղբայր Արքեղաւոսի՝ թագաւորեաց ամս քսան եւ ութ. առ որով չարչարեցան Քրիստոս: Ի սորա աւուրս Յովաննէս՝ որդի Չաքարիայի՝ քարոզէ յանապատին Յորդանան գետոյ. եւ տայ աւետիս ամենեցուն, թէ ի միջի նոցա է ւաժեալն Աստուծոյ: Նաեւ ինքն իսկ Յիսուս ւաժեալն Աստուծոյ՝ անտի առնէ սկիզբն կենարար եւ աւետաբեր վարդապետութեանն, արդեամբք եւ բանիւք զաստուածեղէն զաւրութեանն զառաքինութիւն տեսաւդացն ցուցանէր. սկսեալ զքարոզելն, ի հնգետասան ամի Տիբերի կայսեր, Յիսուս ւաժեալն Աստուծոյ Տէր մեր ըստ մարգարէական խոստմանցն, /53a/ որ զնմանէ էին, զայ ի չարչարանսն յինն եւ տասաներորդ ամի թագաւորութեանն Տիբերի. ըստ որում ժամանակի եւ այդ ի յունական յիշատակս գտաք՝ որ ըստ նմին արինակի պատմեալ, թէ արեգակն նուաղեաց, Բիւթինիա շարժեցաւ, Նիկիա մեծ մասն կործանեցաւ. որ եւ միաբան իսկ պատմեն վասն իրացն, որ ի չարչարանս կենարարին մերոյ գործեցան:

Գրէ եւ Փղեգմովն՝ որ զՈղիմպիադացն անդստին ի նոցանէ յերեքտասաներորդում պատմութեան ճառին ասէ զնոյն ձեւ արինակ բանից՝ թէ ի չորրորդում ամի երկերիւրերորդի երկրորդի Ոլիմպիադին՝ մեծ նուագութիւն եղեւ արեգական, քան զոր յառաջագոյն ոք գիտէր. եւ զիշեր եղեւ ի վեցերորդ ժամուէ տուրնջեանն, մինչեւ աստեղաց յերկինս երեւել. եւ շարժումն մեց ի Բիւթանիայ. եւ մեծ մասն Նիկիա

կործանեցաւ: Չայս՝ այժմու յիշատակեալ այրս, եւ այսիսկ մեծ նշանակ է յամին՝ յորում կենարարն չարչարեցաւ, ըստ վկայութեանն Յովաննու աւետարանչի, որ յետ հնգետասաներորդ ամին Տիրերի կայսեր, երեքամեայ ժամանակս վարդապետութեան նորա լիալ վկայէ:

Ըստ նոցին ժամանակաց եւ Յովսէպոս պատմէ թէ Յաւուրն Պենտակոստեից եղև դորդին եւ սաւսափին: Նախ զքահանայապետիքն պատեր, եւ ապա յանկարծակի բարբառ ի տաճարին՝ ի ներքուստ ի քաւարանէ անտի, որպէս ձեւ բանի ասելով. Գնամք աստի, /53b/ գնամք. եւ այդս սոյնպիսիս Յովսէպոս գրէ, որ եհաս ազգին Հրէից՝ վասն չարչարանացն Տեառն մերոյ, որ եղև յիննուտասաներորդ ամի Տիրերի կայսեր:

Յետ Արքեղայոսի թագաւորէ Ադրիպպաս աւագ՝ ամս վեց: Յետ սորա Ադրիպպաս մանուկ՝ ամս քսան եւ հինգ. առ որով Երուսաղէմի վերջին աւերածն եղև ի Վեսպիանոսէ եւ ի Տիտոսէ:

Ժողովին ամենայն ժամանակն ի հնգետասաներորդէ ամեայ Տիրերեայ կայսեր ի յիսկզբան քարոզութեան Փրկչին մերոյ, եւ յԱղեքսանորէ Մակեդոնացոյ ամք երեքհարեր յիսունեւութ: Եւ Կիրոսէ Պարսից թագաւորէն մինչ ցԱղեքսանորոս: Եւ ի Սողովմոնէ եւ ի տաճարին շինածոյ՝ մինչեւ ցԿիրոս՝ ամք չորեքհարեր իննսուն եւ հինգ: Եւ յելիցն յԵգիպտոսէ որ ի ձեռն Սովսիսի մինչեւ ի շինուած տաճարին ամք Ն , եւ ի ջրհեղեղէն մինչեւ ցելսն Իսրաէլի՝ ամք ՌՆԽԵ: Եւ յԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ: Միանգամայն յԱդամայ մինչեւ ի չարչարանսն Քրիստոսի՝ ամք ՏՇԼԴ. եւ ի հնգետասաներորդ ամէն Տիրերի կայսեր՝ մինչեւ ի հալածումն եկեղեցեաց, որ եղև յիննուտասաներորդ ամի Դիոկղետիանոսի, ամք ՄՀԶ: Ժողովին ամենայն աւուրքն եւ լինին ամք ԲՊԺ:

Առաջին մենիշխանութեանն Հռովմայեցոց՝ Գայիոս Յուդիոս Կեսար, որ զբեսեքտոնն եւ զլուսնի ընթացս նոցա հանձարեաց, ուստի եւ կայսերք անուանեցան, ամս չորս եւ ամիսս եւթն:

Ըստ որում ժամանակի Կղեոպատրայ Եգիպտոսի /54a/ թագաւորէ կայսր Սեբաստոս Ոկտաբիոս, որ եւ Աւգոստոս, ամս յիսուն եւ վեց: Եւ ետ հիպատիս՝ ԺԳ. եւ մեռաւ ի պաղատան: Յորմէ հետէ Աւգոստեանք եւ Սեբաստեանք անուանեցան թագաւորք Հռովմայեցոց. եւ ի քառասուն եւ երկու ամի թագաւորութեան նորա եկն տեր մեր Յիսուս Քրիստոս:

Տիրերիոս՝ ամս քսան եւ երիս. եւ ետ հիպատիս՝ Թ. եւ մեռաւ ի Մէկէնս. յութուտասն ամի տերութեան սորա չարչարեցաւ Քրիստոս: Գայոս Գաղոս՝ ամս երիս եւ ամիսս տասն. եւ ետ՝ հիպատիս Դ. մեռաւ ի պաղատան:

Կղաւդիոս՝ ամս չորեքտասան եւ ամիսս Թ. եւ ետ հիպատիս Դ. մեռաւ ի պաղատան:

Ներոն նորին որդի՝ երեքտասան, եւ ամիսս ութ, եւ ետ հիպատիս Դ: Յաւուրս սորա քարկոծեցին Հրեայք զեղբայրն Տեառն. եւ ինքն սպան սրովն զՊաւղոս եւ զՊետրոս. եւ ինքն փախեաւ եւ կենդանոյն զանձն թաղեաց:

Գաղբաս՝ ամիսս եւթն. սպանաւ ի Հռովմ:

Ոթոն՝ ամիսս երիս. եւ զինքն սպան:

Վիտեղիոս՝ ամիսս ութ. սպանաւ ի պաղատն:

Վեսայիանոս՝ ամս տասն. եւ ետ հիպատիս Թ. եւ վճարեցաւ ի Սաղուստեան բուրաստանսն: Ի Վիսայիանոսէ եղեւ աւերումն Երուսաղէմի եւ քանդումն հրէից վասն չարչարանացն Տեառն, որպէս Յովսէփոս ժամանակագիր պատմէ:

Տիտոս նորին որդի՝ երկու. եւ ետ հիպատոս Բ. եւ վճարեցաւ ի պաղատանն:

Դոմետիանոս՝ ամս եւթնետասն. եւ ետ հիպատոս Ա. եւ սպանաւ:

Ներուաս՝ ամս երկուս, եւ ետ հիպատոս Դ. եւ վճարեցաւ ի Սաղուստեան բուրաստանսն:

/54b/ Տրաիանոս՝ իննետասն, եւ ետ հիպատոս Ջ. եւ վճարեցաւ ի Սեղինունդ: ՅՏրաիանոսի աւուրս յերկարեալ ասէ զկեանս իւր Յովհանն աւետարանչի:

Ադրիանոս՝ ամս քսաներկուս, ետ հիպատոս Գ. եւ վճարեցաւ ջրգողեալ թանչակալ:

Անտիոնոս Բարեպաշտ՝ քսան եւ երիս. ետ հիպատոս Գ. հանդերձ որդու վքն իւրովք՝ Աւրեղիւ, եւ Բերաւ, եւ Ղուկէիւ. եւ վճարեցան ի Ղովրիոս:

Մարկոս Անտոնինոս՝ չորեքտասան. եւ ետ հիպատոս Գ՝ Բերոսաւ եւ Ղուկիոսիւ. եւ վճարեցաւ ի Պաննոնիա:

Աւրեղիոս Բերոս՝ ամս իննետասան. ետ հիպատոս Դ, եւ վճարեցաւ:

Կոմոդոս՝ ամս երեքտասան, եւ հիպատոս Է. եւ թաղեցաւ կենդանի ի Վիտեղեան ապարանսն:

Էղիոս Պերտինակս՝ ամիսս վեց. եւ սպանաւ ի պաղատան:

Դիդիոս Յուլիանոս՝ ամս հինգ. եւ սպանաւ: Ի Յուլիանոսի աւուրս վերամբարձեցաւ ծով:

Ապա Սեւերոս՝ ամս հնգետասան. ետ հիպատոս Ե:

Անտոնինոս Գետաս, եւ Անտոնինոս Կարակաղոս՝ ամս եւթն. եւ ետուն հիպատիս Ջ. եւ սպանան ի Խառան:

Մակարիանոս՝ ամ մի. եւ ետ հիպատի(ս) Ա. սպանաւ ի Հռովմ:

Աղեքսանդրոս Մամէ՝ երիս. ետ հիպատի(ս) Ա. եւ սպանաւ ի Մոզինտիանոս:

Մաքսիմանոս՝ չորս. ետ հիպատի Ա. /55a/ եւ սպանաւ յԱրկիւղէիա:

Բաղբինոս եւ Պուպիլիոս՝ ամիսս տասն, եւ սպանան:

Գորդիանոս՝ ամս վեց. եւ զանձն իւր խեղդեաց:

Միւս Գորդիանոս՝ եւթն. ետ հիպատիս Գ:

Դեկիոս՝ ամս երկուս. ետ հիպատիս Ա. սպանաւ ի հրապարակին Սեմպիրովնի: Ի Դեկեա(յ) աւուրսն ննջեցին սուրբ մանկունքն յԵփեսոս:

Պուկուս եւ Բաղդինոս սպանան ի Հռովմ:

Փիդիպեանք՝ ամս վեց. ետուն հիպատս հինգ. եւ սպանաւ ի Տիբերեան բուրաստանն:

Գաղոս՝ ամս Գ. ետ հիպատս Բ. եւ սպանաւ ի հրապարակին Փաղամինայ:

Ուստիդիանոս եւ Մեդիանոս՝ ամս վեց. ետուն հիպատիս Բ. եւ սպանան ի Մեդիոդան:

Վաղերիոս՝ հնգետասան. ետ հիպատիս Է. եւ սպանաւ ի Պարսս:

Գաղինոս՝ ամս երկուս. ետ հիպատի(ս) Ա:

Կղաւդիոս՝ ամս երիս. ետ հիպատիս Բ. եւ վճարեցաւ ի Սիրմիոս:

Կիւնտիդոս՝ ամս երկոտասան. ետ հիպատիս Գ. սպանաւ յԱրկիդէիա:

Աւրեդիանոս՝ ամս վեց. ետ հիպատիս Գ. սպանաւ ի նոր բանտին:

Տակիտոս՝ ամիսս չորս. եւ սպանաւ ի Պոնտոս:

Փղորիանոս՝ ամիսս չորս. եւ սպանաւ ի Տարսովն:

Պոռքոս՝ ամս վեց. ետ հիպատիս Ե. եւ սպանաւ ի Սերտէոս:

Կարոս՝ վախճանեցաւ ի Միջագետս. եւ Կարինոս սպանաւ ի պատերազմին Կորնակայ. եւ Նումերիանոս սպանաւ ի Թրակ, ամս երկուս. ետուն հիպատիս Բ: Լինին ընդ ամենայն յԱւգոստեայ ամբ 3ԺԵ:

Դիոկղետիանոս՝ ամս քսան եւ երկուս, ետ հիպատի(ս) Ժ. /55b/ եւ մեռաւ ի Դադմատիա: Առ որով հալածումն եկեղեցեաց. եւ կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ հայոց՝ [ի] ձեռն սուրբ Գրիգորի Պարթեւի:

Մաքսիմիանոս նորին որդի՝ իննետասան. ետ հիպատիս Ը. եւ ի յՈվբիոսին խեղդեցաւ:

Մաքսիմոս եւ որ ընդ նմա՝ ութետասան, ետուն հիպատիս Ը. ընդ Կարինոսի պատերազմեալ մեռան:

Կոստան[դ]ոս՝ ամս չորեքտասան. ետ հիպատիս Զ. եւ մեռաւ ի Գաղիա ի պաղատան:

Մաքսիմիանոս, նորին որդի, ամս եւթն. ետ հիպատի Ա. եւ ի Տիբերիս գետ անկաւ:

Մերբերոս՝ ամս հինգ. ետ հիպատս Բ:

Ղիկիանէս՝ ամս եւթնէտասն. ետ հիպատի(ս) Դ: Եւ մեռանի ի Կիւղիկիա:

Գրատիանոս՝ ամս Գ. եւ մեռաւ:

Մեծն Կոստանդինոս՝ ԼԲ. ետ հիպատիս Ը. եւ մեռաւ ի Կոստանդնուպոլիս: Մեծն Կոստանդիանոս շինէ զԲիզէս կղզի: Առ սովաւ փայտ խաչին: Առ սովաւ պայծառանայր Մեծն Աթանասիոս Աղեքսանդրի եպիսկոպոս: Եւ արիանոսք զաւրացան: Եւ որոշեցաւ Աթանաս լինել ժողով ի Նիկիայ. եւ մերժան աւրէնն Արիոսի:

Կոստանդոս նորին որդի՝ ամս երեսուն եւ ինն. ետ հիպ. Ժ:

Կոստանտաս նորին եղբայր՝ ամս վեշտասան. ետ հիպ. Դ:

Կոստանդինոս կրտսեր՝ ամս քսան եւ երիս. ետ հիպ.Դ:

Իւղիանոս, փեսայ Կոստանտինոսի՝ ամս երկուս եւ կէս. եւ արար այդ կեսար ամս հինգ. ետ հիպ. Դ:

Վաղենտիանոս՝ ամս երկոտասան. ետ հիպ.Դ:

Վաղենտիանոս կրտսեր քսան. ետ հիպատիս Գ:

Գրատիանոս եւ որ ընդ նմա՝ եւթնէտասն. ետ հիպատիս Ե:

Թեոդոս Մեծն՝ երեսուն եւ վեց. ետ հիպատիս Գ: Ի Թեոդոսի աւուրս լինի ժողով յԵփեսոս եւ որոշի. անաւրէնն Նեստովր. եւ երեւեցան ի Հնդկաց զազանք՝ ցլափիղք եւ ուղտինձք եւ ձիանմանք եւ այլք բազմադիմիք. եւ ի սորա ժԹ ամին զարթեան սուրբ մանկունքն ի յայրին Նիւքոս:

/56a/ Արկադիոս որդի նորա՝ քսան եւ երեք. ետ հիպատիս Զ:

Ոնորիս՝ նորին եղբայր՝ երեսուն եւ վեց. ետ հիպատիս ԺԳ:

Թեոդոս որդի Արկադի՝ յիսուն եւ երկու. ետ հիպատիս ԺԸ:

Վաղենտիանոս վերերեւեալն, եւ որք ընդ նմա՝ երեսուն. ետ հիպատիս Ը:

Մարկիանոս՝ ամս հինգ. ետ հիպատիս Ա: Ի սորա աւուրս եղեւ ժողով ի Քաղկեդովն. եւ որոշի երանելին Դիոսկուրոս ի Փղաբիանոսէ հերձուածողէ:

Ղեւովն Մեծ՝ ամս իննէտասն. ետ հիպատիս Է:

Անթեմիս՝ ամս վեց. ետ հիպատիս Ը:

Փոքր Ղեւովն՝ ամ մի. ետ հիպատիս Բ:

Զենոն նորին հայր՝ ութելտասն, ամիսս չորս: Ի Զենովնի աւուրս պայծառանայր սուրբն Սիմեովն Սինական ի վերին Աղեքսանդրի: Եւ ի Ղեւոնի աւուրս պայծառանայր Տիմոթեոս Աղեքսանդրի երեցն:

Անաստասիոս՝ քսան եւ եւթն, ամիսս երկուս:

Յուստիանոս՝ ամս ինն, աւուրս քսան եւ չորս:

Յուստինիանոս՝ ամս երեսուն եւ ութ, եւ ամիսս հինգ:

Տիբերիոս՝ ամս երիս:

Մարիկիս՝ ամս քսան, ամիսս չորս:

Փոկաս՝ ամս ութ:

Երակղիս՝ ամս երեսուն:

ԹԱԳԱԻՈՐՔ ՊԱՐՄԻԿՔ ՍԱՍԱՆԱԿԱՆՔ

Արտշիր ի Սասանեան, յիսուն:

Շապուհ յԱրտշրեան՝ եւթանասուն եւ հինգ:

Ներսէս ի Շապհեան՝ տասն:

Որմզդ ի Շապհեան՝ չորս:

Շապուհ յՈրմզդեան՝ եւթանասուն եւ երեք:

Արտշիր ի Շապհեան՝ չորս:

Վռամ Յազկերտեան՝ քսան եւ երկու:

Յազկերտ Վռամեան՝ քսան եւ մի:

Վռամ Յազկերտեան՝ քսան եւ երկու:

Յազկերտ Վռամեան՝ իննելտասն:

Պերոզ Յազկերտեան՝ քսան եւ եւթն:

Վաղարշ Յազկերտեան՝ չորս:

Զամասպ ի Պերոզայ՝ երկու:

Կաւատ ի Պերոզեան՝ քառասուն եւ մի:

Խոսքով ի Կառատեան՝ քառասուն եւ եւթն:

Որմզդ ի Խոսքովեան՝ երկոտասան:

Խոսքով Որմզդե[ան]՝ երեսուն եւ ութ:

/56b/ ԵԻՍԵԲԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԻ. Առ Մովսէսիւ եւթն ամիս գործեցաւ խորանն: Որթոյ զիս ի Դիոնիսեա(յ) ծանեաւ, ոչ ի Մեղեսացոյն: ՁՍամփսովնէ ասէն թե կարի նշանաւոր էր զաւրութեամբ, մինչեւ համեմատել Հերակղի գործոցն: Առ Սողոմովնիւ Հոմերոս պւետէս ճանաչէր: Եւ ութ ամ կատարեաց զշինած տաճարին Երուսաղէմի: Եւ առ սովաւ ոմանք զՀոմերոս եւ զԵսիողոս պատմեն լիալ:

Յովրամայ ութերորդ ամին Եղիաս վերացաւ յերկինս. եւ Գողողիայի Ովնադար որդի Ռեքաբայ ճանաչիւր:

Ի Յովաթամայ առաջին ամին՝ Յունաց Ողիմպիադն կարգեցաւ: Առ Ամովսաւ եւ Պողոզա կին մարդ ի Հեբբայեցիս մերգարեացաւ:

Եղեսինեակ Եղղոս թագաւորեաց մինչ Տրիպտողմէոսն՝ զորմէ ասէ Փիզոքորոս՝ երկայն նաւու շրջել, եւ ցորեան բաշխել. եւ կարծել՝ թե թոչուն աւժ իցէ նաւն. քանզի եւ ձեն այնպիսի իմն էր:

ԵՊԻՓԱՆՈՒ: Բեղոս թագաւորեաց ամենայն Ասորեստանեաց ամս վաթսուն եւ երկուս, բայց ի Հնդկաց: Բեղոս՝ յունարէն Դիոս, հայերէն Արամազդ, պարսկերէն Որմիզդ:

ՁՇամիրամայ բեր առասպելս յաւղեն. որ ունի զԱսիա. եւ զհող երկրին հարթ վասն ջրհեղեղացն. եւ զԲաբիղովն նորոգէ եւ պարսպէ:

Ի երեսուն եւ հինգ ամի Շամիրամայ, Աբրահամու քառասուն եւ հինգ, սկիզբն քառասուն եւ մի յոբէղինին:

Յոբէղն՝ ըստ Եբբայեցոց՝ յիսուն ամ է:

Պերսեւս ի Պարսից վերայ զաւրածողով եղել, եւ զԳորգոնա գլխատեաց. եւ ինքն այդ կին արար գեղեցիկ, որ ապշեցուցանէր զտեսաւղսն գեղովն, մինչեւ քարանալ համարել: Ձորմէ Դիդիմոս ասի նոր....

/57a/ Ամփիովն Թեբայեցի թագաւորեաց. զորմէ ի վիպի գայ՝ վին հին հարկանել, եւ զքարինս շոնչեցուցանել. քանզի էին ապուշք ոմանք լսաւորն:

Առ Սիդովնացոց թագաւորութեամբն Պեդասոս՝ թերեւս ձի ինչ էր երագ, ստացուած կնոջ ուրուք: Իսկ Պաղեփատոս ասէ, թե նաւ էր Բաղերեփոն Տիպեսասոն:

Գեդաղոսի իրքն՝ որ կարծեցուցանէր, թե պատկերս շարժունս առնիցէ. քանզի նախ զոտս պատկերացն ի միմեանց զատանէր, զի այդքն կից գործեալ հասանէին: Եւ պատմէ Պաղեփատոս՝ եթե որպէս հանդերձ որդւովն իւրովն Կարոսիւ նաւէ կալեալ

փախեալ ի Նինեայ. եւ վասն չգտանելոյ պատասպարան փախստեանն՝ համարեցաւ թռանիլ:

Գղակոս Քիացի, որ զերկաթոյ գաւղ իմացաւ, ճանաչէր:

Եւ զՀիդրեայ՝ զկնոջէ ումեմնէ Պղատովն պատմէ, թէ անհնարին փիստէս էր: Առ Նինեալ թագաւորութեամբ Ասորեստանեայց, Եգիպտացոց կշռի վեշտասաներորդ հարստութիւն. ըստ որում՝ թագաւորէին վեշտասաներորդ Թեբէացիք՝ ամս հարելր իննսուն:

Եւթնէտասաներորդ հարստութիւն՝ Հովիւքն թագաւորէին ամս հարելր եւ երեք: ԶԵգիպտացոց թագաւորս Հովիւս՝ ի դէպ է անուանել զՅովսէփ եւ զեղբարսն. զի երեւեին սոքա ի ժամանակին՝ առ Հովւացն Եգիպտոսի իշխանութեամբ իջեալ Եգիպտոս:

Փրիքոսս, ըստ ոմանց, համարեցաւ հեծանել ի խոյ ոսկի գիսակ եւ շրջել ընդ աւդս՝ հանդերձ Եղդեալ քերքն իւրով փախուցեալ ի մաւրուն, որ սպանանել կամէր զնա. եւ դիպեցաւ նաւ, որոյ նշանակն խոյ էր. իսկ /57b/ դայեակն որ ապրեցոյց զնա, Խոյ կոչիւր:

Ափրիկանոս՝ առ թագաւորութեամբն Արտաշէսի համարէր զիմաստասէրսն. ուստի եւ Նէկտանէրոս վերջին թագաւոր Եգիպտոսի, որ Փարաւովն կոչիւր, դերծեալ զհեր գլխոյ՝ յայդակերպս փախեալ: Վասն Գանիմիդեայ առեւանկութեանն՝ Տրովայ հաւրն Գանիմիդեայ եւ Տանտաղա(յ) ճակատք լինէին, որպէս պատմէ Փանկզէս: Ապա ուրեմն զուր են առասպելքն Պիւէտիկոսին, որ իբրեւ զարծուոյ իմն կուտ բանս կարկատէր:

Աթենացոց թագաւորան աղջկանն յափշտակութեան իրք յԱւգոնեայ Մողոսացոց թագաւորի, որոյ էր շուն մի յաղթանդամ Կերպերոս, զոր Պերիթոս սպան, եկեալ ի կնոջն առեւանկութիւն՝ Թեսեալ հանդերձ, եւ զԹեսեւ սպրեցոյց՝ որ մերձն էր յապականել, պատահեալ Հերակլի: Իսկ վասն յայտնի վտանգին՝ ի դժոխաց ելեալ կարծէք: Եւ պատմէ զայս Փիդոքորոս՝ յերկրորդում ամթիդիոջն:

Եւ Որփեսս Թրակացի, որ աշակերտ Մուսո(յ) եւ Սեպայ էր. առ որովք Պորփիրեանն Ոսիոգոս պիտէտէս ճանաչէր:

Առ Ղատինացոց թագաւորան իշացլուցն եւ ռապիթեացն կոիւն: Իշացուլք՝ Թեսաղացոց հեծեալքն էին, որպէս պատմէ Պաղէփատոս յառաջնում ամթիդիոջն:

Մինոտաւրոսի իրքն, զոր Փիզոքորոսն պատմէ, յերկրորդում՝ ատթիդին, թէ Մինոտաւրոս անուն զաւրավար ոմն էր՝ անագորոյն եւ խիստ բարոյիւք. զի Մինոս ի կոթու աղոնեալ ի վերայ Անտրոզէ դիմէր. զոր սպանին Աթենացիքն, եւ ընդ կոռույն յաղ(թեալ) պարգեւ զորդիսն տայր զԱնտրիկեցիսն: Ուժգին էր Տաւրոս, եւ ամենեցուն /58a/ եւ զխոստացեալ որդիսն ապրեցուցանել ի պատերազմին ամբոխելոյ: Եւ վասն սոցին իրաց վկայ լինել Ելանոսացոցն:

ՊԱՐՄԻՅ ԹԱԳԱԻՈՐՔՆ: Առաջին Կիրոս, երկրորդ Կամբիսես. թագաւորեն Մողքն եղբարք՝ ամս եւթն: Առ սոքաւք սկսան զհուր պաշտել Պարսիկք, որ բերաւ յԵրուսաղէմէ ի Բակտրացիս: Եւ անտի յԱթաշ փոխեցաւ. զի եւ անուն մոզին Աթաշվշնասպ կոչէր: Առ Արտաշեսի թուի լիալ Եսթերայ իրքն, որ ի Հրէից պատմի, թէ նոյն իցէ որ առ Եբրայեցիսն Արշաւիրն անուանի. եւ ըստ եւթանասնից թարգմանութեան՝ Արտաշես կոչի:

Նեէմի եբրայեցի, տակառից պետ Արտաշեսի արքայի, արձակեալ կանդնէ զքաղաքն Երուսաղէմ. եւ ածէ զպարիսպն. եւ կատարէ զգործն յերեսուն եւ երկու ամի նորին Երկայնաձեռն Արտաշեսի: Առ Դարեհի խորթի արար սպառումն թագաւորութեան Պարսից եւ Մարաց, Քաղթեացոց, եւ Ասորոց, եւ Գդաց, եւ այդ բազում ազգաց՝ Մակեդովնեան Աղեքսանդրոս. եւ միահեծան կալաւ զթագաւորութիւնսն:

Ի Դարեհէ Արշաւրայ՝ Բաբելոնացոց թագաւորութիւնն ի Պարթեւս փոխեցաւ ի յիսներորդի հինգերորդի ողիմպիադին. եւ Պարթեւք ի Մակեդովնացոց ապստամբեցին. եւ ի նոցանէ թագաւորեաց Արշակ քաջ. որք կալան զթագաւորութիւնն ամս չորեքհարիւր քսան եւ երկուս, մինչեւ յաւուրս Արտաշրի:

Նումաս Պոմպիլիոս կայսր՝ երկուս ամիսս յաւել ի տարի, զՅանուարի եւ զՓեբրուարի. զի յառաջ տասն ամիս էր տարին. նաեւ զԿապիտովիովնն ի հիմանց շինեաց: Նոյն եւ...:

/58b/ Իսկ Տուղոս Տիդիոս, Հռովմայեցոց թագաւոր, արկանէ ի կիր զծիրանիս, զոսկի գաւազանսն. եւ վասն նորին ի տուն նորա փայղատակունք տեղացին յերկնից. եւ նա խարշեալ սատակէր:

Զի Ովաննէ Առաքելոյ եւ աւետարանչէ՝ մինչեւ ցՏրախնոսի ժամանակն պատմէ յերկարել զկեանս իւր Իրէանոս: Եւ Բասիլիդէս հերձուածող ընդ այն ժամանակս էր: Նովատէս յեկեղեցոյ ճեղքեցաւ, որ զնաւատիանոսաց հերձուածն յարոյց:

Յանտիոք եպիսկոպոս նստաւ Պաղ Սամոստացի, որ հերետիկոս գտեալ՝ մերժեցաւ. վասն զի զառողջ կանոնս որոշեալ, զԱրտեմոնի աղանդն նորոգեաց, որ ընդ հակառակսն զնաց Յովաննու աւետարանչի՝ կարգաւք եւ կրանիւք:

4

ԳԱՅԻՈՍ՝ որ կոչեցան Յուդիոս՝ ամս երիս, եւ ամիսս երիս: Սա առաջին եկաց ի Հռովմ ինքնակալ կայսր, յերրորդ ամին Կղէոպատրեայ Եգիպտոսի եւ Աղեքսանդրի թագաւորի, յետ դադարելոյն Անտիոքայ Ասորոց թագաւորութեանն, ի ՃՁԴ Ողիմպիադին, ի ՁԸ ամի Հռովմ քաղաքի շինութեան: Ի Հրէից քահանայապետութեանն Հիւրկանոսի, որ էր աներ Հերովդի՝ հաւրն Արքեղաւոսի, եւ Լիւսինեայ, եւ Անթիպատոսի, եւ Հերովդի, եւ Փիղիպոսի. որ եւ ինքն իսկ Յուդիոս եղիտ զլուսնացոյցն Հռոմովոց. եւ զԲեսեքիստոնն կարգեաց. եւ են /95a/ ամք յառաջ քան զլնուլ նհանջին. եւ զԿիւնիտոս ամիս՝ Յուդիս վասն յայն ամսեան ծնանելոյն:

ԱԻԳՈՍՏՈՍ՝ ամս յիսուն եւ վեց, եւ ամիսս վեց. Սեբաստոս Հոքտաւիոս յորջորջեցաւ եւ զՍեքոստոս ամիս՝ Աւգոստոս անուանեաց, վասն ի նոյն ամսեան իւրոյ ծննդեանն լինելոյ:

Նա համարեն տիրեաց ամենայն Հռովմայեցոց եւ Յունաց: Ի սորա քսաներորդի, եւթներորդի ամի սպանաւ Կղեոպատր Աղեքսանդրի եւ Եգիպտոսի թագաւոր. եւ եղեն նուաճեալք ընդ Հռովմայեցոց: Ի սորա քառասներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեւմ Հրեաստանի: Լինին յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամբ ՐՄԿԴ:

Եւ էր Հրէից թագաւոր Հերովդէս այդագոյն, Անտիպատրեայ Ասկաղոնացոյ եւ մաւր Եւպրեայ արաբացոց:

Ի սորա երեսուն եւ մի ամի եղեւ ծնունդն Քրիստոսի. եւ երեսներորդի երրորդի կոտորեաց զմանգունսն ի Բեթղեւմ: Եւ յետ երեք ամի դառն հարուածովք սատակեցաւ: Այս ի ստոյգ ժամանակագրական պատմութենէ ընդարիւնակեցաւ, իսկ ըստ այդոց՝ այսպէս ունի պատմութիւնք. ըստ Հրէից մինչեւ ի ծնունդն՝ ամբ չորս հազար. ըստ Շամրտացոց՝ չորս հազար. ըստ յունակ Եպիփանոս Կիպրացոյ պատմութեանն հինգ հազար հինգ հարելր. ըստ Քրոնիկոնի Բազմավէպ պատմութեանն՝ հինգ հազար հարելր իննսուն եւ ութ:

ՏԻԲԵՐԻՈՍ՝ ամս քսան եւ երիս. ի սորա հնգետասան ամին գայ ի մկրտութիւն Յիսուս Քրիստոս՝ ի Յորդանան գետ, առ Յովաննէս. եւ ի վեշտասան ամին գլխատեցաւ Մկրտիչն. եւ յութուտասաներորդին խաչեցաւ Քրիստոս ի Հրէիցն. եւ յիննետասաներորդ ամին՝ քարկոծեցաւ Ստեփաննոս. եւ ի նոյն ամի ընտրեցաւ Պաղոս յառաքելութիւն: Եւ էր յԵրուսաղէմ /59b/ եպիսկոպոս Յակոբոս եղբայրն Տեառն. եւ ի նոյն ժամանակս էր Յովսէպոս պատմագիր:

Եւ տեղեկացեալ Տիրեր վասն սքանչելագործ նշանացն Քրիստոսի, խնդրեաց առ ինքն զՊիղատոս: Իսկ նորա երկուցեալ ի տանջանաց, մինչդեռ յովկիանոս նաւեին, մատն անձին իւրոյ եղեւ, եւ ընգեցաւ ի ծով:

Առ սովաւ էր Աբգար թագաւոր Հայոց՝ յՈւրհայի, որոյ գրեալ թուղթ առ Փրկիչն ի ժամանակի խաչելութեանն, ընկալաւ թուղթ պատասխանոյ, արհնելով զքաղաքն, ցուցեալ նմա զկատարումն ելիցն իւրոց՝ որ յԵրուսաղէմ: Եւ յուսայ ի գրեալսն առաքել առաքեալ մի առ նա, յաշակերտաց իւրոց՝ բժշկել զհիւանդութիւնս նորա. զի էր նա պատագրոս յոտից իւրոց: Իսկ ըստ հրամանի Փրկչին մերոյ Թադէոս, որ էր մի յեթանասնիցն, եկն յՈւրհա առ Աբգար թագաւոր, եւ բժշկեաց զնա. եւ մկրտեաց զնա ամենայն տամբ իւրոյ եւ շինեալ անդ եկեղեցի՝ ձեռնագրեաց քահանայ զԱդէ, որ էր կերպասագործ թագաւորին:

Եւ եկեալ զնաց անդի ի Հայս՝ քարոզել զբանն կենաց: Իբրեւ զգաց զգալուստ նորա Սանատրուկ արքայ Հայոց, զնաց ընդ առաջ նորա, եւ սպան զնա յԱրտագ գաւառի, ի գեաւդն ի Բազրոտ:

ԳԱՅԻՈՍ՝ ամս երիս, եւ ամիսս երիս: Ի սորա յառաջնում ամին Մարկոս
աւետարանիչ յԱղեքսանդրէ՝ յՅեգիպտոս քարոզեաց զաւետարանն, եւ եկեաց ամս
քսան եւ երկուս, եւ մարտիրոսացաւ ի Բիկուղոս:

/39b/ ԿՂԱԻԴԻՈՍ՝ ամս չորեքտասան, եւ ամիսս ինն: Առ սովաւ եղել սովն
համաշխարհական: Եւ ընդ նոյն ժամանակս Հերովդէս՝ եղբայր Արքեղոսի՝ սպան
զՅակոբոս զեղբայրն Յովաննու սրով. որ յառաջագոյն գլխատեաց զՄկրտիչն
Յովաննէս: Եւ ի նոյն ժամանակս Պետրոս առաքեալ՝ զԱնտիոքացոց եկեղեցին
հաստատեաց: Եւ գնացեալ ի Հռովմ, անդ զաւետարան քարոզեաց: Եւ եկաց անդ
առաջնորդ եկեղեցւոյն ամս քսան: Իսկ յետ Պետրոսի առաքելոյ՝ եկաց եպիսկոպոս
առաջին յԱնտիոք՝ Եւոդիոս:

ՆԵՐՈՎՆ՝ ամս երեքտասան եւ ամիսս ութ: Ի սորա եւթներորդում ամի՝ Յակոբոս
եղբայրն Տեառն քարկոծեցաւ ի Հրէից, վասն զՅիսուսէ՝ գոլ որդի Աստուծոյ: Եւ եկաց
յետ նորա եպիսկոպոս յԵրուսաղէմ Սիմովն:

Եւ յերեքտասաներորդին սպան զՊաւղոս եւ Պետրոս, ի Հռովմ, Ներովն: Եւ յետ սակաւ
աւուրց քաղաքն ի վերայ նորա, փախեաւ, եւ կենդանւոյն թաղեցաւ: Եւ եկաց յետ
առաքելոյն Պետրոսի առաջին եպիսկոպոս ի Հռովմ Ղինոս՝ ամս երեքտասան:

ՎԵՍՊՈՒԱՆՈՍ՝ ամս տասն: Ի սորա եւթներորդում ամին Տիտոս որդի նորին
պաշարեաց զԵրուսաղէմ, եւ առ գնա ի Չատկին. եւ բրեաց ի հիմանց զքաղաքն. եւ
զբերս արանց կոտորեաց: Պատմէ եւ Յովսէպոս՝ սովաւ եւ սրով՝ հարեր քսան բերս
կոտորեալ. եւ այդ եւս բերս յիսուն՝ գերեաց, եւ վաճառակուր արար յաւտար ազգս:
Իսկ հաւատացեալքն՝ որ էին ի քաղաքին, յառաջագոյն հրաման առեալ ի հրեշտակէ
սրբոյ՝ գնալ ի քաղաքէն. եւ ելեալ բնակեցան ի քաղաքի մի, /39b/ որ կոչի Փաղաղէղայ,
մաւտ ի կողմանս Սկիւթացոց Պողոսայ:

ՏԻՏՈՍ՝ ամս երկուս. առ սովաւ Բէսիոս լեառն պատառեցաւ, եւ հուր շնչեաց,
զքաղաքս եւ զգաւառս այրեցեալ:

ԴԵՍԵՏԻԱՆՈՍ՝ եւթելտասն: Ի սորա չորրորդ ամի տուաւ Յովհաննէս ի Պատմէս
կղզի՝ վասն բանին Աստուծոյ: Առ սովաւ երեւեցաւ Մենանդրոս, որ է աշակերտ
Սիմովնի կախարդի. եւ էր նա շամբուացի, ի գեղջէ Քփրաւա. եւ ասէր նա զանձնէ, թե՛
ես եմ Փրկիչն, որ ի վերուստ իջեալ: Եւ թե որք ինձ հաւատան եւ մկրտին, յինէն կեանս
յաւիտենականս, մշտենջենաւորս ունին յայսմ աշխարհի. եւ կան մնան առանց
ծերանալոյ եւ մեռանելոյ: Եւ ի սոյն ժամանակի էր հերձուածն Աբիսովնի, եւ
Կերինթոսի, եւ Նիկաղաւուսացոցն: Քանզի Աբիսովն՝ ի յեբրայեցոց լեզուն աղքատ
կոչի. եւ ասէր նա, թե զծնունդն Տեառն ի Կուսէն եւ ի Հոգւոյն Սրբոյ ոչ ուրանամ. բայց ի
սկզբանն ոչ էր նայ ընդ Հաւր, եւ իմաստութիւն եւ զաւրութիւն Աստուծոյ: Եւ
զշաբաթս եւ զայդ վարս իբրեւ զՀրէայս պահէր. բայց զմիաշաբաթ իբրեւ
զհաւատացեալս պահէր. եւ զառաքեալ կոչէ արեւնս խոտորնակս: Իսկ Կերինթոս
ասէր, ասէ. Ուսեալ եմ ես ի հրեշտակաց, թե յետ յարութեանն լինելոց է արքայութիւն
ի վերայ երկրի: Եւ դարձեալ զցանկութիւն մարմնոյ միւս անգամ ի մէջ Երուսաղէմի
եմք լինելոց գործել. եւ ըստ թոռոյ հազար ամաց լինելոց է տուն հարսանեաց: Եւ ի սոյն
ժամանակս էին եպիսկոպոսք տեսուչք եկեղեցեաց ի կողմանս կող/40a/մանս, որք

գրեցին խաւսս ընդդէմ Մարկիոսի եւ Վաղենտիանոսի. Երուսաղէմի եկեղեցւոյն՝ Կասիանոս, Աղէքսանդրացոց՝ Ագրիպանոս. Անտիոքացոց Թեոփիլոս, Հռովմայեցոց՝ Սովոտէր, յետ որոյ Աղիլթիրոս. Փիղիպոս՝ Գորտինացոց, Մեղիմոս՝ Մարդիացոց, Ապողինարիս՝ Յարապաւղիս, Դիոնէսիոս՝ Կորնթացոց, Պոպղիոս՝ Աթենացոց: Սա պատմէ վասն քաղաքին իւրոյ, թէ ապականեցան ի հաւատոց, եւ մերձ էին յետս դառնալ. յետ որոյ Կորնտոս եկաց եպիսկոպոս եւ հաստատեաց զնոսս ի հաւատս աւետարանին: Եւ պատմէ վասն իւր, թէ աղաչեցին զիս եղբարքն՝ գրել թուղթ առ Կորնթացիսն՝ վասն հաւատոցն. եւ առին լցին զնոսս առաքեալքն՝ սատանայի որոշմամբ: Եւ չեն ինչ զարմանք. զի եւ ի գիրս Տեառն մերոյ փոփոխեցին ոմանք, եւ արկին նենգութիւն:

ՄԱՐԿՈՍ ԱՆՏՈՒՆՆՈՒՐ՝ ամս հնգետասան: Սա էլ ի պատերազմ ի Կուագս ընդ Գերմանիկս եւ ընդ Մարմատս. եւ նեղեցան զաւրն ի ծարաւոյ. եւ զունդ մի ի զինուորացն՝ որ էին քրիստոնեայք՝ ի Մեղիտինեայ, յաղալթս կացեալ առ Աստուած ծունր եղեալ ի վերայ երկրի. եւ մինչդեռ թշնամիքն զարմացեալ հայեին, եղև յանկարծակի շարժումն մեծ, եւ որոտումն, եւ կայծակունք տեղացին ի վերայ թշնամեացն, եւ սատակեցան, եւ անձրեւով ջրոցն ընդարձակեցան զաւրքն: Ի նոյն ժամանակս յարեաւ հերձուածն Կրետացոց, որոց պատճառք Տրայիանոս եղև հերձուածոյն Կրետացոց, աշակերտ Յուստիանոսի: Զի զաշխարհ աներեւոյթ /40b/ ասեն, եւ զամուսնութիւն՝ պոռնկութիւն եւ ապականութիւն. եւ զկերակուրս խոտեն: Իսկ Մելերոս հաստատեաց զայս աղանդ, եւ կոչին Մելերիանոսք: Սոքա հայհոյեն զՊաւղոս, եւ զԳործս առաքելոցն ոչ ընդունին. բայց ինքն Տրայիանոս հաստատեաց եւ եղ աւետարան. եւ կոչեաց Յատակստովն. այսինքն է՝ խառնակումն. եւ առ բազումս կայ մինչև ցայսար: Ի նոյն իսկ ի ժամանակս էր Բարդաճան Արամացի՝ յՈւրհայի. այր երեւելի եւ իմաստուն, եւ լեզուաւ կ(որովի) ընդդէմ ամենայն հերձուածողաց: Բայց էր սա յառաջ յուսման ընդ Վաղենտիանոսի. եւ իբրև գիտաց՝ անարգեաց զբազում պատմութիւն նորա, այդ ոչ լիով /41a/ կատարելապէս ջնջեալ զառաջին հերձուածոյն:

ԿՈՄԻԴՈՍ՝ ամս չորեքտասան. ի սորա աւուրս Թեոդոտոն Պոնտացի՝ ի հերձուածոյն Մարկիոսի՝ երրորդ թարգմանութիւն արար: Առ սովաւ էր աղանդն Ապեղղեայ, որ հպարտացեալն էր յալիս ծերութեանն. եւ մի սկիզբն խոստովանի. եւ վասն մարգարէութեանցն ասէ, թէ ի հոգւոյ հակառակութեանց են. եւ ասէր զանձնէ իւրմէ ուսուցիչ եւ վարդապետ. եւ ոչ գիտէր հաստատել՝ զոր ուսուցանէրն: Եւ բազում ինչ հայհոյեաց զՍովսէս, եւ ընդ նմին զԲանն Աստուծոյ հայհոյեաց բազում խաւսիք իւրովք. զի եւ նայ ի հրապոյրս անկեալ ի բանս կուսի միոյ դիւահարի: Եւ պատմէ Արագովն՝ աշակերտ Տերտիանոսի՝ ի Հռովմ քաղաքի, որոյ եղեալ էր գիրս նշանաւորս ընդդէմ Մարկիոսի. եւ ի սոյն ժամանակս էր հերձուած սուտ մարգարէութեանն Փոբիզացոց, եւ աղանդն Փղաբիանոսի, եւ Փաղեստոսի, եւ մուրրութիւնն Թարդիոտոսի: Զի Փոբիզացոց կուրութեան եղև առաջնորդ Մոնտանոս, որ էր ի միւսում Փոբիզացոց ի գեղջէ, զի անուն էր նորայ Բեբդու. եւ արկ զթոյնս իւր ի կողմանս Ասիացոց. եւ ասէր Մոնտանոս զանձնէ, թէ ես եմ հոգին բարեխաւս: Եկ Պրիսկիղա եւ Մաքսիմիղա կանայք մարգարէք Մոնտանեայ. եւ ոգին պիղծ Մաքսիմիղա՝ ասէր, թէ Հալածիմ ես գայդ ի գառանց. չեմ գայդ, այլ բան եւ հոգի եւ զարութիւն: Եւ պատմէ Մեղոտէս աւրինակագիր եկեղեցւոյ, եւ ասէ, գտի ես ի խաւսս նոցա, թէ Ոչ է պարտ մարգարէի խաւսել արտաքոյ կամաց /41b/ իւրոց. եւ ասէ զՄոնտանեայ(յ) եւ զկանանցն, թէ շարժեցան յապականիչ ոգւոց, եւ սպանին զանձինս

իւրեանց ուրոյն ուրոյն ժամանակս, ըստ մահուն Յուդայի մատնչի: Իսկ Փղաբիանոս անգաւ ի Հռովմ քաղաքի, անգեալ յերիցութենէ եկեղեցոյն, եւ ընդ նմին Բաղէստոս: Սոքա զբազումս մոլորեցուցին զկնի իւրեանց, եւ եղէն հակառակք ճշմարտութեանն եւ Թարդատոս որպէս թե ընդ երկինս վերանայցէ, անկաւ եւ մեռաւ չարաչար, որ Աստրում Որբանոս:

Ի սոյն իսկ յերեքտասաներորդ ամին Կոմիդեայ, ելից զպաշտաւն եկեղեցոյն Հռովմայեցոց Աղիւթերոս. եւ յետ նորայ Բեկտոր:

Եւ Աղեքսանդրացոց՝ Դոմետրիոս, Անտիոքացոց՝ Սարապիովն Կեսարեայ Պաղեստինացոց՝ Թեովփիդոս, Երուսաղէմի՝ Նարկէոս, ի Կորինթոս Խեղագացոց՝ Բաքիդոս, Եփեսացոց՝ Պողիկարպոս, եւ Գաղիղէացոց՝ Ղոնդունի Բենիոս: Ի նոցունց աւուրս եղեւ խնդիր բազում յուզման սրբոյ Զատկին. զի Ասիացոց եկեղեցիքն զչորեքտասան լուսնոյ զատկացն՝ յորում եւ դիպէր յաւուրց շարաթուն՝ լուծանէին եւ առնէին Զատիկ: Իսկ եպիսկոպոսն Հռովմայ Բեկտոր՝ կամեցաւ հատանել ընկենուլ զԱսիացոց եկեղեցեացն առաջնորդս, իբրեւ ոչ ողջամիտս. վասն ոչ ի միաշարաթուն լուծանել զգատիկն. իսկ Իրէնէոս ըստ անուան իւրոյ՝ էր նա խաղաղարար. գրեաց թուղթ առ Բեկտոր, եւ աղաչեաց ի խաղաղութիւն: Յայնժամ ամենայն եպիսկոպոսունքն միով հաւասարութեամբ խոր/42a/հեցան առնել զաւրն զատկաց. զի ի միաշարաթին լուծցեն զնա:

ԵՂԻՈՍ ՊԵՏԻՆԱԿՍ՝ ամ մի. առ սովաւ սաստիկ հրայրեացք եղեն, եւ պաղատն, եւ կուսանաց տունն այրեցաւ ի Հռովմ:

ՍԵԻԵՐՈՍ՝ ամս հնգետասան. սայ յարոյց սաստիկ հալածանս ի վերայ եկեղեցեաց, յորում անթիւք եղեն վկայք: Եւ Ղեւոնդէս՝ հայրն Ովրիդենի մարտիրոսացաւ: Եւ ի սորին աւուրս երրորդ թարգմանութիւն յԵրիքով գտաւ ի կարաս թագուցեալ:

Եւ ի սորին աւուրս էին Ասկղեպիդէս, եւ Թիդոտոս, եւ Ուկղոդէս, եւ Թեոդրատէս, եւ Հերմապաւղիս, եւ Կապոդոնիզէս: Սոքա համարձակ ձեռնամուխ եղեն ի գիրս Աստուծոյ, եւ ասէին՝ թե ուղղեմք. եւ կարծեցին զանձինս իմաստուն զոլ քան զՀոզին Սուրբ. եւ ոչինչ էին նոքա՝ թե ոչ դիւահարք: Եւ ի սոյն ժամանակի էր Ափրիկիանոս ժամանակագիր:

ԱՆՏՈՆԻՆՈՍ ՍԵԻԱՅ՝ ամս եւթն. առ սովաւ էր Նարկէոս եպիսկոպոս յԵրուսաղէմի, այր սքանչելի. զի էր երբեմն հսկումն՝ մեծ տանին Զատկաց, եւ պակասեաց ձեթ ճրագացն: Իսկ Նարկէոս հրամայեաց բերել ջուր. եւ եկաց յաղաւթս ի վերայ ջրոյն, եւ հրամայեաց արկանել ի ճրագսն պինդ հաւատովք. եւ շրջեցան ջուրքն ի բնութիւն ձիթոյ: Եւ եկաց Նարկէոս ամս հարիւր ինն եւ տասն: Իսկ Աղեքսանդրոս եպիսկոպոս՝ ի կողմանց անտի Գամբրացոց՝ եկն յաղաւթս կալ յԵրուսաղէմ. եւ արգելին զնա եղբարքն անդէն, լինել եպիսկոպոս փոխանակ Նարկէսեայ՝ ի հրամանէ Աստուծոյ: Եւ սոյն իսկ Աղեքսանդրոս գրեաց առ Ասկղիպիդէս եպիսկոպոս, ասէ. Մէք եղբարք, զՊաւղոս եւ զՊետրոս եւ զայդ առաքեալսն իբրեւ զՔրիստոս ընդունիմք: Այդ որ ինչ յանուն նոցա՝ ստութեամբ գրեալ է, խոտեմք: Իբրեւ ոչ ընթերցա(յ) ես զաւետարանն՝ զոր յանուն Պետրոսի ունին ոմանք է ձէնջ, զի այժմ գիտացի՝ թե հերձուածք թագուցեալ են ի միտս նոցա ի հերձուածոյն Մարկիովնի:

Եւ ի սոյն ժամանակսն գտաւ վեցերորդ թարգմանութիւնն յԵմմաւուս՝ ի կարաս թաքուցեալ:

ՄԱԿՐԻԱՆՈՍ՝ ամ մի. առ սովաւ հանդիսիցն տեղիք շուրջ տեսան[ել]եաց այրեցան ի Հռովմ:

ԱՆՏՈՆԻՈՍ միւս՝ ամս չորս. առ սովաւ հին Եմաւուս նորոգեցաւ եւ Նիկապաղիս կոչեցաւ յԱփրիկիանոսէ:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ ՄԱՄԵԱՅ որդի՝ ամս չորեքտասան: Առ սովաւ Հիպերիոս Բոսպորացի դներ խաւսս բազում վասն Զատկի. եւ գտասնամեայ կանոնսն, եւ վասն վեցարեայ ծննդոց, եւ վասն արհնութեան արհնութեանցն, եւ սակաւ ինչ յԵղեկիէղէ: Եւ ի սոյն աւուրս էր Ովրիգենէս՝ յԱղեքսանդր, եւ ներքինեցոյց զինքն:

ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍ՝ ամս չորս: Սա յարոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց, եւ հրամայեաց զամենեսեան կոտորել:

Եւ ի սոյն ժամանակս Ովրիգենէս ելեալ յԱղեքսանդրի Կեսարեայ Կապուղկացոց, եթող վարդապետ եկեղեցոյն զՀերակղէս զաշակերտն իւր. որ յետ Դեմետրի կալաւ զեպիսկոպոսութիւն Աղեքսանդրի:

ԳՈՐԳԻԱՆՈՍ՝ ամս վեց: Սա յաւուրս զատկի տաւնին կամեցաւ խաւսել յաղաթս՝ ընդ ժողովորդս եկեղեցոյ. եւ ոչ հրամայեաց նմա եպիսկոպոսն Փղաբիանոս /43a/ մինչեւ խոստովանեալ. եւ նա(իս)անձն առնոյր յամենայն մտաց իւրոց:

Առ սովաւ էր Բերւեղոս եպիսկոպոս Բոսարա(յ), ի կողմանս Արաբացոց. սա ժպրհեցաւ ասել վասն Փրկչին մերոյ, թե Ոչ էր նա անձամբ գոյութեան յառաջ՝ մինչեւ եկեալ էր յաշխարհ, եւ մարմնացեալ, եւ չիք նորա ասել աստուածութիւն անձին իւրոյ, այդ աստուածութիւն հաւր իւրոյ բնակեալ էր ի նմա: Իսկ եին այդք՝ որ ասէին, ի նմին կողմանց, թե Շունչք ընդ նոսին մարմնոցն մեռանին եւ ապականին, եւ ի յարութեանն նորոգի ի նա. իսկ աղաչեցին զՈվրիգենէս, եւ նա դարձուցանէր զնա ի ճշմարտութիւն: Եւ էր նա ամաց վաթսնից:

ՓԻՂԻՊՊՈՍ՝ ամս վեց: Ի սորա ի սկզբան թագաւորութեանն հազար ամ լցաւ Հռովմայ ի սկզբան շինելոյ քաղաքին:

5

ԴԻԿՈՍ՝ ամս երկուս. սա յարոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց. եւ եղեն վկայք եպիսկոպոսք, ի Հռովմ՝ Փղաբիանոս, յԱնտիոք՝ Բաբիդաս, յԵրուսաղէմ՝ Աղեքսանդրոս: Ի նմին ժամանակի ըմբռնեալ եւ Ովրիգենէս, եւ բազում չարչարեալ յԱղեքսանդր. բայց ի կատարումն մարտիրոսութեան ոչ եհաս:

Եւ անտի եկեալ ի կողմանս Կեսարեայ Ստրատոնեաց. եւ ելեալ յԵրուսաղէմ՝ սակաւ ինչ շրջէր անդ. եւ իջեալ ի Տաւրոս՝ անդ շրջէր. եւ հետագաւտէր զթարգմանութիւնն ութեջի գրովք յարիինեալ. եւ հրաշագան եւ մեծարգի եցոյց զեթանասնիցն թարգմանութիւնս քան զայդոցն. բան որ կրկին էր յարիինակին եւ եթանասունք

թողին, գայն Ուրբիգենէս աստեղը նշանակեաց. /43b/ եւ ուր պակասէր եւ յաւելոյին, յոբելիս արար, որոյ եւթանասունք յանձնէ եղին: Իսկ ուր զանազանեցին զբանն՝ դիմինիկոս է, հիպոդիմինիկոս եղին. մին ատտիկեցին նշան է եւ միւսն բժշկաց ? գոր եւթանասունքն կարգեցին: Ջայս արար Ուրբիգենէս, եւ ասի լինել յաշակերտաց նորա եպիսկոպոսք աւելի քան զվաթսուն, յորոց գայրն Գրիգոր սքանչելագործն՝ ի կողմանս Պոնտացոց ի Նեոյկեսարիայ, եւ Փիրմեդիանոս՝ ի կողմանս Կապուղկացոց ի մեծն Կեսարիայ. Եւսեբի՝ ի կողմանս Պաղեստինացոց, ի Պամփիլիայ: Իսկ Ուրբիգենէս ելեալ ի Տարսուս գնաց ի Կիպրոս. եւ դրեաց խաւսն վասն իշխանութեանցն ի յերկինս, եւ վասն աշխարհարարութեանն, եւ վասն յարութեանն: Եւ մոլորեալ ի ճշմարտութենէն՝ եղեւ հակառակ եկեղեցոյ. զի վասն Որդոյ ասէ. Ոչ զարեւ տեսանել զՀայր. եւ հրեշտակք ոչ կարեն տեսանել զՍուրբ Հոգին. եւ մարդիկ ոչ կարեն տեսանել զհրեշտակս. եւ զդրախտն՝ յերկինս ասէ. եւ վասն մաշկեղէն հանդերձի առաջին մարդոյն ասէ, միթէ մորթագո ըծ էր Աստուած. այդ յետ ուտելոյ ի փայտէն, զգեցոյց ոզոց նոցա գայս մարմինս. եւ մարմինս ոչ յառնէ ի յարութեանն, այդ փոխանակ սորա այդ լինի: Եւ կեցեալ ամս վաթսուն եւ ինն, մեռանի ի Կիպրոս: Եւ պատմէ գայս Եպիփան եպիսկոպոս Կիպրացոց: Եւ ի նոյն ժամանակս հալածանաց փախուցեալ եւթն մանգունքն ի Դիկոսէ յԵփեսացոց քաղաքին, ննջեցին ի Նիքոս լերինն յայրին, եւ հարելը քառասուն ամի գար/44a/թեան:

ԳԱՂԻՈՍ ԵՒ ՍՈՂԻՍՏՆՈՍ՝ ամս երկուս: Առ սովաւ Նաւատիոս էր յեկեղեցոջն Հռովմայ, եւ եղեւ առաջնորդ աղանդոյն Կաթարոսաց. այսինքն՝ որք սուրբս կոչեն զանձինս, եւ զապաշխարութիւն ոչ ընդունին: Ջի Նաւատիոս ասէ. Որ ոք յերկմտութեանն սխալէ, կայ մնայ առանց բժշկութեան այնպիսին: Վասն որոյ եղեւ ժողով ի Հռովմ քաղաքի վաթսուն եպիսկոպոսաց, եւ երիցունք աւելի քան զնոսա, եւ սարկաւագունք եւ հաւանեցան զՆաւատիոս, եւ զմիաբանեալս նորա ատար եկեղեցոյ. եւ նզովեալ մերժեցին զնոսա: Եւ եին եպիսկոպոսք Հռովմայեցոց՝ Ստեփաննոս, Աղեքսանդրացոց՝ Դիոնէսիոս, Անտիոքացոց՝ Փղաբիանոս: Իսկ սա զհետ Նաւատեայ թիրեալ մոլեցաւ: Իսկ Դիոնէսիոս Աղեքսանդրացի հաստատէր զնա՝ բազում արիւնակս ի մեջ բերելով:

ՎԱՂԻՐԻՈՍ ԵՒ ԳԱՂԻՈՍ՝ ամս հնգետասան: Սա ի սկզբան թագաւորութեանն իւրոյ խոստացաւ առնել խաղաղութիւն առ եկեղեցիս. իսկ այր մի եգիպտացի կախարդ շրջեաց զնայ առաջին մտաց անտի. եւ հրամայեաց, թէ արք սուրբք եւ արդարք հալածեսցին եւ կոտորեսցին. եւ զոհել հարց՝ զորդիս իւրեանց դիւացս. եւ հերձուլ զմանգունս. եւ դնել մասունս մանունս զստեղծուածն Աստուծոյ: Որպէս թէ ի ձեռն այսց գործոց եղիցին նոքայ ի շինութիւն, իսկ նա այսահարէր առաւել քան զարժանն:

Եւ յետ սակաւ ատուրց գերի վարեցաւ ի Պարսս. եւ եղեւ ծառայ դրիւ բարբարոսաց:

Եւ ի սորին ատուրս էր հերձուածն Եփեսեայ. /44b/ զի նայ Եպիսկոպոս երկրին Եգիպտացոց, եւ ուսուցանէր նոցա հրեերէն. թէ Յետ հազար ամի՝ լինելոց է հատուցումն մարմնաւոր ի վերայ երկրի:

Առ սովաւ էր Պաւղոս Սամոստացի եպիսկոպոս յԱնտիոք, հնգետասաներորդ յառաքելոցն:

ԿՂԱԻԴԻՈՍ՝ ամս երկուս, ամիսս ինն: Առ սովաւ Պաւղոս Սամստացի զառաջին կանոնն որոշեաց, եւ զԱրտիմոնի հերձուածն նորոգեաց. զի վասն Փրկչին մերոյ ասէ, թէ Մարդ է սոսկ, որպէս ամենայն մարդիկ, եւ բնութիւն Բանին Աստուծոյ մարդ լիալ ճշմարտութեամբ:

Եւ ժողովեցան եպիսկոպոսք ի տեղեաց տեղեաց՝ յԱնտիոք, առ ի քննութիւն Պաւղոսի Սամստացոյ հայհոյութեանն. Դիոնէսիոս՝ Հռովմայ եպիսկոպոս, Պարմէլիանոս Կեսարու Կապուղակցոց, եւ Գրիգորէոս եւ Աթանազէնոս եղբարք եպիսկոպոսք եկեղեցոյն Պոնտացոց. Հեղիանոս եկեղեցոյն Տարսոնացոց, Նիկոտէ Յիկոնացոց քաղաքէն, Հիմենոս Երուսաղէմի եկեղեցոյն. Թեոտիկնոս՝ Կեսա(ր)եայ Պաղեստինացոց, Մաքսիմիս՝ Բոսոր քաղաքի, որ առաջնորդէր եկեղեցոյն:

Յայնժամ աղաչեցին զԴիոնէսիոս Աղեքսանդրի եպիսկոպոս՝ գալ ի ժողովն, զի էր ընդդիմաբանեալ բազում խաւսիք առ Պաւղոս Սամստացի: Իսկ երանելին Դիոնէսիոս հրաժարեցաւ գալ ի ժողովն՝ վասն ծերութեան մարմնոյն. բայց զրեաց թուղթ եւ եցոյց նոցա զմիտս եւ զխորհուրդս՝ զոր ունէր վասն խնդրոյ նոցա: Ժողովեալ սուրբ եպիսկոպոսքն՝ նգովեցին զՊաւղոս Սամստացի: Եւ լուծեալ ի պատուոյն մերժեցին զնա յեկեղեցոյ:

/45a/ ԱԻՐԵՂԻԱՆՈՍ՝ ամս հինգ եւ ամիսս վեց: Սա խորհեցաւ հալածանս յարուցանել ի վերայ եկեղեցեացն. եւ ի բարկութենէ Աստուծոյ հարեալ սատակեցաւ՝ ի նոր բանդին:

Յետ որոյ ՏԱԿԻՏՈՍ ամիսս վեց: Յետ Տակիտոսի՝ ՓՂՈՐԴԱՆՈՍ թագաւորեաց աւուրս ութսուն եւ ութ: ՊՐՈԲՈՍ՝ ամս վեց, ամիսս երիս: Առ սովաւ մուլեկան Մանինեցոյ սատակիչ կործանումնն ի վարս մարդկան եմուտ: Ջի երկու բնութիւնս զոյգ ասաց Մանին, նիւթ եւ խաւար, որպէս թէ չար կամ բարի: Եւ մուլեալ դիւահար աղանվողն՝ ասէ. Ես եմ՝ որ Մովսէսի ի լերինն երեւեցայ հրով. եւ ես եմ, ասէ, Հոգին բարեխաւս:

ԿԱՐՈՍ՝ որդուվքն Կարինեաւ եւ Նումերիանոսի՝ ամս երկուս: Առ սովաւ էր Անատողիոս Աղեքսանդրացի. եւ եկաց եպիսկոպոս Ղաւողիկեցոցն, որ փիղիսոփայից ուսմամբ պայծառացեալ երեւէր. եւ թիւս չափոց եւ համարոց կարգեաց:

ԴԻՈԿՂԵՏԷԱՆՈՍ՝ ամս քսան: Սա թագաւորեցոյց զՏրդատ արքայ՝ հայոց Մեծաց. եւ յարոյց հալածանս սաստիկս ի վերայ եկեղեցեաց. զի տաճարք աղաւթից կործանեցան, եւ կտակարանք ի մէջ հրապարակաց այրէին. եւ անթիւք եղեն վկայք՝ արք եւ կանայք. եւ բազում հայրապետք մարտիրոսացան, Պետրոս՝ Աղեքսանդրի եպիսկոպոս, եւ Փիղեասթեմ յԱյիս քաղաքի: Անթեմոս Նիկոքեմացոց, Սերկանոս ի Փիւնիկէ եկեղեցոյն Ծաւրացոց. Սիդուանոս՝ Գացացոց, Ղուկիանոս՝ Մեծացոց, Պաւղոս եւ Սիդոս Եգիպտացոց. Փաուստոս եւ Ողորդիոս, եւ Անտոնիոս եւ Փիղոս, եւ Հիւսիէս, եւ Թէոդորոս:

/45b/ Ի սոյն իսկ ի Դիոկղետիանոսէ եւ սուրբքն Հոփսիմեանք փախստական եղեալք ի Հայս՝ մարտիրոսացան. եւ ի նոյն ժամանակ ելեալ ի վիրապէն խոստովանողն

Քրիստոսի սուրբն Գրիգոր, եղև քարոզ Հայոց, եւ լուսաւորեաց մկրտութեամբ. եւ եկաց յետ այնորիկ ամս երեսուն:

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՍ՝ ամս երեսուն եւ չորս. սա անուանեցաւ Սեբաստոս ի զաւրաց իւրոց. եւ հաւատացեալ յԱստուած, եւ ի բան նորա որդին միածին եւ կենդանարար յամենասուրբ հոգին. եւ տուեալ պատերազմ ընդ անարէն թագաւորսն՝ սատակեաց զնոսա, զՄաքսիմիանոս, եւ զՄաքսիմիստէս, եւ զԼիկիանէս: Քանզի իբրեւ էլից զթագաւորութիւնն Դիոկղետիանոս՝ զքսան ամին մեռաւ ի Դաղմատիա. եւ յետ սորա անուանեցաւ կայսր Մաքսիմիանոս յանձնէ իւրմէ. եւ խորհուրդ մահու նիւթեաց ի վերայ Կոստանդիանոսի: Իսկ իբրեւ յայտնեցաւ նենգութիւն նորա, չարաչար մահու սպանաւ: Եւ որդի նորա Մաքսիմիստէս արար հալածանս քրիստոնէից. եւ ինքն պղծութեամբ եւ աղտեղութեամբ եւ մոգութեամբ եւ կախարդութեամբ եւ դիւանուէր պաշտամբք վարէր. զի կարծէր՝ այնու յաղթել Կոստանդիանոսի: Եւ գործեաց կամուրջ ի Տիբերիս գետ նաւուք, եւ մինչդեռ անցանել կամէր, եւ լցաւ գետն զաւրաւքն, յանկարծակի շարժեաց զնաւսն, եւ Մաքսիմիստէս եւ զաւրք իւր ընգղմեցան ի խորս ջրոցն, եւ հեղձան կենդանւոյն: Յայնժամ Կոստանդիանոս հրամայեաց զաւրացն զյաղթող նշանն Քրիստոսի դրոշմել ի վերայ կապերտակի, որպէս թե ունի/46a/ցի յաջ ձեռին իւրում զխաչն. եւ մտեալ ի Հռովմ՝ յամենայն նշանաւոր տեղիս հրամայեաց կանգնել զյաղթութեան նշան խաչին Քրիստոսի: Իսկ միւս Մաքսիմոս՝ որ յարեւելս ի դաշտի միում հանդերձ զաւրաւքն բնակեալ էր, իսկոյն հասին նմա դատաստանք յԱստուծոյ. զի ամենայն մարմին նորայ յաներեւոյթ հրոյ մաշեալ լինէր, եւ խելապատակ ուղղոյն ուժգին այրէր ի հրամանէ Աստուծոյ, եւ աչք նորա ի դուրս ոստեան. եւ մինչդեռ շունչքն ի ներքս էր, խոստովան լինէր Տեառն Աստուծոյ, եւ խնդրէր մահ: Եւ այսպէս ել յաշխարհէ սաստիկ[կ] խայտառականաւք, զոր եւ ասել անմարթ է: Իսկ Լիկիանէս էր համախոխ յառաջագոյն Կոստանդիանոսի՝ յաստուածապաշտութեան կարգս. քանզի Կոստանդիանոս ետ զքոյր իւր Լիկիանեայ կին: Իսկ իբրեւ յաջողեցաւ թագաւորութիւնն Կոստանդիանոսի, նախանձեալ ընդ նմա Լիկիանէս, գրգռեաց պատերազմ, եւ յարոյց հալածանս ի վերայ քրիստոնէից. անբեր զեկեղեցիս, եւ տանջէր զհաւատացեալսն՝ առ ի զոհել կռոցն: Իսկ աստուածասէրն Կոստանդիանոս եւ զնա սատակեալ՝ ջնջէր յերկրէ, եւ նորոգէր զեկեղեցիս: Եւ ելեալ ի կողմանս Բ[ի]ւզանտացոց շինեաց քաղաք, եւ կոչեաց յան[ուն] իւր Կոստանդնուպոլիս: Առ սովաւ երեւեցաւ Տիտոս երէց յԱղեքսանդր, որ արարած ասէր զորդին Աստուծոյ. եւ եին համախոհք նորին փիղիսոփայք՝ Այետիոս եւ Աստերիոս եւ Նովիոս որք ասեին ոչ գոլ զորդի ի բնութենէ հաւր, այդ իբրեւ զմի յարարածոց: Եւ հրամայեաց Մեծն Կոստանդիանոս ի խնդրոյ սրբոյ հայրապետին /46b/ Աղեքսանդրի՝ լինել ժողով ի Նիկիայ ի մայրաքաղաքն Բիւթանացոց: Եւ ժողովեցան եպիսկոպոսք Յով. որոց ժողովէին առաջնորդք՝ Մակարիոս՝ Երուսաղէմի, Աղեքսանդրոս՝ Աղեքսանդրի, Եւստաթիոս՝ Անտիոքոս, Սեդրեստ[ր]ոս՝ Հռովմայ, Միտոփանիս՝ Կոստանդնուպոլսի՝ առաջին եպիսկոպոս. յետ որոյ յաջորդեալ Մեծն Աղեքսանդրոս: Որոց եւ նգովեալ զԱրիոս, մերժեն յեկեղեցոյ արտաքս: Սահմանեցին հաւատս յամենասուրբ երրորդութիւնն, քարոզելով զորդի ի բնութենէ հաւրգոր խոստովանի ընդհանրական կաթողիկէ եկեղեցի:

Որդիք նորա Կոստանտիանոս եւ Կոստաս եւ Կոստ[անտի]յաս՝ ամս քսան եւ երեք: Սորա ի միում ժամանակի եղեն կացեալ թագաւորք ի կողմանս կողմանս: Յորոց Կոստանտիանոս ի Գաղիղեա եկաց թագաւոր. եւ Կոստիոս ի Հռովմ. իսկ

Կոստանտաս՝ ի Կոստանդնուպոլիս թագաւորեաց, եւ եղեւ հնագանդեալ Արիոսի մոլորութեանն: Եւ հրաման ետ դարձուցանել զԱրիոս յարտասահմանութենէն եւ ընդունել յեկեղեցի: Եւ հասեալ նմա դատաստան յԱստուծոյ, հեղաւ որովայն նորայ յանմաքոր տեղոջ: Եւ ի սոցին աւուրս գրեաց երանելին Կիւրեղ՝ հայրապետն Երուսաղեմի՝ առ Կոստանդիոս թագաւոր Հռովմայեցոց վասն երեւելոյ նշանի խաչին յերկնից: Եւ ի նորին աւուրս Անդրեաս՝ եղբայր Մագնոսի եպիսկոպոսի զշարամանութիւն տոմարաց յարիներ:

ՅՈՒՂԻԱՆՈՍ՝ ամս երկուս, ամիսս ութ. սա էր որդի քեռ Մեծին Կոստանդիանոսի, եւ եղեւ յանցաւոր՝ որ/47a/պէս եւ ասէ պատմութիւնն. զի թողեալ զկարգ քրիստոնեական՝ եղեւ պաշտամանայ դիւաց եւ երկրպագու կոռոց: Ի սորա աւուրս երանելին Աթանաս հայրապետն Աղեքսանդրի էր իսկ էթե երկու անգամ հալածեալ յԱրիանոսաց:

ՅՈՒԲԻԱՆՈՍ՝ ամիս[ս] ութ. սոյն իսկ այս Յուրիանոս էր հետեւեալ Արիոսի մոլորութեանն. եւ եղեւ վրէժխնդիր նորին աղանդոց. եւ յետ սակաւ աւուրց խեղդեցաւ:

ՎԱՂԵՆՏԻԱՆՈՍ եւ ՎԱՂԷՍ՝ ամս երեքտասան: Ի սոցա մետասան ամին վախճանեցաւ երանելին Աթանաս յԱղեքսանդր, դարձեալ ի հալածանացն: Եւ ի սոցունց արքորեցաւ հայրապետն հայոց սուրբն Ներսէս ի հեռաւոր կղզիս Ովկիանու ամս ինն: Եւ ի սոցունց աւուրս էին սուրբ վարդապետքն Գրիգոր Նիւսացի եղբայր Բարսղի, Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, Գրիգոր Նազազացի Աստուածաբան: Եւ էին հերձուածք ի ժամանակին Արիանոսի՝ որք արարածն ասէին զորդին Աստուծոյ: Եւ նմիոսացիք՝ որք երկնային զաւրութեանց գլուխ ասէին զՔրիստոս զորդի, եւ ոչ ի բնութենէ հաւր: Եւ սաբեղացիք, որք զերիս Անձինս Սրբոյ Երրորդութեանն մի ասեն, լոկ անուամբ զանագանեալ: Եւ ողերայինք որք բնականաբար զմարդկային պատկեր ունել ասեն Սրբոյ Երրորդութեան. եւ Ապողինարացիք՝ որք մարդկային ոգի ոչ ասեն առեալ Քրիստոսի. եւ Մակեդոնացիք, որք զՀոգին Սուրբ նուագ ասեն քան զՀայր եւ զՈրդի: Եւ Պանդուրացիք, որք զբանն ի մարմինն յեղեալ ասեն. եւ Մանիքեցիք՝ որք առ աչաւք ասեն զՔրիստոս երեւեալ յաշխարհի. եւ Սոփրոնացիք, /47b/ որք առանց մարդկային շնչոյ ասեն զմարմնաւորութիւնն Քրիստոսի: Եւ տիքիանոսք՝ որք յերկնից բերեալ ասեն զմարմինն Քրիստոսի, եւ ոչ առեալ ի կուսէն:

ԳՐԱՏԻԱՆՈՍ՝ ամս հինգ. առ սովաւ Եպիփան եպիսկոպոս Կիպրացոց՝ ի Կոստանդին քաղաքի, որ զպարունակական խաւսս գրեաց՝ ի խնդրոյ Մատադիոսի, եւ Տարասինոսի, եւ Նեովնի, Նումերոսի քահանայից Սուեդրայ Պամփիլոցոց քաղաքին եւ Պաղադայ քաղաքապետի, յորում ցուցանէ գրոց վկայութեամբ, թէ Պաղազայ քաղաքապետի: Յորում ցուցանէ գրոց վկայութեամբ, թէ զիս՝ ընդ արժան է հաւատալ յամենասուրբ Երրորդութիւնն, յայտնելով զութսուն աղանդոցն անուանս, որ յառաջ քան զՔրիստոսի մարմնանալն, եւ վաթսուն՝ որ ի գալստենէն մինչեւ ի Գրատիանոս թագաւոր: Եւ վասն լուծանելոյ զհերձուածողացն բանս ի խնդրոյ որ ի սուրբ Գրոց. եւ վասն աշխարհարարութեան, եւ թուոյ նախահարցն, եւ ազգաց եւ թագաւորաց՝ մինչեւ ի ժամանակս իւր. եւ վասն յարութեան համարէն մարմնոց, եւ վասն հեթանոսական պաշտամանցն, եւ լուծումն ի հին եւ ի նոր կտակարանաց, զոր կարծեալ ոմանց անկատարի միտս ունելոյ. եւ վասն ուսուցանելոյ հաւատեցելոց՝ զկատարեալ հաւատոցն դաւանութիւնս. եւ վասն Քրիստոսի մարմնանալոյն:

ԹԵՈՂՆՍ ՄԵԾ՝ որդի Գրատիանոսի՝ ամս հնգետասան: Ի սորա երրորդ ամին եղև ժողովն ի Կոստանդնուպոլսի հարիւր յիսուն եպիսկոպոսաց՝ վասն Մակեդովնի հոգեմարտի, որ նուազ ասէր զՀոգին Սուրբ քան զՀայր եւ զՈրդի. եւ էր նա մեռեալ յառաջ քան զժողովոյն գումարիլ. յետ որոյ Դիտոյփի/48a/րոս Արիանոս ունէր զեպիսկոպոսութիւն Կոստանդնուպալսի՝ զոր հանէր ի քաղաքէն Թեոդոս թագաւոր եւ տայր զտեղապահութիւնն Գրիգորի Աստուածաբանի մինչեւ ցհաւաքել ժողովոյն, զի էր յառաջագոյն եկեալ ի Կոստանդնուպոլիս՝ վասն Արիանոսաց հերձուածոյն, այր սքանչելի հրշտակաց եւ մարդկան. որ եւ ի վարդապետելն իւրում՝ հիացում առնէր ամենայն քաղաքաց իմաստնոցն. յոր ոչ կարէին հայիլ Արիանոսքն: Եւ եին զլիաւորք ժողովելեացն Կիւրդիոս՝ Երուսաղեմի, Տիմոթեոս Անտոսաց՝ Աղեքսանդրի, Մեղիտոս՝ Անտիոքայ, Գրիգոր՝ Նիւեսայ, Գեղասեոս՝ Կեսարեայ Պաղեստինացոց, Դամասոս՝ Հռովմայ, Գրիգոր աստուածաբան՝ Կոստանդնուպոլսի. զորոյ այթոռ ընկալաւ Նեկտառիոս, ձեռնադրեալ ի ժողովոյն:

Յետ որոյ լինի փոխանորդ նորին Յովհան անուանեալն Ոսկերերան: Եւ սահմանեալ սրբոյ ժողովոյն զդաւանութիւն հաւատոցն, քարոզեցին զկենդանարար զամենասուրբ Հոգին հաւասարապէս եւ փառակից, եւ համագոյական Հայր եւ Որդոյ. եւ նգովեցին զՄակեդովն՝ յետ մահուն իւրոյ՝ մեռեալս ընդ ամենայն հերձուածոս: Եւ ի սոյն ժամանակս յարեան մանգունքն՝ որ յԵփեսոս, վասն հերձուածոյն՝ որ էր ի ժամանակին, որք ոչն հաւատացին յարութեանն. զի վասն նորին ուժգին ճգնութեամբ խնդրեալ յԱստուծոյ Թեոդոսի թագաւորին, յարեան մանգունքն: Եւ եկեալ թագաւորին ետես գնոսա, եւ բազում ինչ խաւսեցան ընդ նմա. եւ դարձեալ ննջեցին: Եւ յառաջ քան զԹեոդոս թագաւոր եղէն ժո/48b/դովք վեց յԱրիանոսաց ի տեղիս տեղիս՝ միասնական հաւատոյ, զորս ոչ ընդունի եկեղեցի. առաջին՝ ի Տաւրոս. երկրորդ՝ յԱնտիոք. երրորդ՝ ի Սեղեկիայ. չորրորդ՝ ի Կոստանդնուպալիս, առ Եդոքսիւ Արիանոսացն հայրապետաւ. հինգերորդ՝ ի Նիս Թրակացոց. Վեցերորդ՝ ի Սերմին:

ԱՐԿԱԴԻՈՍ եւ ՈՆՈՐԻՍ որդիքն Թեոդոսի՝ ամս քառասուն եւ չորս: Ի սոցա երրորդ ամին եղեալ Եւթաղ երանելի Աղեքսանդրացի, որ հրաշագան յաւրինուածովք զսուրբն առաքելոյ, եւ զԳործոցն առաքելոց եւ զԿաթողիկէից թղթոցն զյառաջաբանս եւ զգլուխս, եւ զմասնաւորս, եւ զվկայութիւնս եւ զտունս կարգեաց՝ սակս հերձուածոյն Կաղարբոսի եւ Կարպոկրատեայ, որք սոսկ մարդ ասացին զՅիսուս եւ զհին կտակարանս ոչ ընդունին. զի զվկայութիւնն Քրիստոսի խոտեին:

6

ԹԵՈՂՆՍ ՓՈՔՐ՝ որդի Արկադեայ՝ ամս երեսուն եւ եւթն: Սա ի ծնէ թագաւորեաց ամս յիսուն եւ երկու: Ի սորա ւուրս էր Սուրբ Սահակ՝ Հայոց հայրապետ՝ յորոյ ւուրս դպրութիւն հայերէն լեզուի քսան եւ ինն գրով ի Դանիելէ փիղիսոփայէ Ասորոց կարգեցաւ. զոր ետ բերել Վռամշապուհ թագաւոր Վախրճաց նախարարի՝ ձեռամբ Հաբելի երիցոս: Իսկ զեւթն գրոյն պակասութիւն Մեսրովք ե[ր]յանելի, ի Հացեկաց Տարանոյ, յաղատ տանէ, ամսաւրեայ պահաւք եւ աղաւթիւք՝ հանդերձ աշակերտաւքն հայցեալ յԱստուծոյ, եւ ցուցաւ նմա ի տեսլեան: Այս լինէր յԱսորոց աշխարհին՝ յորժամ վասն նորին անդ ճանապարհորդեցին: Իսկ զցուցեալ նշանեցան՝ հանդերձ միայարաւքն էր գրեալ Խոռո/60a/փանոսի գրչի Սամոսացոյ:

Եւ էր հերձուած ի ժամանակին յայնմիկ Դեոդորի Տարսոնացոյ եւ Թեոդորի Մամստացոյ, եւ Նեստորի Անտիոքացոյ. քանզի Դեոդոր էր աշակերտ Պաղոսի Մամստացոյ. եւ շնորհիւ որդի ասէ. զի Մարեմայն ծնեալ. իսկ բնութեամբ որդի զԱստուածն Բան, եւ մկրտութեան արժանաւորեցաւ ի Մարիամայն մարդ ծնանիլ աւծանիլ հոգւոյն, եւ լինէր տաճար բանին Աստուծոյ: Իսկ Թեոդորոս Մամստացի, աշակերտ Դիոդորի, Ոչ Աստուածն բան ծնանի ի Մարիամայ, այդ մարդ սոսկ ի կնոջէ ծնեալ. եւ վասն ազնուական գոլոյ եւ հաճելոյ նմայ Աստուծոյ Բանն բնակեաց ի նմա: Վասն այնորիկ ճգնէր առ հոգեկանս, զի հնազանդեցու[ս]ցէ զախտսն մարմնականս, եւ արժանի լիցի կոչել որդի Աստուծոյ: Իսկ Նեստոր Անտիոքացի, եպիսկոպոս Կոստանդնուպաղսի, աշակերտ Պաղոսի Մամուեստացոյ՝ ուսեալ զբնախաւսութիւնսն Դեոդորի Տարսոնացոյ, ասէ. Ոչ ուրեք իշխեցին ասել Հարքն, թէ Աստուածն Բան ծնաւ ի կուսէն. այդ առ ի նշանակ զանւանսն, որ ցուցանեն զբնութիւնս երկուս. քանզի Քրիստոսն, եւ որդին, եւ տէրն՝ երբեմն զաստուածութիւնն զեկուցանեն, եւ երբեմն զմարդկութիւնն, իսկ երբեմն զերկուն: Եւ ոչ դարձեալ այդ որդի, եւ այդ միւս. այդ ինքն որդի է ըստ բնութեանցն կրկնակի. քանզի բնութեանցն ընտանի կարգաւորութեան համենայն ժամ մնացելոյ, իսկ արժանաւորութեամբ՝ շարայարեալ առ աստուածութիւնն միական: Եւ այդ անթիւ նորա հայհոյութիւնք՝ որ յաղագս երկուց բնութեանց. /60b/ քանզի ոչ խոստովանի զԲանն Աստուած մարմնով երեւեալ, այդ ի մարդ բնակեալ: Քանզի բնակութիւն ընգալաւ, ասէ, Բանն Աստուած՝ զմարդկութիւնն. եւ այսպէս ուսուցանէր զամբարշտութիւնն հակառակ ողջամիտ վարդապետութեանն: Չոր գիտեցեալ Կիւրդի եպիսկոպոսի Աղեքսանդրի, գրէ երիցս անգամ առ Նաստոր՝ դառնալ ի հայհոյութեանցն. եւ միաբանել կաթողիկէ եկեղեցեաց՝ վասն խոստովանութեան: Իսկ Նաստոր՝ զ[ը]նդդէմ հակառակսն առնէր նմա պատասխանիս: Վասն որոյ հարկաւորի երանելին Կիւրեղ՝ գրել առ թագաւորն, զի տացէ հրաման ժողովելոյ. եւ նորա հրամայեալ՝ ժողովեցան յԵփեսոս մետասան ամի թագաւորութեան նորայ եպիսկոպոսք, որոց էին գլխաւորք Յոբնաղիոս Երուսաղէմի, Կիւրդիոս Աղեքսանդրի, որ էր գլուխ իսկ ժողովոյն. Մեմնոս Եփեսոսի, Յովհաննէս Անտիոքոյ, Պաղոս Էմեսիոյ, Թեոդոտոս Անկիւրեայ, Ակակիոս Մեդիտինէ, Պրակղոս Կիւրդիկիայ, Կեղեստիանոս Հռովմայ, Նեստոր Կոստանդնուպաղսի: Եթ ժողովեալք նգովեցին զՆեստովր, բայց ի Յովաննէ Անտիոքացոյ եւ որոց ընդ նմա եպիսկոպոսք երեսուն. զորս հրապուրեալ Նեստորի՝ ասէր լինել յուղիղ հաւատս. եւ զԿիւրեղ Աղեքսանդրի հայրապետն սողոսկեալ յԱպողինարի հայհոյութիւնն, վասն զմի բնութիւն բանին Աստուծոյ խոստովանել: Եւ եղեւ պատառումն արեւելեացն ի Կիւրդէ՝ որոց ընդ նմա եպիսկոպոսք. մինչէւ ճշմարտութիւն իրացն ծանուցաւ առ թագաւորին: Որպէս ունի յաղագս այս/61a/որիկ անսուտ յիշատակարանացն պատմութիւն, ըստ հրամանի թագաւորին հալածական առնել զՆաստոր ի կողմանս Մծբնացոց, որոց յարեցաւ ի Խուժաստան յարեւելս. իսկ Կիւրեղ Աղեքսանդրի հայրապետն ծանուցանէ Յովհաննէս Անտիոքայ եպիսկոպոսի զամբարշտութիւնն Նեստովրի. եւ առաքեն արեւելեայքն զՊաղոս [Մա]մստացոց եպիսկոպոսն առ Կիւրեղ ի խաղաղութիւն. եւ եղեւ միաբանութիւն Անտիոքացոցն եւ Աղեքսանդրացոց: Իսկ յետ լուծման Նեստորի կալաւ զաթոռ հայրապետութեանն Մաքսիմիանոս ոմն՝ ամս երիս: Յետ որոյ Պրոկղ Կիւրդիկեայ եպիսկոպոս՝ հայրապետ եղեւ ի Կոստանդնուպաղսիս: Յետ որոյ Փղաբիանոս կալաւ զաթոռ հայրապետութեանն. եւ սկսաւ ուսուցանել զՆաստորի հայհոյութիւնն: Իսկ Եւտիքէս ոմն, վանական ի Կու կղզոջ, առագրէր ընդդիմակս Փղաբիանոսի գլուխս ութ, մի բնութիւն ասելով: Քանզի ոչ խոստովանի զԲանն Աստուած առնուլ մարմին ի սրբոյ

կուսէն եւ լինել մարդ. այդ ասէ՝ Ոչինչ էառ ի կուսէն Մարիամայ, բայց միոչ խոստովանի զԲանն Աստուած առնուլ մարմին ի սուրբ կուսէն եւ այն նմանութիւն մարդոյ. եւ կերպարանաւք գտեալ իբրեւ զմարդ եւ ոչ ճշմարտութեամբ: Եւ ժողովեալ Փղաբիանոսի զեպիսկոպոսս զհամախոռնս՝ եւ լուծանէ զԵւտիքէս: Եւ գիտացեալ զհակառակութիւնս նոցա երանելին Թեոդոս, հրամայէ՝ կրկին անգամ ժողով լինել յԵփեսոս, ի քսան եւ հինգ ամի թագաւորութեանն իւրոյ, եւ քննել յաղագս Փղաբիանոսի եւ Եւտիքոսի, եւ տեսանել զտոմարն Ղեւովնի, զչորեքտասան գլուխսն զրեալս առ Փղաբիանոս՝ վասն Եւտիքոսի մոլորու/61b/թեանն, յորում երկու բնութիւնս խոստովանի մարմնացելոյ Բանին Աստուծոյ, եւ երկուս կերպարանս, եւ երկուս ներգործութիւնս: Եւ ըստ Նստորի՝ տուն Բանին Աստուծոյ խոստովանի զկուսածին մարդն: Եւ յետ ծնանելոյ կուսին՝ ապա ասէ զԲանն Աստուծոյ բնակիլ ի մարդն. քանզի ասէ այսպէս յերկոտասաներորդ գլխի իւրոյ հայհոյութեանն. Եւ որդի մարդոյ ասի վայրեկեալն յերկնուստ, յորժամ որդին Աստուծոյ զմարմին անդուստ ի կուսէն, յորժամ ծնան, ապա առընգալաւ: Եւ սոսկ մարդ ասէ չարչարեալ եւ մեռեալ: Եւ ժողովեցան եպիսկոպոսք երկերիւր, Յոբնաղիոս Երուսաղէմի, Դիոսկուրոս Աղեքսանդրի, որ եւ զգլխաւորութիւն ժողովոյն հաւատացաւ ի թագաւորէն. Դոմնոս Անտիոքայ՝ համախոռն Նստորի, Յոհան Եգեացոց, աշակերտ Նստորի. Իբաս Եդեսացոց, որ զթութն գրեաց առ Մարմին, յորում գովէ զՆստորի հայհոյութիւնն, եւ ամբարշտութիւն ասէ զԿիւրդի խոստովանութիւնն. Թեոդորիտոս Կուրայ քաղաքի, աշակերտակից Յովհաննու Եգեացոյ՝ Նստորի մոլորութեանն, հակառակ Կիւրդի Աղեքսանդրացոյ. վասն որոյ դիմադրութիւնս արարեալ՝ երկոտասան գլուխս առ Կիւրդի, երկոտասան նգովս կարգեաց. եւ ըստ Թեոդորոսի Մամուեստացոյ՝ հաճութեամբն՝ ասէ՝ բնակել ի մարդն զԱստուածն Բան: Քանզի յերրորդ գլխի՝ իւրոյ հայհոյութեանն ասէ. Ոչ ի կուսէ ծնեալ էր Աստուծոյ կերպարան, այդ տաճար էր, բնակիչ ունելով ըստ Պաւղոսի ձայնին. Քանզի ի նմա հաճեցաւ, ասէ, ամենայն լրումն աստուածութեանն բնակել: Եւ յերկոտասաներորդ գլխին ասէ իսկ՝ պիտի հաւա/62a/նել տեսոն ցուցողին զերկուս բնութիւնս, եւ ասողին Հրեիցն. Լուծէք զտաճարս զայս, եւ զերիս աւուրս կանգնեմ զսա. քանզի ցուցանէ լուծեալ զտաճարն, եւ զկանգնիչն Աստուած: Ուրեմն՝ ոչ Աստուած չարչարեալն, այդ ի մէնջ յԱստուծոյ եղեալ մարդն: Ղեւոն Հռովմայ, զորմէ ասէ ոչ զոլ ի ժողովն, այդ փոխանակ իւր առաքեալ՝ տա[յ] բերել զգիրս հայհոյութեանն չորեքտասան գլխոյն Եւսեբի Դորեւդու. Փղաբիանոս Կոստանդնուպալոսի: Եւ ժողովեալք սահմանեցին զըստ հարցն խոստովանութիւն, զնշանակ հաւատոցն կնքեալ՝ մի բնութիւն մարմնացելոյ բանին Աստուծոյ. խոստովանեալ ճշմարիտ մարդ լինել ի սուրբ կուսէն Բանն Աստուած ասացին: Իսկ Եւտիքէս խոստովանեալ զյանցանս իւր, նգովէր զաղանդն, եւ զիր խոստովանութեան մատուցանէր ժողովոյն, որ ասի Ղեւաբեղովն. եւ ըստ հրամանի կանոնաց ընկալեալ եղեւ. իսկ յետոյ ի նոյն հայհոյութեան աղանդ դարձաւ: Իսկ համախոռնք եւ հաւանեալք Նստորի ոչ դարձան յիւրեանց հայհոյութեանցն, զորս նգովեաց սուրբ ժողովն, ասելով. Որ ոք ասիցէ ի Քրիստոս երկուս բնութիւնս՝ նգովեալ եղիցի:

Յայնժամ երանելին Դիոսկուրոս՝ լուծանէր ի պատուոյ զհաւանեալս Նստորի, զՓղաբիանոս եւ զպաղատանն եպիսկոպոս. որ բարկութեամբ հարեալ յետ եւթն աւուր սատակէր ի կենացս: Եւ զտոմարն Ղեւոնի նգովէր հանդերձ ժողովեցելով ընդ ինքեամբ եպիսկոպոսաւքն, իբրեւ զՆստորի հայհոյութիւնն: Լուծանէր եւ զԹեոդիտոս Կիւրոս քաղաքի եպիսկոպոս, եւ զԻբաս /62b/ Եդեսեայ եպիսկոպոս, զՅոհան

Եղեացուց եպիսկոպոս եւ գ՛ոմնոս Անտիոքայ եպիսկոպոս եւ փոխանակ նորա ձեռնադրէր եպիսկոպոս ՝ ի ժողովին ՝ զՄաքսիմոս: Եւ եղեւ խաղաղութին յաւուրս Թեոդոսի թագաւորի՝ եկեղեցեաց՝ ամս յիսուն եւ երկու:

ՄԱՐԿԻԱՆՈՍ՝ ամս եւթն: Սա յերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ հրամայեաց լինել ժողով ի Քաղկեդովն, մայրաքաղաքն Բիթանացուց. քինախնդիր եղեալ լուծմանն Նե[ս] տորի, եւ նորին համախոխ եպիսկոպոսացն. զի էր ինքն նորին աղանդոյ առաւել եւս վարժեալ, յաղագս գումարելոյ ժողովին ի Պողքերէ զիւղակցէ իւրմէ, որ էր քոյր թագաւորին Թեոդոսի, եւ սիրելի Փղաբիանոսի: Առաւել եւս յորդորէր ի ժողովոյն գումարութիւն աղանդակից Նստորի խոստովանութեանցն Ղեւոն Հռովմայ հայրապետն: Եւ հրաման ետ թագաւորն դարձուցանել զՆստոր, զի կենդանի էր ի կողմանս Խուժաստանի, զի տացէ ընդունել զնա ի ժողովն: Իսկ ի դառնալն Նստորի բարկութիւն Աստուծոյ հասանէր ի վերայ նորայ. եւ հեղաւ որովայն նորա, որպէս զՅուդային եւ զԱրիոսին. եւ այսպէս սատակէր ի կենացս: Իսկ ժողովեալքն ի Քաղկեդովն էին վեցհարէր երեսուն եւ վեց եպիսկոպոսք. Յորնաղիոս Երուսաղէմի, Դիոսկուրոս Աղեքսանդրի, Մաքսիմէոս Անտիոքայ, Ստեփաննոս Եփեսոսի, Ղեւոն Հռովմայ, Եւսեբի Դորեդու, Անատողիս Կոստանդնուպաւոսի: Իսկ Ղեւոն Հռովմայ հայրապետն ոչ եկն ի ժողովն. բայց ետ բերել զգիրսն առ թագաւորն չորեքտասան զլիտյն, զյառաջագոյն գրեալն առ Փղաբիանոս, զի հաւանեցին այնմ /63a/ ժողովեալքն ի Քաղկեդովնի: Չոր խոտեալ Դիոսկուրոսի եւ ժողովոյն որ յԵփեսոսի երկերիւր եպիսկոպոսաց: Եւ առեալ թագաւորին զգիրսն Ղեւովնի՝ ընզալաւ, եւ ետ զատուցանել ի միաբանութենէ եպիսկոպոսացն զերանելին Դիոսկուրոս. եւ խնդրեաց ի ժողովոյն՝ սահման հաւատոյ, ըստ գրեցելոյն ի Ղեւովնէ հայհոյութեանցն: Իսկ ուղղափառ իշխանքն՝ որ էին ի ժողովին, ասացին առ եպիսկոպոսն. Այս է ժամանակ ճգնելոյ ձեր ի վերայ հաւատոց, զի հաստատուն ունիցիք զաւանդութիւն հարցն խոստովանութեան. եւ եպիսկոպոսքն միաբան ասացին. Ոչ ումեք է իշխանութիւն՝ ըստ հրամանի կանոնաց դնել սահման հաւատոց. զի բաւական է մեզ եղեալ Նիկիայ եւ Կոստանդնուպաւոսի: Յայնժամ հրամայեաց թագաւորն, զմիաբանեալ եպիսկոպոսսն հանդերձ իշխանաւքն՝ տալ ի պահեստ, եւ գումարել ի վերայ նոցա զինազգեստ զաւրականս. զի եթէ ոչ հնազանդեցին կամաց թագաւորին, եղիցին պատուհասեալք: Եւ մեծաւ երկիւղի ահաբեկեալ եպիսկոպոսացն՝ էին ի տարակուսանս, թէ զիա՛րդ հնար իցէ զերծանել ի պատժոց: Յայնժամ Յորնաղիոս Երուսաղէմի եպիսկոպոս հրամայեաց Ասկղիպադէայ Սարկաւագի Կոստանդնուպաւոսի առնուլ զսահման հաւատոյ եւ դնել ի նմա յերկուս բնութեանց զմին խոստովանել. որում առ երկիւղի հնազանդեալ եպիսկոպոսացն, զի թերեւս հնար լիցի այնու զերծանել: Ետուն զգիրն առ թագաւորն. իսկ թագաւորն ոչ ընկալաւ, այդ ետ տանել առ նոսա զգիր հայհոյութեանն Ղեւովնի: Չոր ընթերցեալ մասն ինչ ի զլիտյն, միաբան /63b/ ասացին եպիսկոպոսքն. Այսոցիք ոչ հաւանիմք, զի Պաւղոսի Մամստացույ հայհոյութիւն է. այսպէս եւ ոչ Նստոր յանդգնեցաւ հայհոյել: Յայնժամ թագաւորն՝ զիւզակցաւ իւրով Պողքերաւ հանդերձ՝ եկն առ նոսա յաւուրս երիս: Իսկ ժողովեալքն ի Քաղկեդովն՝ ոմանք յերկիւղէ, եւ այդք ակնառութեամբ թագաւորին եւ կնոջ նորա՝ եղեն հաւանեալք պիղծ նորաձայնութեան թղթոյն Ղեւովնի հայհոյութեանն. զոր նզովեցին յառաջագոյն, եւ եղեն ընդ ինքեանց նզովիւք: Ընզալան եւ զլուծեալն Թեոդորիտոս՝ զՆստորի զաշակերտն, զորմէ ասի՝ զլուխ կալ ժողովոյն. եւ զԻբաս Եղեսեայ եպիսկոպոսն՝ զհամախոխ Նստորի: Եւ գրեցին սահման հաւատոյ ըստ Ղեւոնի՝ եւ ըստ Թեոդորիտեայ մոլորութեանն, որ հաւասարի Նստորի պղծի եւ

Պալատի, եւ Արտիմոնի կատարեալ հայեցողութեանն. յորում կայ յետ սակաւուց. Այսպէս խոստովանիմք միաբան ամենեքին զտէր մեր Յիսուս Քրիստոս՝ ըստ աստուածութեանն ի հաւրէ, ըստ մարդկութեանն ի կուսէն, միածին յերկուց բնութեանց. ոչինչ բառնալով զբնութեանցն զանազանութիւն՝ վասն միանալոյ, այդ առաւել ողջ պահելով զյատկութիւն իւրաքանչիւր բնութեանն. եւ ի մի դէմ, եւ ի մի անձն միաւորելով: Եւ զի մի՝ իւրեանց ամբարշտութիւնն յայտնապէս երեւեցի, զՆստոր պատճառանաւք նգովէն: Իսկ բազումք ի գլխաւորաց քաղաքին Կոստանդնուպալիսի, որք Նստորի հաւանեալք էին, իբրեւ լուսն զնգովսն որ զՆստորէ, զարմացեալք առաջի թագաւորին, որպէս ի /64a/ նոցունց իսկ Քաղկեդոնացւոցն ցուցանի պատմութիւնս, ասեն. Սուրբք ընդէ՞ր նգովին. զի եթէ հաւատ զՆստորին հաստատեցին, զնա ընդէ՞ր նգովեցին: Իսկ թագաւորն բարկացեալ սաստեաց նոցա, զի լռեցեն: Այսպէս նոցունց իսկ յայտնեալ կեղծաւորութիւն նոցա՝ ծանուցաւ ամենեցուն, ուր եւս առաւելագունիւք յայտնի է ուրացութիւն նոցա: Չի որք ի Քաղկեդոնի ժողովեալ էին եպիսկոպոսք, նոյնք յԵփեսոսի ժողովսն գրով սահմանեալ ասացին. Որ ոք ասէ ի Քրիստոս երկու բնութիւն՝ նգովեալ եղիցին: Եւ լուծին ի պատուոյ զՆստոր եւ զնմանիս նորա: Իսկ ի Քաղկեդոնի՝ կործանեալք յերկիրդէ, եւ ձեռագրով զՔրիստոս ուրացեալ ասացին. Որ ոք ոչ ասիցէ՝ զՔրիստոս երկու բնութիւնս՝ նգովեալ եղիցի: Եւ ընգալան ի պատիւ զհաւանեալսն Նստորի եւ զաշակերտսն: Իսկ որք ոչ հաւանեցան՝ կործանական ժողովոյն հայեցողութեանց եւ անարեւն սահմանադրութեանն, զնոսայ արքայեցին. զՊետրոս Անտիոքացի, եւ զՏիմոթէոս, եւ զԱնատոլիս նորին եղբայր, եւ զԴիոսկուրոս Աղեքսանդրի եպիսկոպոս նախ ի Կիւզիկոն արքայեցին, ապա յԵրակղիայ, ապա ի Պափղագովնիայ. եւ անդ կատարեցաւ բարի վկայութեամբ եւ խոստովանութեամբ ի Քրիստոս:

Իսկ յետ արքայելոյն զԴիոսկուրոս, զՊոտտէ հրամանաւ Մարկիանոսի ձեռնադրեցին եպիսկոպոս ի ժողովին Քաղկեդոնի, փոխանակ Դիոսկուրոսի. եւ առաքեաց թագաւորն յԱղեքսանդրիա: Չոր ոչ ընգալեալ քաղաքին, բազում արարատութիւնս ընչից առնէին. եւ հոշտանգանս զանից եւ տանջանաց, եւ հեղմունս արեան ընգալան ի թագաւորէն՝ վասն չընդունելոյ /64b/ զՊոտտէր եպիսկոպոս քաղաքին, եւ չհաղորդել ընդ նմայ: Սակայն մինչ ի սպառ ոչ կացին ի ճշմարտութեան, այդ եղեն բաժանեալք յերկուս: Կէս քաղաքին ընկալան զՊոտտէր եպիսկոպոս, եւ եղեն հաւանեալք աղանդոյն Քաղկեդոնի. եւ կէս քաղաքին յուղղափառութեան կացեալ ոչ հաւանեցան նմա: Եւ յետ սակաւ ատուրց, ի սենեկի՝ յորոցս անկողնի գահոյից՝ հարեալ բարկութեամբ յաստուծոյ, ի նմին զիշերի սատակեցաւ: Յետ որոյ յաջորդէ զարոճ եպիսկոպոսութեանն Տիմոթէոս երանելի. եւ հաստատէր յուղղափառութեան հաւատս զկործանեալսն ի Պոտտորայ:

ՂԵՎՈՎՆ ՄԵԾ՝ ամս իննետասան: Ի սորա երրորդ ամին՝ Տիմոթէոս եւ Անատոլի, նորին եղբայր, յափշտակեալ ի Սիդակոսէ՝ արքայեցան ի Քերսովն, վասն չընդունելոյ զսահման Քաղկեդոնի ժողովոյն. եւ ի նորին իններորդ ամին նշան երեւեցաւ յերկինս, սին ամպոյ՝ փողոյ նմանութեամբ երեւեալ յաւուրս քառասուն, եւ յետ սակաւ ատուրց ի վաղանդացւոցն արեւմտեայ զարացն սաստիկ կոտորուած եղէ: Իսկ յետ արքայելոյն Տիմոթէայ, միւս Տիմոթէոս յաջորդեցաւ, որ անուանեցան Փուսա. եւ յետ նորա Պետրոս, յորմէ Ակակ, Կոստանդնուպալիսի եպիսկոպոս, խնդրեաց ի ծածուկ

ուսանել զգիտութիւն ուղղափառութեան հաւատոց. զի յառաջագոյն էր հաւանեալ աղանդոյն Քաղկեդոնի ժողովոյն. եւ տեղեկացեալ ի նմանէ՝ ուսաւ ի ձեռն հրովարտակացն՝ որ առ միմիանս, զի էր ի հալածանս երանելին Պետրոս. եւ էր ալեկոծումն՝ ի սուրբ եկեղեցիս Աստուծոյ՝ զամենայն աւուրս Մարկիանոսի եւ Ղեւոնի, ամս քսան եւ երեք:

/65a/ ՁԵՆՈՆ՝ ամս վեշտասան: Չսա աղաչեցին զգաստ եւ երկիւղած ծառայք Քրիստոսի, յորս եւ Ակակ Կոստանդնուպալոսի եպիսկոպոս, եւ այդ բազում եպիսկոպոսունք, զի բարձցի երկպառակութիւնք եւ խռովութիւնք եկեղեցեաց՝ որ վասն ժողովոյն Քաղկեդոնի: Եւ գրեաց թուրթ առ կողմանս Յունաց աշխարհին, որ կոչի Հենատիկովն, այս է միաւորիչ. եւ առ ամենայն կողմանս Հռոմվոց գրեաց, որ ունի զսահման ուղղափառութեան հաւատոյ, եւ նգովէ զժողովն Քաղկեդոնի, որք երկուս բնութիւնս ի մարմնացեալ Բանն Աստուած սահմանեցին. եւ եղև խաղաղութիւն եւ միաբանութիւն ամենայն եկեղեցեաց: Իսկ Հռոմայեցիքն ամբարտաւանեալք վասն իւրեանց նախնական հայեոյշին Ղեւոնի, զի էր սկզբնաւոր ժողովոյն Քաղկեդոնի, եւ արինադրող երկուց բնութեանց, մնացին ի նմին կործանմանն Քաղկեդոնի եւ ուրացութեանն Ղեւովնի. եւ ոչ համարեցան զուզիլ ի միաւորութիւն Ձենոնի ուղղափառութեանն. եւ ի նմին ամի եղև սաստիկ շարժումն ի Հռովմ, մինչև եւ նեխեցաւ երկիրն ի բազմութենէ դիակացն: Եւ ի նմին ամի՝ հրամանաւ թագաւորին՝ դարձաւ Տիմոթեոս յԱղեքսանդր, եւ յերկրորդ ամին վախճանեցաւ:

ԱՆԱՍՏԱՍ՝ ամս քսան եւ եւթն: Սա ի նմին միաւորութեան Ձենոնի զուղղափառութիւն հաստատեալ կարգեաց՝ յաղագս շարժեցեալ հերձուածոյն Քաղկեդոնի ժողովոյն սահման հաւատոյ, հանդերձ նգովիւք. եւ ի նորին աւուրս եղև հուր սաստիկ արտագոչ. աղաղակեցին առ Աստուած, եւ ապրեցաւ քաղաքն:

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ՝ ամս ինն: Սա դարձեալ նորոգեաց զաղմկեալ ժողովոյն նորոգաձեւութեան սահման՝ ի թագաւորաբնակ միայն քաղաքին, այդ ոչ յամենայն կողմանս Յունաց աշխարհին:

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ՝ ամս երեսուն եւ ինն: Ի սորա քսան եւ եւթն ամի վախճանեցաւ զիւզակից իւր. իսկ Յուստիանոս, յետ մահուան թագոհւոյն, որպէս թէ կամեցաւ աստուածային իմն արինաց խնդրող լինել, եղև աստուածամարտ: Չորոյ ձախողակի յորդորումն զիտեցեալ Բնդիդոս հայրապետն Հռովմայ, հրամայէ նմայ առնել ժողով, հաստատել զհայեոյթիւն Քաղկեդոնի ժողովոյն, եւ զուրացութիւն տումարին Ղեւոնի: Իսկ նորա հրամայեալ լինել ժողով ի Կոստանդնուպալ[ւ]ղիս, որ ասի հինգերորդ ժողով. եւ ետ հրաման, թէ եպիսկոպոս կամ հայրապետ՝ որ ոչ քարոզիցէ զժողովն Քաղկեդոնի՝ ընդ սուրբ ժողովս, ելցէ ի պատուոյ իւրմէ: Յայնժամ տէրն Անթիմոս՝ Կոստանդնուպալոսի եպիսկոպոս՝ բազում եպիսկոպոսաւք յանձն առնոյր լինել հալածական վասն ճշմարտութեանն. ընդ որս էր եւ Յուլիանէ եպիսկոպոս Աղիկառնասու Կիւպրացոց քաղաքի, որ ոչ հնազանդեցաւ պիղծ սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, զոր սահմանեաց պիղծ եւ ամբարիշտ թագաւորն Յուստիանոս, ժողովեցելովք եպիսկոպոսաւքն ի Կոստանդնուպալիս. որք կարգեցին զիւրեանց հայեոյթեանն գլուխս չորեքտասան, յորում յեւթներորդ գլխի հայեոյթիւնն ասէ, այսպէս. Եթէ ոք ասէ, յերկու ասելով՝ ոչ որպէս յաստուածութեան եւ ի մարդկութեան զմի տէր Յիսուս Քրիստոս ճանաչել խոստովանի. զի ի ձեռն /66a/

այստրիկ նշանակիցէ զգանազանութիւն բնութեանցն, յորոց անշփոթապէս անճառն եղել միաւորութիւն, ոչ Բանին առ ի մարմնոյն փոփոխեալ բնութիւն, եւ ոչ մարմնոյն՝ առ Բանին բնութիւն փոխադրեալ, քանզի մնայ յիրաքանչիւրսն. զոր արինակ է բնութեան եւ եղելոյ միաւորութեանն՝ ըստ անձնաւորութեանն. այդ յաղագս բաժանման՝ ըստ որոշման զայնպիսին ընդունի զձայն, սակս Քրիստոսին խորհրդոյ՝ զթիւ բնութեանցն խոստովանելով ի վերայ նորին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Աստուծոյ Բանին մարմնացելոյ. ոչ տեսութեամբ միայն զանազանութիւն բնութեանցս այսոցիկ առնու, յորս եւ շարադրեցաւ՝ ոչ բարձելոյ վասն միաւորութեանն. քանզի մի երկաքանչիւրոցն, եւ միով երկաքանչիւրքն. այդ յաղագս այստրիկ թուոյն, որպէս որոշեալս եւ յատկանձնապէս դու նութիւնս, այսպիսին եղիցի նգովեալ: Եւ որք ոչն հնազանդեցան հրամանի թագաւորին՝ ընդունել զաղմկեալ ժողովոյն սահմանադրութիւնս, եւ հաւանեալ նորոգածութեանն տաւնից եկեղեցական կարգաց, զոր հաստատեաց անարեւնն Յուստիանոս՝ ժողովեցելովքն ի Կոստանդնուպաղիս, ի հինգերորդ ժողովին. զար առաքեալ՝ հեղմունս արեանց արար ի տեղիս տեղիս: Եւ առաքեաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի փոխեցեն զարն քառասներորդ նուիրաւոր տաւնին ընծայման փրկչին մերոյ ի տաճարն, եւ արասցեն ըստ հրամանի թագաւորին. զոր եւ Երուսաղէմացոցն պատմութեան հաստատեալ կայ այսպէս. Մէք որ յԵրուսաղէմ բնակեալ եմք, զոր տեսաք սքանչելիս՝ պատմեմք ձեզ, որ ի Հայքդ էք: Ի յերեսներորդ երրորդ ամին Յուստ/66b/իանոսի սկսաւ սատանայ մարտնչել ընդ ճշմարտութեանն, եւ փոփոխեցին զսուրբ հաւատս. եւ այդայդեցին զկարգս արինաց եւ տաւնից, զոր ետ Յակովբոս եղբայրն Տեառն. քանզի մտեալ առաջի թագաւորին հրեալ ոմն հերետիկոս, զրգռեաց զթագաւորն վասն Տեառնընդառաջաց, թե չէ պարտ թոյդ տալ Երուսաղէմացոց արտաքոյ եկեղեցական կարգաց առնել զար Ծննդեան եւ զքառասներորդացն. այդ որպէս ամենայն երկիրս Հռոմոց տաւնէ, պարտ է նոցա տաւնել: Եւ թագաւորն ունկնդիր եղել. եւ վաղվաղակի գրէ թագաւորասաստ հրամանաւ առ Ոստոքոս հայրապետ քաղաքին. եւ առ ամենայն կղերս եկեղեցոյ, թե զՏեառնընդառաջն՝ ըստ Ծննդեանն արարէք, Փեբրուարի ամսոյ երկու: Յայնժամ՝ հայրապետն հանդերձ բնակչաւ քաղաքիս, պահաւք եւ աղաւթիւք, եւ յորդաբուղիս արտասուաւք գոչեցին առ Աստուած: Եւ յանկարծակի նշան երեւեալ առաջի սակերաց թագաւորին, որք զհրամանն կատարել եկեալ էին, սուրբ սինն՝ որ ի սուրբն Սիովն, ուր ամենայն բազմութիւնն եկեալ էին եւ ժողովեալ, ջուր բղիսեաց, առ ի խայտառակել զանարեւն հրաման թագաւորին: Եւ ամենեցուն տեսեալ՝ փառաւոր առնէին զԱստուած: Այս առ Ոստոքիւ եղել: Ապա դարձեալ առ Մակարաւ ի նմին աւուր տաւնին՝ յանկարծաւրեն՝ այդ զար սաստիկ առաքեաց թագաւորն, առ ի կատարել զչար խորհուրդն, սատակել զամենեսեան՝ որք ոչ կատարեն զհրաման թագաւորին: Յայնժամ լցեալ շնորհաւք Սուրբ Հոգւոյն բազմութիւն քաղաքիս, ետուն զանձինս ի մահ զաւրացն. /67a/ եւ կատարել զհրաման թագաւորին, արկանել ի սուր զքաղաքս: Ի սուրբ եկեղեցոցն Սիովն, ուր ժողովեալ էին յանկարծակի սքանչելի եւ ահագին այդ նշան երեւեալ. սուրբ կոյսն Մարիամ, ունելով ի գիրկս զՓրկիչն, տպաւորեցաւ ի նմին սեան. եւ ի վերայ աջոյն Տեառն՝ խաչ մի ծիրանի: Եւ տեսին առ հասարակ արդարք եւ մեղաւորք. եւ բազում բժշկութիւնք ախտաժեւտաց եղեն: Բայց առաջին նշան սքանչելեացն ի վերայ Հայոց եղել. զի կին մի սողուն՝ ի Մոկաց, Սողովմէ անուն նորա, քսան եւ չորք ամբ էին՝ զի կարկամեալ կայր, եւ լինել սքանչելեացն, առաջին նայ էառ զողորմութիւն: Եւ զաւրացն տեսեալ զսքանչելիսն, դարձան առ թագաւորն: Իսկ յետ մահու երանելոյն Մակարայ՝ Երուսաղէմացիք ընգալան զժողովն Քաղկեդոնի ի նոյն թագաւորին հրամանէ. եւ ի նորին երեսներորդ

եւ ի չորրորդ ամի կարգեցին Աղեքսանդրացիք զիննեւտասն չորեքտասաներորդն զատկաց՝ քսանեւութեակ շրջագայութեամբ ՇԼԲ ամաց բոլորակն. եւ ի նոյն թագաւորի քսաներորդ ամի՝ հայ թուականն կարգեցաւ:

ՅՈՒՍԻՄԱՆՈՍ՝ ամս ինն: Սա կամեր բառնալ զաղմուկ ժողովոյն Քաղկեդովնի. եւ բազումք երկբայեցուցանէին զթագաւորն, որք հայիոյիչ ժողովոյն հնազանդեալք, ասէին. Ո՞չ ումեքէ իշխանութիւն երկմիտս լինել վասն ժողովոյն Քաղկեդովնի՝ եթե ոչ էր ընդունելի. զի Սիմեւովն երանելի ձեռնարկ արարեալ է, եւ հաւանեալ սահմանադրութեան ժողովոյն. եւ ցարդ եւս պահի զգուշութեամբ ի ներք ի տապանակի սրբոյն Եփրեմիայ ի Քաղկեդովն, ուր ժողովն իսկ եղեւ: /67b/ Քանզի Սիմեւովնս այս եղեալ է միայնակեաց՝ յԱնտիոքացոց քաղաքին՝ հրաշալի եւ հոչակաւոր, եւ ընտանի սրբոյ հոգւոյն շնորհաց, որպէս զմի ոք ի տեսանողացն: Եւ ոմն ի մերձակայից իշխանացն մաւտաւորաց նախանձաւորեալ ուղղափառութեան հաւատոցն, ասէ ցթագաւորն. Եթե երանելոյն Սիմեւովնի ձեռնարկեալ է եւ հաւանեալ ժողովոյն Քաղկեդովնի, ես դառն չարչարանաւք ընգալայց զգրաւումն կենաց իմոց: Քանզի այսպէս ունի պատմութիւն անսուտ յիշատակարանաց մերոց. զի Թեոդորիտոս՝ Կիրոս քաղաքի եպիսկոպոս՝ հրամանով Մարկիանոսի թագաւորի առեալ զգիր հրամանի ժողովոյն, հասանի յԱնտիոք՝ առ սուրբն Սիմեւովն: Իսկ երանելոյն աստուածային ազդեցութեամբն զգացեալ զգալուստ նորա յառաջագոյն, հրամայէր սպասաւորին յարգելաւորութենէն զինքն ի խոնարհ իջուցանել: Ընդ որ յոյժ զարմացեալ սպասաւորին՝ թե զի՞նչ լինիցի այն. եւ յետ սակաւ ժամուց հասանէր Թեոդորիտոս ի դուրս խցկանն: Եւ ազդեն սպասաւորին զի ասասցէ սուրբ ծերոյն, թե ոմն ի թագաւորէն եկեալ խնդրէ տեսանել զքեզ: Իսկ սրբոյն պատասխանեալ ասաց, թե վասն նորին իջի ի տեղիս յայս. եւ հրամայէ ի ներքս թողուլ: Եւ մտեալ Թեոդորիտոս բազում բանիւք թախանձեցուցանէր, եւ աղաչէր՝ ձեռն արկանել եւ հաւանել առաջի կալեալ զսահմանին կանոնն: Իսկ նա քանզի ամենեւին ոչ երկնչէր ի մարդկանէ՝ յայնպիսի գործաւոյաց եւ ոչ ակն առնուլ զհտէր երեսաց. վաղվաղակի զգրեալսն յինքն առնոյր, եւ ի վառեալ հուրն ընդենոյր, ասելով. Նզովեալ Մարկիանոս, եւ նզովեալ ժողովքն, եւ նզովեալ որ հաւանին այնմ սահմանադրութեան: Եւ իսկոյն սպասաւորին հրամայէ հանել արտաքս: Եւ ոչ ինչ աւելի քան զայս գտցէ ոք, ո՞վ բարեպաշտ թագաւոր: Իսկ թագաւորն խորհրդակից եղեալ յինքեան աւուրս ինչ, յանկարծարէն միում աւուրց հրամայէ մակուկաչու ուղեգնացութեամբ՝ սակաւ արամբք՝ ի Քաղկեդովն ելանել. եւ մտեալ ի վկայարան սրբոյն Եփրեմիայ, ստիպէն զթագաւորն՝ բանալ զտապանակ ոսկերաց սրբոյն պահարանի: Իսկ նայ ասէ. Ո՞վ դուք, որ զայդ համարձակիք գործել: Եւ իմացեալ թե ինքն թագաւորն է, վաղվաղակի մեծաւ երկիւղի բանայ նմայ. եւ սփռեալ թագաւորն զքղամիտն որ զիրեւ, հրամայէ սպասաւորին ի վեր հանել. եւ ասէ ցսպասաւորն. Այդ ինչ գո՞յ ի ներքս: Եւ նայ ասէ. Ոչ: Եւ հայեցեալ թագաւորն, ինքն իսկ տեսանէ՝ զի այդ ինչ ոչ գոյր: Յոգոց հանէր, եւ ծածկէր զերեսս իւր ասելով. Որիա. ապաշաւելով զսուրբն եւ ողբալով զերանելի հովիւսն, որք յաղագս ճշմարիտ հաւատոյն հալածեցան եւ սպանան: Եւ խորհուրդ արարեալ՝ կամեցաւ բառնալ զսահման նորաձեւութեան ժողովոյն Քաղկեդովնի, եւ զվաղնջուցն յառաքելոցն եւ ի սրբոցն հաստատել զքարոզեալսն: Եւ իսկոյն հասեալ նմա մահ դաւողական, որպէս բազմաց բան է ասել, ի նմին մնաց յառաջագոյն /68b/ գործեցեալն: Եւ ի սորին աւուրս ձեռնադրեցաւ Աբդիշու եպիսկոպոս ի Ներսիսէ Հայոց Լաթողիկոսէ. եւ յետ սակաւուց ել եւ մարտիրոսացաւ ի Հայս սուրբն Յիզաբուղոս ի պարսիկ Մարգպանաց:

ՏԻԲԵՐ՝ ամս եւթն. առ սովաւ եղեւ ժողովն ի Կոստանդնուպաւղիս Հայոց եւ Հռովմոց՝ վասն սահմանին Քաղկեդովնի, յորում պատրեցան Հայք:

ՄԱԻՐԻԿ՝ ամս քսանեւերիս: Ի սորա աւուրս սպանին զՈրմիզդ Պարսից արքայ. եւ Խոսրով, որդի Որմզդի, փախստական եղեալ՝ անգաւ առ Մարիկ. եւ կնքեցաւ որդի նորա: Եւ յետ ժամանակի թագաւորեցոյց զԽոսրով Պարսից աշխարհին: Եւ ի նորին աւուրս եղեւ դարձեալ միւսանգամ ժողով Հայոց եւ Հռովմոց՝ վասն նորին աղանդոյն Քաղկեդովնի, ժողովին ի Կոստանդնուպաւղիս, եւ եղեն պարտեալ Հայք: Ի սորա յաւուրս բաժանեցին զերկիրս Հայոց Հռովմոց եւ Պարսից թագաւորքն. եւ երկու կաթողիկոսք նստան ի Հայս, Մովսէս ի Դուին Պարսից կողմանն, ուղիղ հաւատով, եւ Յովհանն ի Հռովմոց կողմանէ Քաղկեդովնի աղանդովն:

ՓՈԿԱՍ՝ ամս եւթն: Ի սորա աւուրս սկսաւ Խոսրով վրէժ խնդրել սպանմանն Մարկայ, յաղագս ուխտին՝ որ ի մէջ երկոցունց. եւ սրով եւ գերութեամբ ամս քսան եւ հինգ:

ՀԵՐԱԿՂ՝ ամս երեսուն եւ մի: Առ սովաւ առաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ ի զարացն Պարսից, յորում եկեղեցիք աւերեցան. եւ սուրբ խաչն գերեցաւ, եւ կտակարանք այրեցան: Սա յեւթն եւ ի տասն ամին իւրոյ սպան զԽոսրով եւ դարձոյց զսուրբ խաչն /69a/ եւ ինն եւ տասն ամին արար ժողով ի Թեոդոսուպաւղիս, որ այժմ ասի Կարնոյ քաղաք, բազում եպիսկոպոսաց, առ Եզրի կաթողիկոսի Հայոց, եւ Հռոմոց, եւ Ասորոց, յորում Հայք Քաղկեդոնիկք եղեն, եւ զժողովն ընգալան:

ԿՈՍՏԱՆԴԻՆ՝ ամս երիս: Ի սորա աւուրս տիրեցին Տաճիկք Ասորոց, եւ արկին ընդ հարկաւք զեկեղեցիս սուրբ քաղաքին Երուսաղէմի:

ԿՈՍՏԱՆԴԻՆ՝ որդի Կոստանդիանի, թոռն Հերակղի, ամս քսանեւինն: Ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց. եւ եղեւ համար գերելոցն ԼԵՌ: Ի սորա աւուրս եղեւ ժողով ի Հռովմ քաղաքի՝ հարեր տասն եպիսկոպոսաց, եւ մոնաղոնաց բազմաց, զոր արար Հռովմայ հայրապետն, որ ասէր ի վերայ Քրիստոսի երկու կամս եւ երկու ներգործութիւնս՝ ըստ երկուց բնութեանց. եւ գրեցին անափորայ առ թագաւորն, կոչեցեալ ի միաւորութիւն ինքեանց: Իսկ թագաւորն ոչ հաւանեցաւ Կոստանդնուպողսացւոյքն եւ Աղեքսանդրացւոյք եւ Փարանացւոյք՝ Հռովմայեցոցն. զի թեպէտ եւ զերկուս բնութիւնսն ըստ Քաղկեդովնացոցն խոստովանեցին, այդ ոչ ընգալան զաւելագոյն հայհոյութիւնն Հռովմայեցոց՝ երկու կամս, եւ երկու ներգործութիւնս ասել ի վերայ Քրիստոսի: Իսկ Հռովմայեցոցն հաստատեալ զիրեանց հայհոյութիւնն՝ նգովեցին զՍերգիս եւ զՊետրոս եւ զՊաւղոս Կոստանդնուպաւղսի եպիսկոպոսունս, եւ զԿիրոս՝ Աղեքսանդրի եպիսկոպոս, եւ զԹեոդորոս՝ Փարանայ եպիսկոպոս. եւ սփռեցան իւրաքանչիւր տեղիս: Եւ յետ սակաւ աւուրց առաքեցին Կոստանդնուպաւղսեցիքն ի Հռովմ, եւ ետուն ածել /69b/ կապանաւք զՄարտինոս Հռովմայ ի Կոստանդնուպաւղիս. եւ ձուլեալ բազում թշնամանաւք քսորեցին ի Բոսփորայ, եւ երկուս ոմանս ի Կոստանդնուպաւղսէ: Իսկ յետ սուղ ինչ ժամանակի երեւեցաւ Մաքսիմոս ոմն՝ փիղիսոփայ, միայնակեաց ի Կոստանդնուպաւղիս, նորին աղանդովն Մաքսիմոսի, որ երկուս կամս եւ երկու ներգործութիւնս ասէր ի վերայ Քրիստոսի: Եւ ըմբռնեալ զնա, բազում չարչարանաւք չարչարեցին հրամանաւ թագաւորին, ծայրատեցին զոտս եւ զձեռս եւ քսորեցին,

երկու ընկերաւքն յաշխարհն Ղաւոդիկեցոց, որք անդէն սատակեցան: Իսկ թագաւորն Կոստանդին նեղեալ ի Տաճկաց՝ գնաց զաւրաւքն ի Սիկեդայ, եւ անդ սպանաւ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ երրորդ՝ ամս չորեքտասան, ամիսս հինգ: Ի սորա աւուրս եղեւ ժողով ի Հռովմ առ Ագաթոնի հայրապետի հարերս եւ քսան եպիսկոպոսաց՝ առ ի քննութիւն Մարտինոսի հայհոյութեանն. որք ժողովեալք՝ զնոյն աղանդն հաստատեցին զՄարտինոսին եւ զՄաքսիմոսի մոլորութիւնն, երկու կամս եւ երկու ներգործութիւն ասելով ի վերայ Քրիստոսի: Եւ արարեալ անիփորայ առ թագաւորն Կոստանդին, աղաչեցին զի եղիցի միաւորութիւն Հռովմայեցոցն եւ Կոստանդնուպալսեցոցն: Եւ հաւանեալ թագաւորն՝ գրեաց առ ամենայն՝ կողմանս Յունաց եւ Հռոմովոց աշխարհին, զի եղիցին ժողով ի Կոստանդնուպալիս: Եւ ժողովեալք հարերս վաթսուն եւ հինգ եպիսկոպոսք, եւ միաբանեալք հաստատեցին զհայհոյութիւնն Մարտինոսի եւ Մաքսիմոսի. եւ զոսկերս պղծոյ հայհոյչին Մարտինոսի եւ Մաքսիմոսի հանեալ /70a/ նշխարիս, կարգեցին եւ գրեցին. կարգեցին նմա յիշատակարան՝ ընդ սուրբս լինել. եւ զԱնտիոքացիս նգովեցին, զի ոչ հաւանեցան նորաձայն աւելագրեալ հայհոյութեանն. եւ զՄակար Անտիոքոյ եպիսկոպոս եւ զՍտեփաննոս նորին աշակերտ, եւ զՂոդիքոնիոս միայնակեաց, զորս արքայեցին: Եւ որպէս ասի՝ բազումք մեռան որք ոչ հաւանեցան նորաձայն հայհոյութեանն Մարտինոսի եւ Մաքսիմոսի, զոր հաստատեաց նգովեալն Ագաթոն, Հռովմայ հայրապետն Հռովմայեցովք եւ Կոստանդնուպալսեցովք: Եւ հիմնադրեալ զհայհոյութիւն պղծոյն Ղեւոնի, շինեցին ի վերայ զաւելադրեալ ուրացութիւնն Մարտինոսի եւ Մաքսիմոսի, երկու բնութիւնս, եւ երկու կերպարանս, եւ երկու ներգործութիւնս եւ երկու կամս ի վերայ Քրիստոսի ասելով: Եւ գրով հաստատեալ զուրացութիւնսն՝ կարգեցին սահման հաւատոյ. եւ ասացին յետ ոչ բազում այսպէս. Երկու բնութիւնս երկու բնական ներգործութիւնս անբաժանելիս, անփոփոխելի, անմեկնելի, անշփոյթելի ի մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ճշմարիտ Աստուծոյ մերոյ փառաւորեմք. այսինքն է՝ աստուածային ներգործութիւն եւ մարդկային ներգործութիւն, ըստ աստուածապատումն Ղեւոնի հաստատագոյն ասելով. քանզի ներգործէ իւրաքանչիւր կերպարան ընգերին հաղորդութեամբ, զոր ինքեան ունէր ի միում անձնաւորութեան, զանազանութեամբ՝ զանազանութիւն ծանուցեալ. որ ըստ ընգերին հաղորդութեամբ իւրաքանչիւր բնութեանցն կամել եւ ներգործել զաւրութիւն ըստ ինքեան: Եւ երկու բնական կամս եւ ներգործու/70b/թիւն փառաւորեմք՝ առ ի փրկութիւն մարդկային ազ[գի՝ առ] միմեանս ընթանալով: Չայս այժմ ամենայն ուստեք ստուգութեամբ եւ ճշմարտութեամբ առ ի մէնջ տպաւորեալ, սահմանեմք՝ այդ հաւատ մի ումեք յառաջ բերել իշխել, կամ վարդապետել: Չայս հայհոյութիւն հաստատեցին եւ սփռեցին: Ի սորին աւուրս եղեւ շփոյթումն Տաճկաց՝ սաստիկ պատերազմաւ, եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք, ծառայեալ նոցա ամս երեսուն:

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ, որդի երրորդ Կոստանդինի, ամս երկուս: Ի սորայ առաջին ամին տիրեցին հիւսիւսային ազգն, որ ասին Հազիրք՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից. եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից, յամսեանն սահմի, որ ար տասն էր ամսոյն, ի ՃԼԴ թուականին Հայոց:

Մակն բացայայտութեան թուոց

1

Կամ եղև ինձ սակաւ ինձ աշխատասիրել սակն թուոց բացայայտութեան՝ ի բազմաց անտես եղեալ: Ո՛չ յաղագս անհասութեան կամ դժուարատեսութեան, այլ յաղագս անփոյթ առնելոյ՝ վարկպարագի համարելով զակտութիւն սոցայց տեսութեան: Եւ արդ մի՛ ոք կարծիցէ վարկպարագի /^{oo}/ զիւտ մտաց իմոց՝ անխորհրդաբար ի կիր առեալ թարց վկայութեանց գրոց սրբոց, այլ ունիմք պատճառ ի հին եւ ի նոր կտակարանաց, սակն այսոցիկ բացայայտութեանց: Եւ զի բարձրագոյն աստուածային գոն ծածկեալ խորհուրդք ի սմա. եւ այնչափ պայծառագոյնք, մինչ որք ի հեթանոսաց իմաստագոյնք էին, զսա կարծել գոլ բաղկացուցիչ նիւթական գոյիցս, մինչ ասել ոմանց՝ ի թուոյ գոյանալ զաշխարհս:

Այլ մեր թողեալ առ սուղ ինչ զիմաստս հեթանոսաց տեսութեան, նախ ի գրոց հոգեւորաց սկսցուք բացայայտել զայսոցիկ յարելոյս գիտութեան, եւ զկնի այսոցիկ զիմաստասիրացն շարայարել տեսութեան: Եւ արդ տեսցուք զոր ի գլուխս գրոց գրեաց վասն սոցա նախամարգարէն Մովսէս, զոր ի սկսման արարածոց նախ զսա առնու ի կիր արարչագործն, ո՛չ կարաւտանալ թուոյ աւուրցն գոյացուցանել զաշխարհս. այն, որոյ կամելն միայն գործ է կատարեալ, որ ի քթթել ական զբոլոր վերտառութիւն գոյիցս կարող գոյր ի միասին կացուցանել, այլ վասն մերոյ գիտութեան առնու ի կիր զաւուրցն շարադրութիւն, զի մի՛ շփոթեսցուք տգիտութեամբ անկարգաբար գոյանալ աշխարհի, այլ ի ձեռն թուոյ աւուրց գիտասցուք զգեղեցիկ կարգ արարածոց եւ նոքաւք ծանիցուք զհաստիչ սոցա: Որպէս ասէ սուրբն Գրիգոր, եթէ Ո՛չ միայն յառնելն էր փութացեալ զաշխարհս, այլ եւ ծանաւթ առնել զիւր Աստուածութիւնն եղելոց, զի մի՛ անգիտութեամբ արարչին կորիցեն արարածք: Քանզի զաշխարհս կարգեաց ի վարձս դպրութեան մարդկան, զի ի ձեռն կարդաց արարածոց ծանիցի արարիչն, որպէս /354a/ ասաց Դաւիթ, թէ Երկինք պատմեն զփառս Աստուծոյ: Ջի ոչ բանք իմաստնոց եւ ոչ խաւսք ճարտարաց կարող գոն այնքան պայծառագոյնս յայտնել զարարիչն, որպէս ծագումն լուսաւորացոյ ի ձայն բարձր հնչման քարոզեն ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի. լուրեամբ գովողք մեծ արարչութեան եւ պայծառ քարոզք: Ջի աւուրց եւ զիշերոց փոխատրութիւնք, մասամբ եւ յամաւք հեզաբար խառնելոյ առ միմեանս, արինաւք սիրելութեամբ եւ կարգաւ, բացակատարեն զբոլորակութիւն տարոյն՝ աւուրք, եւ շարաթուրք, եւ ամսոք, եւ չորք յեղանակաւք: Յորս բազում գոն խորհուրդք ծածկեալ. որպէս ասէ Առաքեալ, թէ Աներեւոյթ եւ ծածկեալ խորհուրդք Արարչին արարածովքս իմացեալ ճանաչի մշտնջենաւոր զաւրութիւն աստուածութեան նորա, զի ոչ գտանիցեն տալ պատասխանի վասն տգիտութեան, որ այսչափ ունէին վարդապետք եւ կարգեալ դպրութիւնք, առ ի կրթութիւն աստուածգիտութեան, զորս վերստին դարձեալ կարգեաց Աստուած դպրութիւն գրով ի ձեռն Մովսէսի, իբր մոռացելոց զառաջին դպրութիւնն. զի որպէս ի կրթարան դպրաց նախ զալֆավիտսն ուսանէին եւ ապա փոխադրեալ ի գրոցն հեզենայիւք վարին ի վարժս իմաստիցն շարաբերելով ընդ ինքեան եւ զգրոցն յարմարութիւն, որպէս նախ արարածովքս կարգեաց աստուած վերաբերիլ մարդկան աստուածայինն ամբառնալ տեսութիւն, իբր բնականաւք զգայութեամբք զգալիսս զննելով, տեսցուք իբր ի հայելոջ զարարիչ սոցա. եւ իբրեւ այսոքիւք ոչ ծանեան զարարիչն խաւարեալ եզիպտական բաջաղանաւքն յարարածս՝ զարարիչն իջուցանելով փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ յեղծանելի ուրուական

պատկերս, բոլորեալք հաւատոցն Աբրահամու, որ անգիր բնական իմաստիւք իսկապէս ծանուցեալ զաղբիւրն կենաց, արբին <ի> նմանէ զանմահութեան բաժակ գիտութեան եւ անտեսին տեսլեան արժանացան: Իսկ զխաւարեալ ժողովորդն, զոր աղարտէ Եսայի /354b/ զկուրութիւն նոցա, կրկին առնու ի ձեռն աստուած ուսուցանել, ո՛չ զբարձրագոյն իմաստս հաւատոցն Աբրահամու, այլ զտղայական ալֆավիտսն՝ որ է արարածոց գիտութիւն: Որպէս Առաքեալ ասէ, թէ մինչ տղայք էաք ընդ տարբեր աշխարհիս ի ծառայութեան կայաք, որք են ընթացք լուսաւորաց արեգական եւ լուսնի, որք յայտնեն մեզ զաւուրս, զշաբաթս, զամիսս եւ զտարիս. որպէս ասէ Դաւիթ թէ Արարեր զլուսին վասն ժամանակաց՝ որ ի մաշման եւ ի լրման ընդդէմ մեզ՝ զգիտութիւն մասանց, ժամուց եւ ժամանակաց ըստ կարգի յարկացուցանէ իբր ի հայելոջ: Չոր Փիլոն յակնայայտութենէ եւ ի ճշմարտութենէ գնոսա ասէ գոլ: Ջի լուսով արեգական յայտնեալ երեւին արարածք եւ լուսով ճշգրտեալ յայտնին արարչութիւնք շարադրութեան ժամանակաց: Չոր ի կիր առեալ Մովսէս գրով ի պատճառս տաւնից, զոր սիրէին նոքա կերակրաւք եւ ըմբելեաւք զուարճանալ նոցա. ուսուցանէ այսոքիկ զգնացս ժամանակաց, վասն որոյ սկիզբն զայս դնէ տաւնից ելից նոցա յԵգիպտոսէ: Ամիսս այս, ասէ, սկիզբն եղիցի ձեզ ամսոց, որ է սկիզբն առաջին լինելութեան մարդոյն, եւ Նիսան ամսոյմուտ. զի ուսուցին սկիզբն լինելութեան աշխարհի ի գարնանային հասարակաւորութենէ լինել սկսեալ արարչին գոյացուցանել զարարածս, զի նոքաւք ուսուցէ զբոլոր աշխարհս իմանալ զկարգ արարածոց լինելութեան աշխարհի, որք շփոթեալ խաւարագգած մոլորութեամբ՝ ոչ գիտէին զկարգադրութիւն եւ ոչ զարարիչս սոցա: Արդ՝ յայտ ցուցանէ մեզ աստուածային տաւնիցն դրութիւնք՝ ի թիւս ոմանս կարգեալք, եթէ գոն ի սոսա խորհուրդք իմաստից աստուածային գիտութեանց. որ եւ սրբութիւնք լինէին թուով աւուրցն լուանալովն եւ սրսկմամբքն՝ եւթնիւք աւուրբք եւ եւթնիւք շաբաթովք եւ ամսաւք եւ ամաւք եւթնիւք. եւ յեւթնիցս եւթն թողութիւն մեղաց եւ ազատութիւն ծառայից, որով յայտ է թէ ստուեր հոգեւորական մաքրութեանց եւ ազատութեանց ունէին թիւքս այսոքիկ:

Եւ արդ՝ զի յայտնի եղեւ մեզ վկայութիւն գրոց, թէ ունին խորհուրդք իմն աւգտակարք շարադրութիւնք թուոցոյ, /355a/ սկսցուք բացայայտել զիմաստս, որ ի սոսա գոն:

Եւ զի սկիզբն թուոյդ միակն է, որպէս ասէ Պղատոն, թէ Ամենայն իրք հարկ է սկիզբն մի գոլ. Բայց թէ ընդէ՞ր ըստ դասի կարգի ոչ ասի՝ առաջին եւ երկրորդ, այլ մի. զի եւ լինելութեան աշխարհի ոչ ասաց առաջին, այլ եթէ եղեւ ար մի: Նախ զի ի թիւս արական կոչի մինդ, զի ոչ ունի լծակից նիւթական ինչ, կամ ախտ ի հեշտակրութիւն, այլ արուական մարմին, մաքրական զարութիւն, ինքնաբաւ կատարեալ բնութիւն, որպէս ասէ Աստուածաբան՝ Առաջին միայնակն կատարեալ եւ ծնաւոյ կատարեալ տասնեակ տարորոշ թուոյն. զի շարադրելով ծնանի գտասնն եւ յինքն անդրէն դառնայ: Եւ դարձեալ ասէ՝ զսա առաջին լեալ եւ ութերրեակ, մանաւանդ թէ մի եւ անքակտելի, զի ի վերին կայանսն բերի. մի եւ անլուծելի, զի ոչ կարաւտանայ փոխանորդութեան տեղի տալ երկրորդի, այլ մշտնջենաւոր կայ եւ մնայ յերկարաձգեալ ընդ Էսսն:

Բայց զսա ասացին Պութագորեանքն ո՛չ թիւ, այլ սկիզբն թուոցն: Եւ զի յերկուս բաժանին թիւքդ՝ ի դար եւ ի կոճատ: Եւ է սկիզբն կոճատացոյ մինդ, իսկ դարիցն՝ Բն: Եւ ոչ զսէ ասացին թիւ, այլ սկիզբն դարիցն թուոց. ոչ զմիակն ասացին կատարեալ թիւ, իսկ զերկեակն ոչ, (?) այլ թերի եւ անկատար. զի ոչ ունի ժողով միաբանութենէ

բոլորման, այլ թափուր եւ դատարկ պայտիւքն բաժանեալ. եւ ոչ ըստ Սողոմոնի՝ առասան եռակող, անհատ կատարեալ տեսակ. զի առաջին կատարեալ թիւ ասեն զերբեակն, զի լի, հոծ եւ պղպզուն ունի զբաղկացութիւն, որով գոյանան բնութիւնքն: Զի ունի ամենայն գոյացութիւն՝ սկիզբն եւ ծայր եւ մէջ, որպէս ասէ Փիլոն. զի եւ եռակի տարորոշ ասի սահման մարմնոյ, թեպէտ եւ ոչ անդրադարձի առ սահմանելին. Զի որ ինչ միանգամ մարմին եռակի տարորոշ ասի՝ այլ ոչ որ միանգամ եռակի տարորոշ նաեւ մարմին: Արդ է առաջին կատարեալ թիւ երբեակդ եւ ծայրագոյն պատուով բարգաւաճեալ, մինչ առնու զտէ ի վերայ երից անձնատրութեանցն: Զի միակին չարժեցելով յերկեակն, եւ յերբեակն եկաց մնաց: Դադարեալ այս թուովք /355b/ առնուլ զանկումն, որով եւ մեր մաքրութիւն բացափայլէ երեք անուամբքն եւ երեք ընկղմելութեամբքն յաւազանին: Արդ՝ զառաջին գծին ասէ Փիլոն ազատ նշան, որ կոչի ուղղական, իսկ երկրորդն՝ զատական նշան, որ կոչի զիծ անլայնական եւ երրորդն՝ մակերեւութութիւն, որ կոչի անխոր մեծութիւն, որոց անմարմնոցն բնութիւնքն գոյանան. զոր ի վարագուրացն մեկնութեան ասէր, որ ի վերայ երից սեանցն ի թոչման գոլ, զանմարմնոցն բերելով զմանութիւն: Սապէս եւ զթերթան, որ ի խոյրս քահանայիցն եղեալ, ոսկի թերթն ունել արտատպութիւն եւ անխոր մեծութիւն, յարինակ անմարմնոցն բաղկացութեան եւ յաւելեալ թիւ մի ի սոսա առնուլ խորութիւն, որով մարմինք գոյանան քառանիւթ տարերց աճամբ, զոր Սովսէս մարմին ասաց ի վերլուծական ճառի իւրում. ասէ, վասն այնորիկ անմարմին ասեմք, զի ամենայն մարմնոց տայ զինքն եւ տայ նախագիծ լինելով եւ ապա լայնութիւն առեալ մակերեւոյթէ եւ յետ այնորիկ խորութիւն առնելով, լինի անորակ մարմին. եւ զորակութիւնն առնելով լինի մարմին որակեալ տարորոշ:

Արդ փոխանցելի է մեզ եւ աստանաւր եւ առ քառից բացայայտութիւն, զի երից եւ չորից խորհուրդք ընդ միմեամբք ունին շարամանութիւն եւ միմեամբք բացայայտին: Եւ է դարիցն առաջին թիւ կատարեալ չորբեակն, որ բաղկանայ յերկուցն եւ ծնանի զուրթն ի կրկնակին. բայց շարադրելով ծնանի զԺեակն տարորոշ կատարելութիւն զի միակն, յերկեակն յարադրեալ, լինի երբեակ կատարեալ թիւն եւ երբեակն յերբեակն շարադասելով՝ վեցերեակն եւ յարաբարդեալ ի քառեակսն բացակատարեն զԺեակսն տարորոշութիւն, որ է կատարումն կատարեալ թուոց: Նաեւ չորիւք եղանակաւք առնուն յանկումն բոլոր թիւք: Զի միակն ի Ժեակն առնու զանգումն եւ Ժեակն ի Ըն, իսկ Ըն ի Ռն եւ ՌՆ ի բիրեակն, որ լինի Դ հատածք: Եւ որպէս միակն եւ երկեակն եւ երբեակն եւ չորբեակն շարադրելով ծնանի զԺեակն, այսպէս եւ միակն շարայարեալ եւ յարաբարդեալ ի քառեակ Ժեակն բացակատարեն զթիւ Ըեկին: Եւ դար/356a/ձեալ շարաթուեն զԸն Միւն հանդերձ եւ Յիւն յարաբարդեալ ի քառորդն Ըիցն, կատարեն զթիւ Ռացն, եւ նոյն դարձեալ քառից Ռիցդ շարայարեալ, զյանգումն առնուն թուոց, շարադրելով զբիրեակն ծնանին, որ է կատարումն բոլոր թուոցդ: Եւ այսոքիկ բաղկացեալ սահմանին բոլոր թիւք՝ յանգեալք քառիւք տեսակաւքդ: Նաեւ բոլոր արարածք ի քառից նիւթոց բաղկացեալ գոյանան: Այլ եւ քառիւք թուաւք սահմանին առաքինութիւնք, որով կատարի մարդն Աստուծոյ՝ երիւք բնական եւ մին ստացական: Զի եռամասնեայ բնաւորի հոգին, եւ միւսն եւս, ստացական, յարդարեալ ի սոսա՝ որ է արդարութիւն՝ բացակատարեն զմարդն ըստ նմանութեան Աստուծոյ: Եւ զի այսոքիկ են մասունք հոգւոյ բան, ցասումն եւ ցանկութիւն: Եւ սոցա պիտոյ է դաստիարակ, որ է արդարութիւն, որով զարդարեալ կատարին մասունք ոգւոյն: Զի երկասիրաբար ի վարժս կրթութեան սաղապիլ ի ներհունս իմաստից, որով զարդարի բանական մասն ոգւոյն: Որպէս ասաց ոմն, թէ Լանջք Քրիստոսի գիտութիւն Աստուծոյ. եւ որ բազմի ի

վերայ նորա՝ աստուածաճառ լիցի: Նաեւ եռաթիւ լինի բողոքոջ նահապետացն սահմանին անձնատրութիւնք, որով երրորդական առանձնաւորութիւնքն բացայայտին մեզ, որք են յարացոյցք յարդարման բնութեանս: Որպէս ասէ Փիլոն, զի Աբրահամ գոյացութիւն եւ ենթակայ բնաւորի, իսկ Իսահակ՝ կրթարան վարժից, իսկ Յակոբ՝ կատարումն իմաստից: Չի ոչ է հնար ի ներհունս սաղապիլ թարց երկասիրութեան եւ ոչ երկասիրութիւն տարրանայ թարց բնութեան: Չի այսոքիւք թուովք կատարեալ զարդարի մարդ բանական բնութիւն՝ վարժիւք յառաջատեալ, իսկ յառաջատրութիւն շարաշարժեալ յարադրէ առ հուպ ենթակայն, որ է կրթութիւն մահու, յորմէ ծնանի խնդութիւն հոգւոյն, որ կոչի Իսահակ: Եւ զուարճութիւն այս մակաբերեալ թելակոխէ արփացեալ մերձ առ հեռագոյն ենթակայն, որ է նմանիլ աստուծոյ: Եւ աստուածատես գոլով՝ փոխադրեալ Յակոբայ անուան Իսրայէլ: Եռաթիւ զարգացմամբ, սովին թուով ի մէջարեւի անստուեր ժամուն երեւեալ Աբրահամու երից ար/356b/անցն, անստուեր լուսովն լնոյր զեռամասնեայ հոգի նահապետին, նաեւ յերրորդական աստուածութենէն երկակի լուսափայլութիւն եւս այլ անբաժանելի լուսոյն բաժանեալ եւ պատուեալ: Որպէս ասէ հայրն Աստուածաբանից, երկրորդ պայծառութիւն զիմանալեացն դասս, քանզի, որ աստու է, յերկրորդ պայծառութեան է եւ երրորդ լոյս զմարդն ասէ յերիս կատարեալ թիւս բարգաւաճեալ, սահմանէ զբանականս: Եւ յիրաւի, առաջին կատարեալ թիւ անուանի սա: Չի եւ Լիայ յերիս լիաբողոքոջ թիւս ի պարզեական զարմիցն առնու զանգումն թարց աշխատութեան եւ ի չորրորդին ի վարձու կալեալ զՅակոբ: Եւ վարձ աշխատեցելոց է պսակ: Որպէս ոգի բանականաբար թարց աշխատութեան ունի գեռաթիւ մասունս յԱստուծոյ ստացեալ, իսկ քառորդն մերոյ աշխատութեանց է զիւտ, ոգւոյ բաղձացելոյ զարմից: Չի տենչափափագ բաղձանաւք ի վարձու կալեալ զՅակոբ, որ է առաքինութեան տեսակ, զի մի ամլացի եռաթիւ արգանդ ոգւոց մերոց, այլ լիաբողոքոջ երկուց վեցեկացն թիւ լցցի, զի երից քառից եւ կամ քառից երից շարադրեալ գնոյն կատարեն թիւք: Իսկ զունակութիւն Իսաքարայ բացայայտէ մեզ ակն դահանակ: Չի որ ակայեղոց ունի զգոյն դեղնութեան, զի որ ի վարժս կրթութեան երկասիրաբար դեզերին դեղնամակերելոյթեան տեսակն ճնշելով զմարմին խոնարհութեան, արտամերժելով զբազմահոյլ տեսակ փշաբեր ախտիցն եւ ճնշելով զստինս մտացն, թերեւս լիցի բոխիչ կաթին եւ մեղու ի ճաշակումն սկսելոց եւ կատարեցելոց. հայելով ի բնական երկիրն, զի պարարտ է բնութեամբ եւ բազմաբեղուն ունի հովիտս եւ զընդարձակ դաշտս մտաց. եւ արիաբար աշխատեալ առնու պսակ տարւոյ քաղցրութեան ... բանեալ է: Չի զերիսն ունիմք յԱստուծոյ ստացեալ անաշխատ պարգեւս՝ զմարգարեականն եւ զքահանայական եւ զթագաւորականն, իսկ քառորդն մերոյ աշխատութեան է զարմ, որ կոչի Իսաքար, երկասեր, զոր բացայայտեն մեզ ակունք երկուց տեսակացն, սուտակին ասեմ եւ դահանակին: Եւ առեալ լինի /357a/ սուտակն, որ է հրագոյն, ի վերայ Յուդայի իբր զարդ իշխանական թագի: Յորժամ մարգարեական հոգւով աստուածաբանենք եւ քահանայական գործովք կատարիմք, յայնժամ թագաւորական իշխանութեամբ պսակիմք՝ զեր ի վերոյ լեալ ախտիցն՝ թագաւորելով ի վերայ մեղաց եւ մահու դարձ ի խոստովանութիւն ունելով հրացեալ զարենականն սուտակի, որ կոչի կայծ: Քանդակս ունելով զմականունութիւնն Յուդայի: Նաեւ յԵդեմական աղբերէն, որ է սեռական առաքինութիւն, չորս բոխեն առաջս: Առաջին Փիսոն, որ կոչի բերան հրոյ, զբանակին ունի ի մեզ տեսակս, որ շրջի ի Դեմս, եւ ի Լատայ, որ են վայրք իւելացն, յորում բանականն շրջի: Իսկ երկրորդ գետն՝ Գեհոն, որ կոչի լանջք կամ եղջիր ցլու, որ պատէ զԵթովպիա, որ կոչի նուաստութիւն վատութեան: Չոր արիաբար պաշարեալ արտալաճէ զկնատեսակ խենէշութիւն՝ եղջերցելով եւ ցրուելով

գնեքհակա որդուց գախտիցն հոյս: Եւ սորա վայրք շրջանակաց են լանջք ի ներքոյ քանականին ընդ իշխանութեամբ նորին: Իսկ երրորդ գետն՝ Տիգրիս, որ երթայ յանդիման Ասորոց, որ է ողջախոհութիւն, ներհակ ընդդէմ ցանկականին պատերազմեալ ուղղելով գնա, զի Ասորիք ուղղիչք թարգմանին: Եւ սորա վայրք շրջանս կացէ ներքին որովայնս, որ է մտուր անբան պաճարին, որ բնաւորեալ է յերիկամունս ցանգականին, զոր հրամայեն արեւնքն արիական գաւտով պնդել եւ մեռուցանել: Եւ բնաւորեալ են վայրք սորա ի ներքոյ սրտմտականին ընդ նորին իշխանութեամբ: Իսկ չորրորդ գետն՝ Եփրատէս, ո՛չ ունի վայրս եւ գետս դէմ գնացից, որ է արդարութիւնն, զի ոչ ընդ իշխանութեամբ ուրուք ի գոցանէ է եւ ոչ իշխէ ումեք: Զի ո՛չ յաղթել ումեք ջանայ, որպէս Փիսովն եւ Գեհոն, եւ ո՛չ պատերազմի ընդ ումեք, որպէս Տրգրիս, այլ ընդ երիսդ թափանցանց լինելով ուղղէ յիրաքանչիւր սահմանի կեալ քանականին եւ սրտմտականին եւ ցանգականին: Եւ եթէ ոչ աւելորդ համարեսցիս, գեղեցկապէս յարմարի յաստիկ եւ քառադէմ կառքն /257b/ Եգէկիէլի՝ վայելչապէս յարմարեալ չորից տեսակացն ընդ միմեամբք քանականն ընդ սրտմտականին: Զի դէմք մարդոյն ընդ առեւծուն շարայծեալ ոչ բաղիւսական, այլ տարալուծական շաղկապաւ, զի մի՛ անբնաբար սրտմտականն շարժեսցի, այլ քանականաբար դաստիարակեալ ձեռամբ քանական վարժողին. սապէս եւ ողջախոհականն ընդ ցանգականին շարայարեալ, թեթեւն եւ վերբերողն ընդ ծանրագունին եւ ի վայր ցնդողին, զարծուին ասեմ ընդ զուարակին լծակցեալ, զի ցանգականն վայր ցնդողն սրբեալ մաքրութեամբ ողջախոհութեանն վերաբերեսցէ ընդ ինքեան թեւաւք հոգւոյն վերայ թռուցեալ տենչանաւք հոգւոյն, զի ճշմարտապէս փափագիցեմք, զի մի՛ վեհքն ի վատթարիցն, այլ վատթարքն ի վեհիցն ըմբոնեալք, վեհագոյնք եղիցին, նոքա գեղեցկապէս դաստիարակեալք: Դարձեալ յարմարեսցուք եւ յաստիկ զսքանչելի թիւ քառից, զիսաւորելով զբանս: Զի եւ ի նոյն իսկ ճշմարիտ բանէն եւ ի կենդանի աղբերէն բղիսեալ չորս առաջս յեղեմական դրախտէ[ն] եկեղեցւոյ՝ ի չորեքժագեան ոլորտս աշխարհի՛ ռոռգանել զդէմս մտաց քանաւոր երկրի: Զի նա իսկ է ճշմարիտ աղբիւր կենաց՝ բղիսեալ ի հարե: Որ աղբիւրացուցանէ զմերձեցեալսն առ նա եւ գետս գնացուցանէ յորովայնից մաքրեցելոց, որք ուրախ առնեն զմայրաքաղաք կաթուղիկէ եկեղեցւոյ: Եւ նոյն ինքն է մարդ ճշմարիտ քանական ի Մատթէոսէ քարոզեալ, երկրորդ Ադամ հաստատեալ յեղեմական դրախտի եկեղեցւոյ: Նոյն ունի եւ զդէմս առիւծու՝ արիական եւ թագաւորական իշխանութեամբ պերճացեալ: Ի Յուդայէ ծագեալ առեւծ եւ կորիւն առեւծու՝ բազմեալ նուսդայարէն ի վերայ մահու եւ դժոխոց, զոր ո՛րք կարէ յարուցանել: Նոյն ունի եւ զդէմս զուարակի, ի Ղուկասէ աւետարանեալ, եւ ածեալ ի գենումն վասն կենաց աշխարհի՛ ընդ ինքեան՝ մեռուցանելով զցանգականն ի մեջ ախտիցն հոյս վերաբերելով ընդ ինքեան յարութեամբն ի կեանս անախտականս, զի ի նորոգումն կենաց շրջեսցուք: Ունի եւ նոյն /358a/ զդէմս արծուոյ, ի Յովհաննէ աւետարանեալ, որոտալով ի բարձանց, զի բանն իբրեւ զարծուի ի բարձանց սլացեալ իբր ի վերայ կերոյ, զի ուր լուծումն մարմնոյ, անդ եւ արծուի իջցէ: Որպէս ասէ Եսայի՝ զոր արիւնակ հասցէ արծուի ի վերայ կերոյ կաւչեսցէ, եւ բարբառով իւրով լցցէ զձորս եւ զլերինս: Զի տէր մեր եղեւ տեղի ամենայն առակաց, զի յամենայն տեղաց թռուցեալ առակք եւ արիւնակք ի վերայ նորա, առ նա հանգիցեն:

Եւ արդ անցցուք եւս ի տեսութիւն հնգից թուոցն, զոր կոչեն դարակոճատ, զի կատարեալ Ժեակ դարուն է կէս եւ ծնող նորին: Ջոր եւ Աստուածաբան(ն) բացայայտ զխորհուրդ սորին զպահարկեալ դառնն ի ԵԺ աւուրն զենեալ: Ջի հինգ զգայութեանցս է մաքրութիւն, ընդ որս խայթոցք մեղացն մտին: Ջի Ե զգայութիւնք են տեղի պատերազմի ախտից, վասն որոյ ընդդէմ սոցին գրէ Մովսէս զԵ զլուխս արինացն՝ Ծնունդս, Ելս, զՂեւտականն, զԹիւս, զԵրկրորդ արեւսն, զի սոքաւք պատերազմիմք ընդդէմ ուխտիցն: Որպէս Դաւիթն այն ընդդէմ այլ ազգոյն՝ Ե ունելով կարծրագոյն քարինս ի հովուական մախադին՝ ի պարսաստիկ եղեալ կործանէր զարին զայն: Այլ եւ ի պարզեական երկրին թողոյր զԵ քաղաքս այլազգեացն զորդոցն Իսրայէլի, մինչ կային ի պատուէրս արինացն՝ ի ծառայութեան կալեալ՝ առնէին հարկատուս: Եւ միտք մեր մինչ խոկացեն յերկիրդ պատուիրանին, լինէին հարկատու եւ ծառայ. Ե զգայութիւնքս՝ սպասաւորելով մտացն իբր թագաւորի: Իսկ ընդվզեալ ապարասան մտացն տարամերժեալ յաստուածապատուէր հրամանացն, անդէն յարձակեալ զգայութեանցն զերեն՝ զիշխանական միտսն ունելով ի ծառայութեան հարկապահանջ ախտիցն ցանգութեան: Ջոր եւ տէրն վարդապետեալ ուսուացնէ մեզ՝ ասելով. Ե ի տան միում բաժանեալ, որ են զգայութիւնքն երկուցն յերից՝ տեսանելիք եւ լսելիք բաժանեալ ի ճաշակելեաց, ի հոտոտելեաց, ի շաւշափելեաց, զի յախտից ազատեալ /358b/ միտքն առնուն ի կիր սոքաւք վարել ի վարժս կրթութեան՝ զննելով տեսանել եւ քննել զաշխարհս. ծանիցէ զգալովքս զիմանալիսն եւ լսելեալքն ի ներքս ընդունել զբանն կենաց յախտենականաց, թողով զերիս ծառայս ախտիցն՝ մարմնոյ սպասաւորել անբանքն անբան մասինն: Նաեւ հինգ թագաւորքն Գողողգոմորայ, որ զերեցին զՍողոմ, զնոյն բերին խորհուրդ, զի Սողոմ կուրութիւն թարգմանի, զի կուրացեալ ոգիք հեշտասիրութեամբ ըմբռնեալք ի զգայութեանցն, զերին զանգիւտ կորուստն: Ջոր իմաստնոյն լուսաւորեալ ոգւով, զարութեամբ ուժոյ տեառն իւրոյ, հետամուտ եղեալ զարաւք թուաւք հայրապետացն Նիկիական գումարտակին, որք զգերիչ կուրացելոց հերձուածողական գունդսն տապաստ արկին: Արդ Աբրահամու զերկուսն ըմբռնեալ թագաւորս, զտեսանելիսն եւ զլսելիսն, զի սոքա ի զգայութեանցս, որ ազատաբար յիմաստասիրութեան խոկումն ամբառնան: Իսկ զերիցն ասէ ի ջրհորն անկանել, ճաշակելացն, շաւշափելեացն, հոտոտելեացն ասեմ, որք յախնթորակագոյնք են եւ ի հեշտութիւնս ըմբռնին: Ե կանգնեան են եւս եղանոյն չափք լայնութեան եւ երկայնութեան, Գ բարձրութեանն, զոր հատեալ աղիւսս քառանգիւնոյ, լինին շէ աղիւսակք ունելով բարձրագոյն խորհուրդ:

Իսկ թիւ Ջիցն ունի եւս բարձրագոյն խորհուրդ, որ ծնանի յերից առաջին կատարեալ թուոցն, յորում աւուր կատարեցան երկինք եւ երկիր, եւ ստեղծաւ մարդն բանական: Ջի ամենայն զգալի մարմինք Ջ ունին կայութիւնք՝ ի վեր եւ ի վայր, յաջ եւ յահեակ, յետ եւ յառաջ: Չսա ասեն կատարեալ թիւ, զի բաժանելով հաւասարագոյ բոլորին՝ երկրորդին եւ երրորդին եւ Չերրորդին, զի երկրորդ մասն է Գքն, եւ երրորդ մասն է երկուն, եւ Չերրորդ՝ մինդ. եւ այդ գնոյն բերէ թիւ վեցին: Նաեւ Սողովմոն ի Չ ամին կատարէ զտաճարն, զարեւն առաջին մարդոյն ի վեցերորդին ստեղծանելով, ընդ որ տէր մեր ոչ հաճեալ բնակէ, այլ քակեալ զՉ աւուրն, եւ յերիս կատարեալ թիւ աւուրց կանգնէ յարութեամբն՝ զբոլոր տաճար մար/359a/մնոյ փակեալ հնութեամբ մեղացն Չեան դարուցն, յորս բնակեալ առնէ իւր ճեմարան եւ տաճար հոգւոյն:

Իսկ սքանչելի թիւ Էերրորդիոյ յոգնաթիւ ունի խորհուրդ զանազանեալ անխառն տարրորոշ թիւ, սեռն եւ անապական բնութիւն, զի ոչ բնակի գոք, եւ ոչ ծնանի յումեքէ ի

ներքոյ ժինդ, զոր կոչեն մշտնջենակուսի, եւ անմար, միակի ի բնութիւն, զոր ասեն ծնեալ յուղոյն Արամազդայ: Արդ ունի սա թիւ զելթն շնորհաց հոգւոյն՝ իմաստութեան, հանճարոյ եւ խորհրդոյ եւ զարութեան, գիտութեան եւ աստուածպաշտութեան եւ երկիւղի Աստուծոյ: Եւ ի սմա Աստուած ոչ էթէ հանգչի, այլ հանգուցանէ զարարածս, զի զտեղի առնու յարարչագործելոյ: Եւ զսա սահմանէ վերջին թիւ աւուրց արարչութեանն: Եւ սովին թուով ի կարգ անկեալ վարի աշխարհ, զի շաբաթք եւ ամիսք եւ տարիք սովաւ գոյացեալ երեւին մեզ: Նաեւ ի ծնունդս յարմարագոյն է թիւս այս, զի յէ աւուր սաղմնառեալ յարգանդի ծնանի որդին: Եւ Էամսեայ ծնունդքն բեղմնաւորք լինին եւ առողջք: Յէ ամսեան ընձիւղին ատամունք: Եւ յէ ամին փոփոխին եւ ընծայի տեսութիւն մտացն եւ երեւութանան կերպարանք բանից յոգիսն: Վասն որոյ Է ամեայ հրամայեն առնու ի վարժս կրթութեան դպրոցաց: Եւ յիմաստութեան տան Է հաստատին սիւնք: Է են եւ մոլորականք կարգեալ ի սպաս պաշտաման բուսոց եւ անգոց: Է <են> եւ ծակք զգայութեան՝ Բ աչաւք, Բ ականջաւք, Բ ծոցք քմաց, եւ մի ճաշակելեաց, որ ունի մուտ մահկանացուին եւ զել անմահին բանականի: Է <է> եւ արտաթորումն՝ արտաւար, տողուկք ծոցք, հոսումն քրտան, ծորումն որովայնի, առաւուշտ ջրոյ, հեղուկսն եւ սերմանն: Եւ լուսին յէ ախտակցագոյն ունի առ երկիրս, եւ յԲ Էնն ուռճացեալ լնու: Եւ միտք յէ ամի ծնանի զտեսութիւն բանի: Իսկ մարմին յԲ Է զծննդականն առնու բեղմունս: Եւ Է անգամ յաւուր արհնի Աստուած: Եւ Է պատիկ հատուցանէ չարացն: Է ի Կայենէ խնդրի վրէժք եւ եւթանասնեկի՝ ի Ղամեքայ: Է աւուրքք փակի դուռն տապանին ընդդէմ անհաւատիցն: Է անգամ սրսկ(ի) իւր արիւնն առաջի սեղա/359b/նոյն: Է աւուրքք եւ բորոտն սրբիր: Եւ զի բագում են Է թուոցոյ խորհուրդք, սակայն յայտնի են որոց կամին ուսանել ի գրոց, զոր ի հոգւոյ ճառին է բովանդակեալ Աստուածաբանի:

Այլ մեք անցցուք յԸ երորդին սքանչելի խորհուրդ, որ ունի զծնունդ ի կրկնակին քառից կատարեալ թուոյ: Զի տացէ ար առաջին, եւ Ը երեակի լեալ, զի ի միակէն սկսեալ յէեակն յանգի եւ նոյն ար յարաբարդեալ յէակն, լինի Ը, որ ուսուցանէ խորհուրդ բարձրագոյն, զի ի վերին կայանսն բերի, որպէս արինադրէ Սողովմոն, տալով բաժինս ո՛չ միայն եւթանց, այլ եւ ութից: Որպէս Դաւիթ կարգէ սաղմոսս յաղագս ութերորդին, զտէր մի՝ սրտմտութեամբ, եւ ապրեցոյ զիս տէր, զի նուագեաց սուրբ: Այլ եւ զնշան հաւատոցն Աբրահամու՝ Ը երորդին հրամայէ ընդունել ի ծննդական մասին եղեալ կնիք, զի մի անչափութեամբ հեղմամբ ապականեցին սերունդք արհնութեանն, որպէս ի ջրհեղեղի անդ մաքրեալ լուաց զանչափ հեղումն աղտեղութեանն ի վերայ երկրի: Եւ զի յետ ապականելոյ երկրի մաքրութեան արհնեալ ազգին մաքրեցելոյ, մտին կրկնակի անէծք ի մերկութեան ծննդական մասին, որ այպանեցաւ յիւրմէ զարմէն, այն, որ մաքուրն էր. ի խլրտմանց ախտից, զսոյն անդամ գտեալ Աստուծոյ մաքուր առ Աբրահամաւ պսակէ զնա, զի մի՝ իսայտառակեցէ զնա չարն, որպէս Նոյին: Յարհնութեան զաւակէն լցցէ զաշխարհս ամենայն արհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս, զի ուր առաւել եղեն մեղքն, եւս առաւել անդ շնորհքն: Նաեւ զխորհուրդ Ը երորդիդ, երեւի պատուեալ իմն Յիսուս: Ութաւրեա(յ) թլպատեալ, եւ կատարեալ զաւետիս հարցն եւ փոխարկեալ ի մեզ զհոգւոյն թլպատութիւն, որ ոչ մարմնոյ, այլ ախտից առնէ հատումն ի բաց բառնալով, որ ի ծննդենէ տրամագրին զիծք ախտից յոգիսն:

Իսկ Թերեակ թիւն, որ ծնանի յերիս երրեակս, յառաջին կատարեալ թուոյն, զոր առեալ ի կիր իմն Յիսուս զերանականն արդարոց սովին թուով սահմանէ: Եւ Թ ամսեայ

Ժամանակաւք կրի ի ծոց կուսին ծոցածին ծաղիկն սիրական համբերութեամբ վասն մեր: Նաեւ բոլորիցս Թ ամսեայ սահմանին ծնունդք:

Իսկ Ժերորդ թիւդ է կատարումն թուոց միակաց եւ ծնունդ Եեկին, որ բարգաւաճեալ առ Մովսէսի Աստուծոյ զԺ պատգամս կեցուցիչս ոգւոց եւ մարմնոց, Եեկին զգայութեանց մաքրումն, յԲ տախտակս քանդակեալ Աստուած տիրականն, որով ոգիք մաքրին. եւ ընկեր տիրականն, որով բազմաեռոյ չարութիւնք ախտիցն սրբին, զոր առաքեալ ասէ բոլոր շնորհացն խափանել, եւ սիրոյն միայն միայնոյ մնացելոյ եւ թագաւորեցելոյ յանվախճանն կէտ յաւիտեանս: Այլ եւ ի Ժերորդում Եերորդ ամսոյն՝ արինագրէ Աստուած մտանել քահանային արեամբ զուարակին ի սրբութիւն սրբոցն՝ յանդիման լինել Աստուծոյ: Վասն զի այս թուոց է լիագոյն է մաքրելոյ եւ մշտնջենակուսի թուով: Եւ կատարեալ Ժեկին մաքրել քահանային եւ սրբագործել զպատարագն երկնային մտին ի սրբագանիցն խորան, քաւութեանն ասեմ եւ տախտակացն Քերովբէիցն թելովք պարածածկեալ, զի մի տեսցեն կուրաշաւիդ քահանայքն զամրածածուկ խորհուրդ տնաւրէնութեան տեառն, այն, որ վասն մեր եմուտ ի սրբութիւն սրբոցն՝ իւրով արեամբն յաւիտենական բերելով զմեր փրկութիւնն: Եւ ի Ժերորդի հրամայի առնուլ ի պահ զգառն զատկին յառաջնում ամսեանն, ընդդէմ եգիպտական ապականեալ բռնատրին անդրանկածախ սատակմամբ. եւ խաւարատանջ նշանովք կորզել զԱբրահամեան զարմն, զառնազէն արինաշաղախ դրաւքն փակելովք: Եւ սեամբ հրածին լուսով յանապատն ազատաբար ճանապարհորդել յԵրորդ ամսոյն Ժեկին, ոչ զերծուլ յԵգիպտական ախտիցն, այլ պահարկեալ զառամբն՝ յարինակ երկնի զարդ բանի եւ կշռութեան, իմանալ զչարն, եւ խոյս տալ ի վնասակա/360b/բացն, փակել եւ զգրունս զգայութեան, զի մի՛ մտցէ եգիպտական սատակող ախտն յոգիսն, այլ երկիւղիւ աւծմամբ պարփակեալ աներկիւղ մնասցէ պահպանութեամբ դոնապան հրեշտակին: Իսկ ի ԵԺան աւուրն զենոյր գառնն, վասն զի յԲ հնգեակս կատարի բնութիւնս եւ ի ԵԺին փոխադրեալ առնու զարութիւնն կարել զենմանն ծնանիլ. եւ յայս ամս հասեալ բնութիւնս որքան երկիւղաբար բաց ունելով զդրունս զգայութեան, յԵգիպտական սատակող ախտիցն ըմբռնեալ անդրանիկ զարմ ոգւոցն, որ է ողջախոհութիւն, սատակումն ընդունի, յորում տան ոչ այլ ինչ, բայց եթէ սուգ տխրական ամենալից գոչմամբ եւ աղաղակաւ, որոց կորիցէ յիշատակն: Իսկ յաղթողացն ախտից եղելոց զարմի Իսրայէլեան, եւ զաւակ Աւետեաց Աբրահամու սպանանելով զԵգիպտական ախտից բնութիւնն, զի՛ նչ այլ ինչ եթէ ոչ տաւնուտ. այսպիսոյ տաւն ոգւոյ, ո՛չ միաւրեայ, այլ Էաւրեայ, որպէս հրամայեցաւ տաղաւարիլ աւուրս Է: Որ ուսուցանէ մեզ զԷաւրեայ կենցաղս թողուլ եւ պանդխտեալ տաղաւարաւք, չափաւոր եւ դուզնաքեայ պիտոյիւք շատանալ, զի զբնակութիւնս երկնից փափաքիմք զգենուլ:

Իսկ Իեակ ամաւք կատարիմք անյաղթ զարութեամբ յերիս Էակս թուով, որով բարգաւաճի Աբրահամ, զի Ի ամին նաեւ ի վեր հրամայեն արեւնքն ի գիր զինուորութեան գրել, զի եւ մեզ ոչ է մարտ պատերազմի ընդ մարմնոյ, այլ ընդ աշխարհակալ իշխանին:

Այլ եւ ԳԺեակ թիւդ ունի զկրկնակի կատարումն բնութեանս, զի ԵԺ անին կարէ զնմանն ծնանիլ. եւ յերկեակն պապ լինի, որովք թուովք ամաց կենցաղավարի իմն Քրիստոս, յորում ամի զմեզ վերստին ծնանի աստուածածնելական ջրով եւ հոգւով, կործանելով զանմարմինն Գողիադ, երիւք կատարեալ թուովք փորձութեամբ, զայն, որ

մարտեան ընդ նախահարն. եւ ի վերայ վազեաց երկրորդն Ադամայ, /361a/ եւ աստուծոյ կործանեցաւ:

Այլ եւ Խ թիւս ունի յոգնաթիւ խորհուրդ, այլ մեք թողլով զբազումս, ի կատարումն ընթացուք քանիս՝ երկուցեալ ի յազեցմանէ քանիս, զի մի ախորժելեաց լսելեաց պատերազմող լիցի: Եւ զի սա ի քառից տասանց յերկուց կատարեալ թուոց ծնանի, նախ զի Ի բնութիւնս ունի բաղկացութիւն, զի յայս թիւս տարրանայ բնութիւնս բոլոր անդամաւքն. եւ զկենդանականն առնու փչումն բարեգործեալ յարարչէն, զոր անարիւնեալ հսկայիցն ապականեցին անկարգաբար անչափութեամբ ախտիցն հեղմամբ, ո՛չ ի սերումն, այլ ի վիժումն պատկերին, զոր ստացան մարդ Աստծով ծնանիլ. եւ զորդիս իրեանց հեղձուցին հեղեալ մեղաւք, որոց ստուգութիւն հատոյց նովին չափովք: Խ աւուրքք ջրահեղձոյց կորստեամբ, իսկ ընդդէմ սոցին Շ ամաւք կուսութեամբ, նահատակեալ Նոյի, սպանանէր զԵ զգայութեանց ախտից հոյլս, ոչ հեղձեալ յախտիցն, այլ զեր ի վերոյ թռուցեալ ի վերայ ալեաց ջուրցն անցեալ կայր: Քառատասնեակ ամաւք եւ Իսահակ տանջեր զերիտասարդական ախտս եւ ապա առնոյր կին, զի պարկեշտակիր ամուսնութեամբն ծնցի զպարզեական զաւակն զԻսրայել: Թողում ասել զՄովսէս ի Խաւրեայ մեռելութեամբ անմահացեալ եւ լուսաւորեալ երեսաւք առնուլ զԺ պատգամսն: Եւ Խ քաղաք ապաստանի որոշեաց: Խ աւուրքք Հեղիաս փախուցեալ ի Յեզաբելական ախտիցն հեշտ ցանգութեանցն Աստուծոյ հանդիպի: Խ աւուրքք եւ մանկունքն ի տաճարին Աստուծոյ ընծայ ընծային մաքրութեամբ տատրակացն եւ պարզամտութեամբ աղանեացն նմանութեամբ: Չոր եւ իմն Յիսուս կատարէ նովին թուով, յինքն գլխաւորելով զոտուերականսն. ընծայի եւ ընծայեցուցանէ զբոլորս ինքեամբ հաւր քահանայաբար:

Իսկ Ծեակ թիւդ ի Ե(ե)ակ տասնից բաղկանայ, ըստ թուոյ զգայութեանց, որ էից է կատարի. եւ մնացեալ աւուրն կոչի առ նոսաբ յորում աւուր զգիր մահուն ընկալ/161b/ան յանցաւորքն ի տախտակս քարեղէնս: Իսկ մեք նոյն թիւս ընկալա(ք) զհոգին կենդանարար ի սիրտս մաքուր մարմնեղէնս: Եւ զսա կոչեն յոբելէն եւ ար թողութեան. եւ նոցա ի նոյն թիւս ամաց ազատութիւն ծառայից եւ դարձվաճառիկ ստացուածոց: Բայց մեք ազատիմք ի ծառայութենէ մեղաց արինաւք հոգւոյն, զի ուր հոգի տեառն է, անդ ազատութիւն է:

Իսկ Զեակ Ժիցն թիւն յայտնի է մեզ զՅեան դարուն զգործս չարին ի ձեռն պատկերին Բաբելացոց չար խառնակութեանն, զոր սատանայ կազմեաց իւր զբաւսանաց տեղի երգարանաւք եւ տաւղաց հնչմամբ: Եւ ի լայնութիւն եւ ի բարձրութիւնս տարածեալ թուաւք Զովք եւ Զեակ տասամբք ընդարձակս արարեալ իւր ճեմելիս բոցակիզելով զոգիս կամեցողացն, զգաստանալ աստուածապաշտութեամբ չորիւք նիւթովք բաղկացութեամբ մարմնոյս, բարձրացուցանելով զբոց մեղացն ԽԹ կանգնովք չափ, ոչ կարելով գիր ի վերայ անցանել թողութեանց յիսնեկին: Եկ սրբոյ մաքրութեան աւուրն, զոր յիսնեկին ի հոգւոյն ընկալաք թողութիւն:

Իսկ Ժեակ Էիցն թիւ ցուցանէ մեզ զբարձրագոյն խորհուրդ շնորհաց հոգւոյն աճեցեալ էից շնորհոք հոգւոյն, որ ի յԵսայեայ թուեցան յԷ Ժեակ կատարելութիւնն, զոր ընկալան Հ ծերքն Մովսէսի, ի բացեայ գոլով Եդդատ եւ Մեդդատ: Մովին թուով եւ ժողովուրդն ի գերութեան առնուն թողութիւն եւ ազատութիւն ի գերչացն:

Իսկ ութեակ Ժիցն թիւ ունի զնոյն միակութեան խորհուրդ, այլ եւս բարձրագոյն յայտնելով միտս, զի անդ յետ Էանն միակ Ը թիւ ունի զկերպարանս հանդերձեալ ութերրեկին աւուր: Իսկ աստ զամենայն խորհուրդ կատարեալ Քրիստոսի ցուցանէ մեզ ի ձեռն Դաւթայ ասելոյն, թէ ժամանակ ամաց մերոց, որ իբրեւ զարդի ոստայն ունայնս աշխատիմք: Ըստ այնմ, եթէ սարդի ոստայն անկանեն, որ ոչ ձորձի զգեստաւորեալ զմեզ, այլ ունայնս մաշի, զոր սահմանեալ ունայնութեան /362a/ կեանս մարդկան չ ամ, եւ եթէ աւելի եւս Ձ, իսկ վրիպեալ յայսմ թուոյ, լի ցաւովք դառնութեամբ ասաց կեալ: Եւ այս են միտք մարգարէին՝ յՉ ազգին կարծիս ունէր գալ փրկչին եւ եթէ յերկարացին եւս վասն անլրութեան մարդկան, յՁ ազգին յայտնեսցի, զորոյ թիւ յայտնէ մեզ Ղուկայ ազգաբանութիւնն՝ զերկրորդ Ադամն սկիզբն դնելով նոր ստեղծուածոյս: Որ ի ջրոյ եւ ի հոգւոյն վերստին ստեղծաք, նոր արարածք ի Քրիստոս եղեալ եւ տարեալ հանէ յԱդամ չԸ նահապետս եւ զհայր զհոգին յարդարեալ կատարէ զթիւ Ձիդ զՔրիստոս հիմն եղեալ ըստ առաքելոյ եւ զՉոգին կատարիչ եւ զՀայր կատարումն: Եւ եթէ ոչ աւելորդ համարեսցիս, ասացից եւ այլ եւս բարձրագոյն խորհուրդ: Ձի առաջինն Ադամ բացամերժեալ յաստուծոյ իբրեւ ի բարձանց ի վայր հոսեալ զաւրէն ուղիսից գետոյ, ըստ նմանութեան Յորդանանու՝ իջանելով ի ծովն աղի: Ձի Յորդանան էջք թարգմանեն, զոր չէր հնար արգել ումէք, մինչեւ եկն տապանակն արինակն տէրունեան մարմնոյն եւ կացեալ ի մէջ Յորդանանու զոժուարարգելին, դիրբաւ անդրէն դարձուցանէր յետս երթալ ի նմին տեղի, յորմէ բղխէրն: Սոյնպէս եւ զմարդկան ապստամբութիւնն չեղեւ ումէք հնար անդրէն դարձուցանել, թէպէտ եւ ջանացան արէնք եւ մարգարէք, նաեւ հրեշտակք, զի ոչ պատժովք եւ սպառնալովք երկեան, եւ ոչ աւետեօք բարեաց յորդորեցան, այլ կացին մնացին ի նմին հոսման՝ իջանելով ի ծովն աղի, որ է Մեռեալ ծովն Սողոմայ: Ձի Սողոմ կուրութիւն եւ ծովն աղի եւ նոյն մեռեալ զինչ այլ ինչ մեզ յայտնեն, եթէ ոչ զկիրս դժոխոց, զի մեռեալ եւ անկենդան է, իսաւար եւ լի աղտաղտուկ չարութեամբ: Արդ՝ եկն տէր մեր եւ եկաց ի մէջ Յորդանանու: Ձի ստուերն որ նկարեցաւ ի ձեռն տապանակին, հանցէ ի ճշմարտութիւն՝ դարձուցանելով անդրէն յետս, ոչ զՅորդանան, այլ զորդիս Ադամայ ի ձեռն մկրտութեանն: Եւ զայս յայտնի մեզ ցուցանէ Ղուկայ ազգաբանութիւնն՝ սկսեալ յերկրորդն Ադամայ տարեալ /362b/ հանէ յառաջին Ադամն եւ չԸ ազգաբանութեամբն եւ զՉոգին ի մեզ բնակեալ եւ ի Հայր միաւորեալ իբրեւ ի գլուխ, ասել թէ Ադամայ որ Աստուծոյ, զի Մատթեոսի ազգաբանութիւնն զիջանելն ի մեզ ազգէ, եւ բուռն հարկանել զգաւակէն Աբրահամու: Որպէս ասէ առաքեալ եւ Ղուկայն զդարձուցանելն անդրէն առ հայր նշանակէ, զայս իմացեալ հոգեկիր մարգարէն Դաւիթ սահմանէ մեզ ժամանակ չ եւ եթէ առաւել եւս ութսուն: Եւ այս են միտք բանիս, եթէ որք արժանի լինին հասանել ի կենասիրաց դարն Ձերորդ եւ լինին հաղորդ մեծի փրկութեանն, երանելի են, իսկ վրիպեալքն անբուժելի ցաւովք ըմբռնեալք, ի դառն հեծութիւնս: Եւ ո՞ւր է հանգիստ նոցա, եթէ ոչ ի իսաւարն արտաքին: Որպէս ջուրքն, որ հասանի տապանակէն ի ստորին կողմն, հասեալ իջին ի ծովն աղի եւ բացամերժեալքն ի խորհրդական մարմնոյ տեսոն, որով ունիմք զփրկութիւն, ժառանգեն զանգիւտ կորուստն: Իսկ փրկեալքն եւ յաստուած միացեալքն միշտ զուարճացեալք, յանվախճան յերանութիւնսն վայելեն: Եւ արդ՝ պարտ է ի տէր մեր գլխաւորել զբանս եւ ի բոլոր խորհրդոյս կատարիչն Յիսուս, որ յառաջագոյն նկարեաց յարարածս եւ յարէնս եւ ի մարգարէս, եւ եկեալ ինքն գլխաւորեաց՝ հանելով զստուերն ի ճշմարտութիւն: Եւ զբոլոր խորհուրդ թուոցոյ բացայայտէ մեզ ի թիւս ոմանս ժողովելով, զմեր փրկութիւն եղեալ երկրորդ Ադամ, եւ սկիզբն նորոյ արարածոցս ըստ Աստուծոյ եղելոյ՝ նորոգելով ո՞չ միայն զհնութիւն մարդոյն, այլ զբոլոր արարածոց,

Ժամանակաց, թուոց, աւուրց, ամսոց եւ տարեաց: Որպէս ասէ Եսայի. Եղիցի երկին նոր եւ երկիր նոր. եւ ինքն կոչեցաւ ամ նոր թուղութեան: Ի սկիզբն նորոյ աշխարհիս եւ ար հատուցման: Եւ որպէս անցեալ ամն հնացեալ վախճան առնու եւ վերջին արն անցեալ ամին կատարումն եւ նորոյ ամին սկիզբն ի միջոցի կալով ունի մասն ինչ ի հնոյն եւ հաղորդութիւն ունի այդ նորոյն ամին, սկիզբն գոլով...:

Վասն որպիսութեան կենաց իւրոց

Ես Անանիա Շիրակացի ի յԱնանիայ գեղջէ, որ բաւանդակեցի գղպարութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց, եւ հմուտ եղեալ աստուածաշունչ գրոց, ար ըստ արեւ լուսաւորէի զաչս մտաց իմոց ըստ բանի սաղմոսերգողին: Եւ յամենայնի լսէի զերանութիւն իմաստնոց եւ որք իմաստութեան են ի խնդիր՝ որպէս ի Սողոմոնէ է հրամայեալ. «Ստացիր զիմաստութիւնն, եւ յաւել արգել զտգիտութիւնն՝ խաւար կոչելով զծնողն». եւ՝ «դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից եւ ես զ/197a/քեզ»: Եւ ես զարհուրելով ի յայսց սպառնալեաց եւ դարձեալ երանութեանն կամեցայ ժամանել, զնալ փափագեցի իմաստասիրութեանն: Յոյժ կարատեալ արուեստի համարողութեանն, խորհեցայ՝ եթէ ոչինչ յարմարի առանց թուոց՝ մայր կարծելով ամենայն իմաստից: Եւ վասն զի ոչ գտանէր յաշխարհիս Հայոց մարդ որք, որ գիտեր իմաստասիրութիւնն, այլ եւ ոչ անգամ գիրք արուեստից ուրեք գտանէին: Ապա եւ ի Յունացն դիմեցի յաշխարհ: Եւ հասեալ իմ ի Թեոդոսուպաւլիս՝ գտի անդ այր մի բանաւոր եւ հմուտ գրոց եկեղեցականաց, որ կոչէր Եղիազարոս. նա պ/179b/ատմեաց ինձ եթէ գոյ այր համարող յաշխարհին Չորրորդ Հայոց, Քրիստոսատուր անուն նորա: Եւ իբրեւ չոգայ, գտի գոր ասաց ինձ: Եւ արարեալ իմ առ նմա աւուրս Չ ամսեայ, զիտացի, զի ոչ ունէր զբաւանդակութիւնն արուեստին: Այնուհետեւ աճապարեցի երթալ ի Կոստանդինուպաւլիս, եւ պատահեաց ինձ ի ծանալթից իմոց, որք անտի էին ուղեւորեալք, ասէն ցիս. «Զմէ՞ այսքանեացս յանձն առեր ճանապարհի երկայնութեան. ո՞չ ապաքէն Տիրփիկոս վարդապետ Բիւզանդացոյ հուպ է առ մեզ ի ծովեզր Պոնտոսի, ի քաղաքն որ /180a/ կոչի Տրապիզոնտ, այր լի իմաստութեամբ եւ զիտակ հայերէն դպրութեան եւ լեզուի եւ երեւելի թագաւորաց»: Եւ հարցեալ իմ զնոսա եթէ՝ «Ուստի՞ գիտէք դուք զայս»: Եւ նոքա ասէն. «Բազում ընդ այն ճանապարհ հորդեալ տեսանէաք գյուղվս եկեալ առ նա ի կողմանց կողմանց վասն հզար գիտութեան նորա. այլ եւ այժմ իսկ նաւակից մեզ եղեւ Փիլաքր սարկաւազ հայրապետին Կոստանդինուպաւլիս, որ բազում մանկունս ածէր առ նա յաշակերտութիւն: Եւ եկեալ մեր ի Սինաւայ՝ պատահեալ ընկերաց մերոց, զատուցեալ ի նմանէ ճանապարհորդ/180b/եցաք ի ցամաք, զոր թէ երագ երագ երթիցես, զսցես անդ զՓիլաքր»: Զայս լուեալ, խնդալից սրտիս փառաւորեցի զնախախնամաւորն Աստուած, որ առ ձեռնպատրաստ ունի զփափագ ծառայից իւրոց, որպէս եւ ասէն իսկ, եթէ՝ «Հայեցեցէք եւ գտջիք»: Եւ երթեալ իմ գտի զնա ի վկայարանի սրբոյն Եւզենիայ. Եւ պատմեցի զերթն իմ առ նա: Եւ ընկալաւ զիս ուրախութեամբ եւ ասէ. «Գոհանամ զաստուծոյ, որ առաքեաց զքեզ ի խնդիր իմաստից, տանել քեզ զարուեստս զայս ի վիճակի սրբոյն Գրիգորի: Եւ առաւել ուրախ եմ, որ յինէն աշակերտի աշխարհն այն, զի ես ի մանկութեանն ժամանա/181a/կի հարուստ ամս կացի ի բարիս յերկրին Հայոց եւ ցնծամ զերթալ զիտութեանս ի նա, զի ի ժամանակս յայս տգիտութիւն էր ի նմա»: Եւ ետ ինձ տեր շնորհս առաջի առն: Եւ սիրեաց զիս որպէս զորդի իւր եւ պարապեաց յիս

յամենայն խորհրդոց իւրոց, մինչեւ նախանձեալ ընդ իս ամենայն աշակերտակցաց իմոց, որք ի դրանէն արքունի: Եւ արարեալ իմ առ նա ամս Ը, ուսայ լիով զարուեստ համարողութեան: Նաեւ դոյզն ինչ յայլոցն տեղեկացայ գիտութեանց եւ հմուտ եղէ գրոց բազմաց, որք եւ ոչ ի մերս են թարգմանեալ լեզուս. զի ամենայն կայր առ նմա՝ յայտնիք /181b/ եւ գաղտնիք, արտաքինք, արուեստականք եւ պատմագիրք, բժշկականք, ժամանակագիրք. եւ զի՞ եւս մի մի անուանիցեմ, քանզի չիք ինչ գիրք, որ առ նմա ոչ գտանէր: Եւ թարգմանութեանց այսպիսի ունէր շնորհս ի պարգեւաց հոգւոյն սրբոյ, որ իբրեւ կամէր թարգմանել զգիրս յունարէն գրեալս, ոչ դեգերումն ինչ առնոյր որպէս այլ թարգմանչացն, այլ ի հայերէն ընթեռնոյր լեզու իբրեւ զհայերէն գրեալս: Բայց կամիմ ոչ տգէտս զձեզ լինել ամենահմուտ առն լաւութեան, այլ ի գիտութիւն ձեզ հասուցից պատմութեամբն՝ թէ զիա՞րդ զմե/182a/րս գիտէր լեզու եւ կամ յայնչափ վարժեցաւ յարուեստս: Սա է յաշխարհէ Պոնտացոց ի Տրապիզոնտ քաղաքէ, մանկութեանն ժամանակաւ զինուրեալ ի դուռն Յոհանու զաւրավարի Տիբերի կայսեր, որ ի Հայս եւ ամս յոլովս արարեալ մինչեւ ի ժամանակս Մարկայ թագաւորին: Եւ ուսաւ զմեր լեզու եւ զդպրութիւնն: Իսկ ի ժամանակի յարձակման զաւրացն Պարսից ի վերայ զաւրացն Յունաց, որ եղև մերձ յԱնտիոք, պատահեցաւ եւ սա վիրաւորեալ ի պատերազմին փախստեայ անկանի յԱնտիոք, եւ ամենայն ինչք իւր առան յաւարի: Եւ իբրեւ /182b/ բազում աւուրս անցուցանէր ի հիւանդութեանն՝ ունենալով եւ զկսկիծ կորստեան ընչիցն, խնդրէր յԱստուծոյ եւ զբժշկութիւն վիրացն եւ ուխտէր ասելով. «Թէ շնորհեացես ինձ կեանս առողջս, ոչ գանձեցից գանձս անցաւորս, այլ զհետ ընթացայց գիտութեան գանձու, որպէս բան իմաստնոյն ասէ. «Ընկալարուք զիւրատ եւ մի՛ զարծաթ, եւ զգիտութիւն առաւել քան զոսկի ընտիր»: Եւ պարգեւեալ Աստուծոյ զհայցուածսն: Գնաց ողջեցեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ արարեալ անդ ամիս մի՝ փոխեցաւ յԱղէքսանդրիա: Եւ ամս երիս կայր անդ ի հրահանգի: Եւ ապա չոգաւ ի Հռոմ եւ արար/183a/եալ անդ տարեւոր ժամանակս, գայ ի Կոստանդինուպոլիս. եւ գտանէ անդ այր երեւելի, որ վարդապետէր իմաստասիրաց քաղաքին: Եւ եկաց առ նմա յուսման ժամս ոչ սակաւս եւ կատարեալ իմաստասիրութեամբ, դարձաւ ի տեղի իւր: Թէպէտ յոյժ աղաչեալ ի հայրապետէն եւ յիշխանաց քաղաքին, զի մի՛ գնացէ անտի, իսկ նա ոչ անսայր նոցա՝ յերկիր իւր զթալով ըստ գրեցելումն: Եւ եկեալ ստացաւ վարս ճշմարտութեան: Իսկ յետ սակաւ ամաց վախճանեցաւ վարդապետն: Եւ ոչ զոք գտեալ համագունակ նմա յաշակերտաց նորին յաջորդել ի տեղի նորին, յղեն աղաչանս առ ցանկալին Տիւբիկոս՝ գալ եւ կալ ի տեղի նորա. մի/183b/անգամայն եւ հրաման առեալ ի թագաւորէն: Իսկ նա ոչ առնոյր յանձն ասելով թէ՛ «Ընդ երկնայնոցն ուխտեցի թագաւորին՝ չհեռանալ ի տեղուջէս յայսմանէ»: Ապա այնուհետեւ գային առ նա անդուստ յուսումն: Բայց ես այսպէս եղի ի մտի թէ՛ յառաջատեսութիւն Աստուծոյ սակս ի մեզ ծաւալման գիտութեան պատրաստեաց գայն:

Եւ արդ՝ ես տրուպս Հայաստանեաց ուսայ ի նմանէ զհզար արուեստս գայս, որ թագաւորաց է ցանկալի եւ բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնտու, միայն ջանիւ իմոյ անձինս, ազնականութեամբ աղաթից սրբոյն /184a/ Գրիգորի, թէպէտ եւ ոչ ոք եղև շնորհակալ եւ մեծարաւղ իմոյ աշխատութեան, քանզի եւ ոչ սիրաւղ իսկ է ազգ մեր իմաստից եւ գիտութեանց, այլ ծոյլք են եւ ձանձրացողք: Զի իբրեւ եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն. եւ սուղ ինչ իւելամտեալ՝ թողին զիս եւ գնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս զորչափիկն առին. եւ փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել

զոր ոչն գիտէին, եւ քարոզել զանձինս վարդապետս, որումն ոչ էին հասու: Կեղծաւո՛րք եւ սնափա՛ոք, ցուցանեն /184b/ ունել զկերպարանս գիտութեանս եւ կոչիլ ի մարդկանէ բաբբի՛ հայցեն: Այլ եւ ի վերայ իմ պարսաւանս ասէին տգիտութեան, որք յինքնէ էին յերիւրեալք, որ թէ ունէի չարութիւն իբրեւ զնոսա, ոչ ումէք առ ի վարդապետութիւն բանայի զբերան որպէս արդարեւ ասերախտից: Բայց քանզի զմտաւ ամեն զտէրունական զձայն, որ ասէն. «Իմ է վրէժինդրութիւն եւ ես հատուցից»:
Եւ դարձեալ թէ՛ «Արկ զոսկիդ իմ ի սեղանաւորս եւ ես եկեալ տոկոսեալք պահանջիցեմ»: Ապա «ոչ արգելի յումեքէ, որք կամեցան ուսանել եւ ոչ այսուհետեւ արգելից»: Այլ եւ զայս անմահ թողում ձեզ, վարդապետք, որք յետ իմ զայցէք յաշխարհս ուսումնասիրացդ եւ փափագողացդ իմաստից եւ գիտութեանց: Եւ Քրիստոսի ձրեաց շնորհողին փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Տումարական պատարիկ

[ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿԱՅՆԻՈՅ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿ]

Այսպէս ի սկզբանէ արարածոց յորժամ արար աստուած զլուսաւորդ յաւուր չորրորդի, ունելով ամանն լուսնոյ ԺԳ արեայ զաճմանն լրութիւն եւ ի հինգշաբաթաւորն լցաւ ԺԴն. եւ այս յայտնի է յամենայն յեղանակս շրջագայութեանց ՇԼԲ ամաց եւ ի Քրիստոսի իսկ չարչարանացն: Վասն զի շրջա[զ]այութիւն եւ արեգական եւ լուսնի եւ ի նոյն դարձումն ամաց եւ ամսոց եւ աւուրց շաբաթու յետ ՇԼԲ ամաց լինի: Վասն զի լուսին ԺԹ ամաւր վարի, իսկ արեգակն՝ ԻԸ ամաւր. եւ սորա երկոքին ընդ միմեանս բազմաւորելով զՇԼԲ ամս բովանդակեն եւ ասպա դառնան անդրէն ի նոյն զնացս ընթացից միաբանութեան: Արդ լուսին յաւուրն չորրորդի յորժամ եղեւ ԺԳ աւուրս ունելով, ոչ գոլով յառաջ քան լինել աշխարհի աւուրց, բայց միայն չորքն, որ յառաջ քան զլինել լուսաւորացն էին: Արդ համարելով զչորսն յերեք [հ]արիւր Խեն Թ եւս պիտի, որ է առաջին ամին արարածոյ աշխարհի յարակայ, այսինքն է վերադիր լուսնի: Եւ, ունէր տարին արարածոյ աշխարհի աւուրս ՅԽԵ ըստ լուսնի, որ պիտի ԺԲ ամսոցն լրումն ՅԾԴն աւուրսն այդ Թ եւս ար: Իսկ արեգակն կատարեաց զՅԿԵ արն եւ զերիս ժամսն, որ ունի աւելի քան զլուսին աւուրս առաջնոյ ամին, քան զՅԽԵն Ի ար աւելի, որ լինի յարակայ երկրորդ ամի ի բոլորակս եւ ասպա կարգաւ մինչեւ ցվախճան ինն ու տասներեկ[ին]. [ա]մենայն մետասան ունիս զյարակայսն, իսկ զվե[ադիրն] ԺԲ ունիս, վասն զի ժողովին Ժ եւ Թ երեկիդ Ժ ... ամի ամի եւ առնին ի միում ամի Ժ ամ մի եւ 2 ... մասն ժամու որ լինի զԺԹ ամն ԻԴ ժամք, որ է ... տիւ, որ լինի ար մի որ անկանի յարակայն ...

/3b/ Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր. եւ արն այն միաշաբաթ էր. եւ այն ար առաջին էր աւելեացն եբրայեցոց, արաբացոց, մակեդոնացոց՝ մինչեւ ի չորրորդ արն. ասպա յաւուրն չորրորդի արար զարեգակ(ն) եւ զլուսին. եւ այն ար Դ էր աւելեացն եբրայեցոյց, արաբացոյց, մակեդոնացոյց, զի Գ աւուրքն որ յառաջ քան զարեգակն եղեն լուսատուք տիեզերաց, որ թափանցիկ լոյսն կոչի. եւ Գ ժամքն այն ժողովին ի չորս ամս. եւ լինի աւուր մի որ կոչի նհանջ: Եւ մարդոյն լինելութեան սկիզբն յաւուր չորեքշաբթոց եղեւ: Արդ յայտ է որպէս առաքեալն երկրորդ Ադամ կոչէ

զփրկիչն իւրով մարմնի սգենելովն. նոյնպէս եւ Գաբրիէլ հրշտակ յաւուր չորեքշաբաթոց առաքեցաւ աւետիս տալ կուսին: Որպէս Յովբ երանելի ասէ. «Շաւեղն զոր ոչ ծանեաւ թոչուն, եւ ոչ զիտեաց զնա ակն անգեղ եւ ոչ կոխեցին զնա որդիք ամբարտաւանից»: Թոչուն զհրշտակն ասէ. եւ ակն անգեղ գուշակեաց վասն սատանայի. եւ ոչ կոխեցին զնա որդիք ամբարտաւանից՝ զհրէիցն ասէ: Եւ էր ապրիդի Ժ յորժամ առաքեցաւ հրեշտակն: Արդ [յ]այտ է թէ առ այն կարծեաց, եթէ մարդոյն լինելութեան] սկիզբն յաւուր չորեքշաբաթոց յառաջ եղել. զի ի ... հազարեանի դարն աւետիքն Աստուծոյ առ Աբրահամ եղել փրկելոց եւն ամենայն տիեզերք. եւ անդ յարինն ... եղ ի խաչին ծառին եւ խոյին: Աստ դարձեալ յորժամ կամաւորութեամբ ի չարչարանս կատարել ...աց տառիցն մարգարէութիւնս. նոյնպէս եւ ան ... դայ. քահանայապետիւքն հանդերձ. յաւուր /4a/ չորեքշաբաթոց արարեալ խորհուրդ ծածկապէս: Արդ այդ ամենայն արինակք ցուցանեն՝ եթէ լինելութիւն մարդոյն ի չորեքշաբթոց եղել: Բայց ծածկեալ էր խորհուրդն առ հաւր, ապա յաւուրն հինգշաբթոց յայտնեաց աստուած ցորդի եւ ցիւղի. «Եկայք արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան»: Եւ այն ար հինգ էր աւելեացն: Դարձեալ աստ Ե աւուրն խորհրդոյ յայտնեալ վասն մարդոյն լինելութեան: Եւ Բ հազարեան դարուն Սողովմոն գտաճարն շինէր աստուծոյ, զի գալոց էր փրկիչն յաշխարհ: Նոյնպէս եւ ի հինգշաբթոցն յայտնեաց տէր մէր Յիսուս Քրիստոս վասն նենգութեանն Յուդայի եւ ասէ. «Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս»: Որպէս եւ յառաջին հինգշաբթոցն ասաց. «Եկայք արասցուք մարդ»: Արդ յաւուր ուրբաթու ստեղծաւ մարդն նիսան ամսոյ ամսամուտ էր: Եւ Ադամայ ար ստեղծման, եւ եբրայեցոց տարեմուտ, զի այն հինգ աւուրքն որ յառաջ քան զլինել մարդոյն, այն աւելիք կոչեցան: Արդ յԳ ժամու էառ զհողն ի ձեռն աստուած. եւ Ջ ժամու ստեղծաւ մարդն եւ առ զկենդանութիւն. եւ յԹերորդ ժամուն յանցեաւ եւ էլ ի դրախտէն. եւ յուրբաթացեալ դարն էջ փրկիչն յարգանդ կուսին՝ փրկութիւն առնելով տիեզերաց: Եւ որ Լ ամ լուռ եւ աներեւոյթդ եկա[ց] յաշխարհի, վասն զի նախահայրն Ադամ Լ ամ միով ... մինչ զկենդանութիւն առ. նոյնպէս եւ աւետարանա[կան] գիրն վկայէ թէ՝ «Ածին զՅիսուս ի խաչ հան[ել եւ] էր ամ» ... Նոյն արինակաւ առաւ հողն յերիբ ժամու եւ ի [վեցերո]րդ ժամու ստեղծաւ մարդն. եւ Ջերորդ ժա[մու] ... եւ Թերորդ ժամու յանցեաւ Ադամ եւ էլ ի դրախտէն. եւ յԹերորդ ժամուն գոչեաց Յիսուս ի ժամ մեծ եւ եհան զոգի եւ աւազակն ի դրախտն եմուտ:

Ա. Արդ ահա Է պարունակք հարկաւորք շրջագայք ընդ հրային կամարան երկնի ի միջոցին արեգականն բերեն յիւրում ի գաւտուջն. եւ ի վերայ նորա Է մուլար աստեղքն բերեն ի վերնում գաւտուջն. եւ են ամենեւին ցրտութիւն. եւ միջնորդ է նա արեգականն եւ արփոյն. եւ զանշէջ տոչորումն արփոյն. իւրեանց բնական աստիցն ցրտովն բարեխառնութիւնս առնելով արեգականն մատուցանեն՝ աւգնականութիւն բերեալ հեղուն ի ներքին գաւտիսն: Եւ ի ձեռն մուլրակացն սփռեալ տարածէ ընդ երկիր աւդով եւ լուսով, զի աւդն ունիցի հովութիւն եւ լոյսն ունիցի զարեգակնային մասն հրոյն: Եւ ի ձեռն այսց երկուց կենդանածնեալ լինի երկիր: Ի հասարակաւորութեանն թաւալի արեգակն յարեւելից մինչեւ յարեւմուտս ՅԿ անգամ ի տունջեան, նոյնպէս եւ ի զիշերին: Եւ ի գարնանային հասարակաւորութենէն մինչեւ ի մուտս ամարայնոյն Ա Ա թաւալումն յաւելու ի տին, իսկ զիջակն ԱԱ թաւալումն պակասէ ի տունջենէն Ջ ամիս ի տունջեանն թ[ա]ւալումն յաւելու եւ ՃՁ ար ի զիշերին. եւ առ[նու] մի թաւալումն Շ Շ ասպարէզ յառաջ նոցա..... ունի զի այսքան է մեծութիւն նորա. իսկ ՅԿ թաւ[ալմ]անն

լինի ... ասպարեզ. եւ ի Ն թաւալմանն, ՄԻԵՌ ասպարեզ, վասն որոյ ոմանք
յերկրաչափ[անց], ԵՌ ասպարեզ ասացին զերկրի լայնութիւն եւ զ[երկարու]թիւն:

/5a/ Հանգոյն սմա ընթանայ լուսին եւ կատարէ գտարի յաւուրս ՅԿԴ՝ ըստ ԺԲ լրմանցն,
զոր ի սկզբանէ ուսոյց զԼԼ արն կոչել ամիսս, իսկ Ե արն, որ յառաջ քան զլինել
մարդոյն չարարին որ ի տարին կամ որ ի նոր ամիսն: Եւ արն է ըստ լուսնի ԻԳ ժամք
եւ Բ մասունք, վասն զի Բ մասն աւելի ընթանա լուսին քան զարեգակն յամենայն ար
եւ ժամն լուսնի Եամասնեան: Եւ է այս սակս խոնարհութեան իւրոյ, վասն զի շատ
միջոց առնէ զատեալ յարեգականէ, վասն զի սա յանիւս զկամարան պտտեալ Լ մասն
կատարէ Ժամուն: Եւ լուսինն կակուղ է գնացութեամբ ի Ե մասն. եւ Ե մասնն Դ
վեցեակք երեսնի, ըստ այսչափ մասին մերձ է լուսին յերկիր քան զարեգակն. եւ է
աման լուսնին անչափ տեղափոխութեամբ. եւ այն Բ մասինն ժողովումն լինի
յամսեանն Կ մասն, որ է Ե ամսանայ, ժամք ԺԲ, իսկ Բ ամիսն ՃԻ մասն: Եւ եթէ
կամիցիս զաւուրս լուսնի գիտել՝ կալ զաւուրս ամսոյն եւ զվերադիր տարոյն եւ զկէսսն
ի նաւասարդէ. բայց ոչ կարէ վերադիրս ցուցանել զքանիսն լուսնոյ, վասն զի
երկամասնութիւն Եեկին Գ արացն կորնչի. եւ ոչ բերէ զթիւ կատարեալ լուսնոյ. ԺԳ
ար եւ Գ ժամ լնու. եւ ԺԴ ար եւ Գ ժամ մաշի, որ լինի Ի ... ար. եւ յետ սպառեալ
ժամուցն ծնանի. եւ սա ... լինի ամիս լուսնի. եւ է աման լուսնի փոր իբրեւ զն ...
նութիւն պատենից բոլոր թանձրամարմին կա ... իսառնուածք Բ. Ա ի հիւսիսոյ
կողմանէ եւ Ա ի (հա)րաւոյ, կուրծք եւ բերանք: Բ մուտ եւ ել Ա. յ ... ելից կուսէ. եւ մի՛
յարեւմտից եւ մաշումն ... /5b/ ներքս ժողովումն լուսոցն. իսկ ծնունդն ի դուրս լոյսն
ելանէ ընդ արեւմտեանն. եւ պատի զգնդով պատենիցն ընդդէմ արեւելից. եւ որպէս
լոյսն յամանսն սպառի, ի վերուստ ի միմեանս եկեալ հասանի, որ կոչի լի, իսկոյն
ներքս մտանէ ընդ արեւելեանն. եւ սկսանի մաշել ընդդէմ արեւմտից, զի ամենեցուն
յայտնի երեւի բոլորածին:

Մարտի ամսոյ որ ար Ի գարնանային եղանակ է. տին ժամս. ունի ԺԲ, գիշերն՝ ԺԲ: